78

Ստեփաննոս Փօղոսեան

№ 2000

псб. 879
151542

# ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՊԱՇ-
# ԽԱՐՈՂԻ

Առ 'ի բարեպէս խոստովանիլ:

Գիրք հոգևոր, յորում ամ ոք կարէ
ուսանիլ զհաւաստի եղանակ
դառնալոյ 'ի շնորհս Տն,
և պահիլ 'ի նոյն:

Շարադրեալ 'ի Պօղոսէ Սէնէրեան,
յընկերութենէ Յիսուսեան:

Նորապէս թարգմանեցեալ յիտալա
կան բարբառոյ 'ի Հայոց լեզու, 'ի
Սարգսէ Վարդապետէ, և Արք
եպիսկոպոսէ Կոստանդնուպօլսե
ցւոյ, որոյ աշխատութեամբն նաև
տպագրեցաւ:

'Ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի, տն
Ղազարու հայոց կաթողիկոսի:

Յամի Տն. 1751: Եւ Հայոց. ՌՄ:

'Ի ՎԵՆԵՏԻԿ:
'Ի Տպարանի Անտոնի Պօրթօլի:
Հրամանաւ Մեծաւորաց:

241

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ Կ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ստեփաննոս Փօղոսեան
ՄԵՐՆԵՐԱԿԵԱՆՑ

# ՊԱՏՈՒԵԼԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Հոգաբարձուաց հոգւոց, և Հովուաց բանեղէն հօտին Քի, խոնարհութբ ողջունայուն :

Զոր պահանջէր ած յակիղըն ստեղծագործութեան՝ զի իւրաքանչիւր տունկք յա_ ռաջածիցէր զբողբոջ, և զպտուղ իւր՝ ըստ ազգի, և ըստ նմանութե (ծննդ. 1. 11:) Զնոյնն պահանջէ նաև այժմ յիւրաքանչիւր հաւատացելոցս, որք եմք բանաւոր տունկք՝ արմատացեալք հաւատով 'ի դրախտի սբյ եկեղեցւոյ: Եւ՞ այսպէս՝ պարտի ամ ոք ըստ կոչման, և ըստ կացութե իւր առնել զպտուղ բարեաց գործոց, և ա_ ռաքինութեց, յարդիւնաւորութիւն յաւիտենական փառաց: Եւ՞ որ պտղաղուրկ, և ամուլ գտանի 'ի ձեռն հեղգութե, կորի տապարաւ վճռոյ Տն, որ առ արմին ծառոց եդեալ կայ. ըստ ապառ_ նացման ձայնին բարբառոյ (մատթ. 3. 10:) Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի: Իսկ

գոլով քո քահանայ՝ եթէ հարցցես . թէ զո՞րպիսի պտուղ պահանջէ ած 'ի քահանայից, և 'ի հովուացս, որք եմք բարձրուղէշ, և բազմաձիւղ տունկք խորհրդականի այգւոյ նորին : Պատասխանեմ ուղղապէս . զայնպիսի պտուղ, զոր երբեմն բուսուցանել ասի ահարո_
նեան գաւազանն, զորմէ ընթեռնանի (թուոց. 17. 8:) թէ Արձակեաց շառաւեղ, և ծաղկեաց ծաղիկս, և երևեցոյց ընկոյզ: որ է ասել . բողբոջեաց զտերև, զծաղիկ, և զպտուղ : Ուրեմն քահանայական, և հովուական դերազանց կացութին մեր, պարտի բուսուցանել զբազմախիտ տե_
րևս գիտութե, և վարդապետութե . զքաղցրահոտ ծաղիկս բարի կենցաղա_
վարութեան, և զանուշահամ պտուղս գործոյ, և առաքինութե : Որև հոգիս շունչ բարբառոյ սբյն պօղոսի՝ առ այս դիտէր 'ի խրատելն զիւրն տիմօթէոս, ասելով ( 1. տիմօ. 4. 12:) Օրինակ լինի_
ջիր հաւատացելոց՝ բանիւ: ( ահա տերևն գիտութե ) Գնացիւք: ( ահա ծաղիկն կենցաղավարութե ) Սիրով, և սրբութբ: ( ահա պտուղն սիրոյ, և առաքինութե : Զորոց հետևեսցի բան մեր ը̃ կարգի . 'ի բարւոք հասկացումն ձեր :

Նախապէս պահանջէ առաքեալն 'ի քահանայից, և 'ի հովուաց, առ որս յանձնեցեալ է հոգաբարձութին հոգ

ւոց. զի մեծաւ խոհեմութբ, և ուշի_
մութբ մատակարարիցեն զբանն սրբոյ
հաւատոյ, և փրկութն, ասելով: Որէ
նաց ընթերցիր հաստատեցելոց բանիւք: Քան
զի այսու աղագաւ է, որ բաղում ուրեք
'ի սբ գիրս՝ քահանայքն, և առաջնորդքն
կոչին հովիւք, զի կազմեն, և պատրաս_
տեն խաշանց Տն, զփրկարար կերակուր
հոգւոց, և զկենսաւէտ ճարակ մտաց,
առ 'ի յղփացուցանել զնս հոգևոր պա_
րարտութբ շնորհաց, և փառաց, որ
թարց բաւականի գիտութն ոչ մարթի
լինիլ. ըստ որում ասէ մաղաքիա. (2. 7:)
Շրթունք քահանային պահպանեսցեն գիտու_
թիւն. և օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նր.
զի հրեշտակ Տեառն ամենակալի է: Եւ որ
զուրկք գտանին յայսմանէ գիտութէ,
կամ որ զանցառնուն ուսանիլ զոնեայ
զհարկաւորն իւրեանց, անարժանք գը_
տանին ամենևին քահանայականի ար_
ժանապատուութն. որպ ասէ ած բե_
րանովն ովսեայ (4. 6:) Զի դու զգի_
տութի մերժեցեր, մերժեցից և ես զքեզ. զի
մի լինիս քահանայանալ ինձ: Ուստի լո՛ւր ըզ
յանդիմանական բան Տն, որ խօսի առ
հեղգ, և պղերգ քահանայս, և առաջ_
նորդս՝ բարբառովն եզեկիելի. (34. 2:)
Վա՛յ հովուացն իսրայելի, որք զանձինս
արածեն. ո՞չ հովիւք զխաշինս արածեն:
Զկաթինդ ուտէք. և զասրդ ագանիք. ըզ

զարբարքան պէնոսն. Եւ զխաշինս իմ ոչ արածէք. եւ այլն: Ո՜ւր բան ոճի, եւ սովորութեան սո՛յ գրոց, ձայս այս՝ նշանակէ զապառնացուցն մեծագունի թշուառութեանց, եւ անխծից ընդդէմ ծանրագոյն յանցանաց: Նաեւ զայսպիսիս անարգէ, եւ եպերէ աղաղակաւն մարգարէին զաքարիայ, ասելով (11.17:) Ո՜վ հովի՛ւ, Եւ հովուք, որ թողէր զխաշինս: Իսկ եթէ հասու լինիլ կամիցիս, ո՛րդեօք ո՞վ իցէ՝ որ համանգամայն հովիւ իցէ, եւ կուռք: Իմա. ոչ է նա այլ ոք, եթէ ոչ այնպիսի քահանայն, խոստովանահայրն, հովիւն, եւ առաջնորդն, որ հանգոյն կըռոց արձանացեալ կայ ՚ի բարձունս, դըրով անզգայ, անշարժ, եւ անմռունչ. զորպիսեաց ասէ դաւիթ: Բերան ունին՝ եւ ոչ խօսին. աչս ունին՝ եւ ոչ տեսանեն. ոտս ունին՝ եւ ոչ գնան. եւ ոչ գոյ բարբառ ՚ի կոկորդս նոցա. (113.5:) Քանզի առաջնորդն, եւ քահանայն, որ արդարեւ է հոգեւոր հովիւ բանաւոր հօտին Ք՟ի, եթէ ոչ հոգայ ուսուցանել զօրէնս, եթէ ոչ ձկտի աղաղակել ընդդէմ մոլութեանց, եթէ ոչ բանայ զաչս ՚ի դիտել զթիւր բարս, եւ զվատթար սովորութիւնս ստորադրելոց իւրոց. այլ բաւականանայ ունելովն միայն զարտաքին ձեւն, եւ զանունն, եւ ոչ զիրն անուան. արդիւնաւորապէս՝ հովիւ, եւ կուռք ասելի

ունելի է միանգամայն ։ Վասն զի մինչ ոչ ունի ամենևին զյատկութիւն ինչ ճշմարիտ հովուի, հոգաբարձուի, և վերակացուի, բայց այսու ամիւ տակաւին պահանջէ զայնպիսի մեծարանս, և պատիւ՝ որք պատկանին դիտուն, խոհական, և իմաստուն հովուի, այնու իբր կուռք յամենեցուն յարգիլ, և մեծարիլ կամի ։ Ուստի արդիւնաւորի ասել ։

ՈՎ ՀՈՎԻՒ, ԵՒ [illegible] ։

Ո՜հ զի տպաւորիցէր ամ զգալի արարողութե իմիք յերևակայութեան մերում զպատկերն տգէտ, և անիմաստ քահանայի, և վերակացուի. Հրամայեաց մարգարէին զաքարիայ զգենուլ զծաղրական կերպարան հովուի իմիք, ասելով ։ ԱՌ ԴՈՒ ՔԵԶ ԳՈՐԾԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ ՀՈՎՈՒԻ ՓՈՐՁԻ. ԶԻ ԱՀԱՒԱՍԻԿ ԵՍ ՅԱՐՈՒՑԱՆԵՄ ՀՈՎԻՒ ՓՈՐՁ Ի ՎՐ ԵՐԿՐԻ. ( 11. 15: ) Արդ Ը ոմանց՝ գործիքն հովուի տգիտի, որովք ծպտեցաւ մարգարէն, այսոքիկ են ։ Զի էառ ՚ի ձեռին անհարթ և թիւրաթեկ շերտ մի՝ ՚ի լինել ցուպ. հնոտի և խոշորամազ քուրձ մի արկաւ զանձամբն՝ ՚ի լինել վերարկու. դատարկ և պատառոտեալ պարկ մի զմիջովն՝ ՚ի լինել մախաղ. բեկոտեալ կոտր մի եղեգան ՚ի գօտւոջ՝ ՚ի լինել եղեգնափող. եղջիւր մի ձեղքոտեալ և պարապ ՚ի ձախ կուսէ կախեալ՝ ՚ի լինել անօթ օծանելւոյ. կոտր մի հնա-

դոյն կաշւոյ փոտելոյ կապեալ 'ի ներ_
քանս՝ 'ի լինիլ տրեխ. վերջապէս 'ի յետ
կուսէ՝ շուն մի բրթաթափ, կաղ, և համր
'ի հաչել՝ 'ի լինիլ պաշտպան։ Եւ 'ի ձեռն
այսպիսի ծաղրական զգեստուց, և դոր
ծեաց մարգարէին, կամէր ցուցանել զմեծ
գյիմարութիւն, և զկեղծապատիր արտա
քին ձևակերպութիւն ագխտադոյն քահա_
նայից, և հովուաց ոմանց. ոչ մերկու
թիւն, և բռնաւորութիւն եսայեայ՝ զթշ
ուառութիւն, և զխայտառակութիւն ժո_
ղովրդեան։ Եւ գուցէ 'ի հետաքրքրու
թէ շարժեալ, կամիցիս դիտել մասնա_
ւորապէս զյատկական նշանակութիւնս
այսոցիկ ծաղրական գործեաց. աղաչեմ
ներել ինձ յայսմ մասին։ Նախ. զի ոչ
տանի տեղին՝ գոլով առաջաբանութիւն
ինչ փոքրիկ գրդկան միոյ։ Երկրորդ. զի մի
վերադարձցին այնոքիկ նաև 'ի պատկա
ռութիւն, և 'ի յամօթահարութիւն ինձ, որ
եմ պակասաւորագոյն, և պարտաւորա
գոյն տաղանդակորոյս քան զընաւ կար
դակիցսն իմ։ Երրորդ. զի մի գտանիցիմ 'ի
պարզամտաց ոմանց, ոչ թէ նետաձիգ,
և քարնկէց լինիլ կամիմ առ ոմանս պետս
մերայինս (զոր մի՛ արասցէ Տէր.) որոց
որքան մեծարանաց արժանի գոլն՝ ինք_
նին յայտ է ամենեցուն։ Չորրորդ. ըստ
ինքեան յայտնի իսկ է քննողին, եթէ ու
շադրաբար նկատիցի մի ըստ միոջէ։ Յա

ղա

զօգս որոյ՝ բաւական վարկանիմ յայսմիկ տեղւոջ ասել զայս միայն. ո՛ ոք ևիցես դու, թէ քահանայ, թէ խոստովանահայր, թէ վերակացու, թէ հովիւ, թէ առաջնորդ, և թէ եպիսկոպոս, ստո_րադասելով և զիս ընդ քեզ. Եթէ կա_միս զերծ, և ազատ գտանիլ 'ի վայոց, և 'ի նախատանաց Տ՛ն։ ՕՐԷՆՔ ԸՆԴԻՋԷՐ ՀԱՍՏԱՏԵՑԵԼՈՅ ԲԱՆԻՔ։ Նախ. յարատև կրթութբ, և ջանունակ տքնութբ ուսանելով 'ի գիտնագոյն արանց զհարկաւոր գիտելիս. և ապա 'ի ձեռն նախանձայոյզ աշխատութե ուսուցանելով այլոց զօգտակարագոյն վարդապետութիս։ Վ՛ա զի եթէ ոչ իցէր մինն 'ի բազմաց նախապետական պարտաւորութեց՝ ածայ ին բանիւք կերակրել զհօտիս հաւատացելոց, ոչ այնքան պնդապէս սովորէր մե՛ծն պօղոս զիւրն տիմոթէոս՝ երդմամբ հանդերձ, ասելով (2. տիմոթ. 4. 1:) ՎԿԱՅՈՒԹԵ ԴՆԵՄ ԱՌԱՋԻ ԱՅ՛ և ՅԻ ՔԻ, 'Ի ՅԱՅՏՆՈՒԹԵ ԻՒՐՈՒՄ և ՅԱՐՔԱՅՈՒԹԵ. ՔԱՐՈԶԵԱ՛ ԶԲԱՆՆ. ԿԱ՛Ց 'Ի Վ՛Ր ԺԱՄՈՒ և ՏԱՐԱԺԱՄՈՒ. և այլն։

Այո՛ զի թէպէտ ա՛մ եկեղեցական պաշտօնէից պարտ է ունիլ զբաւականագոյն գիտութի, և վարդապետութի, որովհետև նուիրեալք են զինքեանս լինիլ սպասաւորք յաւիտենականի իմաստութե հօր, և մատակարարք շնորհաբեղուն խորհր_

դոց նորոյ օրինաց, որք 'ի նոյնոյ իմաստութենէ հաստատեցան: Սակայն յոյժ առաւել բարձրագոյն աստիճանաւ պիտոյանայ վարդապետութիւն, և դիտութիւն՝ խոստովանահարց, և հոգաբարձու կարգելոց հոգւոց: Զի ըստ պահանջման պաշտօնի իւրեանց, պարտին լի լինիլ յամենայն կուսէ սրատես աչօք՝ հանգոյն բազմաչեայ սերովբէից շուրջ զաթոռով Աստուծոյն եղելոց, առ 'ի թափանցիլ տեսութեամբ (որքան կարէ լինիլ) 'ի խորս խղճմտանց խոստովանորդւոց իւրեանց, և տեսանել զկնճիռն անիրաւ գործութեանց ամենայն պարագայիւք հանդերձ: Քանզի յայսմիկ գործողութեան՝ պատուելի խոստովանահարքն ունին զկրկնակի պաշտօն նշանաւորագոյն. (մին պաշտօն դատաւորի, և պաշտօն բժշկի) որոց երկաքանչիւրն կարօտի նրբիմաց իմաստութեան, և շրջահայեաց ուշիմութեան՝ առ 'ի քաջ օրինի գործածել 'ի փրկութիւն հոգւոց: Այլ զի քաջ որում բազմի յայնմիկ ատենի՝ ոչ դատաւոր, պիտոյ է նմա զի գիտիցէ զամենայն կացուցմունս և իրաւունս՝ աստուածային, եկեղեցական, և մարդկային օրինաց: Նաև ճանաչիցէ զեղանակն և զկերպն համձարեղաբար քննելոյ, ուղղապէս դատելոյ, և արդարաբար պատժելոյ, և գթածապէս արձակելոյ. զի մի՛ դուցէ աղագաւ տգիտութեան իւրոյ՝

պա

պակասուն ինչ ծնանիցի յայնպիսի ա̄նձա յին ատենի, 'ի յանդիմանութեն իւր, և 'ի վնասակրութեն դառնեցելոյն, նաև 'ի դերևս վարկցի արտաքերեցեալ վճիռն: Ուստի խրատէ հոգին սբ̄ զայսպիսիսն՝ ասելով (իմաստ. 1. 1:) Սիրեցէ՛ք զիմաս-տութի՝ որք դատէք զերկիր: Բայց ը̄ որում բժիշկ, հարկ է նմա գիտել զա̄մ տեսակս մահաբեր հիւանդութեանց, որք են մահացու մեղքն, հանդերձ պատճառօք, պարագայիւք, և վնասուք նոցին: Եւ՛ ճանաչել 'ի շօշափմանէ զարկի բազկին, զներքին տրամադրութիւն սրտի ախտացելոյն, որ որպէս ակիզբն է մարմնական կենդանութեն, նոյնպէս և հոգեկանին: Պատշաճի ևս նմա ունիլ զտեղեկութի զօրութեանց բժշկարար դեղօրէից. այ̄ ա̄ծաբանական, և բարոյական առաքինութեանց, որք են դեղթափք ընդդէմ զանազան մոլութեանց, և նախապահողական դեղանիք 'ի պահել յապագայէն: Ճա հաւորի նաև գիտել զեղանակն զուգախառնելոյ, և տալոյ զդեղս ըստ բնութե հիւանդին. այ̄ զապաշխարութիւն, 'ի յորս կայանայ կատարելութի բժշկին, զի մի՛ փոխանակ առաքինելոյ մահացուցէ, և մեղանչական բժիշկ դատանիցի: Ուստի գովեցեալ լինի 'ի սբ̄ գիրս իմաստուն բժիշկն (սիրաք. 38. 3:) Մ̄ հանճարութեան բժշկի բարձրացուսցանէ զգլու-

նորա . և տանջի մեծամեծաց գոլիցի :
Ուրեմն զո՞րպիսի պատճառանս հնարել կարեն տգէտ , և անիմաստ խոստովանահարքն , և քահանայքն՝ մինչ գայցէ տ͞ր 'ի խնդրել զանձկագոյն համարս 'ի նոցանէ վ͞ս յինքեանս յանձնեցեալ հոգւոց . տանելով : Տու՛ր զհամար տնտեսութեն քոյ :
Զի՞նչ կարասցեն արդեօք ասել յայնժամ այնոքիկ , որք դնեն առանց բաւականի տեղեկութե բարոյական նիւթոց , և առանց ջանալոյ ուսանիլ զհարկաւոր գիտելիս՝ ժպրհին ձեռնամխիլ յայնպիսի ատեան մի ահաւոր , որ ամ կերպ իրաւամբ ա͞յ միայն պատշաճի , որ է թողուլն զմեղս մեղուցելոյն : Քանզի՝ ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ մի ա͞ծ ( մարկ. 2. 8: ) Ըստ որում ճշմարտութե աւելին դպիրքն հրէից , բայց չարակրապէս : Վ͞ս զի՝ ոչ ասացաւ երբէք հրեշտակաց ( ասէ ոսկ͞ն յոհ ոսկ" ) Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նց . և եթէ զորոց ունիցիք՝ ունեալ լիցի ( յոհ. 20. 23: ) այլ ասացաւ , և շնորհեցաւ սոյնս քահանայից , որք այնպէս կատարեալ կերպիւ թողուն ըզմեղս մեղաւորաց , որք թէ և օրոնիցին յետոյ , ոչ կարիցեն գտանիլ երբէք . ը͞ս որում ասի ( սաղմ. 6. 15: ) Խնդրեսցին մեղք նր՝ և մի՛ գտցին : Բայց ո՞րով համարձակութեամբ մատչին առ այս ա͞ծային գործ՝ դիւրահիկ արուեստաւորք ոմանք ,

յետ

յետ տակաւ աւուրց ընկալեալ քահանայական կարգին, որք յերբեկ և յեռանդ հաղի՞ թէ գիտէին զեղանակն բարեպէս խոստովանելոյ, և թերևս այժմ. և լինին դատաւորք, և վճռատուք փաթթութեալ հանգուցից, և գործոց խղճմտանաց այլոց, ոչ գոլով ուսեալք, և դատախարակեալք ընաւ 'ի գիտնոյ ումեքէ' որքան առ այս նիւթ. յորպիսւոյ գործոյ զահիհարեալք խուսափին ջոկք ամծարանից, և գիտնոց՝ կրթեալք յիմաստս յոգունս: Եւ՞ մեծաւ մորմոքմամբ 'ի բաց թողում զառաւել լալիան 'ի յասել, զորս փորձի՞ գիտեմ 'ի շրջագայիլն իմ 'ի զանազան սփիւռս. որ տգէտ քահանայք ոմանք վարին միայն Մեղայ ամենայնիւ. ոմանք երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի մեղանչեր եմ ասելով. ոմանք աչքով, բերանով, ականջով, և ձեռօքս մեղանչեր եմ ասելով. ոմանք՝ հըպարտութիւն, նախանձ, բարկութին գործեր եմ ասելով. և այլք ոմանք այլանյարմար կերպիւ՞: Քանզի թէպէտ այսպիսի բանք ոչ են խոտելիք ասիլ 'ի խոստովանութեան, սակայն այսպիսի համառակ բանիւք միայն, ոչ ընկալնանի արձակումն յատկապէս գործեցեալ մեղաց. զի երկուշաբթին՝ ցուցանէ զօրն մեղանչելոյն. և ձեռքն՝ զգործիքն, որով մեղանչեաց. նոյնպէս և բարկութիւն՝ ցուցանէ

զսէռն մեղաց ։ Այլ պիտոյ է, զի ոչ քա
հանայն, այլ ինքն մեղուցեալն ասիցէ
ո՛ւրոյ ո՛ւրոյն զնմ խորհեցեալ, և գոր_
ծեցեալ մեղս իւր ամբողջապէս, հան_
դերձ նմ ծանրացուցիչ, և փոխարկիչ
պարագայիւք նոցին, զի արժանասցի
թողութեն. որպ յայտ է ('ի սաղմ. 31. 5։)
Եւ՞ եթէ ոչ գիտէ խոստովանաորդին
զայսոսիկ, պարտաւորի խոստովանա_
հայրն ուսուցանել նմա ։

Ուստի զի բարեպէս կարասցիս ծառայել
յայսմիկ մասին պատուելի քահանայ_
ից, և հովուաց մերայնոց՝ ասեմ. թէ
առ 'ի ցուցանել մեզ նծ զպարաւանդու
թիւնն պաշտօնի մերոյ, Տէր անուանէ
զմեզ 'ի սրբ գիրս ։ Վասն զի առ մեզ նկա
տէ բանն այն, որ ասացաւ առ Եզեկիել
(3. 17։) Որդի մարդոյ. դէտ կացուցի զքեզ
տանդ Իսրայէլի. լուիցես յինէն պատգամս՝
և սպառնասցիս նոցա յինէն ։ Քանզի
իբրև դէտ 'ի բարձրաւանդակ դիտանո
ցի զետեղեալ եմք, զի հսկիցեմք մն պահ
պանութեն հօտին, զի շրջահայեացք լի_
նիցիմք յամ կողմունս, զի ազդ արասցուք
զհարկաւորն փրկութեն, զի աղաղակաւ
մերով զարթուսցուք զննիրհեցեալս, քա
ջալերեսցուք զպատերազմօղս, յայտնես
ցուք զդարանակալութիւս հակառակոր
դին փրկութեն հօդւոց, որ մերթ փա_
ղաքշական նենգութբ սպրդի 'ի ներքս,

և

և մերթ բռնաւոր մարտիւ՛ յաղթունէ։ Նաև պատմեսցուք ամբարշտաց զահարկութիւն դատաստանին այ, զանձկութիւն ժամու մահուան, և զվրէժխնդրութիւնն որոյ անն՝ որ արդէն մերձեցեալ է ընդ մէջ կորել զմեղաւորս։ Եւ եթէ հեղգգտանիցեմք առ այսոսիկ զանցառութե մերով. լուիցուք զսպառնացումն համաբառումին, որ ասէ։ Եթէ ոչ զգուշացուցանիցես նմա. զարիւն նր 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Ուրեմն 'ի ձեռն զօրութե ահարկու բանիս այսորիկ՝ յայտնապէս իմանի, թէ ոչ իցէ փոքր ինչ որոգայթ ումեք ; գոլով զուրկ 'ի բաւականագոյն գիտութեն, յառաջ մղել զինքն յիմարաբար՝ յենթարկել 'ի ներքոյ ծանրագոյն բեռին, և հոգաբարձութեն հոգոց, որ ոչ է տանելի յանմիջ թիկանց։ Քանզի զհամարն կորստեան, և արեան նոցին 'ի մէնջ պահանջէ ած. այպ ասէ նոյն ինքն նաև բերանովն երեմիայ ( 13. 20։ ) Ո՞ւր է հօտն որ տուաւ քեզ՝ խաշինք փառաց քոց։ Զի՞նչ տացես պատասխանի 'ի ժամանակի, յորում պահանջեսցեն 'ի քէն. ո՞չ ահա երկունք ունիցին զքեզ իբր կնոջ ծննդականի ։ Եւ յոյժ կասկածիմ, թէ նաև այսպէս հարցանիցի մեզ։ Ո՞ւր է Հաբէլ եղբայր քո ։ Գոչումն արեան եղբօր քոյ բողոքէ առ իս . ( Ծննդ. 4. 9։ ) Արդեօք կարե՞ն յայնժամ համարձակիլ 'ի պատասխանել այպ այլ-

ասն

ման կայէն ։ Միթէ պահապա՞ն իցեմ ես եղ-
բօրն իմոյ ։ Վ՟ զի իւրաքանչիւրն․ այ՟ թէ
խղճմտանքն քո, և թէ խղճմտանքն ըն-
կերի քոյ՝ քեզ յանձնեցեալ է՝ ո՛վ խոստո-
վանահայր, և հովիւ․ ուստի զհամարն
իւրաքանչիւրոյ 'ի քէն պահանջէ ած՟ 'ի ժա-
մանակի իւրում ։ Եւ բոլոր ծանրութիւն
երկիւղին յայսմիկ կայանայ (ըստ որում
ասէ սբ՟ն բեդն՛') զի իւրաքանչիւրն է
անյայտ, դժուարիմաց, և մթին ։ Ուս-
տի և առ մեզ կարէ ասիլ այն բանն Ե-
սայեայ (21. 11. որ ըստ այլ թարգմա-
նութեան ասի ։) Պահապան զի՞նչ 'ի գիշերի․
պահապան զի՞նչ 'ի գիշերի ։ այ՟ որքան անձ-
կութիւն պատասխանի քեզ 'ի գիշերի, մինչ
'ի մէջ մթագոյն խղճմտանաց շրջիս ։ Ուս-
տի ապա զտանիս դու յայսպիսի անձ-
կագոյն համարապահանջութեանց, եթէ
կարասցես ասել ընդ սբ՟յն օգոստինոսի ։
Գիտես Տէր՝ զի աղաղակեցի․ գիտես՝ զի ոչ
լռեցի․ գիտես՝ որպիսի հոգւով ասացի․ գի-
տես՝ զի լացի վ՟ն նոցա առ քեզ․ գիտես՝ զի
խօսէի, և ոչ լսելի լինէր ։

Երկրորդապէս՝ հետևեցուցանէ առա-
քեալն ասելով ։ Օրէնուք լինէիր գը-
նայիսք ։ Քանզի քահանայական, և հո-
գևորական կեանքն, ոչ պարտի յառաջ-
ածել միայն զտերևս գիտութեան․ այլ
նաև զծաղիկս քաղցրահոտ կենցաղա-
վարութեան՝ համեստոյն առաքինեաց զարդա-
նրն

նին, զորմէ յիշումն եղեւ յսկզբան : Վ͞ն զի ամենեւին անօգուտ վարկանին փրկաւէտ բանքն, եւ վարդապետութիւնքն, եթէ բարի օրինակաւ կենցաղավարութ͞ե անպտուղք երեւին : Ուստի մերս կացութի (զ͞ի ասելոյ նրբադունից ոմանց) պարտի լինել միջական կացութի իմն 'ի մէջ ա͞յ, եւ մարդկան . զի նկատմամբ ա͞յ իցեմք մարդիկ, եւ նկատմամբ մարդկան իցեմք ա͞ծք . ո՞չ եւ ոսկեճաճանչ փայլողութիւնքն, որք երեւին շուրջ զամպովք 'ի յօդս, նկատմամբ արեգական են ամպքք, եւ նկատմամբ ամպոց՝ արեգակունք . ըստ որում ասէ դաւիթ : Ես ասացի՝ թէ ա͞ծք էք . եւ որդիք Բարձրելոյ ամենեքեան : ( սաղմ. 81. 6: ) Բայց առ այնս վերակացուս, քահանայս, հովիւս, եւ քարոզիչս, որք բարեպէս ուսուցանեն, եւ վարդապետեն, բայց յոռեպէս կենցաղավարին, կարէ յարմարապէս ասիլ այն բանն, որ երբեմն ասացաւ առ եղբայրախաբն Յակոբ : Ձայնդ ձայն Յակոբայ է, բայց ձեռքդ ձեռք Եսաւայ ( Ծննդոց. 27. 22: ) Այսինքն՝ արտաքին ցոյցն խրատաբանութեանդ, եւ քարոզութեանդ, է ձայն առն բարեպաշտի . բայց խակութիւնն գործողութ͞եդ, եւ վարուցդ, է գործ ամբարշտի : Ուստի այնք բնաւք, որք են գիտունք, եւ իմաստունքն 'ի ուսուցանել͞ն

զայլս

զայլս արտաքին բանիւք, բայց ըստ ինքեանց մոլիք, և եղեռնագործք ներքնագոյն բարուք, ունին համանգամայն զարտաքին ձայն յակոբայ, և զձեռս եսաւայ: Եւ՞ զրելթէ կրեն յինքեանս զմնուագիրն դատապարտութե, և պատժոյ իւրեանց, զոր ընթեռնուն երբեմն 'ի լուր ծմից: Եւ՞ զայսպիսեաց ասէ սբն Թօմաս. գիտութիւք Թարց բարի վարուց, են նամակք առանց կնքոյ, որոց ոչ ոք կամի հաւատալ: Նաև զայնպիսեաց գանկատի ած բերանովն եզեկիէլի, մինչ ասէ: Զջուրսն յստակս ըմպէիք, և զմնացեալսն ոտովն պղտորէիք. և խաշինքն իմ զջուրս պղտորեալ ոտից ձերոց ըմպէին (Եզեկ. 34. 18:) Այ զի Թէպէտ հանեն ոմանք յաղբերաց սբ գրոց զմաքուր և յստակ ջուր գիտութե, բայց պղտորեն զայն 'ի ձեռն չար գործոց, և Թիւր զընացից իւրեանց. և այսպէս զնոյն պղտորեցեալն յառաջադրեն յարբումն խաշանց քն՝ փոխանակ յստակ, և մաքուր ջրոյ: Ուրեմն ո՞վ գիտուն հովիւ, և իմաստուն քահանայ. հաճելի է գիտութիւդ, և հեշտալի է բանահիւսութիւդ. բայց տակաւին Օրինաց ընդիջեր հաստատացելոց նաև գնացելոց: Այսինքն՝ լինիջիր պայծառափայլ հայելի իմն առաջի աչաց հաւատացելոց, յոր նկատեալ՝ զարատս, և զբիծս իւրեանց ճանաչիցեն:

Լի

Լինիցի՛ր նախագաղափար իմն բարի վարուց, որոյ համակերպիցեն զինքեանս բոլորպակէս : Լինիցի՛ր նաև ուղղաբերձ կանոն իմն ուղղութեան, որոյ իսկ յարմարեցուսցեն զգործառութիւս իւրեանց : Որպէս ուրեմն իմաստունքն եգիպտացւոց նմանեցուցին զքահանայական գնացքն կարգաւորեալ ժամացուցի միոյ : Ա̃յ զի նա կանոնաւորէ զա̃մ մարդկային գործառութիւս. զի ըստ ընթացից նր̃ կեան, ուտեն, գործեն, և հանգչին հասարակապէս ամենեքեան. բայց եթէ անկարգասցի ընթացք նր̃ արագութ̃բ, կամ յամրութ̃բ, խռովին շփոթին, և անկարգանան ա̃մ գործողութիւնք : Այսնգունակ ա̃մ ոք զարարս իւր յարմարեցուցանէ քահանայական վարուց, և ընթացից. ուստի եթէ թիւրութ̃բ իմիք անկարգանան 'ի յընթացս, և 'ի շարժմունս, առժամայն շփոթին, և թիւրին ամենեքեան (սիրաք. 10. 2:) Որպէս է կառավարօղն ժողովին՝ այնպէս և բնակիչք 'ի նմա : Յայս պիտոյ ժամացուցէ հրամայեաց ա̃ծ կախել զանգակս ոսկիս, մինչ ասաց (ելից. 28. 34:) յեռուլ առ ստորոտովն քահանական զգեստուց շուրջանակի զանգակս ոսկի և նռնաձև. զի 'ի յընթացս գնացից իւրոց հնչիւնաւոր լեալ խրատիցէ զբնաւս : Ա̃յ զի մինչ աշխարհականքն նրբանկատք լինին 'ի դիտել զմեզ յառաջ

մինչ

մինչև ցգլուխ · մինչ լլուեսեն զարարս,
և զգործս · մինչ քննեն զբանս, և զշարժ
մունս մեր · այնու պարտիմք նաև մեք
շրջահայեացք լինիլ յամ կողմանէ դէպ
'ի մեզ, առ 'ի չտալ նշ̃ ընաւ զտեղի գայ֊
թակղութե̃, ո̃ր խրատու առաքելոյն:
Մի՛ ու ք իւիք տայցէք պատճառս, զի մի՛
արատեսցի պաշտօնն ( 2· կորն· 6· 3: ) Քան֊
զի ասէ սբ̃ն գրիգոր · յոչ ունեմք զայն֊
քան մեծագոյն վշտակրութի̃ ընկալնու֊
ած, որքան 'ի քահանայից · մինչ զայնս՝
զոր եդ 'ի ուղղութի̃ այլոց, տեսանէ լի֊
նիլ օրինակ թիւրութե̃ · և զայնս՝ զոր
եդ 'ի ցաւակցիլ մեղաւորաց, տեսանէ
մեղանչել · քանզի ոչ խնդրեն զօգուտս
հոգւոց, պարապին 'ի սովորական կիրս,
ցանկան երկրայնոց, և որսան զմարդ֊
կային փառս: Որումն ո՞վ ուշիմ վար֊
դապետ, և քահանայ դու, ոչ պարտիս
պանծալ գերազանցութե̃ պաշտօնի քոյ,
և ոչ պարծիլ ճոռոմութե̃ բանահիւսու
թե̃ քոյ, և ոչ ևս մեղկիլ սուտակապաս
ներբողիւք մարդելուզաց, և ռամկաց,
որոց նկատումն ոչ զօրէ թափանցել
դոյզն ինչ 'ի խորս քո՝ վա̃ գոլոյ խոշո֊
րագոյն: Այլ պարտիս ջանալ Օրինակ
լինել համապատեհ ոչ միայն տերևալից
բանիւք գիտութե̃, այլ նաև ծաղկեալ,
և քաղցրահոտ գնացիւք կենցաղավա֊
րութե̃ · ըստ որում խրատէ իշխանն ա֊

ռաք

առաքելոց (1. պետ. 5. 3:) ՄԻ՛ ԻԲՐԵՒ ՏԻՐԵ-
ԼՈՎ ՎԻՃԱԿԱՑՆ. ԱՅԼ ԼԻՆԵԼ ՕՐԻՆԱԿ ՀՕՏԻՆ։
Քանզի մինչ հովիւն 'ի քարաժեռ, և 'ի
յառապար տեղիս շրջագայի, բազմիցս
հօտ նր̃ 'ի կործանումն գահավիժի։

Երրորդապէս եզրափակէ առաքեալն
ասելով։ ՕՐԻՆԱԿ ԼԻՆԻՋԻՐ ՍԻՐՈՎ, և
ՍՐԲՈՒԹԵ̃։ այ̃ կրկնակի և զուգական սի-
րով՝ այ̃, և ընկերին։ Քանզի պարտէ
քահանային՝ 'ի մատակարարելն իւրա-
քանչիւր հոգևոր սպասաւորութե̃, շար-
ժիլ առ այն 'ի նախանձայուզութե̃ ա̃ծայ
ին պատուոյ, և 'ի սիրոյ փրկութե̃ ըն-
կերին։ Վա̃ զի ոչինչ կանաչութի կարէ
ունիլ ոստն բարեգործութե̃, եթէ պա-
կասիցի յարմատոյ սիրոյ։ Եւ զոչինչ ար-
ժողութի, և գին կարէ ունիլ ա̃մ ինչ,
եթէ զոյգ կշռորդաւ սրբարանին ոչ կշ-
ռիցի։ Եւ ևս՝ այլք առաքինութիք թարց
զուգականի սիրոյ այսորիկ, ոչ ունին ըզ-
հոգի, և ոչ զկեանս, նաև ոչ բնաւ իսկ
հաճոյանան այ̃, և ոչ ևս օգնեն գործո
ղին։ Ըստ որում ասէ սր̃ն բեռնարտոս
զողջախոհութե̃, որով այլք բարեպէս
իմանին։ Ողջախոհութին թարց սիրոյ,
է դամբար առանց իւղոյ. բարձ զիւղն,
դամբարն ոչ լուսաւորէ. բարձ զսէրն,
ողջախոհութին ոչ օգնէ։ Այլ այսպիսի
առաքինութիս սիրոյ՝ մանաւանդ յայն-
ցանէ պահանջի, որք ենթալծեն զին-

քե-

քեանս 'ի հոգաբարձութե՟ն հոգւոց. զի
եթէ աղագաւ սիրոյ ընկալնուն զայն,
յարուցանեն զզաւակ մեռեալ եղբօր իւ-
րեանց. այ՟ Քրի՟. և հարսին եկեղեցւոյ
ծնանին զհոգևոր որդիս. նաև իբր գոր-
ծակից լինելով այ՟, լցուցանեն զթիւն
ընտրելոց: Աստուստ է ուրեմն, զի փր-
կիչն մեր 'ի յանձնելն զհօտ իւր նախա-
պատիւ հովուին պետրոսի, երիցս ե-
հարց զսիրոյ, առ 'ի խրատել այնու և
զայլս (յոհան. 21. 15:) Սի՛մոն յովհաննու
սիրե՞ս զիս առաւել քան զսոսա: Ուր ս՟բն
յոհան ոսկեբերան ասէ. որ նախորդ-
է, այնքան բարձրագոյն սիրով պարտի
գերազանցել, որքան գերազանցեաց սա
ւուղ մեծութե՟բ մարմնոյ ուսով չափ՝ յըն-
տրելն թագաւոր: Եւ ս՟բն բեռն՟ ասէ
զայսմանէ երից հարցմանէ: Սիրե՞ս զիս
առաւել քան զքոյս, և առաւել քան
զքեզ ինքն. արածեա՛ զոչխարս իմ: Բայց
արածեա՛ եռակի կերպիւ. այ՟ արածեա՛
բանիւ քարոզութե՟. արածեա՛ օրինա-
կաւ կենցաղավարութե՟. և արածեա՛
պտղովք աղօթից: Արդ արածեա՛ ասեմ
զոչխարս, և ոչ կթեա՛, կամ խուզեա՛.
զի մի՛ խնդրեսցես զքոյն, այլ զայն՝ որ
Յի՟ Քի՟ է: Ապա ուրեմն ո՞վ գերապա-
տիւ եղբայր իմ 'ի Քս՟. Օրինակ լինիջիր
նաև դու հաւատացելոց սիրով. զի ունի-
ցիս զհամարձակութի՟ն ասել ընդ ս՟բյն

պօ

պօղոսի։ Մ՛ յօժարութեամբ ծախեցից, և ծա-
խեցայց վս՟ անձանց ձերոց · թէ թէպէտ և յա-
ռաւել սիրելոյս զձեզ՝ առաւել սիրեցայց (2.
կորն. 12. 15։)

Վերջապէս՝ նաև օրէնք ընծիւղեր հաստա-
տափացելոյ արբութեամբ · մտ՟ ողջախոհութե՟,
և մաքրութե՟։ Վս՟ զի այսէ նախապե-
տութիւն, և հարկաւորագոյն վայելչու-
թիւն, և զարդարանքն քահանայից, վար-
դապետաց, առաջնորդաց, և եպիսկո-
պոսաց։ Այսէ, որ առնէ զմեզ սիրելի
այ՟, և մարդկան, և համանման մեզ՝ ի
փառս, թէև տակաւին պանդխտիցեմք
՚ի յաղցաւոր վայրի նժդեհականի։ Այս
է՝ որ հետևեցուցանէ զմեզ գառինն, ու-
րև երթիցէ · և ուսուցանէ զայնպիսի
երանական երգս, զոր այլ ոք ոչ կարէ գի-
տել։ Եւ՛ այսէ որ զմեզ հանգոյն հրեշտա-
կաց պահապանս կացուցանէ մարդկան,
և զարհուրելիս առնէ անմաքուր դի-
ւաց։ Զորմէ մեղրածորանն ասէ · բե-
կանելագոյն է անօթն զոր կրեմք, և յո-
րում բազմիցս փոանդաւորիմք, ունի-
ցիս ուրեմն զողջախոհութի, և զսրբու-
թիւն, ըստ բանի առաքելոյն · որ իբր
քաղցրահոտ պալասամ անապականելի
պահէ զմարմինդ, և զմիտդ, զի մի՛ լու-
ծանիցի դատարկակացութեամբ, մի՛ ա-
պականիցի ըղձիւք, և մի՛ նեխիցի հեշտա-
սիրութե՟, ըստ որում ած՟ գիրն ասէ զը-

մանց

մանց : Նեխեցան անասունքն 'ի յաղբս իւրե-
անց (յովէլ. 1. 17:) Արդարև այս է այն
նախանձելի ծաղկեայ պատմուճանն ող-
ջախոհագունին յովսէփայ, որով զգես-
տաւորել պարտիմք զերիկամունս մտաց,
և որովայնի մերոյ, զի մի՛ երևեսցի ան-
վայելչութիւն մերկութեան մերոյ: Քանզի
եթէ աղաղակէ եսայի առ քահանայս
հնոյ կտակի՝ ասելով: 'Ի պիղծս մի՛ մերձե-
նայք, որք բարձեալ բերէք զսպաս Տեառն.
(52. 11:) Որքան ուրեմն առաւել բարձ-
րահնչիւն ձայնիւ աղաղակելի է առ մեզ,
'ի բաց կալ 'ի պղծութենէ, փախչիլ 'ի բա-
բիլոնէ, հեռանալ յառթէ մեղաց, և
հրաժարել 'ի վտանգաւոր յընտանեկցու-
թէ, որ բարձեալ բերեմք մատակարա-
րութբ զսրբացուցիչ զսպասս մաքրա-
գոյն արեանն քն (զի զեօթն խորհուրդս
սբյ եկեղեցւոյ) որք են անօթք, և դոր-
ծիք շնորհաց սրբացուցչաց, որովք լուա-
նին, և սրբին հոգիքն հաւատացելոց առ
'ի լինել անբիծ, և անարատ: Սրբեցուք
ուրեմն, սրբեցուք, որք կրեմք հանապա-
զորդ զսրբարար բաժակն արեան Տն 'ի
ձեռս, առ 'ի լինել մատռուակք սրբու-
թեն. ըստ որում ասէր ած: Սրբիջիք՝ և
սբ լինիջիք. զի սբ եմ ես Տր Ած ձեր.
(ղևտ. 11. 44:) Ուստի երանութի էր
մեզ, եթէ ոչ գտանիցիւր ոք 'ի մեզ, որ
զայսպիսի սպասս արեան Տն ոչ կրիցէր

անար

անարժանութեան, և անմաքրութեան 'ի ձեռին իւրում, 'ի թշուառութիւն յատուկ անձին: Ե՜ երանութիւն էր, եթէ ոչ զտանիցիւր 'ի մեզ ոք, որ միով ձեռամբ զբաժակ տն, և միւսովն զբաժակն սատանայի ոչ շօշափիցէր. Նաև երբեմն զարիւնն քն, և մերթ զարիւն անմեղ եղբօր իւրոյ ոչ ծծիցէր կայենաբար զանազան զրպարտութեամբ: Ուրեմն ո՞վ տիմոթէէ. ամ ո՞վ հովիւ, և քահանայ դու՝ Օրինակ լինիջիր հաւատացելոց սրբութե. և զգո՛յշ լեր, զի մի՛ 'ի ձեռն վատթար կենցաղավարութեան քոյ գայթակղեցուցանիցես զոնէ զմինն 'ի փոքրկանց յանձնեցելոց 'ի քեզ:

Ե՜ յեզերին աստանօր առաջաբանական խրատու մեր, որով մանաւանդ զիս՝ քան թէ զայլս դիտեմ խրատել, դոլով յետնագոյն քան զբնաւս, և պարտաւոր բազմատեսակ տաղանդոց Տն. այլ չեմ զորբանու՜էր դասս մաքրակրօն քահանայից մերայնոց, ջանասէր լինիլ յուսումն ամ հարկաւոր գիտելեաց, որք վերաբերին 'ի բարւոքագոյն մատակարարումն եօթանց խորհրդոց եկեղեցւոյ. և մանաւանդ խորհրդոյ խոստովանութեան, որոյ գործածութիւն կարօտի մեծագունի խոհեմութեան, մինչ ըստ ասելոյ ածաբանից ոմանց, է Նրբագոյն արհեստ ամ հոգևոր արհեստից: Ե՜ զի թէպէտ յատա

կա-

կապէս սոյն գրգուկ ոչ է շարադրե֊
ցեալ վ՟ն խոստովանահարց, այլ վ՟ն խոս
տովանորդաց միայն, առ 'ի ուսուցա֊
նել նոցա զկերպն բարեպէս քննելոյ զխղճ
մտանս, զեղանակն կատարելապէս զղջա
լոյ 'ի չարեաց, զոճն ամբողջապէս խոս
տովանելոյ զմեղս, և զորպիսութիւնն
յարմարապէս կատարելոյ զապաշխա֊
րանս: Բայց սակայն այնպիսի պատշա
ճաւոր եղանակաւ իմն ընձեռէ զասացե
լոցս, զի նաև նորբանկատ խոստովանա
հարք կարեն հաւաքել 'ի սոցանէ զհար
կաւոր գիտելիս իւրեանց, եթէ մտա֊
ւապէս ընթեռնուցուն զայնս: Որոյ վ՟ն
'ի բաց թողեալ իմ աստ զխօսիլն ընդ աշ
խարհական անձինս, առ որս բաւակա֊
նաբար վարդապետէ հեղինակն. երկա
բեցի միայն զբանն իմ առ պատուելի մե
բատեսուչս, հովիւս, և քահանայս, ո֊
րոց ոչ սակաւ օգուտ լինիլ յուսամ սոյն
գործ առաժմ, մինչև շնորհիցէ նոցա ած
զայնպիսի գիրք իմն, որ լիագոյն կեր֊
պիւ ուսուցանիցէ նոցա զամ հարկաւոր,
և պատկանաւոր գիտելիս, և առնելիս
խոստովանահայրութե. որ այնքան հար
կաւոր եղիցի նոցա նոյնն, որքան հարկա֊
ւոր է սոյնս աշխարհականաց: Յաղագս
որոյ ո՞վ եղբայր իմ 'ի Քս. թէ քահա
նայ իցես, և թէ աշխարհական. մինչ
առհական, և մեղանչական ես, և այ֊

նու

նու կարօտիս մատչիլ առ որբարար խոս-
տովանութեն · այնպէս պիտանաւորա-
գոյն էր ինձ պարտիս վարկանիլ վս՟ քո
սոյն գրգուկս , որքան պիտանաւոր է
բազմազբաղ վաճառականի ումեք փէշ-
բէրն իւր , առ 'ի նկատել 'ի նմա գոնէ
անգամ մի 'ի շաբաթու՝ զշխարդն առև-
տրութեանց իւրոց, որով մարթասցի ճա-
նաչել զօգուտն , և զվնասն իւր ։ Ու-
րեմն վերջապէս՝ 'ի վայելելն քո զսա ,
եթէ կամիցիս յերախտագիտացն սակար
կէլ վիճակի , միով հայր մերիւ քով՝ առ Տ՟ր
յիշման արժանաւորել մի՛ զանցառնի-
ցես զբազմամեղ աշխատօղս 'ի լոյս
ածեցման սորին ։

որ եմ ամենանուաստ ծառայ
Յարգելութեն ձերում ։

Սարգիս Վրդ Կոստանդնուպօլսեան ·
Արք եպիսկոպոս Մծի Կեսարեան ։

ՍՈՒԱ



Zucchi f.

# ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հեղինակին, առ ընթերցօղսն այնց, զորոց ջետ-նախն ընջետել:

Ստուա՛ծային նախատեսութե̄ն ոչ բաւականացաւ առնել միայն, զի մարդ ծնանիցիւր: այլև գիտելով թէ յետ ծնանելոյն՝ ոչ կարէր երկարապէս մնալ առողջ, այնու 'ի միասին նախահոգաց՝ առ 'ի նախատեսանել վ̄ն ն̄ր զդեղօրայս, 'ի խոտոց, 'ի հանգաց, 'ի հրահալելեաց, և յայլոց խառնուա՛ծոց: Արդ զայն, զոր արար 'ի կարգի բնութե̄ · արար, բայց առաւել առատագոյն սիրով 'ի կարգի շնորհաց: Քանզի ոչ բաւականացաւ առնել, զի մարդ ծնանիցի 'ի ձեռն սրբազան մկրտութե̄: այլ նաև տեսանելով զբազմազան տկարութիւս, 'ի յորս անկանելոց էր նա մեղանչելով · այնու սահմանեաց նմա այնպիսի դեղ կ̄նի, որ է ծայրագու-

նապէս ներգործող ընդդէմ ամենից տկա
րութեանց : Նաեւ կազմեաց նմա զփրկա
ւէտ աւազան իւր արեանն Քի , առ ամ
հարուածս նորին : Եղիցի ամենայն տեղի բաց-
եալ 'ի տանն Դաւթի 'ի բնակչաց Երուսաղեմայ.
զաք. 13. 1: Այս աւազանս է խոստո
վանութիւն, ըստ որում որ աստ առնա
նի 'ի մէնջ , է մինն 'ի սրբազան խորհր-
դոց յորում 'ի ձեռն արձակման քահա
նային, թողանին մեղքն խոստովանո-
ղին , եւ ապաշխարողին , որք գործե-
ցեալք լինին զկնի մկրտութեան : Յա
ղագս որոյ 'ի սրբազան վարդապետաց
եւ սա կոչի մկրտութի . բայց աշխատա
լի , ըստ որում իսկապէս պատկան է
զի լինիցի :

Նախկին առողջութիւնն դայ առ
մեզ 'ի ծնանիլն , շնորհեցեալ առանց
աշխատանաց : Բայց եթէ յետոյ կորու
սանիցեմք զնա անկարգութբ իւիք, ոչ
վերադառնայ առ մեզ նոյնն՝ առանց հա
տուցական աշխատանաց : մանաւանդ
առ 'ի բժշկել, հարկաւոր է ենթադրել
երկաթոյ, եւ հրոյ . զի ոչ ոք կրթի, եւ
մերժի 'ի հիւանդանալն : Այսպէս եւս
նմանալի է յաղագս շնորհաց : զի նախ-
կին շնորհն որ մեզ յառաջնում մկր
տութեան , առանց աշխատանաց : Բայց ե-
թէ 'ի բաց ձգիցի այն , ոչ երբէք վերա
դառնայ առանց բազում ցաւոյ յերկ-
րոր

տորդուս մկրտութե՛, որ է ապաշխա_
րութե՛ն :

Ուստի առ՚ի գնալ առաւել զգուշութե՛ ասեմ համառօտա՛պ. թէ ո՛րպէս ապաշխարութե՛ն նման է մկրտութե՛ զօրութե՛ն իւրով. այսպէս և նման է նմա հարկաւորութե՛ն իւրով: Վա՛ որոյ այնքան հարկաւոր է ապաշխարութե՛ն առ այնմ, որ մեղուցեալ է զկնի մկրտութե՛, որքան հարկաւոր է մկրտութե՛ն առ այնմ, որ ոչ երբեք մկրտեցեալ է: Յաղագս որոյ ոչ է զարմանք. եթէ ընդդէմ այսպիսի խորհրդոյ միոյ, որպիսի է այս. ոչ երբէք դադարիցի դևն առնելոյ զխստագոյն պատերազմ իւր, համարելով և որդորելով զբազում անձինս, զի մի՛ կիրառնուցուն զայն. և կամ այնքան միայն գործածիցեն, որքան բաւական իցէ ապականիլ նովաւ: Վասն որոյ իրաւամբ սովոր էր ասել սրբուհին Թերեզիա, թէ սրբապղծ խոստովանութեամբ, մշտնջենաւորապէս ըմանիւր դժոխքն: Եւ գրելով ես առ քարողիչ ոմն, եւ նմա զայս խրատս, և զգուշութիս ասելով: Ո՛վ հայր. բազում անգամ քարոզեա՛ ընդդէմ այնպիսի խոստովանութեանց, որք վատապէս և պակասա՛պս արարեալք լինին. զի դևն ոչ ունի զայլ իմն որոգայթ զօրեղագոյն, որով որսայ զայնքան հոգիս,

եթէ ոչ զայս միայն, 'ի ձեռն որոյ պատ
րէ զբազումս ։

Որոյ վ՟ս ո՛վ սիրելի ընթերցող ( հաւա
տա՛ ինձ, ոչ պատրեմ զքեզ ) թէ սոյն
աստուածն այնպիսւոյ իմաստուն կու
սին, եբեր առ իս զմեծ զարմացումն, և
ափշումն իմն ժամանակ ինչ ։ Բայց յե
տոյ մինչ 'ի ձեռն երկար փորձառութե՟,
զոր արարի 'ի շրջագայելն իմ առ 'ի քարո
զել զբան Տ՟ն, կենցաղավարելով 'ի մէջ
բազում, և զանազան ազգաց ․ այնու
յայտնապէս ճանաչեցի, թէ սրբուհին
զոչինչ յարաբարդեալ էր յայսմիկ ա-
սութե՟ս ։

Բազում մեղաւորք ապաւինին առ այս,
զի բազում անգամ խոստովանեալ քեն ։
և ոչ նկատեն առ այս, թէ գուցէ ոչ եր
բէք բարեաց խոստովանեալ քեն ․ և այսու
պատրողական և խաբէական ենթադր
րութ՟ն իւրեանց գնան 'ի կործանումն,
Այսպիսեաց ամից պատահի այն, որ
ճշգրտապէս դրի զսիղէն ․ թէ ողորմե-
լի կենդանին այս ( որ յայտ է ) յենու
'ի ծառ իմն առ 'ի ննջել հանգստապէս ։
բայց ոչ նկատէ բնաւ, թէ ծառն այն
ոչ է հաստատ ։ Քանզի գոլով այս այն
պէս սղոցեալ 'ի յորսորդաց մերձ 'ի գե
տինն, մինչ զի ցուցանի կալ 'ի յոտի ․
բայց իրաւի ոչ է այնպէս ։ ուստի մինչ
յենու 'ի նա, իսկոյն կործանի, և

՚ի վերահասեալ որսորդաց ըմբռնի ։
Եւ այս ոչ եղեւ վս̃ այլոյ պատճառի,
եթէ ոչ վս̃ այսորիկ, զի մոլորապէս են
թադատեաց հաստատ գոլ զյենարանն,
որ էր խախուտ, եւ սուտ ։ Այսպէս է
եւս նրբագոյն խորամանկութիւն, եւ չա
րութիւն թշնամւոյն ։ զի հաստանէ զյե
նարանն եղջերացուկն մեր, որ է խոստովա
նութիւն ։ բայց ոչ բոլորովին. այլ այն
քան միայն, որքան է հարկաւոր առ՚ի
ոչ լինել հաստատ եւ կայուն ։ Քանզի
ոչ ասէ, թէ մի՛ խոստովանիք բարե
պէս. այլ զի անփոյթ արարե̃լ զանցառ
նիցէք զքննութիւն զայն, որ պիտոյա
նայ առ այն ։ զի մի՛ նկատիցէք եւ մտածի
ցէք զցաւն, որ հարկաւոր է առ զղ
ջուման ։ զի մի՛ նկատիցէք առ առաջադ
րութ̃ն, առ՚ի առաջադրել ոչ գործել
վերստին զայնս, նաեւ ՚ի բաց թողու
ցուք զայլ ամենս պատրաստութ̃ս, եւ
տրամադրութ̃ս, որք պահանջին ՚ի խոս
տովանութ̃ն ։ Վս̃ զի՝ այն որ յենու ՚ի
վր̃ այսպիսեաց պակասաւոր խոստովա
նութ̃ց՝ անկանի եւ կործանի, եւ նոյն
կործանումն իւր լինի աններողելի ։
Բայց ո՞րքան անձինք գտանին այսօր,
որք յեցեալք, եւ ապաւինեալք լինին առ
այսպիսի անհաստատ խոստովանութ̃ս ։
Յաղագս որոյ, առ՚ի նախահոգալ ըզ
հնար, եւ զսպեղանի առ այս մեծա

դոյն կործանումն . ենթադատեցի թէ լինի օգտակար իր իմն , ժողովել 'ի դըրոց մէջ զոմանս սովորական խրատս , և զգուշութիւնս ։ Որք կամ շարժիցեն զձեզ, և կամ օգնիցեն ձեզ առ 'ի բարեպէս խոստովանիլ ։ նաև կարիցեն իբրու ասել ձեզ . թէ այն յենարանքն յորս դուք յեցեալ լինիք , անհաւատարիմք են ։ Եղիցին նաև սոյնքս , մըշտանջ օգտակարագոյնք քարոզչաց , և խոստովանահարց ։ որովհետև 'ի յուսուցանելն զքրիստոնէական վարդապետութիւս , պիտոյանան նաև գլխաւորապէս նիւթք լինիլ առ այնս ։ Եւ յետոյ ոչ լինելն բնաւքն հաւատացեալք . այսպէս ևս լիցին դիւրինք, և յարմարք առ 'ի ուսանիլ, և 'ի լոյս ածել ։ Զի այսու կերպիւ սփռեալ, և տարածեալ լինելով 'ի մէջ ազգաց , պարտին յետոյ լցուցանել ժամանակէ 'ի ժամանակ կենդանի ձայնիւ ։ Ուստի և այս գրգուկս, ոչ է միայն վն յոյժ դռեհկաց ոմանց , ( ոչ վարկեն ոմանք ) այլ նաև է վն ամից անձանց . թէ դռեհիկք իցեն, և թէ թարոյականք , թէ եկեղեցականք իցեն, և թէ աշխարհականք . թէ իմաստունք իցեն , և թէ տգէտք ։ որոյ վն ջանացի սահմանել զբանաւոր կերպ իմն , որ է օգտակար առ ամենեսեան ։ Վերջապէս, ով ընթերցասէր եղբայր իմ . այն Տէրն , որ

նէր.

ներշնչէ 'ի ձեզ, առ 'ի ընթեռնուլ զայս գրգուկս, (յորում ոչ այլ ինչ խնդրի, եթէ ոչ փառքն իւր միայն) տացէ նաև 'ի միասին 'ի սմանէ օգտիլ ձեզ: Զի պարտիք գիտել միով բանիւ. Թէ որքան հարկաւոր է խոստովանիլն առ 'ի փրկիլ, այնքան ևս հարկաւոր է բարեպէս խոստովանիլն առ այն:

Հրաւէրումն առ ապաշխարօղն, զի մերձեսցի առ խոստովանութիւն:

# ԳԼՈՒԽ. Ա:

ՍՂՔԱՏ, ԵՒ ԹՇՈՒԱռական բանտարկեալ ոք, որ ունելով զշղթայն 'ի պարանոցի իւրում, սպասէ ժամառժամ գնալ 'ի կախաղանն առ 'ի կախիլ. ոչ հառաչէ նա առ այլ մեծագոյն բարեբախտութիւն, եթէ ոչ առ ազատութիւն կենաց իւրոց: Եւ թէ գայցէ ոք աւետելով նմա, թէ իշխանն ոչ միայն ներէ նմա, այլեւ որդեգրէ զնա ինքեան 'ի յորդի, եւ առնէ եւս ժառանգ թագաւորութեան իւրոյ. դժուարաւ հաւատայ այնպիսի աւետեացն, եւ հաւատալով անկանի 'ի յորոգայթի մեռանելոյ. եւ լինի թէ՝ ուրախութիւն բառնայ զնոյն կեանքն,

զոր

զոր ոչ կարաց բառնալ դաշինն։ Արդ՝ եթէ կարեն բաղդատել փոքրագոյն իրքն ընդ մեծամեծ իրաց, և ժամանակաւորքն ընդ յաւիտենականաց։ այս է ուրեմն փոփոխումն, որ ներգործեալ լինի ՚ի մեղաւոր, և յապերջան ոք ՚ի ձեռն մ͞րյ խոստովանութեան։ Զի ՚ի կացութէ պարտաւորութեան, ծառայութեան, դերութեան, և դատապարտութեան, և ՚ի յաւիտենական խնդութիւն լինելոյ սատանայի. խակոյն անցանէ ՚ի բարձրացումն, և յարժանապատուութիւն, առ ՚ի լինել ճշմարտապէս որդի ա͞յ։

Այս է այլ ևս տեսակ բարեբախտութեան, որ պատահի ապաշխարողին. որ և ոչ եղև յովսէփայ գեղեցկոյն, որ արտահանեալ ՚ի խորոյ գբէ, եղեալ եղև ՚ի վ͞ր արքայական աթոռոյ ՚ի յեգիպտոս։ Եւ այս այնպէս. մինչ զի նաև սաստ կարէ ասել մեծաւ զարմացմամբ այն բանն. սաղմ. 104. 20։ Առաքեաց թագաւորն, և ելոյծ զնա (և ոչ բաւականացաւ այսու) այլ կացոյց զնա տէր տան իւրոյ, և իշխան ՚ի վ͞ր ա͞մ ստացուածոց իւրոց.

Արդ գուցէ տակաւին մինչև ցայժմ ոչ ճանաչեալ իցես, թէ որ͞ք չար իցէ կեալն ՚ի մահացու մեղս. որոյ վ͞ս ոչ պակասիմ ես ՚ի տեղւոջ իւրում, առ ՚ի առնել զքեզ ճանաչել և տեսանել զայս յոյժ լիով͞։ Բայց յայսմիկ միջոցի բաւական

եղիցի քեզ այս. թէ մահացու մեղքն է ծայրագոյն չար, ծայրագոյն թշուառութիւն, և ծայրագոյն եղկելութի քան զայլ եղկելութիս, որք պատահիլ կարեն հոգւոյ մերոյ: Քանզի առաւել թշուառականն, և ողորմելին է մարդ ոք միով մահացու մեղօք, որ ունի 'ի խղճմտանս իւր (որ մի՛ արասցէ Տր լինիլ ձեզ այնպէս) քան թէ ունիցի 'ի վր ինքեան զամ դևս, որք այրին 'ի դժոխս, առ 'ի տանջել զինքն: Ի՞ այսպէս. եթէ 'ի բոլոր կեանս իւր լինիցի այսահարեալ, և դիւահարեալ. փոքրագոյն չար լինի նմա այս, բաղդատմամբ այնմիկ կացութե, որ է փոխարկեալ 'ի մի այլանդակ ցուցանք: Այնքան զարմանալի, և սաստիկք դաւք 'ի լսելն, թէ նաբուգոդոնոսոր թագաւորն բաբելոնի՝ փոխարկեցեալ իցէ 'ի ձև եզան, և կամ արջոյ միոյ: և որդատ արքայն հայոց՝ փոխեալ իցէ 'ի խոզ: Այս ոչինչ է ամենևին բաղդատմամբ առ այնս, որք գտանին 'ի հոգւոջ մեղաւորի ուրուք: վր որոյ՝ այնպիսին է նոյն ինքն դևն: Ուստի առ մինն այսպիսեաց կարէ ասել Տրն. Մի 'ի ձէնջ սատանայ է. յոհ. 6. 71: Ձի ոչ մեկնէ սրբն թովմաս աքուինացին. դոլ դև, և սատանայ. նշանակէ աստ զբանականն ստեղծուած մեղօք, որ իցէ միով մահացու մեղօք: Վս զի եթէ կարիցէր երևեցն արդ ումեք

առ'ի

տու'ի ընտրել զմինն յերկուց ասաւ. մի
կամ դահավիժեալ անկանել 'ի դժոխս
առանց մեղաց. և կամ ելանել յերկինս
հանդերձ մեղօք: յայնժամ ամ ոք ( ըստ
մտին անսէլմի ) պարտէր ընտրել և ա-
սել համարձակապէս թէ. մանաւանդ
ընտրեմ գնալ 'ի դժոխս առանց մեղաց,
քան 'ի յերկինս անօրէնութե հանդերձ:
Բայց ընդէ՞ր ասեմ ըստ մտին անսէլմի.
մինչ էկղեսիաստիկոսն խօսելով յա-
ղագս մեղաց ասէ. սիրաք. 28.25. Ը
[illegible] : Եւ՞ այս
ոչ է զարմանք. զի չարին պատժոյ հա-
կառակի կամացն ստեղծուածոյ, և չարին
մեղաց կամացն ստեղծողին: Արդ նը-
կատեցէ՛ք դուք, ո՛րդեօք կարէ լինել
բաղդատութիւն:

Եւ՞ 'ի միւսոյ կողմանէ, ո՛վ կարէ եր-
բէք չափել զբարձրութիւն շնորհաց,
միջնորդութե որոյ կոչուցեալք լինիմք
որդէգրական որդիք այ: Քանզի ած-
ային շնորհն այնքան մեծագոյն բարի
է, որոյ մի փոքրագոյն աստիճանն ա-
ռաւել արժէ, քան զբոլոր մարդկային
ազնուութիւն, զբոլոր իմաստութիւն, զբո-
լոր գեղեցկութիւն, զբոլոր կարողութիւն,
զբոլոր սրբութիւն, զբոլոր հարստութիւն,
և զբոլոր զայլ բարիս, զորս ստացեալք
են, և ստանալ կարեն մարդիկք: Եւ մա-
նաւանդ քան զայնս, զորս պարտ է-

ղեալ է ունիլ նոյն ինքն բնութեան հրեշ-
տակաց: Եւ այսպէս. եթէ առ'ի ստա-
նալ զմի աստիճան շնորհաց, հարկա-
ւոր իցէր տապալել զերկիրն, կործանել
զերկինքն, և 'ի միում կիտոջ եղծանել
զա̄մ բնութիս. այս ա̄մ լինէր յոյժ սա-
կաւ ինձ, առ'ի ստանալ զայնքան փոքր
աստիճանն շնորհաց:

Նաև արդարացուցումն է այն, որով
հեղանի շնորհքն 'ի հոգիս մեր՝ 'ի վեր
քան զա̄մ գործս բնութե̄, որք յաւա-
ջադային յա̄ծային ամենակարողութէ:
Ուստի առաւել մեծագոյն, և զարմա-
նահրաշ գործ առնէ ա̄ծ, մինչ դար-
ձուցանէ զմի միայն մեղաւոր ոք, քան
զայն զոր արար, մինչ ետ զշարժումն աս-
տեղաց, մինչ կազմեաց զարեգակն, մինչ
ստեղծեաց զընաւ ընդհանուրս, և մինչ
եթէ ստեղծանիցէր զայլ նորագոյն աշ-
խարհ ինձ՝ յա̄մ յաւիտեանս: Ամենայն
ինչ ծանրակշիռ ոչ է արժանի անցին ժամա-
նակի (ասէ հոգին ս̄բ.) սիրաք. 26. 20:
ա̄մ ոչ է արժանաւոր դին, որ հաւասա-
րիցի միոյ արդար հոգւոյ: Զինչ թուի
ուրեմն ձեզ երջանկութիւն այնորիկ մե-
ղաւորի, և ապաշխարողի, որ յայնքան
մեծագոյն թշուառութէ, անցանէ առ
այսպիսի բարձրագոյն կացութե իմն:
Առէ՛ք դուք 'ի ձեզ արդէն ասացեալ
բանս այս մեզ*. և կշռեցէ՛ք զնա, և

յե

յետոյ բաղդատեցէք զայն ընդ ներ-
հակին իւրոյ. այսինքն ընդ շնորհաց. և այ
նու մտածեցէ՛ք զտարբերութիւն, և
զանազանութիւն նոցին:

Ո՛վ ճանաչելով զայս, իսկոյն իմանայք
նաև 'ի միասին. թէ ո՛րքան բարի գայ
առ մեզ 'ի խորհրդական խոստովանու
թէն, որոյ միջնորդութբն ներգործի
այս մեծագոյն արդարացուցումս: Ե՛ւ
մանաւանդ զարմանայք, և ափշիք յայն
ժամ 'ի տեսանելն. թէ այսու ամի՛,
ո՛րպէս գտանին տակաւին մեղաւորք ո-
մանք, որք այնքան ցանցառակի, և
յամրապէս մատչին 'ի խոստովանութին,
գոհունակք լինելով հանգչիլ 'ի թշուա
ռութիւն իւրեանց. հանգոյն անբան
անասնոց, որք յոյժ առաւել յօժարու
թբ ընկողմանին 'ի տիղմս իւրեանց,
քան թէ յառնեն յոսկեղէն մահճի:
Ո՛հ թէ. որքան զիրաւունս ունեցաւ
ա՛ծ աղաղակել ընդդէմ այսպիսեաց, 'ի
ձեռն մարգարէին սոփոնիայ. գլուխ.
1. 12: Խնդրեցից զվրէժ յարանցն՝ որք են
հղփացեալ են 'ի տիղմս իւրեանց: Որ և յետոյ
այն արդարացուցումս, թէև արդէն
ներգործեցեալ է, այնու ոչ միայն տակա
ւին ամբ խոստովանութին առանց պտղոյ
իւրոյ: Քանզի այն շնորհն, որոյ զմի
աստիճանն ունիս դու, (որոյ արժողու
թին արդէն լո՛ար) միշտ բազմապատ
կա

ծաղկես զօրանայ , և աճի ։ Որ արդարնալոյն է՝ արդարասցի պահանին . յայտնութեան . 22 . 11 ։

Արդ եթէ այսպէս է . թո՛յլ տուր ուրեմն , զի ես զքեզ 'ի ձեռանէ ըմբռնեալ՝ ածիցեմ առ այս օգտակար խորհուրդս ։ Եւ՞ մի դուցէ՝ հաստատացես դու , թէ 'ի յորդորելն իմ զքեզ առ 'ի խոստովանիլ , թերևս հրաւիրեմ զքեզ առ զարհուրելի տանջանարան ինն . որ ոչ է այսպէս ։ Այլ մանաւանդ դիտեմ ես ածել զքեզ , յամենափարթամ գանձարանն անձային բարերարութեցն , առ 'ի բարձրապէս փարթամացուցանել զոգ հոգի քո ։ Մի՛ զարհուրիր ուրեմն 'ի հնչմանէ , և 'ի ձայնէ այսպիսի անուանցս . [illegible] . զղջումն . տառապանութիւն . խոստովանութիւն . և ապաշխարութիւն . որպէս զարհուրելի , և երկնչի մանուկ ոք ունայն նապէս , 'ի տեսութէ այլանդակ պատկերի ուրուք ։ Ընթերցի՛ր , և բացայայտի քեզ ։ քանզի եթէ հոգունակ իցես ուսանիլ , նաև գնալ զկնի հետոց առաջնորդին քոյ ։ յայնժամ տեսանես . թէ սոյն երկիրս աւետեաց ոչ միայն ոչ կլանէ զընակիչսն իւր . այլ թէ մանաւանդ կենդանացուցանէ զնս , նաև առնէ վաճառ նց , զի մինչև 'ի քարանց նորին կաթիցին քաղցրահամ մեղերք ։ Կամիմ ասել . թէ 'ի նոյն ցաւոյ զղջման ,

մանն, և խոստովանութե՛, ծնանի այն_ պիսի հեշտութի՛ իմն, զոր ոչ փորձա ուեն երբեք այնոքիկ բնաւք, որ սիրեն զաշխարհս 'ի յեղխպատի կերակրեանց :

Յաղագս քննութե, 'ի ձեռն որոյ ապաշխարօղն պարտի պատրաստել, և դրամատը զիւր առ խոստովանութի :

## ԳԼՈՒԽ. Բ:

Երեք կերպիւ զղջացուցանէ զմեզ 'ի մեղաւորաց. ց խորհրդով, բանիւ, և գործով: Եւ երեք կերպիւ հատուցանի, և վճարեցեալ լինի ամենայն արդարութեան յայնցանէ, որք դառնան 'ի մեղաց. ց զղջմամբ սրտի, խոստովանութե՛ լեզուի, և ապաշխարութե՛ գործոյ. որ և առի բաւարարութե, և հատուցումն: Այսոքիկ են երեք հեղինակական, և գլխաւորական վկայութիւնք, առ որս սրբ հաւատ յերկնային ատենի, 'ի ձեռն որոյ ճշմարիտ համարեալ լինի ապաշխարութին միոյ մեղաւորի: ուստի պահան_ ջի, զի սոքա երեքեանքս լինիցին համա_ ձայնք: Բայց իբրու թէ, զի սոքա երկոքեանքս. ց զղջումն, և խոստովա

նութ.

նութիւն, են էութենական մասունք։ և երրորդն է միայն՝ ամբողջական մասն, որ է բաւարարութիւն. ըստ ապաշխարութեան։ Արդ այսոքիկ են այն երեք մասունքն, որք պատկանին առ քեզ որպէս ապաշխարող։ որոյ վասն դնացից յառաջ, բացայայտելով զայսոսիկ յայսմիկ կրթութեան։ և այս ոչ այլով կերպիւ, եթէ ոչ մեծագոյն դիւրութեամբ։ Նաև բաժանեցից 'ի յայնս, որք պարտին առնանիլ յառաջ քան զխոստովանութիւն, 'ի մէջ խոստովանութեան, և զկնի խոստովանութեան։

Արդ սկսանիմ ես զայնմանէ, որ պարտիք առաջանալ նախ քան զխոստովանութիւն։ Ուրեմն նախ քան զայլ ամենայն ինչ, պատկան է խորհիլ առ'ի քննել զխղճմտանս, որ է յոյժ հարկաւոր՝ առ'ի կարել տալ զպատկանաւոր տեղեկութիւն, և զաղդումն յայսմիկ ատենի։ Որովհետև ապաշխարողն, որ է աստ ամենայն պարտաւոր. պարտի ունիլ ևս 'ի միասին ըզկողմն ամբաստանողի զինքենէ, նաև ըզկողմն վկայի։ Ուրեմն քննութիւն խղճմտանաց, է մանաւոր խնդրումն, և պահանջումն գործոց մերոց, որ կացուցեալ է առ'ի դատանել զյանցանս մեր, առ'ի արհամարհել, և առ'ի ջնջել ըզնոսա, միջնորդութեամբ խորհրդականի խոստովանութեան։

Յայտնի քննութն կարէ սխալիլ ոք 'ի յերկուս ծայրս: և այս կամ առաւել նեղագոյն խղճահար խղճմտանօք . և կամ յոյժ անզգոյշ, ազատ, և լայն խղճմտանօք : Վասն զի գտանին ոմանք անձինք, որք են առաւել երկչոտք, քան զոր պարտն է . զի թուի ինքեանց, թէ զոչինչ խոստովանութիւնս բարեպէս արարեալք են : Յաղագս որոյ միշտ ապրին հոգածութբ, և թախծութբ . և 'ի ձեռն ունայն երկչոտութն իւրեանց, ատելի առնեն զայս խորհուրդս սրբյ եկեղեցւոյ, որ է այնքան օգտակար . նաև ցուցանեն անտանելի լինիլ այն օրէնքն Քսի, որ է այնքան քաղցր : Պարտ է ուրեմն, զի այսպիսի անձինքս գիտասցեն . թէ Տրն մեր ոչ պարտաւորէ զմեզ բացարձակապ, խոստովանիլ զամ մեղս, զորս գործեալ եմք : այլ միայն պարտաւորէ խոստովանիլ զայնս ընաւս, որք գան 'ի յիշողութն մերում, և անկանին 'ի միտս մեր զկնի միոյ հոգունակագոյն քննութն : Եւ այս այնպէս . մինչ զի եթէ զկնի բաւականապէս առնելոյ հոգունակ քննութեան այսորիկ, տակաւին եթէ մնայցէ 'ի մեզ մեղք ինչ թարց խոստովանելոյ՝ պարզագոյն մոռացմամբ . այնպէս թողանի նոյնն, որպ և թողանին այլք խոստովանեցեալքն: Բայց միայն

մե

վերանայ պարտաւորութիւն խոստովա նելոյ զնա, մինչ պատահմամբ իւիք գայ նոյնն 'ի միտս, և 'ի յիշողութեան մե_րում:

Արդ այսպիսի երկչոտ անձինք, սակաւ գտանին թուով: Բայց մեծագոյն, և առանց բաղդատութե է բազմութիւն այ նոցիկ, որք մեղանչեն զանցառութբ, և լայն խղճմտանօք. և գնան առ խոստովանութիւն առանց հարկաւոր նախա պատրաստութե, Եւ այսպիսիքս պար տին գիտել. թէ այն խոստովանութիքն, որոց ոչ առաջանան զգուշաւորագոյն քննութի խոստովանողին, ոչ են հաս տատ խոստովանութիւնք: Եւ եթէ յայն պիսի խոստովանութիւնս թողանիցին մեղք ոմանք մոռացմամբ՝ առանց ասե_լոյ. իսկապէս այնպէս համարեալք լինին, ոչ թէ դիտաւորութբ թողանեցեալք եղեն: որովհետև ոչ յայտ է, մոռա_ցումն այն է մեղադրելի, զի ոչ ծնանի 'ի պակասութէ քննութե, այլ 'ի զանցա ռութէ կամաց: Եւ այսպէս. սրբազան ժողովն Թրիտէնթինայ, զայնպիսի ըզ գուշութիւս, և հոգունակութիւս պահան ջէ 'ի քննութե, (ըստ որում մեկնեն վարդապետք) որ կայանայ յայսմիկ, զի իւրաքանչիւրոք այնպիսի ուշադրու թբ, և զգուշագոյն մտադրութեամբ աշխատեցէ զայն, որով սովորք են առնել մարդ

մարդիկք զծանրագոյն գործառութիւնս, և զհարկաւոր ձեռնամխութիւնս: Քան զի պարտ է, զի հոգունակութիւնն և զգուշութիւնն համեմատեսցի գործառութեան: Վա՜ զի ուր գտանի այսպիսի հոգունակութի, նշանաւոր լինի ջանն, որ եղեալ լինի անդ՝ առ 'ի բարեպէս առնել զգործն:

Բայց իրաւի է նաև այս. թէ այսպիսի քննութիւն՝ ոչ պարտի գոլ մի և նոյն կերպիւ առ ամենեսեան: Եւ այսպէս նուա՛զ աստիճանաւ պարաւանդի առնել ոք զայն, որ յաճախապէս խոստովանի, քան զայն՝ որ խոստովանի սակաւանդամ: Նուա՛զ լինի սոյնս առ այն, որ անկանի 'ի փոքր պակասութիւնս, քան առ այն, որ դահավիժի 'ի բազում չարիս: Պակաս, և նուա՛զ լինի առ այն, որ ունի զսակաւ զբաղմունս, քան առ այն, որ պատատեալ է 'ի բազում պատաղմունս: Նաև պակաս և սակաւ լինի առ այն, որ է տգէտ և Թանձրամիտ, քան առ այն, որ է դիտուն և նրբամիտ: Մանաւանդ թէ սոյն քննութիւն ըստ մեծի մասին, կարէ լցուցանիլ 'ի խոհեմ խոստովանահօրէ, մինչ խոստովանաւորդին իցէ յոյժ դռեհիկ: Եւ այսպէս. բաւական է, զի այսպիսի դռեհիկ անձինքս, զկնի որոյ մինչ կերպիւ ինչ քննեցին զինքեանս, մերձենայցեն

ցեն առ խոստովանութիւն, դիտաւորութե համատարմաբար պատասխանելոյ հարցմանն խոստովանահօր: Զի 'ի ձեռն այսպիսի դիտաւորութե, բաւականապէս պատրաստեալք, և տրամադրեալք լինին յայսմիկ մասնաւոր պիտանաւորութե:

Որդ ասացի այսպիսի գռեհիկ անձինքս: Քանզի այնոքիկ, որք ունին զընդունակութի ինչ, պարտին ըստ ինքեանց արտադրել, և արտաբերել զմեղս իւրեանց, թարց սպասելոյ՝ զի այլք արտահանիցեն զայնս 'ի բերանոյ իւրեանց, Ոմանք ևս կամին, զի խոստովանահայրն իցէ նախագուշակօղ. և դրեթէ այնպէս ասեն, որպէս և ասաց նաբուգոդոնոսոր առ հռչակաւոր թարգմանիչս իւր. դանի. 2. 3: Զերազ տեսի, և չիմարեցաւ ոգի իմ խելամուտ լինել երազոյն: Ե՞ւ այսպէս. իբր թէ սակաւ ինչ պակաս քան զայն կամին, թէ նաև զերազս իւրեանց նախագուշակիցեն խոստովանահարքն: Պատկանի ուրեմն պատասխանել առ այսպիսի անձինս, ոպ և պատասխանեցաւ յայնց թարգմանչաց առ թագաւորն: Ա՛սա տէր զերազն ծառայից քոց: և զմեկնութիւն նորա ասասցուք: Այսինքն. գնացէ՛ք դուք սակաւ ինչ, առ 'ի բաւառնել ձեզ 'ի կողմանէ ձերմէ, քննելով կերպիւ ինչ զձեզ, որքան

և

և կարէք տեղեկանալ. և յայնժամ ես յօժարապէս արարից ես զայն, որ պատկանի առնել ինձ:

Մերամճայ ինձ այժմ. զի ցուցից ձեզ զեղանակն և զկերպն, որով պարտիք յառաջանալ դուք յայսմիկ քննուե̃. ուսուցանելով ձեզ վարիլ պատկանաւոր հոգունակութ̃բ, և զգուշութ̃բ: Արդուրեմն, նախ քան զսկսանելդ երկրպագել Տն̃՝ խորագոյն խոնարհութ̃բ, ճանաչելով զքեզ ոչ̃ պարտաւոր ոք մծ̃ային հանդիսավեհութ̃են, որ 'ի ժամանակի իւրում դատելոց է: Շնորհակալ լեր յաղագս այնքան բարերարութ̃եցն, որով ստեղծեալ, և պահպանեալ է ըզ քեզ, և խոնարհեալ է վս̃ քո մինչև առ նախատալի մահն խաչին. կոչեալ է ըզ քեզ առ հաւատն իւր. ընտրեալ է զքեզ 'ի խորհուրդս իւր. ժողովեալ է արդէն զքեզ բազմիցս առ ապաշխարութիւն: Եւ այժմ ևս հրաւիրէ զքեզ վերստին, և սպասէ քեզ այնպիսի բարերարութ̃բ, զորս ոչ շնորհեալ է այլոց անթուելի դատապարտելոց, որք արդէն այրին 'ի դժոխս, վս̃ այնպիսի մեղաց, որք են փոքրագոյնք քան զքոյն: Եւ̂ երանելի համարէին զինքեանս, եթէ հանդոյն քեզ կարիցէին գնալ առ ոտս խոստ̃ովանահօր միոյ, առ'ի խոստ̃ովանիլ, և լուծանիլ 'ի յողբս, և 'ի յարտասուս:

Եւ̂

Եւ յետոյ աղաչեա՛ զՏր̃, զի լուսաւո-
րելով զխաւարն սրտի քոյ, տացէ քեզ
զլիագոյն ճանաչումն, զ՚իքէն գործե-
ցելոց մեղաց, զթուո՛ց, և զծանրութե̃ց
նոցին: Եւ առնելով քո զայսոսիկ, ա-
պա սկսեա՛ բարեպ̃ խորհիլ ՚ի միտս քո,
յաղագս այնց տեղեաց, յորս եղեր.
յաղագս անձանց այնոցիկ, ընդ որոց
կենցաղավարեցար. և յաղագս այնց
գործոց, ՚ի մէջ որոց զանազանապէս ըզ-
բաղեցար, ՚ի վերջին խոստովանութե̃ն
քումմէ մինչև ցայժմ: Համանշանելով
մտադրութբ̃ զիւրաքանչիւրսն նոցին այ-
սոքիւք գլխով (ըստ որում խայթէ զքեզ
խղճմտանքն քո) ընդդէմ այ̃, ընդդէմ
ընկերին, և ընդդէմ քեզ ինքեանդ.
բանիւ՞, խորհրդով, և գործով:

Որդ եթէ ոմ̃ մեղք դիւրապէս ճանա-
չիլ, և յայտնիլ կարիցեն. ոչ ասէր
Ած, թէ յաւուրն յետնում վառեցից
զճրագ առ ՚ի որոնել զնս̃. սոփո. 1. 12:
Յաւուր յայնմիկ՝ քննեցից զերուսաղէմ ճրա-
գաւ: Բայց սակայն համբերեցէ՛ք, զի ես
յամեցից յաչամիկ քննութե̃ սակաւ մինչ, առ
՚ի ազդել ձեզ. թէ ո՛ք իցեն այնք յան-
ցանք, և մեղք, որք սովորք են հանա-
պազ փախչիլ ՚ի յաչաց մերոց: Ո՜հ թէ.
ո՛րքան լաւագոյն է մեզ կիրառնալ
զճրագս զայս, առ ՚ի առնել զքննութի̃
վմ̃ մեր, քան թէ յետոյ Տր̃ն կամիցի

կիք

կերատնուլ զայն , առ 'ի քննել զմեզ : Եւ այս յայտ եղանի այնու , զոր ասէ առաքեալն · 1· կորնթ· 11· 31: Եթէ զան ձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք :

Յաղագս ոմանց ընդհանրական մեղաց , որք առհլորք են գաղտնի ծնալ 'ի ծննութէ :

## Գ Լ Ո Ւ Խ. Գ:

Մեծագոյն իրաւամբ խնդրէր դաւիթ 'ի Տնէ ասելով· սաղմ· 18· 13: 'Ի գաղտնեաց իմոց սրբեա զիս : Վս զի պատահի բազմիցս · զի ծածային արդարութեն 'ի պատճառ այնց մեղաց , զորս գործեմք մեք անզգուշաբար , թոյլատրէ զի անկանիցիմք առ այլ մեղս , որք սակս հեղգութե մերոյ ոչ զգուշանամ առ 'ի ոչ գործել զնս : Պիտոյ է ուրեմն նախանձթդրել զերկու կերպ ոդխտութիս , առ 'ի բարեպէս իմանալ զայս վարդապետութիս : որոց մինն է մեղադրելի , և միւսն ոչ : Զի երբեմն առնէ մարդ զմմ զգուշութիս , և զհոգունակութիս՝ առ 'ի գիտել զճշմարտուն , շուրջ զպարտաւորութեամբն խղճմտանաց իւրոց : զի խորհի , հարցանէ , և խորհրդակցի :

դակցի: Բայց սակայն. զի կամ սակաւ է ընդունակութիւն նորին. և կամ թէ՝ ոչ գտանէ զոք, զի ուսուցանիցէ ինքեան: և այսպէս մնայ 'ի տգիտութե̄ իւրում: Զի այսպիսի էր իսկապէս և պօղոս, որ 'ի սկիզբն դարձման իւրոյ. թէպէտ բանայր զաչս, և ջանայր որքան և կարէր՝ առ'ի տեսանել: Բայց ոչ կարէր տեսանել զիր ինչ. գործ. թ. 8:

Աչօք բացօք ոչ զոք տեսանէր:

Արդ այսպիսի տգիտութիս, մինչ ոչ է կամաւոր 'ի պատճառն իւր, և ոչ ևս'ի ներծութիս, և'ի պատճառելիս իւր. այնու է աններգադրելի. և ոչ ևս արդիւնաւորի զպատիժ, այլ զցաւակցութի: Այսու կերպիւ, ա̄մ ոք ցաւակից լինի կուրի ումեմն, եթէ անկանիցի. և մնաւանդ սիրով առաջնորդէ նմա, զի մի՛ անկանիցի: Որպէս և պօղոս ձեռամբ ածեցեալ եղև 'ի քաղաքն, 'ի շուրջ եղելոցն, վ̄ն ցաւակցութե̄: Հակադարձապէս, ոչ ոք ցաւակցի այնմ, որ դիտաւորութ̄ե փակեալ է զաչս իւր առ'ի ոչ տեսանել: և եթէ 'ի ձեռն այսպիսի կամաւորական կուրութե̄, անկանիցի և կրեսցէ զպատիժ ինչ, սովոր է ասել վ̄ն այնպիսւոյն. Հա՜յ թէ լաւ եղև. զի վ̄ն է՞ր ոչ բանայր զաչս իւր, և վ̄ն է՞ր ոչ զգուշանայր 'ի գնացս առ'ի ոչ անկանել:

Այսպէս ևս Տէրն, ոչ ցաւակցի վ̄ն այն

ա̄ պիսի

պիսի տգիտութեն , որ է կամաւոր . և
ոչ անմեղադրելի առնէ զայն մեղս , որք
գործեցեալք լինին պատճառաւ նոյն
տգիտութենն : Եւ՛ այն պատահի Նախ .
մինչ նոյն անձն ոչ կամի կանխամ̃ և լա
ւապէս խորհիլ վ̃ն խղճմտանաց իւրոց :
Երկ̃դ . մինչ ոչ կամի քննել զկացութին
պարտաւորութեն իւրոյ , Երրորդ . մինչ
ոչ կամի խնդրել զխորհուրդ , և զխրատ
յայնմանէ , որ կարէ զայն տալ նմա :
Չո̃րդ . մինչ ոչ կամի գոնեայ յանձնել
Տն առ՛ի լուսաւորել 'ի նմանէ :

Ր.րդ մեղքն , որք գործեցեալք լինին
'ի կացութեն այսպիսի կամաւոր կուրու
թեն , ամենմեղք գաղտնիք , և թաղունք :
Վ̃զի 'ի ձեռն զանցառութե , և անհո
գունակութե ոչ ճանաչեն յայնպիսի մե
ղանց . ո̃պ ասէ մարգարէն . սաղմ. 35.
4: Ոչ կամեցաւ նա իմանալ զբարի : և այս
առ'ի գործածել զնա : Նաև կամաւո
րապէս փակէ զաչս առ'ի ոչ տեսանել :
և համառօտապէս ասեմ . փակէ զպա
տուհանն ընդդէմ ճառագայթից արե
գական , զի մի՛ լուսաւորիցէ զտունն ,
Մի գուցէ՛ թէ հաւատայցէք դուք :
թէ այսպիսի մարդիկք իցեն սակաւք .
և այսպէս ոչ իցեն բազումք : Վ̃ զի
եթէ մեղադրելի կուրութե յանցանքն
իցէին սակաւք , որպէս և կարծեն ո
մանք , ոչ այնքան յաճախապէս 'ի մե

դիրս խնդրեցեալ, և հայցեցեալ լի֊
նէր, առ՚ի ճանաչել զճանապարհ Տն՟։
Եւ՛ ոչ ևս այնքան անգամ հայցիւր նե
րումն՝ վն՟ ոչ ճանաչելոյն զնա, համ֊
դերձ ամբաստան լինելով զյանդգնէ որ
դիտութէ՝։ Քանզի յոյժ աւելի է թիւն
յիմար կուսանացն, որ առ՚ի պատիժ
աննկատողութե, և անզգուշութեան
իւրեանց առին զոյ. Ոչ ԳԻՏԵՄ ԶՁԵԶ. մատ.
25. 12։ Քանզի վն՟ այն ոչ ճանաչէ ըզ
նո՟, զի ոչ ճանաչեցաւ՚ի նոցանէ։ Վն՟
զի ասէ տէ՟ն պօղոս. 1. կորնթ. 14. 38։
ՈՐ ՉԳԻՏԱՆԱՅՑԷ, ՉԳԻՏԱՅՑԻ։ Բայց՚ի յայլ
ձևացեալս. մեծագոյն մասն մեղաց կայա
նայ՚ի զանցառութեան, այսու՝ զի են
պակաս նկատեցեալք, և մոռացեցեալք։
Որ սոյնս պատահի երբեմն, մինչ զան
ցառնանեն պատուիրանք ոմանք, որք
պատկանեն առ տէրն մոյ։ Բայց առա֊
ւելապէս պատահի սոյնս բազմիցս, մինչ
զանցառնանեն այնք պատուիրանք, որք
պատկանեն առ տէրն ընկերին։

Որդ շուրջ զանցառութե այնց պատ
ուիրանացն, որք պատկանեն առ տէրն
մոյ. Նախապատուաբար նկատել պարտիս
դու զհեղգութեն, զոր ունիս բազումք
՚ի դիտել և յիմանալ զնոյն, զոր պարտի
դիտել ամ՟ քրիստոնեայ։ Թէ իցէ այն
շուրջ զխորհրդոյն հաւատոյ. թէ շուրջ
զխորհրդոյն եկեղեցւոյ. և թէ իցէ

շուրջ

շուրջ զկերպիւն արժանապէս ընդունելոյ զնմ̃ : Եւ՞ այսու կերպիւ՞ . գտանես զոմանս, որք նաև ոչ գիտեն թէ պսակն իցէ խորհուրդ եկեղեցւոյ . որոյ վս̃ գնան առաջի քահանային առ 'ի պսակիլ, ոչ միայն առանց նախապատրաստական ջերմեռանդութեամբ : այլ նաև բարեպէս գիտելով՝ թէ ունին 'ի խղճմտանս իւրեանց զմահացու մեղս :

Այսպս պատահի . բայց յոյժ մեծ վնասիւք՝ այնոցիկ բազմաց, որք ոչ գիտեն զկերպն բարեպէս խոստովանելոյ . և ոչ գիտեն ևս զայն՝ որ հարկաւորապէս պահանջի առ 'ի ընկալնուլ զշնորհս : Աստուստ է . զի մինչ մերձենան առ խոստովանութիւն առանց յուսոյ, և առանց առաջադրութե . այնու կրկնապատկեն զպարտս իւրեանց՝ փոխանակ ջնջելոյ և եղծելոյ զնմ̃, որպ̃ և տեսանեմք : Այս հեղգութիւն . թէպէտ հասարակաբար մեղադրելի է ծանրապէս, բայց մնայ թաքուն և գաղտնի : ուստի բազումք զնա ոչ խոստովանին, և ոչ ևս ուղղեն զնմ̃ : Զի տգիտին 'ի նմանէ ոչ կայանայ յայլ ինչ, եթէ ոչ 'ի հարցանել այնմ, որ կարէ ուսուցանել, և դաստիարակել . որպ̃ են առ այս պարտաւորեալ եկեղեցիքն, ուր մեկնին, և պարզին այսպիսի իրք : ( բայց 'ի մեզ, կարեն ուսուցանել զայս իմաս

տուն վարդապետօքն, և քահանայքն:)
Ծիծեռն սովոր է կրել զկուրութն. և իւր դեղն է դիմել առ այն խոտն, որ կոչի չելիտոնիայ: Ուրեմն ո՞վ էր այն, որ անմեղադիր լինէր ծիծռանն, եթէ առ՚ի բուժիլ յայնքան մեծագոյն չարէ, ոչ կամիցէր սակաւ ինչ թռչիլ և գնալ անդ, ուր բուսանի այն խոտն: Գոյ ևս այլ մեղք իմն գաղտնի, նաև առաւել ընդհանուր և հասարակ, որ է այս. հեղգանալ և ծուլանալ առ՚ի արմատախլել զվատ սովորութիւն երդուելոյ, հայհոյելոյ, և յիշոցն տալոյ: Որքան գտանին արդեօք այնպիսի անձինք, որք ոչ կամին, և կամ ոչ գիտեն հաստատել զիւր իմն առանց երդման: Այս էրս այսպէս է՝ Ած վկայ: Մէ ածս ծէն վկայ: Խաչօր. Աւետարանօր. Մասօր: Ած պատժէ զիս, թէ այսպէս ոչ էցէ: Ած խռով հէնայ ինձ, թէ այսպէս չէ ղա: Ե՞ւ զայսպիսի առնեն միշտ սովորաբար, վասն ո՞ր սակաւ իրաց. թող զայլ այլանդակ, և սարսափելի ձևս երդմանց, զորս ՚ի կիրառնուն բարբարոսաբար, զորոց յիշումն առնելն ամաչեմ: Ե՞ւ ոմանք ևս ոչ միայն կոչեն զա̃ծ ՚ի վկայ՝ վա̃ հարկաւորութե (որ է մեղք ներելի.) այլ նաև կոչեն զնա ՚ի վկայ առանց ճշմարտութե: Կամ զոնեայ առանց նկատելոյ. թէ արդեօք

Ճշմարիտ իցէ իրն, թէ սուտ (որ է միշտ մեծագոյն մեղք:)

Ո՛ նոյնն աւեմ յայժ առաւել՝ յաղագս սովորութենն հայհոյելոյ, որով հայհոյեն ոմանք որդնալեզուք՝ զԱծ, և զՍբս նորին. և կամ զայլ սրբազան իրս: Որոց վերայ համահանգոյն այնոցիկ, որք հայհոյէին զՔս 'ի հրապարակի 'ի ատենին 'ի գողգոթայ, ըստ նոյնինքն Քս: Եւ՛ կամ առնեն զայս յիշոցնատուութբ դէպ առ ընկերս. անարգելով զնս պէսպէս յիշոցնատուութբ. 'ի մայր, 'ի կին, 'ի քոյր, 'ի յաչս, 'ի բերան, 'ի հոգի, 'ի հաւատս, և 'ի յօրէնս:

Եւ՛ յետոյ այսպիսիքս, որք չարապէս սովորեալք են 'ի յերդնուլ, 'ի հայհոյել, և 'ի տալ զյիշոցս. մինչ խոստովանին, իսկոյն անմեղադրելի ցուցանեն զինքեանս ասելով. թէ սովորեալք եմք, և եթէ այսպէս ոչ առնեմք, ոչ կարեմք հանդարտիլ: Կամ թէ ասեն, երդնումք առանց վնասու այլոց: և կամ յիշոցն տամք այլոց, չունելով զիր ինչ 'ի սրտի մերում: Եւ՛ կամ թէ. մինչ հայհոյեմք, յայնժամ եմք 'ի մեծագոյնի բարկութե. ուստի ոչ առնեմք զայն վս բարկացուցանելոյ զԱծ, այլ առ 'ի մեղմել զբարկութիս մեր: Եւ՛ բաւականացեալ այսպիսի տկարագոյն պատ

ծառանօք, այնպէս զանցառնուն զայս
պխեաց գարշելի երդմնադանցութեանց.
դայթակղական հայհոյութեանց. և ա_
նարգական յիշոցնատուութեանց, ո՛չ թէ
զանցառնուն զոմանց ծաղրական ստա
բանութեանց, և կամ անհամբերական
բանից: Եւ՛ ոչ նկատեն և զգան ըզ
գարշահոտութիւն շնչոյ իւրեանց. որ
այնպէս գարշահոտ, և ապականեցեալ
է, մինչ զի ոչ կարէ ելանել այնպիսի
գարշահոտութիւն 'ի դժոխային բերա_
նոյ: Եւ՛ այսպէս այսորիկ մեղք՝ դառ
նիք, և թաղուցեալք միայն 'ի սիրտս
իւրեանց, մինչ ոչ արհամարհեն երբեք
լիապէս: և ոչ մտածեն զայս, զի ե_
թէ սովորեալք իցեն յերդնուլ, և 'ի
հայհոյել (ո՛չ ասացաւ) պարտաւո_
րին ունել զբազում զգուշութիւն առ 'ի
արմատախլել զնս՝ յանձնելով Տն. և
քաջապէս առաջադրելով յինքեանց
ուղղելն նոցին. նաև ջանալ առնել
զայնս կրթութիւն:

Ոչ պակասին առ այս վախճանս օգտա
կարագոյն միջոցք, առ 'ի յաղթահա_
րել զինքեանս: Հի՛բար. ունել ինքեանս
զայցելութիւն ինչ՝ եկեղեցւոյ իմիք. զա
ղօթս ինն. զմահացուցումն մոլութե
իմիք. տալ զողորմութիւն ինչ, զորս առ
նել պարտին, որքան անգամ անկա_
նիցին առ այսպիսի անդիպութիւնս: Ա՜

յօհան ոսկեբերան ասէ. թէ առաւել յառաւել դեղ առ՚ի յաղթել զմոլութիւն լեզուի՝ այս է, առնել զնա ծոմապահել. վն̃ զի մինչ տանջեցեալ լինի նա, այնու խոնարհի : Եւ եթէ ոչ կամիցիս առնել զեր ինչ յայսցանէ ասացելոցս, սոյն հեղգութիւն համարեալ լինի նմ̃ նորադոյն մեղք : Զորմէ ասեն վարդապետք. թէ կացուցանէ զմարդն 'ի կացութե̃ յարատև մահացու մեղացիմք. զ̃ յայնպիսի մշտակայ ջերմախառնութե̃, որ անզերծելապէս ածէ զհոգին 'ի մեռանիլ :

Նոյնով կերպիւ ևս. վն̃ մեղադրելի աննկատման, ծածուկ և գաղտնի մտաց բազում մեղք շուրջ զսիրովն ընկերին : Որոյ պատուիրանն, և հրամանն գլխաւորապէս կայանայ 'ի չորս ներգործութիս յայտոսիկ : Նախ. առ սիրելութե̃ն թշնամեաց : Երկրորդ. առ ողորմութե̃ն : Երրորդ. առ յանդիմանութե̃ն : Չորրորդ. առ՚ի ոչ տալն զգայթակղութի : Որքան առ առաջինն, որ է սիրելութե̃ն թշնամեաց. գտանես զբազում անձինս, որք ոչ խօսին առ այն, որ վշտացոյց զինքեանս, թէև խօսիցին ընդ այլ ա̃մ դրացեաց, և քաղաքակցաց նորին : և մանաւանդ, ոչ տան նմա նաև զողջոյն մի, մինչ ողջունեցեալք լինին 'ի նմանէ : Եւ եթէ այնք իցեն

ծնօղք, և ազգականք իւրեանց, ոչ միա
րին ընդ նոսա այնու կերպիւ, որպէս և
միարին այլք ընդ ծնողաց, և ընդ
ազգականաց իւրեանց: Ցուցանելով
նոցա մեծ առթի և պատահման, զչար դի
տաւորութիւն, զչար եղձն, և զչար մի
շատակն, զոր ունին ընկալեալ յանիրա
ւութէ: և մտօք խմա դու, թէ որ_
պէս ունին արդեօք զխղճմտանս իւրեանց
այսպիսիքն: Բայց այսու ամի՛ ասեն.
թէպէտ ես ոչ կամիմ նմա զչարի. սա
կայն նա և ոչ կամիմ զբար: Ած զիւր
բանն յաջողէ: Երթիցէ՛ խաղաղութ:
Ես շատ լցեալ եմ 'ի նմանէ, և մասն ոչ
ունիմ ընդ նմա: Եւ այսպիսի պատ_
ճառանօք և բանիւք, պատրեն զին_
քեանս, և տան ինքեանց հաւատալ.
թէ ոչ պարտաւորին առնել զայլ առա
ւել ինչ:

Բայց իրաւի խաբին, և պատրին: Քանզի
զի Տէրն 'ի բազում տեղիս յաւետարա_
նի իւրում հրամայէ: զի ոչ միայն ոչ
կամեսցի ոք չար ընկերի իւրոյ. այլ
բաց 'ի յոչ կամելոյն նմա զչար, նաև
պարտ է, զի սիրեսցէ զնա. յոհ. 15.12:
Այս է պատուիրան իմ, զի սիրեսջիք զմի_
մեանս, որպէս ես զձեզ սիրեցի: Պատուիրան
նոր տամ ձեզ. զի սիրեցէք զմիմեանս. յոհ.
13.34: Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի ա_
րարէք ատելեաց ձերոց: մատթ. 5.44: Կ̃

զի

զի ոչ է բաւական՝ ոչ կամիլ միայն այլոց զչար 'ի սրտի իւրում. այլ նաև պարտ է ցուցանել յարտաքս, թէ ոչ կամի ըզ նոյն չարն: Եւ այսպէս՝ որովհետև ամ անգամ մինչ ոչ խօսեցեալ լինի ընդ ումեք, է նշան իմն ատելութե: այնու ուրեմն պարտիմք խօսիլ ընդ նմա, և բառնալ զգայթակղութիւն զայն, և ոչ տալ ևս այլոց դառնիթ պահելոյ զթշնամութիւն: Մանաւանդ թէ՝ պարտիմք նախկին լինել 'ի յողջունելն. նաև ո՛րքան ողջունիցիմք, պարտիմք պատասխանել ողջունողացն: Եւ զներհակն ասացելոյս առնելն, ոչ է այլ ինչ՝ քան թէ սնուցանել 'ի սրտի զիժն մեղաց թագուցեալ 'ի մէջ խոտոց:

Այսպէս և թագուցանին մեղքն 'ի ծոցս մեծատանց, և հարստաց, որք մխեն 'ի հեշտութիւնս, և 'ի խաղս՝ զայնս դրամս, որք յաւելանան 'ի ծախուց կացութեան տանց իւրեանց. առանց յիշելոյ զպարտաւորութիւն իւրեանց, զոր ունին առ 'ի առնել զողորմութիւն աղքատաց: Ոչ միայն 'ի վերջին հարկաւորութիւն աղքատութե աղքատաց, այլ նաև 'ի ծանրագոյն հարկաւորութե նոցին. զի յայնժամ, մինչ ոչ կարեն ապրիլ նոքա թարց բազում դժուարութեանց: Որ թէև այսպիսի փարթամքս, ոչ մտածեն այժմ զայս

պխախ իրս․ այնու՝ զի արտաքսեալ մեր
ժեն զնմ շահաւէտ խորհրդս։ Բայց
բարեպէս մոածելոց են զայնս 'ի կէտ
մահուան իւրեանց․ մինչ Տէրն 'ի յառ
նուլն զհամար'ի նոցանէ, տայցէ յերես
նոցա և զայս անդթութե մեղքս։ Կամ
թէ յայնժամ առնէ զնոսա բարեպէս տե
ղեկանալ․ թէ այնքան ուտելի պակա-
սիւր յաղքատաց, որքան յաւելանայր 'ի
ձիոց, և 'ի շանց իւրեանց։ Եւ մանա
ւանդ յոյժ առաւել տայ զայս յերես
այնոցիկ, որք ունին զհոգևոր, և կամ
զժամանակաւոր տէրութին, և զիշխա-
նութին ինչ։

Քանզի այսպիսի անձինքս, ոչ միայն
յայնժամ պարտաւանդեալք են առնել
զողորմութին մինչ խնդրեն։ այլ նաև
պարտին որոնել զաղքատս, և տեղե-
կանալ մի հարկաւորութեց նոցին, ա-
ղագաւ նախատեսանելոյ նոցա զպիտոյս։
Արդ իրաւի ունինք մեծատունք, և իշար
թամք որոնեն, և խնդրեն զաղքատս․
բայց խնդրեն զայնս առ 'ի գնել 'ի նոցա
նէ զայն սակաւ անօթան, և զգանե
լիսն զորս ունին, 'ի ժամանակի սովաւ,
և թանկութե։ Կամ խնդրեն զնոսա, առ
'ի տալ նոցա զդրամ ինչ՝ ծանրագոյն տո-
կոսիւք, և բազում վաշխիւք։ և յետոյ
զայս անդթութիս կոչեն օգնել աղքա
տաց։ Այս է իբր տալ սակաւ ինչ

խոտ խղճուկ ոչխարաց , այնու վախճա‑
նաւ ․ զի յետոյ կարիցեն կթել զայն‑
քան կաթն , և կտրել զայնքան բուրթն․
նաև եթէ պիտոյանայ՝ քերթել և ըզ
կաշին ։

Հանգունաբար ևս գաղեն'ի ծոցս իւ‑
րեանց զմեղս՝ այնպիսի անձինք , որք
թէպէտ միով պատշաճաւոր բանիւ
դիւրապէս կարեն խրատել զմոլորեալն ,
և կամ կարեն ազդ առնել այնմ , որ
իշխէ 'ի մ̃ս․ և հետևապէս արգելուլ
զծանրագոյն չարն ընկերին ։ Բայց ոչ
առնեն զայս՝ ասելով․ թէ մեք ոչ եմք
պարտաւորք խորհիլ վ̃ս այլոց․ բայց
միայն զմեզ ։ Իբր թէ անմեղադրելի
իցէր , զի կարելով ոք միով ձայնիւ՛ ար‑
գելուլ զճանապարհորդ մի , յորոգայ‑
թաւոր գետոյ իմիք , թողուլ զնա գը‑
նալ առ այն , և հետևապէս խեղդիլ
անդ ։ Այսպիսիքս ոչ կամին հայիլ 'ի
պատուիրանն եղբայրական յանդիմա‑
նութե̃ , որ բազում ուրեք ծանուցեալ
եղև մեզ 'ի Գ̃ս ։ Զի մինչ յուսացեալ
լինի շահիլ զեղբայրն , և ազատել զնա
'ի մահացու մեղաց բարի պատճառաւ ,
և առթիւ՛ ․ յայնժամ պարտաւորէ՛ ըզ
մեզ ա̃ծ առ այն ․ ո̃պ ասէ իմաստունն․
Սիրաք․ 17․ 12 ։ Ե̃ պատուիրեաց իւրաքան‑
չիւրոյ վա̃ս մերձաւորի իւրոյ ։ Արդ մի՞
թէ ոչ տեսանես դու ․ թէ ո՛րպէս

օգնեն միմեանց նաւավարքն 'ի պատահ
ման, և յաւէթի նաւաբեկութե̃ . կար
կատելով առ այնս, որք ընկղմին և այլ
կոծին՝ զուասանս, զտախտակս, զլծիս,
և զայն ա̃մ զոր ունին : Այսպէս և ս
մեք պարտիմք օգնել ընկերաց մերոց,
մինչ տեսանեմք կալ զնոսա յորոգայթի
դատապարտիլոյ :

Մերջապէս . մնան նաև դաղտնի, և
թագուն բաղում մեղք դայթակղութե̃ :
Եւ այս յայնժամ լինի, մինչ ոք դիտէ
ուղղապէս ածել զոք 'ի մեղս, բանիւ, և
գործով : կամ դնել այ անուղղապէս,
'ի ձեռն չար օրինակի, և մոլեգնական
ճենցաղավարութե̃ իւրոյ . և այսու ա̃միւ,
ոչ հոգայ բնաւ զայնմանէ : Յայսպիսի
պատահմունս՝ այնպիսի իրակութիւն, բաց
'ի գոլոյն լոտ ինքեան մեղք . նաև է
մեղք ընդդէմ սիրոյ ընկերին, զի կար
կատէ նմա զառիթ անկանելոյ : Բայց
ուստի մեզ . զի ո՞վ է այն, որ խարհէ
զայսմանէ . և ո՞վ է այն, որ խոստովանի
զայսպիսիսն, 'ի ձեռն որոց մեղս՝ կամ
բանիւ, կամ գործով քարշել է որսալ
ջանայ զհոգիս ոմանց 'ի ցանցս չար
կամաց իւրոց . ուսուցանելով անմեղ
առեղծուածոցն ա̃յ, զալէսպէս և զզանա
զան չարիս : Այսոքիկ են այն սատա
նայական հաւորքն, զորոց այնքան տր
տնջայ ա̃ծ բերանովն երեմիայ . 5 . 26:

Զի գտան 'ի մէջ ժողովրդեան իմոյ ամբա_
րիշտք . Եւ որոգայթս եդին զմարդս հաւաք_
ւոց կանգնեցին ապականել զմարդիկ : Արդ
թէպէտ հաւորսքն ամայի առնեն զօդն :
բայց այսպիսի չար որսորդքս հոգ_
ւոց, ամայի առնեն զերկինքն : Զի ոչ
առնեն զայլ ինչ, եթէ ոչ զի գողանան
զհոգիս արքայութե, առ 'ի առաքել
զայնս 'ի դժոխս : Վա՛յ է ուրեմն այսպի_
սեաց : և զայս ոչ ասեմ ես, այլ ասէ
Տէրն . մատթ. 18. 7: Վա՛յ մարդոյն այնմիկ՝
յորոյ ձեռն գայցէ գայթակղութիւն :
Զյայտնի մեղս գայթակղութե, առաւ_
ել քան զայլս անկանին հեշտախտա_
ւէր, և զգայականս անձինքն . որք վն
ոչ զգալոյ ինքեանց զդարշահոտութին մա
մաշոտութե իւրեանց, (ոպ և ոչ զգան
այնորիկ զդարշահոտութին ծծմբոյն,
որք հանեն զնա 'ի հանքատեղաց) այ_
նու ոչինչ համարին զայն : Եւ որպէս
ինքեանք զիւրեանս անկանին, և զահավի
ժին . այնպէս և զիւրեանց ձգենն և զայլս :
վն կամեցայ 'ի մէջ պէսպէս գայթակղութե
զայց՝ յայտնել և զայս : Զի ոչ հաւատամ
թէ ծածուկ, և զայդոնի իցէ չարութեն
իւր . այլ զի միշտ գայթակղի միայ զաղբա
լի մեծութեն և ծանրութեն 'ի մտաց ոմանց:
Մինն յորոգայթաւոր, և 'ի վնասակար
մոլութեց, որք գտանիլ կարեն յաշխ այս
միկ, այս է . փոքրագոյն համարումն

( առ

( ոպ և առնանի հասարակաց ) զմարմնական, և զհեշտախտական մոլութս: Գտանին բազում անձինք, որք պաշտպանեն զինքեանս արհեստաբանութե ինչ, իբր փաստաբան լինելով ինքեանց: Համեստացուցանեն զինքեանս պատրուակաւ տկարութե, և բեկանաւորութե: և կամ գոնեայ ոչ լուծանին առ այն հարկաւորապէս: և առնեն յոյժ սակաւ համարումն զնմանէ, քան զոր պատկանն է: Ո՛հ. աւաղելիք դուք. 'ի բաց բարձէք միանգամ զդիմայլակն յերեսաց այլանդակ ցուցանքիս. և յայն ժամ տեսանէք, թէ ո՛րքան դարշելի, և զազրատեսիլ է:

Սէն Թօմաս ագուինացին. ածաբանական խստութբ դնէ 'ի կշիռ զծանրութիւն այսորիկ մեղաց. և եզրակացուցանէ, թէ պարզ պոռնութիւն՝ է առաւել ծանրագոյն մեղք քան զայլ ամենայն մեղս, որ գործեցեալ լինի ընդդէմ սիրոյ ընկերին. բայց 'ի մարդասպանութէ: Զի առաւել ծանր է քան զգողութիւն, որ բառնայ զինչս: առաւել ծանր քան զբամբասանս, որ բառնայ զհամբաւն: Եւ թէ իցէ տակաւ ինչ պակաս քան զմարդասպանութիւն, պատճառն է այս. զի վաւաշոտութիւն անխրատաբար հակադրի միայն կենաց այնմ, որ տակաւին ծնանելոց է: Բայց

մարդ-

մարդասպանութիւնն հակադրի կենաց այնմ, որ արդէն ծնեալ է: Եւ՞ մի՞ այսորիկ՝ որպէս նա ոչ թողու, զի այլ ոք մըտցէ 'ի ժառանգութիւն բարւոյն. այսպէս և մարդասպանութիւնն արտաքսէ յայսմանէ: Արդ եթէ սոյնս ճշմարտի՝ 'ի պարզ պոռնկութիւն. յոյժ առաւել ճըշմարտի՝ յայնմիկ տեսական անպարկեշտութիւն և վավաշոտութիւն, որք առնեն զշտողաշարումն, և զարբապղծութիւն ընդ այնպիսւոյ անձին, որ է նուիրեալ այ ուխտին՝ ողջախոհութեան: և կամ ընդ այնպիսւոյ ումեք, որ կապեալ է շաղկապին ամուսնութեան:

Արդ եթէ ընթեռնուս դու զվեց գըլուխն առակաց գրոյն, տեսանես անդ. զի հոգին սբ փոքր մեղք կոչէ զգողութիւնն՝ բաղդատելով առ այնպիսի վավաշոտական գործս: Ոչ թէ սոյն մեղքս գողութեան, բացարձակապէս փոքրագոյն իցէ. մինչ 'ի հազարաւոր տեղիս սբ գրոց ծանրագոյն՝ գարշելագոյն՝ և զարհուրելագոյն գոլ ցուցանի: Այլ ասի փոքր բաղդատութեամբ: որպէս և մեք փոքր կոչեմք զայս մեր միջերկրեայ ծովս (թէև ըստ ինքեան իցէ մեծ) բաղդատմամբ ովկիանոս ծովու: Է նաև սոյն մեղքս մեծ, այնու՝ զի այլ մեղք ապականեն միայն զհոգին: Բայց մեղքն ըղձայական հեշտութեան (որպէս ասէ սբն պօղոս)

զոս ) ապականէ զհոգին, և զմարմինն. I. կորնթ. 6. 18: Որ պոռնկէ՝ յիւր մարմին մեղանչէ: զի պարտ է ա̃մ ոք պահել զնա ոպ̃ զսբ̃ տաճար իմն: Այս մեղքս առաւել քան զայլս ընաւս՝ տգեղացուցանէ և գարշատեսիլ առնէ զմարդն: ուստի ասի 'ի սիրաք. 9. 10: Ամենայն կին՝ որ է պոռնկեցեալ, իբրև զաղբ ներ ճանապարհաց կոխան լինի: Այս է, որ առաւել խանգարէ զիմացականութիւն, և թիւրէ զբանականութիւն. և այս է, որ առաւել հաւասարէ զմեզ նման լինել անասնոց: Զայլ մեղս եթէ գործէ ոք, գործէ միանգամ, կամ երկիցս: Իսկ մինչ սկսանի գործել զայս, ոչ ունի զերդ, և ոչ զթիւ. ո̃պ ասէ ովսէէ. 4. 10: Կերիցեն՝ և մի՛ յագեսցին. պոռնկեսցին, և մի՛ դադարեսցին:

Ո՜հ թէ. որքան ճշմարիտ է նկատմամբ առ բազում անձինս. սոյն բանս մարգարէին, որ ասէ. Խաբեցան յարգանդէ: սաղմ. 57. 4: Վա̃ զի թուի թէ, այս անօրէնութիւնս բերեալ լինի ընդ մեզ 'ի յօրորոցէ: Եւ՛ բազումք են այնքան ընդ երկար առնեն զանօրէնութիւնս զայս, և այնքան ոչ թողուն զնա, մինչև ինքեանք թողանիցին 'ի նմանէ մահուամբ: Այս է այն մեղքն, որ առաւել քան զայլ ընաւ մեղս ոչ թողու դառնալ առ ա̃ծ: ըստ որում ընթեռանի 'ի նոյն

մար

մարգարէութե̃ն տուեալ. 5. 4: Ուր է-
փաւն զխորհուրդս խորեանց դատանալ աւ-
ծ խորեանց. զի այս պատճառութե̃ է ՚ի նմա:
Վ̃ա զի մոլութիւն այս՝ ՚ի ձեռն յաճա-
խութե̃ հեշտալի գործոցն, այնպէս կա-
պէ, տկարացուցանէ, թուլէ, և շահի
զկամքն, մինչ զի եթէ սկսանիցի ոք
արհամարհել զայս մեղքս, պատկան է,
զի կարի բարեպէս զգուշ կայցէ վասն
այնց գործոց, առ ՚ի ոչ առնել զնորա-
գոյն սէր: Կարեմք ուրեմն եզրակա-
ցուցանել ըստ սրբոյն իգնատորոսի ՚ի 2.
գիրս ծայրագոյն բարւոյն. Թէ հարդ-
չայէն ազգն, առաւել ենթարկեցեալ լինի ա-
փանայի ՚ի չեան եղջախոհաւթեան, քան ՚ի
չեան այլոց մեղաց:

Բայց զի՞նչ խնդրեմք քան զայս աւելի: Զի եթէ կամիմք անհեա առնել զայս ցուցմունքս մոլութե̃, արտահանեսցուք զփայլակն իմն ՚ի սրտմտութե̃ Ա̃ծոյ ար- դարութե̃ն: և այս է՝ ծայրագոյն ատե- լութիւն, զոր ունի Ա̃ծ դէպ առ սոյն մեղս: Եւ ծայրագոյն պատիժն, զոր ամենակարող բազկաւն իւրով էհեղ ՚ի վ̃ր սոյն մեղաց. այ̃ զջրհեղեղն. յորում յայնքան կրկնապատիկ բազմութենէ մարդկանց (քան որ են այժմս ՚ի յաշ- խարհի) ութն մարդիկ միայն ապրե- ցան ՚ի տապանի: Վ̃ա զի զբոլոր զայն ջուրն առաքեաց Ա̃ծ ՚ի յերկիր, առ ՚ի

զի

շիջուցանել զայս հուրս անմաքրութեան,
և վավաշոտութեան։ Այժմ ուրեմն ձևա
կերպեալ երևակայացուցէ՛ք մտօք ձե_
րովք , զայնքան անթուելի դիակունս
եղեալ մեծագոյն լեառն իմն , համա_
հաւաքելով զայն ամ փտեալ ոսկերս
՚ի միասին . և դրեցէք ՚ի վերայ նորա
զայս բանս : Այս է արդարութիւն , զոր
առնէ ած վասն վավաշոտութեան : Եւ՛ յե_
տոյ եթէ յանդգնիք , և ժպրհիք տա_
կաւին , գնացէք ասելով ՚ի ձեզ . թէ
վավաշոտութեան մեղքն է փոքրագոյն .
և այնու պատրաստեցէք զնեխեալ ոս_
կերս նոցին։

Յաղագս այլոց գաղտնի մեղաց , որք են ա_
ռաւել մահաբերք՝ իւրաքանչիւրոյ
հոգւոյն։

## Գ Լ Ո Ւ Խ. Գ։

Որպէս գտանին ընդհանրական
պատուիրանք , որ ընդհանրա
պէս պարտաւորեն զամ քրիս
տոնեայս : այսպէս և գտա_
նին մասնաւոր և յատուկ պա
տուիրանք՝ ըստ կացութեան իւրաքանչիւր
ումեք , որք ոչ պարտաւորեն զամենե_
սեան

սեան. այլ միայն զայն, որ գտանի յայն
պիսի կացութեան : Շուրջ զայսպիսի պա
տուհիրանօք, սահեալ և անկեալ լինի
ոք՝ առաւել մեղադրելի տգիտութեամբ :
Ուրեմն առնշանագրեցից ես աստ զա
մանս, որք յոյժ յաճախապէս պատա
հին. զի ՚ի ձեռն նոցին ճանաչիցէք, և
առարկիցէք դուք զայլս. և գոնեայ ու
սանիցիք երկբայել, և հարցանել : Ու
րովհետև նոյն պատուհիրանն, որ պար
տաւոր է զծառայ ոք առ՚ի կատարել
զգործ ինչ, պարտաւորէ նաև առ՚ի գի
տել զկամքն տ̃ն, զոր պարտի կատա
րել : Ե՞ւ այլապէս առնելն՝ ոչ լինի առ
այլ ինչ վախճան, եթէ ոչ առ՚ի խաբել
ըղձակերտեցեալ գիտութեամբ զյատուկ
անձն իւր : Նաև լինի հետևիլ իմն այ
նոցիկ, որք (ըստ ասելոյն հոգւոյն առ
բոյ՚ի յառակս.1.18.) Գանձեն անձանց չա-
րեանց չարիս :

Յայսմիկ թուոջ պարունակին նախա
պէս այնոքիկ քահանայք, որք ժամա
նելով առ այնպիսի բարձրագոյն ար
ժանապատուութիւն առանց գիտութե
ան գրոց : և յետոյ ոչ ջանան ու
ղել զմոլութիւս իւրեանց, հետևելով
առ՚ի ուսանիլ զհարկաւոր իրս քահա
նայութեան, և զհասկացումն գրաբառ
լեզուին : Ե՞ւ այս գոնէ այնքան. զի
կարիցեն ուսուցանել ժողովրդեան, ըղ
հար

հարկաւոր իրս փրկութեան նոցին. նաև լաւապէս, և ըստ օրինի մատակարարել ըզ կիրառութիւն սրբոցն խորհրդոց. որպէս պահանջէ զայս 'ի նոցանէ սրբազան ժողովն Թրի՛. 'ի 23. համարում. 'ի 4. կանոնն:

Երկրորդ. պարունակին այնպիսի քահանայք, որք շրջագային անվայելուչ հանդերձիւ աշխարհականի, քան թէ պատկանաւոր զգեստիւ քահանայի:

Երրորդ. պարունակին այնոքիկ քահանայք, որք յոյժ շուտափութութեամբ պատարագեն, և կամ զայլ խորհուրդ ինչ մատակարարեն: Եւ այնպէս անպատուճելաբար ձեռնարկեն շօշափել զայն երկրպագելի հացն հրեշտակաց. որպէս թէ լցէ հաց անասնոց. ըստ որում ասաց սրբուհին կոյսն, 'ի յայտնութեան սրբոյ ումեմն:

Չորրորդ. ծաղրասէր, առասպելաբան, խաղասէր, և ցոփատեսիլ քահանայքն, որք դնան 'ի հրապարակի, զարդարելով զմորուս, և զդէմս իւրեանց, քան թէ զհերս, և զկենցաղ վարուցն: Որք 'ի ձեռն այսպիսեաց արարմանց արհամարհանք լինին քահանայական կացութեան:

Հինգերորդ. այնպիսի քահանայք, որք տան զառիթ չար, և վատահամբաւ կարծեաց, համաբնակելով ընդ այնպիսի

պիսի տան, և ընդ այնպիսւոյ կնոջ. ո-
րոց վն̄ ժողովուրդն բամբասէ զնա:
Վեցերորդ. այնոքիկ, որք առնուն ըզ-
բազում պատարագուցս, և զքառաս-
նիցս, և յապաղեն զայն առ 'ի կատա-
րել՝ թարց յայտնելոյ տուողին զայս,
թէ ոչ կարեն կատարել զայն 'ի բազում
ժամանակս:

Եօթներորդ. այնոքիկ, որք 'ի ձեռն
բազմութե դրամոյ ստանան զհաշուե
մտութիւնս, և զժողովուրդս. այնու
վախճանաւ, զի շահիցին միայն 'ի նոցա
նէ զմարմնականս. հանդոյն վաճառակա-
նաց, որք շահին 'ի վաճառաց իւրեանց:
Ութերորդ. այնպիսի քահանայք, և
վարդապետք, որք ոչ բաշխեն աղքա-
տաց զայն եկեղեցական հասոքն, և զի-
րաւունքն, որք յաւելանան 'ի պահպա-
նութէ իւրեանց: Այլ տան զայնս չա-
րաճճին մարդկանց, և երբեմն եւս 'ի
շահ, և 'ի տոկոս: Եւ այսու կերպիւ
կելով 'ի սեղանի Տն̄, ոչ միայն ոչ ծա-
ռայեն սեղանոյն, այլ նաև երբեմն հա-
լածեն զնա:

Նոյոքիկ ամենեքեան, այնպիսի պա-
կասուէքեն, որք հասարակապէս պատ-
կանին քահանայականի կացուե: Բայց
անդր քան զայսոսիկ. պարտին առա-
ւել մանաւորապէս մտածել նաև հո-
գաբարձուքն հոգւոց՝ զյատուկ պար-

տաւորութեանս իւրեանց․ ա՛րդեօք ո՛րքան մեղանչեն, մինչ ջանան ստանալ ըզ հոգաբարձութիւն եկեղեցւոյ, և ժողովրդեան ինչ ։ և այս ոչ առ՚ի արածել զհօտս (ո՜վ ասէ մարգարէն) այլ միայն զինքեանս․ Եզեկ․ 34․ 2։ Եւ առաջարկեն զինքեանս առ՚ի ձեռնամուխ լինիլ յայսպիսի մեծագոյն գործառութիս, զուրկ գոլով բաւական գիտութէ ։ և գնան բռնաւորել զթիկունս իւրենց, այնպիսի ծանրութե՛ միով, որ նաև զարհուրելի է հրեշտակականի զօրութե ։

Երկրորդ․ եթէ ոչ ունին զհոգածութի՛ և զփոյթ, վ՛ս մաքրութե՛ քահանայական զգեստուց․ սրբազան անօթոց․ և այնց ա՜մից, որք անմիջապէս ՚ի գործածին ՚ի սարսափելի խորհրդոջ պատարագին ։

Երրորդ․ եթէ հեռացեալք, և ազատք մնացեալք իցեն ՚ի պաշտօնից իւրեանց, առաւել քան զերկու ամիս տարւոյն․ գնալով յայլ ուր առանց հարկաւորութե՛, և առանց բանաւոր պատճառի․ ո՛ր և է սովորութի՛ ՚ի յարեմուտս ։

Չորրորդ․ եթէ ոչ կամին խոստովանեցուցանել զոք, մինչ իրաւամբ, և բանաւորապէս խնդրեալք լինին, առ՚ի առնել զայն ։

Հինգերորդ․ եթէ խոստովանեցուցանելով

նելով զոք՝ ոչ քննեն խոհեմաբար զա-
ռաւել անընդունակսն . կամ թէ ոչ
ցուցանեն նմ̃ զծանրութիւն մեղաց իւ-
րեանց : Կամ գոնեայ դնեն նմ̃ զոչինչ,
և զփոքրագոյն ապաշխարանս վն̃ զար-
հուրելի, և ծանրագոյն մեղաց . այսու
զօրացուցանելով զնս̃ դիւրապէս ան-
կանիլ վերստին 'ի նոյն մեղս :

Վեցերորդ . եթէ ոչ ուսուցանեն ժո-
ղովրդեան զքրիստոնէական վարդապե-
տութիւն . և ոչ կրթեն զնս̃ 'ի խոր-
հուրդս հաւատոյ . և կմ̃ ոչ վարժեն առ
եղանակն և առ կերպն բարեպէս խոս-
տովանելոյ, նաև ընդդիմանալոյ փոր-
ձութե̃ : Որովհետև պարտաւորք են
այսոցիկ ամից . թէ ածային իրաւամբ,
( ոպ̃ ասաց Տրն̃ . յոհ. 21. 16: Արա-
ծեա զոչխարս իմ : ) Եւ̂ թէ դրական
իրաւամբ . ոպ̃ պատուիրեաց ժողովն
Թրիտէնթինոյ . 5. համագումարման :
2. գլուխն . թէ յամ̃ աւուր տօնի, հո-
գաբարձու քահանայքն ուսուցանիցեն
զժողովուրդն : Ուստի թոյլ ետ եպիս
կոպոսաց, առ'ի բանադրեալ զայնպի-
սի քահանայս, որք աւելի քան զերիս
ամիսս ոչ ուսուցանիցեն զայնս . որով
քանիՙ ցուցանէ զծանրութիւն այսպիսի
մեղաց : Վն̃ զի ծանրագոյն բանադրանք
իմն ոչ դնի, եթէ ոչ ըստ համեմատու-
թե̃ յանցանաց : ոպ̃ և ոչ խոհեմ վի-

րո

բահատ որք գայ առ 'ի հատանել զմարմինն, եթէ ոչ 'ի վերջին չարակրութեան իմիք։

Ո՛չ ոչինչ օգտէ այս պատճառաբանութիւն, զոր առնէ քահանայ որ՝ առ 'ի անմեղադրելի պահել զինքն ասելով թէ բոլոր պակասութիւն է ժողովրդեան, որ ոչ կամի գալ յեկեղեցին։ քանզի պարտ է յորդորել և ուսուցանել զնոսա գալ յեկեղեցին։ Վասն զի այն, որ գնեալ է զմաքսն ձկնարանի միոյ յիշխանէն. պարտի զի կամ գտանիցէ ըղ կերպն առ 'ի քարշել յուռկանն իւր զձկունս, և կամ պարտի հրաժարել յայնմանէ պաշտօնէ։ Ապա թէ ոչ, կրէ զտուժանս, և զվնասս. վասն զի իւր խանձն ամենայն կերպիւ խնդրէ զիւրն.

Նմանապէս և պարտի առ նշանադրել. թէ պակասին 'ի պարտաւորութեան կացութեան առանց մեծի վերանկատման և զգուշութեան, այն տանուտեարքն, որք վատահամբաւեն աղտեղի բանիւք զկողակիցս իւրեանց, և այնպէս ունին զնոսա, որպէս թէ ոչ իցեն կողակիցք իւրեանց, այլ գերիք։

Երկրորդ. որք մախեն, և վատնեն 'ի գինետունս, և 'ի խաղս զայն դրամն, որ պարտի 'ի պահպանութեան որդւոց, և ընտանեաց իւրեանց։

Երրորդ. որք ոչ առաքեն զորդիս իւ-

րեանց առ 'ի ուսանիլ զքրիստոնէական
վարդապետութիւն, որ է ըստ ա՟մի հար
կաւոր ա՟մ ումեք :

Չորրդ · որք ոչ տան նոցա զբարի օրի
նակ 'ի ձեռն բարեաց գործոց, և պար
կեշտական խօսից · այլ մանաւանդ լի
նին նց՟ օրինակ չարեաց, անպարկեշտ
բանիւք, և անպատշաճ գործով :

Հինգերրդ · որք առաքեն, և կամ թող
լատրեն գնալ զորդիս իւրեանց առ ա՟մ
խաղս, և առ ա՟մ զբօսանս · և թողուն
զնս՟ միայնակ լինիլ ընդ անպարկեշտ և
լրբատեսակ մանկանց, ո՟պ դառինս է
դայլոց, դնելով զնոսա 'ի յայտնագոյն
որոգայթի կորստեան, սակս ունայն
նկատմանց ումանց :

Վեցերրդ · որք արգելուն զնս՟ բռնու
թբ՟ 'ի յամուսնանալոյ, առ 'ի ոչ մնա
սել ինքեանց՝ տալով նց՟ զօժիտս, և
ծախելով զդրամս, թէ քցէ արու, և
թէ էգ :

Եօթներրդ · որք բռնադատեն զնս՟ լի
նիլ կրօնաւոր, քահանայ, և վարդա
պետ՝ ընդդէմ կամաց նց՟, վս՟ նկատման
շահուց : Կամ թէ 'ի յետս քարշել ջա
նան զնս՟ ա՟մ արհեստից առ 'ի չլինիլ կրօ
նաւոր՝ և այլն, մինչ ա՟ծ կոչէ զնս՟ : Բայց
պարտ է յատկապէս զգուշանալ առ այս
վերջին ասացեալս, առ 'ի կարել բա
րեպէս փորձառել զկոչումն : Սակայն

ստացեալ փորձառութեամբ. զի մի գուցէ
իմանիցի դնել զխեղճ մանուկն յայնպ-
սի որոգայթի, ուր թերևս ոչ կա-
տալ նմա ամ̃ զյատկական օգնութիւն
իւր, և այնու կոչել զնա առ այն նա-
ւահանգիստն :

Պակասին այնոքիկ մեծաւորք, և տէ-
արք, որք աշխատեցուցանեն զծառայս
և զմշակս իւրեանց 'ի յաւուրս տօնից
և կիւրակէից: Երկրորդ այնք. որք ոչ հո-
գան թէ ո՛րպէս կենցաղավարին նոքա
և ազատապէս տան նոցա զառիթ առ-
առնել զչար ե̃ այլս, զանազան եղե-
ռնագործութիւնս: Երրորդ. որք ոչ ուսու-
ցանեն նմ̃ զհարկաւոր իրս հաւատոյ
առ 'ի հաւատալ. կամ ոչ առաքեն զնո-
սա 'ի ուսանիլ զքրիստոնէական վար-
դապետութիւնս, և լսել զքարոզս
Չորրորդ. որք ոչ պահեն զպայմանն և
զսակարկութիւնն, զոր արարին և հաս-
տատեցին ընդ նմ̃ : Վեցերորդ. որք ոչ
տան մշակաց զվարձս նոցա, զրկելով
զնմ̃ 'ի սակաւ վարձուց իւրեանց. զոր
և ոչ առնեն առ ձիս, և առ շունս իւ-
րեանց, յետ որոյ մինչ աշխատեցան 'ի
ընթանալն, և կամ 'ի որսայն :

Պակասին և սխալին այնք վաճառա-
կանք, որք բռնադատեն զգործաւորս
իւրեանց, առ 'ի ընկալնուլ 'ի տեղի վար-
ձուց զայլ ինչ փոխանակ դրամոյ: Երկրդ.

որ

որք վաճառեն խաբէութե՛ զիր ի՛մն 'ի տեղի այլոյ իրի։ Երրո՛րդ. որք վաճառեն զիր ինչ անհմտաց և ոչ գիտողաց, առաւել քան զոր արժէ, և քան զոր արդարն է։ Չո՛րրդ. որք դնեն 'ի վե՛ իրի ուրուք զծանրագոյն գին 'ի վաճառե՛ մինչ հաւատացեալ լինի ինքեանց. և վերադրութե՛ ասեն զբուն գինն՝ մինչ ստիպին. և հաստատեն ձևասիւք վաճառել զայն, առանց քննելոյ թէ իցէ այնպէս՝ այլ մեծացուցանեն ինքեանք։ Հինգերո՛րդ. որք գնեն յորդւոց, և 'ի ծառայից տանուտեարց, զայնպիսի իր ինչ, որոց ոչ է ճահ վաճառել նոցա։ Վեցերորդ. որք մինչ հարցանին, ոչ կամին յայտնել զխարդախութիւն, և զգաղտնի մոլութի ինչ, որ կայ 'ի վաճառելութե։ Եօթներո՛րդ. որ խառնելով զվատ իրն 'ի մէջ լաւացն ապականեն զնա, և այնպէս վաճառեն զբոլորն 'ի միասին 'ի տեղի լաւաց։ Ութերորդ. որք վարին երկայն, և կարճ չափով. և զի սակաւ ինչ առնուն յամէն անգամին, այնու ոչ խղճահարին, և ոչ նկատեն թէ զբնաւ խաբէութիւն զայսօսիկ տեսանէ այն, որ հայի առ ամենեսեան. Ուստի ասէր սբ՛ն պօղոս. Ա. Թեսաղ. Դ. Զ։ Մի՛ զանցանել և զրկել յիրէտ յայտնի զեղբայր իւր. այ̃ մի՛ խաբել և պատրել 'ի վաճառման զեղբայր իւր.

ԶԱՆԶԻ ՎՐԷԺԽՆԴԻՐ Է ՏԷՐ 'Ի ՎԵՐԱՅ ԱՄԵՆԱՅ
ՆԻ ԱՅԴՈՐԻԿ :

Պակասեն և սխալեն յանձնառուք. այս ինքն՝ ՀԱՍԷՋՆ. որք վատապէս մատակարարեն զինչս որբոց. փոխարկելով, և 'ի շահ տալով զայնս թարց ունելոյ զօրինաւոր հեղինակութի. նաև գնելով, և վաճառելով վս շահուց իւրեանց, զորս ընկալնուն սակս պահպանութե նոցին: Երկրորդ. սխալեն այնք փաստաբանք, և միջնորդք դատից, որք ջատագովեն, և պաշտպանեն զանիրաւ դատս, և ոչ ազդեն նց՝ թէ ոչ ունին զիրաւունս: Երրորդ. սխալեն այնք դատաւորք, որք ընկալնուն զնշանաւոր ընծայս. և ոչ արդելուն զփաստն այնորիկ, որ ոչ ունի զիրաւունս: Որք թողուն զպատիժս չարագործաց սակս դրամոյ: Որք 'ի գործածեն զպաշտօնս դատաւորութե, թարց ունելոյ զբաւական գիտութի: Չորրորդ. սխալեն այնք խաղացողք, որք ցուցանեն զինքեանս ոչ գիտել խաղալ, առ 'ի քարշել այնու զայլս 'ի խաղալ: Որք վատնեն և ծախեն 'ի խաղացման զայնս ժամանակս, որք պատկանին հոգւոյ: Որք յաճախեն 'ի խաղալ վնասիւք տանց իւրեանց, և գայթակղութեամբ կանանց իւրեանց: Որք խաղան ընդ որդւոց տանուտեարց, և ձեռնտուք լինին

նեն գողութեանց նոցին, զի կարիցեն խաղալ :

Ոչ՞ վերջապէս . կարեն համարիլ առայսոսիկ բազում մանկունք, և երիտասարդք, որք գերեալք են 'ի յզգայական սիրոյ . բայց մինչ տեսանեն վերջապէս ոչ կատարել զգործն մեղաց, յոչինչ համարին զայնքան անարժան բանս, զորս խօսեցան, և զայնքան անպարկեշտ խղձս, զորս կրեցին . ոչ թէ ոչ լիցեն մեղք : Եւ՞ գտանեն զայնս 'ի ձեռն պէսպէս պատրուակաց, և պատճառանաց : և այսպիսի անկարգ ախտի՞ շրջին հանդոյն թիթղանց առ 'ի կորնչիլ շուրջ զունայն հրով մոմով, թարց տեսանելոյ զորոգայթն անկանելոյ անդ : Ուստի համառօտապէս, այս ոչ է այլ ինչ, եթէ ոչ յարամնալ 'ի մշտակայ որոգայթի ուրուք առ 'ի մահացօրէն մեղանչել, առանց ջանալոյ ազատել զինքն :

Բորդ բնաւ այսոքիկ մեղք, և այլք բազումք, որք 'ի սոցանէ յառաջագայիլ կարեն . են այնպիսի մեղք, որք 'ի յաչաց կամաւորապէս կուրացելոց աներևութանան, և թագուցանեն զչարութիւն իւրեանց . ուստի կլանեն ոչ ասկէպատեալ հալք, թարց զգացեալ լինելոյ դառնութենն : Եւ՞ այսպէս, կամ ոչ խոստովանեալք լինին . կամ թէ խոս-

տուվանեալք լինին միայն ըստ սովորութեան. որոյ վասն մնան 'ի յատակս սրտի առաւել ծանունք քան զմրուրս: Մրուր նր ոչ սպառեցաւ. սաղմ. 74. 9: Սակայն պատահի, զի այսպիսի երբ յոյժ զանազանապէս երևեսցին նոցա 'ի կէտ մահուան իւրեանց: Ո՜հ թէ. ո՞րպէս ճանաչի այն ամ լուսով վերջնոյ ճրագին, որ ոչ երբէք ճանաչիւր. և կամ ո՞րպէս տեսանի այն, որ ոչ երբէք տեսանիւր:

Ասի 'ի բնազննից, թէ խլուրդքն կեանս մշտապէս կոյրք. և յայնժամ միայն բանան զաչս, մինչ մեռանին. այսպէս պատահիլ սովոր է նաև բազմաց քրիստոնէից: Բայց ո՛վ կարէ ճառել. թէ որքան որոգայթին կենաց լինելոց իցէ առ նմ այս, զի յանկարծակի զարհուրեալք 'ի տեսութէ այնքան դարշելի մեղացն, զորս յառաջ թեթևս համարէին, ընթանան և անկանին 'ի մեծագոյն որոգայթս յուսահատութե:

Պատմէ սբն Յոհաննէս գլիմ..ոսն 'ի պատմութե իւրում. գլուխ. 7: Թէ կրօնաւոր ոմն սրբակաց, որոյ անունն կոչիւր ստեփաննոս. յետ ապաշխարելոյ զամս քառասուն յոյժ խստագոյն ապաշխարութե, երևեցաւ նմա դև 'ի կէտ մահուանն մինչ կայր 'ի հոգէվարութե, և ետ 'ի յերես նորին զօ-

մանս

մանս դատոնադոյն մեղս գործեցեալ՚ի նմանէ ․ յորս՚ է այնքան զարհուրեցաւ ․ և սասանեցաւ այն խեղճ հոգեվարն , մինչ զի մնաց տարակուսեալ , և շուարեալ ամենևին ։

Ու՛ ՚ի ընկալնուլ ուրեմն զդեղ այսորիկ չարի ( որ է այնքան առաւել վնասակարագոյն , որքան առաւել խորապէս թագուցեալ է ՚ի յաղխս ) դիմեա՛ խոնարհաբար առ ոտս Տ՟ն , զի յայտնիցէ քեզ՝ եթէ մնացեալ իցէ ՚ի սրտի քում մեղք ինչ չարակրապէս ։ Ե՛րբ յիշեա՛ ․ զի թէ պէտ յեսու որդի Նաւեայ էր այր իմաստուն , սակայն խաբեցաւ ՚ի գաբաւօնացւոց ․ քանզի նախ քան զաւացօրաշեւն , թէ արդեօք պարտ իցէր ընդունիլ զառաջարկութիւս նոցին՝ թէ ոչ , զանցարար դիմել յաղօթս ։ Ասա՛ նաև ջերմեռանդապէս առ ած ։ Դու լուսաւոր առնես զճրագ իմ Տր՟՝ Ած իմ լոյս արարից ՚ի խաւարի ․ սաղմ․ 17․ 29։ Յետոյ քննեա՛ մտերմութե՟ զպարտաւորութիւնս կացութե՟ քոյ ․ և հարցջի՛ր ես ցաւայն , որ կարէ տալ քեզ զխորհուրդ , և զխրատ ․ այսինքն առ այնպիսի ոք , որ կարիցէ զլուծումն տալ այսպիսի պատահմանց ․ և կամ առ իմաստուն խոստովանահայր ոք ։ Ե՛րբ ընկալ՛ զայն խըրատն , որ է առաւել հաւաստի , և ապահով ․ քանզի լայն ճանապարհն , և

լայն դուռն անձ 'ի կորուստ. ոպ̃ ա-
սաց Քս̃: Եւ̂ այսու մմիւ̂, մի՛ կարի՛ր
'ի գործս քո հետեւիլ բազմաց. զի ա-
սաց Տն̃ ելից. 23. 2: Մի՛ յօժարեսցիս ընդ
բազմաց 'ի չարիս: Ուսիր մի՛ թողուլ
զքեզ տարեալ լինել 'ի նոցանէ, ոպ̃ և
տարեալ լինի կոչեղ իմն փայտի 'ի հե
ղեղատէ:

Ո՞րինչ փոյթ է քեզ, թէ այլք հաստ
կամիցեն, և արհեստակիցք քո ոչ առ-
նեն այնպէս: զի՞նչ փոյթ է քեզ, թէ
ոչ ընթանան նոքա յայսմիկ ճանապար
հի: Զի եթէ բարի իցէ ճանապարհն
քո, պարտիս ասել՝ գնասցէ ամ̃ ոք այն
պէս, ոպ̃ և հաճոյ է լինքեան. և ես ոչ
երբէք փոխեցից զճանապարհն իմ, ոպ̃
և ասէր մարգարէն միքիա. 4. 5: Եթէ ամ̃
ժողովուրդք գնասցեն իւրաքանչիւր 'ի ճանա
պարհս իւրեանց. այլ մեք գնասցուք յանուն
Տն̃ այ յաւիտեանս և առյաւէտ: Արդ որով
հետեւ նոյն ինքն Քս̃ ուսուցանէ մեզ,
թէ անձուկ է դուռն, և նեղ է ճանա
պարհն՝ որ տանի զմեզ 'ի յերկինս. այ
նուհետեւ զի՞նչ խնդրելի է առաւել:
Քանզի լաւագոյն է փրկիլ ընդ սակա
ւուց, քան կորնչիլ ը̃ բազմաց. մատ.
7. 14: Անձուկ է դուռն. և նեղ ճանա
պարհն՝ որ տանի 'ի կեանս. և սակաւք են՝
որք գտանեն զնա:

Յաղագս զննութեան խորհրդոց։

## ԳԼՈՒԽ. Ե։

ԱՅՆ՝ որ պահպանեալ լինի մեծաւ զգուշութե̃ բարեպէս կառավարեցեալ քաղաքի իմիք, է ամրաբերդն նորին։ Այսպէս և այն, որ մեծագոյն ջանիւ պահպանիլ պարտի ՚ի հոգւոջ մերում, է սիրտն. քանզի յոյժ պահպանել պարտիմք զնա ՚ի մեղաց խորհրդոց. առակ. 4. 23։ Ամենայն պահպանութե̃ պահեա՛ զսիրտ քո։ Բայց բազումք գտանին, որք ոչ առնեն այսպէս. այլ դիւրապէս գործեն խորհրդով զպէսպէս մեղս, և յետ գործելոյ յոչինչ համարին զայնս. որոյ վս̃՝ և զփոքրագոյն մասն այնց մեղաց խոստովանին։ Արդ ուրեմն հաստատեմ այժմ, թէ յո՛րում կայանայ մեղքն խորհրդոց, որով ճանաչիցի յետոյ՝ թէ զինչ առնելի իցէ շուրջ զքննութեամբ նորին։

Զի ո̃պ նախ քան հասանիլն ումեք առ իշխան ոք ՚ի խօսիլ ընդ նմա, պարտ է մերձենալ առ պալատն նորին, ելանել ը̃ սանդուղս, ներկայանալ ՚ի սրահն,

և անցանիլ ը̅ բազում սենեակս ։ Այսպէս և թելադրութիւնքն այնք՝ որք զմեզ փորձեն, նախ քան զհասանիլն ՚ի կամս՝ անցանելն ընդ բազում զօրութիւնս ։ Վա̅զի նախապէս անցանին ընդ արտաքին զգայարանս, որք են ո̅պ̅ դրունք . ո̅պ̅ ընդ տեսանելիս, ընդ լսելիս, ընդ հոտոտելիս, ը̅ շօշափելիս, և ը̅ ճաշակելիս ։ Եւ՛ յետոյ ժամանեն առ ներքին զգայութիւնս, որք են իբր սանդուղք, ընդ որս ելանեն ։ Եւ՛ ապա յառաջեն առ երևակայութիւն, որ է ո̅պ̅ ընդարձակ սրահ իմն ։ և յայսմանէ ևս՝ ո̅պ̅ միով երկար ճանապարհաւ սենեկի՝ մատչին առ իմացականութիւն ։ և վերջապէս յիմացականութենէ առ կամքն, թէև այս ա̅մ լինի ՚ի մէջ սղագոյն ժամանակի իմիք ։ Արդ այսպիսի խորհուրդքն՝ մինչ տակաւին ոչ են ժամանեալ առ կամքն, ոչ երբէք են մեղք, այլ միայն փորձութիւնք ։ բայց յորժամ հասանին անդ, եթէ նա հաւանիցի և ընդունիցի զնո̅, յայնժամ են մեղք ։ ո̅պ̅ և հակադարձապէս լինին արդիւնք առաքինութեան, եթէ մերժիցէ զնո̅ գարշելով ՚ի նոցանէ ։

Սակայն գիտելի է . զի երկու կերպիւ կարէ սխալիլ կամքն մեր յայսմիկ ներգործութեան ։ Առաջին կերպ սխալման է [illegible] . մինչ կամքն գործունեաբար ցան-

կայ 'ի կատարել : զոր օրինակ . 'ի տեսանելն ոք զԹշնամին իւր , ցանկայ սպանանել զնա : Երկդ կերպն է հաճութեան . մինչ կամքն ոչ ցանկայ ժամանել առ գործն , այլ հեշտանայ , և հրճուի այն Թելադրեցեալ վատԹար առարկայիւն : Հի՛քար . 'ի տեսանելն ոք սպաննեալ զԹշնամին իւր յայլոց , հեշտանայ և հաճի առ այն տեսուԹի : Եւ այս հեշտուԹիս , և հաճուԹիս կոչի յածաբանից յամեցողական հեշտուԹի , 'ի յամեցմանէ՝ զոր առնէ 'ի նմա կամքն : Եւ վերահայի սոյնս՝ ոչ առ անցեալ մեղս , նոյնպէս առ ապառնիս . և որքան առ այնս առարկայս՝ որք կարեն լինիլ , այնքան առ այնս՝ որք բոլորովին անկարելիք են : Որով կարես ճանաչել դու զմեծագոյն խաբէուԹին այնոցիկ անձանց , որք այնպէս կամաւորաբար խօսին զանպարկեշտ իրաց , ոչ Թէ խօսիցին զքաջուԹեց , և զարիուԹեց . և այսու ամի՛ , յետոյ պաճուճեն և առբասրեն ասելով , Թէ ոչ ունիմք մեք զխիղձս ներգործուԹե՛ կատարել զայնս : Եւ ոչինչ օգուտ է այս ամենևին , Թէ ոչ ունին զխիղձս կատարելոյ . վա՛ զի որովհետև համահաճին կամաւորապէս անպարկեշտ առարկայից այնոցիկ , ծանրապէս մեղանչեն յամեցողական հեշտուԹեամբ :

Արդ 'ի խաղաղն քո զԹաւլու , և զսան
Թրանճ , մինչ ունիս եկեալ առ քեզ
զնշանն զարնելոյ՝ և ոչ յօժարիս 'ի զար
նել զնա , այնու միշտ սխալիս . և վ͞ն է՞ր
պատահի քեզ այս սխալումն , վ͞ն զի ոչ
զարնես զնա փութապէս : Այսպէս՝
յայսմիկ տեղւոջ կամիմ ես նախապա_
տրաստել զքեզ , ոչ միայն առ 'ի քննել
զայնս մեղս , որք գործեցեալք են 'ի
քէն խորհրդով . այլ և ջանալ ո͞մ կերպ
զգուշութ͞ ընդդիմանալ փորձութեանց
'ի սկիզբն իւրեանց : Արագապէս ան_
ցի՛ր 'ի հեղեղատէն նախ քան զառատա
նալն , և մի՛ տար ընդ ժամանակ ինչ
փորձութեան առ 'ի առնուլ զզօրութիւ .
այլ խակոյն աղաչեա՛ զԱ͞ծ , զի ազատես
ցէ զքեզ : Եւ՞ ջանա՛ մերժել 'ի միտաց
քոց զչար խորհուրդն 'ի ձեռն բարի
խորհրդոյ . որպ͞ առնեն և այնոքիկ , որք
ջանան հանել զմի բևեռն 'ի ձեռն այլ
բևեռի իմիք :

Իսկ եթէ դու ևս ոչ առնիցես այս_
պէս . տեսանիս լինիլ 'ի յայտնագոյն
որոգայթի դատապարտութեան . և այս
վ͞ն երկուց պատճառաց : Առաջին պատ
ճառն է . զի խորհրդով եղեալ մեղքն
յոյժ դիւրապէս գործեցեալ լինի , քան
զմեղքն գործոյ . զի առ գործն պար_
տին համընթանալ բազում պարագայք ,
որք հազի՛ւ գտանին միաւորեալք 'ի միա_
սին

ային . որովհետև առ 'ի կատարել զմեղս
իմն գործոյ, հասարակապէս յառաջ ըն-
թանայ բազմութեն իմն վատթար բղձից,
յարատևեալ 'ի բազում ամս, և ժամա-
նակս : Արդ ուրեմն մտածեա և պատ-
կերակերպեա դու 'ի քեզ, թէ այսպի-
սի մեծագոյն բազմութեին մահացու մե-
ղաց, այնպէս անհնաբար ծանրացու-
ցանեն զայն հոգին, որք գործեն մեղս,
մինչ զի եթէ ոչ պահիցէր զնա ածային
ողորմութեին, երկիրն ոչ կարէր տանիլ
զնա : Ե՞ այսպէս՝ այնքան դժուարին
լինի դարձումն նոցին, որքան դժուա-
րին է փախչիլն գերւոյ միոյ, որ ծան-
րացեալ է 'ի բռնութէ շղթայից . նաև
առողջութեին հիւանդի միոյ, որ առա-
ւել ապականեալ է ուռուցմամբ :

Երկրորդ պատճառն է . զի 'ի կէտ մահուան
իւրեանց, եթէ ոչ առնիցէ Տր զհրաշ-
իմն 'ի ձեռն շնորհաց իւրոց, ես ոչ կա-
րեմ իմանալ՝ թէ ո՛րով կերպիւ՞ կարեն
զերծանիլ այնորքիկ յայնմանէ ծանրա-
գունէ որոգայթէ, որք սովորեալք են
տալ զհաւանութեն այնքան չար խորհր-
դոց, որ յայնժամ առաւելապէս սատա-
կանայ, և սպառնայ : Վն զի յայնժամ
դնէ այնպէս զդենու զվերջին զօրու-
թեին իւր առ 'ի շահիլ ինքեան զհոգի-
մս, ոպ և զօրագլուխ ոմն յաւուր նշա-
նաւոր պատերազմի ժողովէ զամ զօրս

իւր, գործածէ զնմ արուեստս, և 'ի կիրառնու զընաւ գիտութիս իւր. յայտ. 12. 12: Անչափ բանաւորչուն առ ջեղ. որ ունի զցաւուն բաղում. և չայցէ առ սա ջաս մի ժամանակ: Քանզի գիտէ սատանայն. թէ նոյն հոգին յայնժամ ունի զսակաւ ժամանակ. գիտէ և՛ եթէ կորուսանիցէ զնա, ոչ երբէք կարէ վերստանալ. և վ՜նկ ոչ է զարմանք ինչ, թէ յայնժամ 'ի կիրառնու զնմ սրտմըտութիս իւր:

Որդ այս բռնաւոր և հզօրագոյն պատերազմս լինի ընդդէմ խորհրդոց և մըտաց. քանզի յայնժամ մարդ ոչ կարէ գործել զմեղս ինչ գործով, վ՜ն տկարութե մարմնոյ՝ թէև կամիցի: Այպա ուրեմն ո՛րպէս կարէ պատերազմել ը՜նմա թշուառական մեղաւոր ոք, որ է հիւանդութե տկարացեալ, 'ի մերձակայ որոգայթէ զահիհարեալ, նաև սովորեալ միշտ յաղթահարիլ, և ընկճիլ յայսպիսեաց հարուածոց: Վ՜ն զի եթէ ոչ կարաց երբէք յաղթահարել զնա այնքան պատշաճաւոր զինուք մինչ էր առողջ, ուրեմն ո՛րպէս կարիցէ առնել զնոյնն 'ի յետին տկարութե: Արդ գիտէք դուք լաւապէս. զի դա՛թի ամենեկին յոչինչ պիտոյացան բնաւ զէնքն տաւուղայ, զի ոչ էր սովոր տանիլ և կրել զնա: Ե՛ւ զի թէպէտ նախապէս

սա

սակաւ ինչ զփորձ էառ . բայց յետոյ ասաց . Ոչ կարեմ երթալ առաջօք՝ զի չեմ հըմուտ . ( զ̃ի ոչ եմ սովոր կրել զայսպիսի զէնս ) և հանէին զայն 'ի նմանէ : Այսպէս առնէ և մեղաւորն . որոյ վ̃ա առանց զինուց գտանի յետոյ ընդդէմ այնպիսի թշնամւոյ միոյ , որ է աներևոյթ , ծայրագունապէս խորամանկ , անչափապէս կատաղի , և սաստկապէս սրտմտայոյզ , ուր եթէ կորուսանիցէ մեղաւորն զյաղթութիւն , աւարտի ա̃մ ինչ , և կորնչի ընաւ :

Օ սրբոյ մանկանէ միոյ , որ կոչիւր եղիազար՝ պատմի սուրիոս . թէ գոլով սա մերձ 'ի մահ , յանկարծակի սկսաւ խռովիլ , և խոժոռիլ դիմօք , և կալով այնպէս սակաւ ինչ ժամանակ , ապա վերստին ընկալաւ զառաջին պարզութիւն իւր . և ասաց յայտնապէս զայսոսիկ բանս : Ո՜հ թէ . որչափ մեծ է զօրութիւն դիւին 'ի փորձել զմարդն 'ի ժամ մահուան . բայց շնորհակալ եմ զՏէ , զի արժանի արար ինձ յաղթել ցնա . և այսպէս ասացեալ՝ աւանդեաց զհոգին իւր : Արդ եթէ այսպիսի է զօրութիւն դիւին 'ի փորձել զս̃ս և զսրբուհիս , որք են նմանք սր̃յս այսորիկ եղիազարու , որ ոչ միայն ոչ մեղուցեալ էր մանկացօրէն . այլ նաև արարեալ էր ընդ հարսին իւրոյ զկատարեալ ուխտ կուսութե̃ . և

մջանս

աքանչելաբար պահեալ էր 'ի յամուս֊
նական առագաստի խորում զհրեշտա֊
կային մաքրութիւն ։ Ապա զի՛նչ պա֊
տահելոց իցէ այնց ողորմելեաց , որք
'ի տղայական հասակէ մինչև ցվերջին
կէտն կենաց իւրեանց հնացեալք են 'ի
վավաշոտութեան , և գրեթէ համաքնու
թենակից եղեալք են ընդ մեղաց , ո֊
րովհետև հանգոյն ջրոյ ըմպեն զմեղս ,
և զանօրէնութիւն . վա՜ զի ոչ ընդ դիմա
նան գոնեայ փոքրագունի հեշտութեան
խմիք , որ հեշտացուցանէ զնա ։ Արդ
ուրեմն ո՛րպէս ոչ յաղթին յայնժամ 'ի
բռնութենէ սաստկագունի փորձութեանց
այնոքիկ , մինչ այժմ առ 'ի հեշտանալ
ոչ սպասեն գոնեայ զի փորձիցին խն֊
քեանք ։ Քանզի որ անկանի 'ի միոյ շնչ
մանէ , ո՛րպէս կարէ հաստատուն մնալ
'ի միոյ հարկանմանէ . և որ ոչ կարէ բե
կանել զմի բարակագոյն թել , ո՛րպէս
կարէ բեկանել զստուարագոյն պա֊
րանն ։ Եւ՞ եթէ բանտարկեալ ոք ոչ
կարէ զկխաքաց դուռն բանտին բա֊
նալ , և փախչիլ . ո՛րպէս կարէ արդեօք
բանալ յետոյ մինչ ամրացուցանի զար֊
հուրելի նգօք , և շղթայիւք ։

Ո՛հ թէ . որքան անձինք ունեցան , և
վայելեցին 'ի կեանս իւրեանց 'ի ձեռն
ածային ողորմութեան՝ զերկարագոյն մի֊
ջոցս ապաշխարութեան . բայց յետոյ 'ի
վեր

վերջին կիտող կենաց իւրեանց ստացեալք եղեն 'ի դիւէն. այնու՝ զի չար ունակութք, և սովորութք իւրեանց ետուն զհաւանութեն իմն թելադրութեն և փորձութեն նորին, որով յայնժամ փորձէ : Արդեօք որքան օժանդակէր այնպիսի թշուառականաց ( որք այժմ դատապարտեալք են յաւիտենականապէս ) սովորիլն 'ի սկզբանէ հետէ ընդդիմանալն փորձութեանց, յանձնելն զինքեանս Տն, աղաչելն զամենասրբուհի կոյսն, զպահապան հրեշտակն, և ըզպաշտպան սբն իւրեանց, նկարելն զինքեանս նշանաւ խաչին, և ըստ ժամանակի գործելն զներհակ գործ ինչ, առ'ի վկայել թէ յաւէտ կամին մեռանիլ քան տալ նմա զհաւանութիւն : Բայց այնպիսի թշուառականքն ոչ ունէին այլ ևս զտեղի ապաշխարութեն, զի դատապարտեալք են : Սակայն այսպիսի դեղքս օժանդակեն ձեզ, որք ունիք տակաւին զժամանակ. ուրեմն այնպէս արարէք, զի փորձութիւն ծառայեսցէ ձեզ ոչ զխլթան՝ առ 'ի դարձուցանել զձեզ փութապէս առ ած :

Մի՞ կամիք ուրեմն առնել հանգոյն այնց կուրացելոց, և յիմարացելոց, որք փոքր իմն համարին զներքին մեղքն խորհրդոց, նաև վարկեն զայնս ոչինչ գոլ, եթէ գործով ոչ կատարիցին :

Այլ

Այլ պարտիք գիտել հաւաստապէս․ թէ առաջի ա̃յ այնքան է մեղք իմն խոր հրդոյ, որքան է նոյն ինքն գործն մե_ ղաց ։ Քանզի ոչ է հարկաւոր զի անօ_ րէնութի̃ ինչ գայցէ 'ի գործ․ վասն զի առ 'ի լինիլ մեղք ընդդէմ ա̃ծայնոյ հան դիսաւորհութե̃ն, բաւական է միայն հա ւանումն մարդոյն՝ թէև իցէ ծածկա_ պէս ։ Յաղագս որոյ մինչ խորհուրդքն քո ապստամբեին ընդդէմ ա̃յ, առ որ առաւել յայտնիք են ապստամբիլն նո_ ցին 'ի սկիզբն թելադրութե̃ց․ յետոյ սակաւ ինչ փոյթ է եթէ ոչ գայցեն 'ի ներգործութիւն, և կատարեսցին գոր_ ծածութեամբ ։

Ուրեմն եթէ կամիք առնել բարեպէս․ խա կոյն 'ի գալն 'ի միտս ձեր սկզբունքն ապս տամբութե̃, ներկայացուցէ՛ք զայնս ա̃յ, յայտնեցէ՛ք նմա զա̃մ, վերանորոգե_ ցէ՛ք դէպ առ նա զհաւատարմութիւն, խոստացէ՛ք նմա զծառայութի̃, և զեր ծանիք յայնցանէ ։ Եւ մինչ յետոյ պար տիք խոստովանիլ, քննեցէ՛ք մտադրա բար, և զգուշապէս վ̃ս ա̃մ մտից, և ճա նապարհաց, զորս առ̂իք փորձութե̃․ և մասնաւորապէս նկատեցէ՛ք ևս, թէ ո՛ր դեօք ունիք զթշնամութի̃ ինչ, և զյա կական հենցաղավարութիւն ։ Քանզի բարկութի̃ն, և հեշտութի̃ն են իբր եր կու հասարակագոյն ճիւղք, և իբր եր

կու

կու բերանք տղրկին, որք միշտ աղաղակեն՝ բե՛ր, բե՛ր ։ Ուստի այս հոդուածի քննութիւն առնէ, զի մի՛ թագուցեալ մնասցէ ՚ի սրտի քում մահաբեր թոյն ինչ, որով մեռանիցի հոգի քո ՚ի յաւիտեան ։

Յաղագս ցաւոյ, որ խնդրի ՚ի յապաշխարողէն ։

# ԳԼՈՒԽ. Զ ։

ԱՅն՝ որ գնայ ՚ի յորս, ոչ բաւականանայ տեսանել և գտանել միայն զվայրենի կենդանին, այլ և խնդրէ ամ կարողութբ իւրով սպանանել զայն, զի յայսմիկ կայանայ մեծագոյն օգուտն գտանելոյ զորսն ։ Այսպէս՝ որ նախապատրաստէ զանձն ՚ի խոստովանութի, ոչ պարտի բաւական համարիլ ՚ի ձեռն քննութե միայն գտանել զմեղս իւր. այլ և պարտէ ամ կարողութբ իւրով սպանանել զայնս մեծաւ ցաւօք, զի ՚ի սմին կայանայ օգուտն բարեպէս քննելոյ ։ Քանզի անտանելի է վատ սովորութիւն քրիստոնէից այնոցիկ, որք ամենայն զօրութբ ջանան

՚ի

'ի քննել զմեղս իւրեանց, և յետոյ թարց այլ իմն յառաջադրութե͞ն զղջման՝ մերձենան 'ի խորհուրդն խոստովանութեան: Արդ զի՞նչ օգուտ է յայտնելն զյանցանս քո, եթէ ոչ ընկեսցես զնո͞ ցաւօք: Կամիմ ասել. զի՞նչ օգուտ է խոստովանութի͞ն այն, յորում պակասի ամբողջական մասն, որ է զղջումն: Ուսոյ ծանի՛ր. զի անկարելի է բարեպէս խոստովանիլ առանց այսորիկ ցաւոյ, որ գոնեայ պարտի լինիլ յառաջ քան զխոստովանութիւնն: Եւ մինչ ասեմ ցաւ, ոչ պարտիմք իմանալ զայն ցաւն, որ լինի յզգայութե͞ն արտասուօք, և հառաչմամբ. այլ պարտիմք իմանալ զզուումն ինչ, որ լինի 'ի կամս, որով ոք ատէ զմեղս, և զղջանայ վ͞ս գործելոյ զայնս, և առաջադրէ յինքեան ոչ գործել առապայն միւսանգամ. և եթէ այսպիսի զզուումն իցէ մեծ, դիւրապէս իջանէ 'ի զգայական մասն, նաև հակէ 'ի յողբ: Եւ ցաւս այս կրկին է. մին է կատարեալ, որ ասի ցաւ ջախջախման. և միւսն է անկատար, որ ասի ցաւ բեկման: Ուստի աստէն պարզաբանեսցուք զմին, և զմիւսն:

Յորժամ այր ոք մեղանչէ ծանրապէս, յայնժամ (ո͞պ ուսուցանեն ս͞րբք) դարձուցանէ զթիկունս առ ա͞ծ, և զերեսս առ ստեղծուածս, սիրելով զայնս ա-

ռա.

ռուել քան զծայրագոյն բարիսն : Եւ
այս է այն, զորմէ խօսի ա̃ծ Երեմիայիւ.
2. 27: Դարձուցին յիս զԹիկունս, եւ ոչ զե
րեսս : Բայց հակադարձապէս, մինչ
զղջայ ոք 'ի մոլորութ̃ե իւրմէ, յայն֊
ժամ դառնայ առ ա̃ծ, դարձուցանե֊
լով զԹիկունս առ արարածս : Բայց
եթէ յայսմիկ զղջման՝ այնքան սիրով
դառնայ առ ա̃ծ, մինչ զի մոռանայ ա֊
մենեքին զշահն եւ զօգուտն իւր, եւ այս
պարզ եւ անխառն սիրով միայն, յայն
ժամ այսպիսի կատարեալ զղջումն կոչի
զղջումն ջախջախման : Եւ այս ոչ այլ ինչ
է, եթէ ոչ ցաւ ի̃ն վ̃ս մեղաց, առաւել
ատեցեալ քան զայլ ա̃մ չարիս վ̃ս սիրոյն
ա̃յ, սիրելով զնա առաւել քան զայլ
ա̃մ բարիս : Եւ երանի է քեզ, եթէ
ունեցար 'ի կեանս քո զայսպիսի ցաւ.
եւ առաւել երանելի լինիս, եթէ ունե֊
ցիս զսոյնս 'ի մահուան քում : Որ միջնոր
դութ̃ե այսպիսի ցաւոյ, ո̃պ յայլ իմն
աւազանի մկրտութ̃ե՝ մաքրեալ սպիտա
կացուցանես զհոգի քո 'ի վեր քան ըզ
ձիւն, եւ ջնջես զմեղս քո նախ քան
լուանիլդ 'ի բաղանիսն խորհրդականի
խոստովանութ̃ե : Եւ որ ունի զկատա֊
րեալ զղջումս այս, ունի զծայրագոյն
ցաւ ի̃ն. քանզի համարի զմեղս առա
ւել քան զայլ ա̃մ չարիս. եւ ունի եւս
զպարզագոյն ցաւ, զի շարժի միայն 'ի

բա

բարութեան՝ զոր վշտացոյց։ Քանզի
այսպիսին զղջայր, թէև տեսանիցէ
փակեալ զդուռն դժոխոց, և արքայու
թեն, ասելով ընդ Դաւթի. սաղմ. 50. 6։
Քեզ միայն մեղայ Տէր։ Այսինքն՝ մեղայ
միայն առ քեզ, և ընդդէմ քո. վասն զի
թէպէտ մեղայ նաև ընդդէմ իմ,
երբ երկսայրի սրով վիրաւորեցի զհո
գի իմ. բայց այս ոչ է ինձ փոյթ ա
նելին, և է ոմն ոչինչ ինձ առաջի իմ
և ոչ ևս խորհիմ զայսմանէ բնաւ։
Բայց եթէ հոգին 'ի դառնալն առ Աստ
առաջնորդիցի՝ ոչ 'ի սիրոյ, այլ կամ
յուսոյ խոստացեալ բարեաց, կամ յե
կիւղէ սպառնացեալ չարեաց, և կամ
'ի գարշութեան զոր բերէ մեղանչելն ընդ
ինքեան, և սակս այսոցիկ պատճառաց
անարգիցէ զմեղս իւր, յայնժամ ապա
ունի զանկատար զղջումն։ Եւ՛ այս է
անկատար դարձումն ինչ և անկատար
ցաւ ինն զմեղաց իւրոց. այլ վասն դերբ
նական չարժանեին տրամադրէ զհո
գին յընդունումն շնորհաց 'ի ձեռն խոս
տովանութեան, բայց առանց խոստովա
նութեան ոչ շարաբերէ զշնորհս։ Արդ
պատճառն՝ որ զանազանէ զայսոսիկ եր
կու տեսակս կատարեալ, և անկատար
ցաւոյ և զղջման, է այն՝ որ դտանի 'ի
մէջ զղջման որդւոյ, և ծառայի։ Քանզի
զի զղջայ և ցաւի որդին, զի վշտացոյց
զհայր

զհայր իւր, և ոչ խորհել զզրկեցմանէ 'ի ժառանգ գոլոյ, կամ զարտաքսեցմանէ յընտանեկցութենէ տանն, զի շարժի միայն 'ի սիրոյ։ Բայց հակադարձաբար, ծառայն զղջայ և ցաւի. քանզի երկնչի թէ մի դուցէ տէրն իւր արտաքսիցէ զնա քըն 'ի տանէ, կամ զրկիցէ 'ի վարձուցն պատճառաւ պակասութեան իւրոյ. և այս է շարժիլ վն̄ յատուկ շահու, և օգտի։ Յառաջացելոցս ուրեմն տեսանի. թէ երեք են պատճառքն անկատար զղջման։ Նախ՝ երկիւղն դժոխոց, և պատրաստեալ պատժին մեղաւորաց։ Երկրորդ՝ յոյսն արքայութեն, և վարձն՝ զոր խոստացաւ ած արդարոց։ Երրորդ՝ գարշութիւն մեղաց, բայց ծանուցեալ լուսով հաւատոյ, ոչ̄ զի ցաւն ծնիցի դերբնական։ Իսկ պատճառքն կատարեալ զղջման վերաբերին առ մի միայն. այ̄ առ ածային հանդիսամեծութիւն, որ արհամարհեալ լինի 'ի մէնջ 'ի ձեռն մեղաց մերոց։

Արդ՝ այս հարկաւորութիւն, և զանազանութիւն ցաւոյ, զոր մինչ ցայժմ ասացաք, պարտի յատկապէս իմանիլ վն̄ երկու ցեղ անձանց։ Նախ՝ վն̄ այնոցիկ, որք պառծին 'ի մեղս։ Երկրորդ՝ վն̄ այնոցիկ, որք յուսով խոստովանելոյ դիւրապէս գործեն զմեղս։ Առաջին ասէ հոգին սբ̄. թէ մեղաւորն մինչ հասանի

նի 'ի խորս չարութեան, արհամարհէ ըզ մեղս, համարելով զնա փոքր ինչ չար. առակ. 18. 3: Անզգամն հասեալ 'ի խորս չարեաց, արհամարհէ: Եւ՛ թուի ինձ, թէ ոմանք անցանեն յայլ առաջ քան զայս խորութիւս, մինչ ոչ միայն արհամարհեն զմեղս, այլ և պարծին նոքօք, և արդարև կոյրք են այսպիսիքս: Քանզի թէպէտ այժմ պարծին յանօրէնութիս իւրեանց. բայց յաւուրն դատաստանի սակս մեծի շփոթման, զոր կրիցեն վասն այնց անիրաւութեանց, աղաչեսցեն լերանց անկանիլ 'ի վերայ ինքեանց, և ծածկել զինքեանս: Եւ՛ դառնալով մեր առ առաջադրութիւն մեր՝ ասեմք. թէ սոյնպիսիքս՝ որք պարծին վասն գործեցեալ չարեաց իւրեանց, ոչ առնեն միայն զմի ծանրագոյն մեղք, այլ և տան զմեծագոյն նշան իմն, թէ ոչ ունին ըզ հարկաւոր ցաւ, և զզջումն մինչ խոստովանին զայն: Այսպիսիքս են նմանք այնոցիկ, զորոց ասէ առակաբանն. առակ. 10. 23: Ծիծաղելով գործէ անզգամն զչարիս: Ուրեմն ո՛րպէս կամիս դու, որ այնպիսի ունակացեալ ծիծաղն, և ուրախութիւն յետոյ դիւրապէս խոխիցի 'ի ցաւ, և 'ի սուգ: Եւ՛ մանաւանդ դժուարագոյն է ենթադատելն. թէ ցաւիցին արդեօք կերպի՞ւ իւիք զմեղաց իւրեանց, մինչ սովորք էին համարել զայնս 'ի պար

ծանուս ինքեանց ։ Զճշմարիտն ասեմ․ թէ մեծագոյն իր իմն է, զի այսպիսիքս ՚ի կլիտոջ միում այնպիսաբար փոխիցեն զսիրտս իւրեանց, մինչ զի գարշիցին ՚ի նոցանէ ոպ̃ ՚ի միոյ յուշկապարկէ, զոր յառաջն ունէին ՚ի ծոցս իւրեանց ոպ̃ զշնակ մի, և շողոքորթեալ սիրէին ՚ի հրճուումն անձին ։

Միւսն ցեղ անձն, որ առաւելաբար դահավիժի խոստովանելով առանց ցաւոյ, է այն՝ որ մինչ մեղանչէ, ասէ․ Խոստովանեցայց․ բաւական է խոստովանիլն ։ Այսպիսիքս յայտնապէս ցուցանեն, թէ ոչ համարին ունիլ զհարկաւորութ̃ն ցաւոյ, այլ կարծեն թէ առ ՚ի բարւոք խոստովանիլ բաւական իցէ միայն պատմել զմեղս իւրեանց խոստովանահօրն ։ Ապա թէ ոչ, յիմար լինէր ասելով՝ արարից զայս մեղս, և յետոյ խոստովանեցայց, որ է նոյն եթէ ասիցէր ոք․ արարից զայս մեղս, և յետոյ զղջացայց ։ բայց ոչոք՝ եթէ ոչ միայն յիմարն է, որ գործէ առ ՚ի զղջալ․ և այս այնքան առաւել, որքան հեշտութ̃ն գործելոյն է հակիրճ, և զղջումն տևէ ՚ի բոլոր կեանս ։ Եւս յիմարէ վն̃ բազում պատճառաց այնպիսին, որ ասէ․ Խոստովանեցայց յետոյ ։ Վ̃յ ասեմ առ այնպիսին․ ո՛ կարէ հաւաստել զքեզ ունիլ յետոյ զժամանակ առ ՚ի խոստովանիլ ։ Եւ դի

ցուք թէ ունիցիս զմիջոց, և զժամանակ. բայց ո՛ կարէ ստուգել քեզ, թէ բարեպէս կարես խոստովանիլ յայնժամ: Գտանի արդեօք այնպիսի ոք, որ թունաւորիցէ զանձն, և ասիցէ. թէ ունիմ զդեղթափ, և զթիւրակէս: կամ վիրաւորիցէ զինքն ասելով, թէ ունիմ զզօրաւոր պալասամ: Ես լաւապէս գիտեմ, որ ոչ պակասին յաշխարհէ անուանի վիրահատք բազումք. սակայն այսու ամենայնիւ ոչ տեսանեմ զոք, որ դահավիժիցէ զանձն իւր 'ի բարձանց. և կամ հանցէ զոսկր ինչ 'ի տեղւոջէ իւրմէ, զի յետոյ 'ի ձեռն վիրահատից արասցէ դարմանել:

Բայց դիցուք թէ, խոստովանեսցիս յոյժ բարւոք, և կամ յաջողեսցի քեզ այն. սակայն մի՞թէ ոչ գիտես, թէ խոստովանութիւնն հասարակաբար ոչ բառնայ զամենայն չարիս, զոր արար մեղքն: Զի զոր օրինակ. յապաքինիլն խօթութեան տենդի, ոչ անդէն վաղվաղակի բժշկին թուլութիւնք, և տկարութիւնք ուժոյ. քանզի զզուութիւն կերակրոյ, և քնահատութիւն ուժոյ մնան 'ի մէջ երկուց ծայրից հիւանդութեան, և կատարեալ առողջութեան: Այսպէս մնան բազում չարագոյն մնացորդք և մասունք մեղաց, թէպէտ ոչ մնայցեն մեղքն, որք ջնջին 'ի ձեռն բարի խոստովանութեան.

վա

վ͞ն զի մասնաւոր կերպիւ՛ միայն երկու. ա͞յ ժամանակաւոր պատիժքն, և չար ունակութիւնքն: Քանզի նախ մնայ պատիժ յոլով առ'ի վճարել. և այս կամ յայսմիկ աշխարհի ապաշխարութ͞բ, և կամ 'ի հանդերձելումն հրով քաւարանին: Եւ՛ մինչ ասի հուր քաւարանի, ասի հուր ինչ՝ որ է աննման հրոյն դժոխոց միայն որքան առ տևողութիւնն: Եւ՛ յայլս մնացեալս է այնքան զարհուրելի. մինչ զի ո՞չ պատմի ս͞բ անտոնինոս քահանայն 'ի գրգոջ իւրում զզինուորէ միոյ, որ մնալով անդէն ժամ մի միայն, կարծէր լինիլ անդ զամս բազումս: Եւ՛ երբեմն ևս այնքան տևէ (որպէս ընթեռնումք 'ի վարս երանուհի մարիամու օգնաթացւոյ.) թէ ոմանք մեղաւորք դատապարտեցան մնալ անդ մինչև ցօրն դատաստանի: Ասաց հոհի ումն ումեմն կրօնաւորի, որ յափշտակեալ եղև հոգւով առ'ի տեսանել զքաւարանն: Վա՛յ. վա՛յ. վա՛յ. գիտեմ, զի յառաջ քան զօրն դատաստանի ոչ ընկալցիմ զմխիթարութի͞ւ: և զայս պատմէ քարթուզեանոսն: Ո՛հ. ասա՛ ուրեմն դու այժմ. խոստովանեցայց. ո՞չ թէ ոչ իցէ այլ պատիժ բայց 'ի խոստովանելոյ: Խոստովանեցիս դու. այո. բայց առ'ի բարւոք առնել զայն, կրեսցես և զապաշխարանս: Վա՛յ ձէզ՝ որք ծիծաղէք այժմ.

( առէ փրկիչն մեր ) զի սգայցէք եւ լայ-
ջիք. Ղուկ. 6. 25:

Իսկ միւս վատթարագոյն ներգործու-
թիւն, որ առաւելեալ լինի յանցելոց
մեղաց զկնի խոստովանութե, է չար
ունակութիւն, որ վն անկատարութե
ցաւոյ մերոյ՝ հասարակապէս ոչ ջնջի
ըստ բոլորին, թէև տկարասցի: Թէ-
պէտ յառնէ ղազարոս, բայց յառնէ
կապեալ ոտիւք, և ձեռօք՝ օրինակ մե-
ղաւորաց. քանզի թէպէտ յառնեն 'ի
շնորհս խոստովանութե, սակայն յառ-
նեն ունակութբ չար վարուց իւրեանց:
Եւ՛ այս ունակութիւս, և չար բարքս,
է մեծագոյն արգելումն, զոր ունի հո
գին մեր առ'ի հասանիլ փրկութե: Քզի
այս սակաւ առ սակաւ դառնայ իբր 'ի
բնութի. և այնու զգացեալ լինի մեծ
դժուարութի 'ի գործել զբարին. ոչ թէ
որք կապեալ իցէ, և կամիցի ընթանալ, կմ
ընթանայցէ ըքարշ գնալով, ոչ թէ ու-
նիցի զծանրագոյն շղթայ իմն երկաթե
ղէն: Աստուստ պատահի, զի գտանին
բազումք, որք զերիտասարդական ցան
կութիւս իւրեանց ածեն մինչև 'ի մահ.
և մինչ կարծեն յետս ձգել 'ի թիկանց
իւրեանց, գտանեն զայնս ունակացեալ:
Ուստի առէ դաւիթ. սաղմ. 108. 18.
Թէ մեղաւորն Զգեցաւ զանէծս. վն ըզ
մեղս. ոչ հանդերձ: Ահա աստէն ցու-
ցա-

ցանէ զանցեալ մեղքն գոլ յունակութե ։
Բայց զի՞նչ առնէ այս ունակական
մեղքս ․ միշտ մտանէ 'ի ներքս ․ Տպջէ ։
Այլ սակայն ո՞րով եղանակաւ ․ լո՛ւր
զզարհուրելագոյնս ։ Նախ՝ ո՞չ ջուր
մտանէ 'ի յաղիս, որ ոչ կարէ արտաք-
սիլ, եթէ ոչ մեծաւ դառնութբ ․ ո՞չ
ջուր 'ի փոր նր ։ Եւ՞ ապա թափանցի ո՞չ
ձէթ 'ի խորս ոսկերաց ․ որ և այս ոչ կա
րէ հանիլ, եթէ ոչ սքանչելեօք միայն ․
ո՞չ ձէթ յոսկերսն նր ։ Այստուստ տեսանես
և զծերս ոմանս, որք վինջեն ոչ գի-
տեմ առ որպիսի բորբոքումն ցանկու-
թե, զոր բարձեալ է 'ի նոցանէ հա-
սակն ․ և են նմանք այնոցիկ լերանց,
որք ցայթուցանեն զհուր ․ արտաքուստ
զձիւն սպիտակ ալեօք, և 'ի ներքուստ
զբոց՝ ցանկութբ ։ Եւ՞ ո՛րպէս առնեն
առ 'ի տալ դարման այնպիսի հրդեհ-
ման ։ վն զի ունին զձիւթ յոսկերս իւ-
րեանց ։ Ոսկերք նր յագեցան մանկութե նո
րա ․ յոբ․ 20․ 11։ Մի՛ կարծեր ու-
րեմն ․ թէ հուրն այն երբէք դադարես
ցի, մինչև անմաքուրքն այնոքիկ դարձ
ցին 'ի մոխիր ․ քանզի ցանկութիւք նոցա
ընդ նոսա իջանեն 'ի գերեզման առ 'ի
ննջել ․ ընդ նմին 'ի հող ննջեսցեն ։ վարկա
նի թէ այսոքիկ ոչ պարտին ևս մեռա
նիլ բոլորովին ։

Որդ թերևս կարծես դու՝ թէ այս

միայն իցէ բովանդակ հաշիւ՛ն, և ա-
ւարտն տրտմալի ժառանգութե՛, որ
մնայ 'ի հոգին յետ քննեցման մեղաց.
զի եթէ այսպէս կարծես՝ խաբիս: Ա՜
զի է այլ իմն վատթարագոյն իր այնպէս
զարհուրելագոյն, որ սասանեցուցա-
նէ զիս 'ի գրելն: Ո՛վ տէր իմ, մի՛ հար
կաներ զհոգի իմ այսու կայծակամբ.
և եթէ կամիցիս պատժել զիս, եղիցի
դառնութ՛ք, և խստութ՛ք, բայց մի՛
եղիցի այնքան սրտմտութ՛ք: Խրատե՛
զմեզ տէ՛ր, բայց իրաւամբ, և մի՛ ցասմամբ.
զի մի՛ սակաւաւորս արասցես զմեզ: Երեմ.
10. 24: Ե՞րբ պատիժս այս է բարձումն
ածային օգնութեց, որով բազմիցս բա-
րեպէս պատժէ մեզ զապերախտութիւն
անցեալ մեղաց՝ և ս զկնի թողութե՛, դա-
դարելով 'ի բարերարելոյ մեզ յապա-
գայն ձրիական պարգևօք ոմամբք, վ՜
ապարդիւն գտանելոյ մեր, և ոչ վասն
խստացեալ գոլոյ իւր. բայց առատա-
բար բաշխէ այնմ, որ առաւել հաճոյ է
ինքեան ըստ խորհրդոց կամաց իւրոց:
Զի աներկբայելի իսկ է. թէ մեր կա-
րողութիւնք անձնիշխանութե՛ մերոյ՝ ոչ
են ըստ ինքեանց բաւականք 'ի գործել
զգործ ինչ բարի արժանաւոր յաւիտե-
նական կենաց. զի մեր բաւականութի
մեր յա՜յ է, որ 'ի ձեռն շնորհաց իւրոց
զօրացուցանէ զտկարութիւն մեր. ոչ

ասէ

ած առաքեալ պօղոս . 2. կորն. 3. 5:

Ոչ եթէ անձամբ բաւականք եմք խորհել ինչ իբրեւ'ի մէնջ. այլ ամենայն բաւականութիւնն մեր յայ է :

Թող օգնութիւնքս այնոքիկ ոչ բաշխին ամենեցունց հաւասարապէս. վս զի ոմանց կարկառի չափ բաւական, ոմանց թաւթախուն, և ոմանց զեղուն : Թէպէտ ամենեքեան ունին յայ զայսպիսի զօրութիւն օգնութեանց, որ բաւական իցէ նուաճել զդժուարութիւնս ոմանս, որք պատահին 'ի ճանապարհի փրկութե. բայց ոչ ամենեքեան ունին զայս օգնութիւնս այնքան մեծաւ առատութբ, որք կարողք լինիցին յաղթել զայնս դիւրաւ : Եւ այս առատութիւն է բարերարութիւն այն, զոր արդարապէս կարէ բացասել մրն 'ի պատիժ անցեալ չարագործութեանց մերոց՝ արդելլով զընթացուն այնց շնորհաց, որ եթէ չունէաք զմեղս, հաստատեալ էր նա հեղուլ առատաբար 'ի հոգիս մեր : Որոյ օրինակն երևի յայսմիկ. զի թէպէտ դաւիթ ներեաց աբիսողոմայ զսպանումն ամօնի, բայց ոչ արժան համարեցաւ զնա գալ առաջի իւր, և ոչ շնորհեաց նմա զպաշտօնս և զպատիւս զայնոսիկ, զորս տալոց էր՝ եթէ չիցէր արարեալ զմարդասպանութիւն : Արդ յայսպիսի պատժոյ դիւրին իմն է թէ կախիցի յա

ւիտենական փրկութիւն մեր։ Նաւակն
այն, որ սակաւ Թիօք ոչ կարէ զալիսն
ծովու պատառելով անցանել, պատա-
ռէ բազում Թիօք, և հասանի առ նա-
ւահանգիստն։ այսպէս և հոգին այն՝ որ
սակաւ օգնութեամբ ոչ կարէ յաղթել զսաս-
տկութիւն փորձութեանց, յաղթէ բազմօք,
և հասանի առ փրկութիւն։ Ուստի ոչ ա-
ռանց խրատանց ասէ հոգին սրբ. սիրաք.
հ. ե։ Վս̃ քաւութեան մեղաց մի՛ լինիր առանց երկ-
իւղութեան։ Վս̃ զի պարտ է երկնչել 'ի գոր-
ծեցեալ մեղաց՝ Թէև իցէ Թողանե-
ցեալ. քանզի Թէպէտ Թողանեցեալ է
մեղքն, սակայն կարէ մնալ այս պա-
տիժս, որ է մեծագոյն քան զայլ ամ̃
մնացեալս, որ է նուաղութիւն ա̃ծային
օգնութեանց, որ բազմաց է առիթ յա-
ւիտենական կործանման։ Պատմի վս̃
իժի, Թէ խայթուածն նր̃ այնքան Թու-
նաւոր է, մինչ զի Թէև ամ̃ դեղօրէիւք
կեանքն մ̃ին ազատի, սակայն միշտ մնայ
բնութիւն տկարացեալ, և մանաւանդ-
տեսութիւն։ Ուրեմն ո՛վ անիծեալ մեղք,
դու ես իժն այն Թունաւոր, որ վնա-
սես մեզ նաև յապաղայն. և զի Թէ-
պէտ 'ի խայթմանէ քումմէ զերծանիմք,
սակայն յատկապէս վնասն քո հասանի
առ աչս մեր։ Ե՛ւ զի ճշմարտութիւքս
այսոքիկ ոչ խորհեցեալք լինին 'ի մեղա-
ւորաց՝ ոչ Թէ չիցեն իրք հաւատոյ.

այնու ոչ ճանաչէին պարզապէս. վ՟յ ա-
սէ զնոցանէ յօբ. ե. 14: 'ի տուէ պատահես-
ցէ նց̅ խաւար. և 'ի միջօրէի իբրև 'ի գիշե-
րի խարխափեսցեն :

Յաղագս հերոդէ, որով շարնուցանէ այս-
ցաւս.

## ԳԼՈՒԽ. Է:

Ի Թղթոյ նաւարկութեան ոչ միայն գծագրին նաւահանգիստքն, այլ նաև հողմունքն, որք տանին զնաւն : Համգունապէս պակասէր լաւագոյն մասն յառաջադրեալ կրթութե̅ մերոյ, եթէ զկնի յայտնելոյ զհարկաւորութի̅ն ցաւոյ, ոչ ուսուցանէի քեզ զկերպն հետևելոյ նմա, և ոչ ցուցանէի՝ թէ ո՛ւստի հնչելոց է այն հոգիաղուա՛րճ հողմն, որ յաջողակաբար ածելոց է զքեզ առ վերջին վախճանն քո : Արդ յառաջադրեմ քեզ առ այս գործ զերկս միջոցս :

Նախկին միջոցն է, խնդրել մեծաւ խոնարհութբ̅ զայսպիսի ցա՛ւս և զզջումս 'ի Տ̅նէ, զի պարգև նր̅ է. և պարգևս այս այնքան մեծ է, որքան առաւել է

ծյ հանել զմեղաւոր ոք 'ի թշուառու-
թէ մեղաց, քան հաստել յոչնչէ զաշ-
խարհ ամ: Քանզի խոստացաւ Տէրն միշտ
լսել խնդրուածոց մերոց, մինչ բարե-
պաշտութբ, և երկայնմտութբ խնդ-
րեմք 'ի նմանէ զհարկաւորն փրկութն
մերոյ: Ուստի այսպէս՝ կարեմք դիմել
առ Նա մեծաւ համարձակութբ, թէև
ոչ ունիցիմք զարդիւն ինչ: վս զի Նա
յօժարաբար լսէ աղաչանաց մերոց, և
ոչ շարժի առնել զայն վասն արդեանց
մերոց, այլ վս ծայրագոյն բարութն,
և խոստմանց իւրոց, ոպ ասաց բերա-
նովն մովսիսի. ելից. 22. 27: Եթէ բո-
ղոքեսցէ առիս՝ լուայց նմա. քանզի ողորմած
եմ: Եւ այս միջոցս աղօթից ոչ միայն է
գործունէագոյն, այլ և ըստ ոմանց՝ է
միայնակ և եզական: Քանզի եթէ զայն
քան քարացեալ սիրտս ունին, զոր ե-
թէ ոչ կակղացուսցեն աղօթիւք, և ջեր
մապէս յանձնելով յած, ոչ երբէք դառ-
նան 'ի յաւիտեան: Ուրեմն կարօտին
յայտկապէս երկնային ցօղոյն, որ սա
կաւ առ սակաւ թափանցեսցի 'ի նա, և
կակղացուսցէ:

Երկրորդ միջոցն է խոկումն այնց իրա-
ւանց, որք զարթուցանեն զզղջումն, և
է ոպ հարկանումն մովսիսեան գաւազա-
նի առ վէմն, զի բղխիցի ջուր: Մտածեա՛
ուրեմն զայնքան մեծագոյն բարութին

ննա

ան․ որ եթէ կարելի իցէ սիրել զնա
անհուն սիրով, պարտ իսկ է սիրել ան
հնապէս ։ Մտածեա՛ զայնքան բարձ-
րագոյն գեղեցկութիւն, որ ոչ է կարե
լի տեսանել զայն պարզապէս, և ոչ
սիրել աւելի քան զհազար անգամ ՚ի
վեր քան զանձն քո ։ Քանզի եթէ ցու
ցանիցէր ած զամենագեղեցիկ երեսն
իւր այնց դիւաց, որք այսօր հայհոյեն
զնա ՚ի դժոխս, իսկոյն փոխարկէին զա
տելութիւս իւրեանց ՚ի բարեհաճութի,
և փոխանակ անիծանելոյ՝ սկսանէին օրհ
նել զնա անհանգիստ բարբառով ։ Տե՛ս
ուրեմն դու այժմ․ զի փոխանակ սիրելոյ
զայս ամենափարելի բարութիւս, անար
գեցեր զնա, և դարձուցեր առ նա զթի
կունս քո, հետևելով յիմարական ըղձից
քոց, հակառակելով ընդդէմ բարերա
րագոյն կամաց նր, և հետևելով յառ-
կի կամաց քոց ։ Մտածեա՛ զայնքան ան
հուն իմաստութիւն նորա, որ տեսանէ
զամ․ և պատկերակերպեա՛ յերևակայու
թեդ, թէ հայէր նա ՚ի քեզ ՚ի մեղանչելն
քո, և զանպատմելի ատելութի ունէր
ընդդէմ մեղաց քոց․ բայց դու ամ կերպ
հնարիւ կամէիր գործել զնա, ոպ թէ
իմաստութիւն այ ոչ տեսանէր զայն, և
կամ տեսանելով զքեզ՝ զանց առնիցէր
զքև ։ Մտածեա՛ զայնքան նախախնա-
մութի նր յօժար միշտ առնել քեզ ըղ

 բա-

բարիս, և դու ծառայեցուցանես զնա 'ի չարագործութիւնս քո, որ թէ պարտաւոր իցէ պահել նա զապստամբ ոմն խստապարանոց: Նկատեա՛ զայնքան կարողութիւնս նր՝ միշտ պատրաստեալ 'ի պահել զքեզ յամ չարեաց. իսկ դու աշխատեցուցանես զնա 'ի քոյդ անօրէնութիւս, որ թէ պարտ իցէր նմա խնամարկել զմատնիչ ոմն: Նկատեա՛ զանչափութիւնս նր, 'ի ներկայութե որոյ անչափապէս փոքրագոյն ես դու, որ հատ մի աւազոյ բաղդատութբ ամ երկնից: Քանզի ամ ազգ և ազինք այնպէս են առաջի նր, որ թէ ոչ իցեն ամենևին. որ ասէ եսայ. 40. 17: Ամ ազգք ոչինչ են, և յոչինչ համարեցան նմա: Եւ յետոյ մտածեա՛ 'ի քեզ, թէ զինչ իցես արդեօք դու 'ի մէջ այնքան արարածոց: Բայց այսու ամի, յանդգնիս բարձրացուցանել զգլուխ քո ընդդէմ այսպիսոյ ամենամեծի հանդիսաւեհութեան, բառնալ զթագն 'ի գլխոյ նորին, և 'ի կողմանէ քումմէ քայքայել զնա՝ ըստ նմանութե մրջման միոյ, որ յառնիցէ ընդդէմ արեգական, և կարծիցէ խաւարեցուցանել զնա. յոբ. 15. 25: Ամբարձ ձեռս ընդդէմ Տն, և առաջի ամենակալին ընդվզեցաւ:

Երրորդ միջոցն առ 'ի զարթուցանել զայս ցաւս, է դնելն 'ի միոյ կողմանէ զյա-

տուկ

տաւկ մեղս իւր , և 'ի միւսոյ կողմանէ
իբր հակառակութե̃ն զբարերարութիւնս քոյ ·
ոչ ըստ որում են քարինք մեր , այլ ըստ
որում են ձիրք նորա , և են իբր գետք
նաւարկելիք , որք ելանելով յանհուն
ծովէ բարերարութե̃ն անծայնոյ , տա-
նին զմեզ առ նա : Նկատեա՛ · զի Տէրն
'ի յաւիտենից հետէ արկեալ է զաչս իւր
'ի քեզ՝ սիրելով զքեզ , ոչ վս̃ արդեանց
քոց , այլ միայն վս̃ ողորմութե̃ն իւրոյ ·
վս̃յ սահմանեաց ստեղծել զքեզ 'ի մէջ
այնքանեաց , զորս կարէր ստեղծել 'ի
տեղի քո : Եւ այսպէս՝ ետ քեզ զմար-
մին ա̃մ զգայարանօք իւրովք · զհոգի
ա̃մ զօրութե̃մբք իւրովք · և նախախնա-
մեաց զքեզ մինչև ցայսօր՝ կերակրովք ,
ըմպելեօք , զգեստուք , և բնակութե̃ ·
Հրամայելով արարածոց իւրոց ծա-
ռայել քեզ , կամ 'ի պիտոյս քո , և կամ
'ի զուարճութի̃ անձին քո · ազատելով
զքեզ յայնքան որոգայթից , յայնքան
հիւանդութե̃ց , և յայնքան աղքատու-
թե̃ց , զորս կրեն այլք : Եւ ետ քեզ
պահապան զհրեշտակն արքայութեան ,
որ միշտ պաշտպանէ զքեզ · և առնէ
զայլ անթիւ բարերարութիւնս , զորս ոչ
ճանաչես դու : Եւ ևս ոչ պակաս մեծա-
գոյն քան զայսոսիկ է , որ բոլորովին
պահպանէ զքեզ միշտ , ո̃չ թէ յա̃մ կի-
տոջ շնորհիցէ քեզ զայնս նորապէս :

Արդ

Արդ համահաւաքեա՛ ընդ այսոցիկ բը
նաւից՝ զբարերարութիւն բնութեան ,
նաև զբարերարութիւն շնորհաց , որ գե
րազանցէ հազարապատիկ մեծութբ՟ քան
զբարերարութիւն բնութե՟ ։ Քանզի շը
նորհեաց քեզ ծնանիլ ՚ի մէջ քրիստոնէ֊
ից , արժանի արար բազում անգամ սբ՟
խորհրդոց , բազմաւ երկայնմտութբ՟ կը
չեաց զքեզ յապաշխարութի՟ , զբազում
քան զքեզ նուա՛զ մեղաւորս դատապար
տեաց , որոց մեղքն սակաւք էին քան
զքոյն ։ Ընթանայ զհետ քո , մինչ փախ֊
չիս ՚ի նմանէ , բաղխէ զսիրտն քո հա֊
զարաւոր ներազդմամբ իւրով , խօսի ը՟
քեզ , աղաչէ զքեզ , վասափանէ աղաչելով՝
ոպ՟ ասէ բերանովն երեմիայ . և արհա
մարհեալ ՚ի քէն՝ ոչ դառնայ յետս , քան
զի փափաքէ փրկել զքեզ ։

Առակցեա՛ ևս զբարերարութիւն փրկա
գործութե՟ . և մտածեա՛ զի ա՟ծն հա֊
մայնից կամի լինել մարդ վս՟ սիրոյ քոյ ,
և մեռանիլ ՚ի մէջ այնքան ցաւոց , յետ
որոյ կրեալն էր զդառնագոյն , զաղքա
տագոյն , և զողորմելի կեանս ։ Արար
զքեզ ժառանգ ահուն արդեանց իւ֊
րոց . մեռանելով ազատեաց զքեզ մեծաւ
գնով ՚ի մշտնջենաւոր ծառայութէ՟ դե
ւին . բարձրացոյց զքեզ առ անհուն ար
փ՟անապատու՛թի որդիութե՟ ա՟յ . և եթող
զինքն առ քեզ յամենասբ՟ հաղորդու֊
թե՟ ։

թէ : Ե՞ւ զայսոսիկ ընաւ այնքան սի-
րով արար, մինչ զի թուէր ինքեան
քրտունքն իւր սակաւ, չարչարանքն իւր
նուազ, վն̃ ցանկայր կրել առաւելա-
պէս. և հարան 'ի սիրտ նր̃ այլ մեծա-
գոյն չարչարանք քան զայնս, զորս տայ
ին մարմնոյ նր̃ թշնամիքն իւր : Քանզի
զի՞նչ պիտոյս ունէր նա զծառայութե
քումս, կամ փրկութեն քո զի՞նչ օգուտ
բերէր նմա, և դատապարտութեն քո
զի՞նչ վնաս առնէր նմա :

Առ այսոսիկ ընաւս, և առ այլ անհուն
բարերարութիւնս՝ զորս ունիս, և ունե-
լոց ես, հակադրեա՛, և կշռեա՛ ( եթէ
կարելի է ) զթիւն, զծանրութիւն, և
զանարգութիւն մեղաց քոց, զդիւրու-
թիւն որով արարեր զայնս, և զմեծա-
գոյն ապերախտութիւն քո. որ արդա-
րև ոչ է արարեալ երբէք յումեմնէ առ
ումն : Դողասջի՛ր. և սարսափեա՛ց յոյժ :
թէ որպէս կարաց տանիլ քեզ երկիրն.
և համբերել երկինքն. և զարմացի՛ր
յաւէտ, թէ ո՛րպէս ընաւ արարածք
ոչ առին 'ի քէն զվրէժ վն̃ անիրաւու-
թեանց, զորս արարեր դու տն̃ նց̃, որոյ
զանունն, զբարերարութիւնս, զշնորհս,
զօրէնս, զօրինակս, զարիւնն, զմահն,
և զփրկութիւն առ ոտն կոխեցեր :

Արդ՝ եթէ այսոքիկ միջոցք, և շարժա-
ռիթք իբր փոքր ինչ թափանցիկք լեալ
քեզ.

քեզ, ոչ կակղացուցես զսիրտ քո, զի՞նչ առնելոց իցես արդեօք յայնժամ։ Դի՛ր առաջի աչաց քոց զզարհուրելի բոցս, զորս մեղք քո բորբոքեալ անուցանեն. տե՛ս զլիճս ձիթոյ, զհեղեղս ծծմբոյ, զխորադոյն բանտն, ուր յաւիտենական խաւարաւ, յաւիտենական քաղցու, յաւիտենական ծարաւու, յաւիտենական զազրահոտութ՟ե, յաւիտենական տրտմութ՟ե, յաւիտենական հայհոյութ՟ե, և յաւիտենական յուսահատութ՟ե չարչարին ամ՟ զգայութ՟իւք մարմնոյ, և ամ՟ զօրութ՟իւք հոգւոյ, որ միշտ ունիցի զայն՝ զոր ատէ, և ոչ ունիցի երբէք զայն՝ զոր սիրէ։ Ե՞ւ այս ամ՟, միշտ. ի՟ յայնքան դարս՝ որքան են աստեղք երկնից, և անհնապէս աւելի. յայնքան դարս՝ որքան են ամ՟ աւազք ծովու, և անհնապէս աւելի. յայնքան դարս՝ որքան են տերեւք ծառոց, և անհնապէս աւելի. յետ որոյ անցցէ ամ՟ ժամանակ, որ կարիցէ պատկերակերպել իմացականութիւն մեր, ոչինչ անցանէ 'ի նմանէ, և բովանդակն 'ի նորոյ սկսանի։ Բայց մանաւանդ ոչ ունելոց է զուրախութիւն ինչ, ոչ երբէք տեսանելոց է զբարեկամ ոք, ոչ երբէք խօսելոց է ընդ ազգականի միում. ոչ երբէք գնալոց է 'ի զբօսանս. ոչ երբէք մտանելոց է 'ի քուն. ոչ երբէք շիջա-

նե-

նելոց է 'ի հրոյ այնմանէ կայծ իմն փոք
րիկ. ոչ երբէք ունելոց է զրոպէ մի հան
գստութեան 'ի ձառանդէմ դահճաց. և ոչ
երբէք ունելոց է զայնքան բարի, որ_
քան է կաթիլ իմն ջրոյ 'ի վ̃ր լեզուի։
Հարց դու ուրեմն մարմնոյդ սակաւ
ինչ. ասելով։ Մի՛թէ կարես բնակել ընդ
յաւիտենական այրեցման հրոյ։ Ո՛րպէս կա
րասցէ եղկելի մարմինն մնալ յաւիտենա
կանաբար 'ի հուրն. զի եթէ 'ի մահճի
միում մնալոց իցէ նա զամ մի միայն ա_
ռանց շարժելոյ երբէք 'ի միոյ կողմա_
նէ 'ի միւսն, համարէիր դու զայն ան_
տանելի տանջանք։ Ուստի ասա՛ ինքնին
դու 'ի քեզ. Ո՞վ յաւիտենականութիւն. Ո՞վ
յաւիտենականութիւն։ զի՞նչ լինէիր արդեօք
դու 'ի մէջ այնորիկ հրոյ, եթէ այնքան
անտանելի համարիս եղեալ քեզ 'ի փա
փուկ անկողնոջ։ Բայց սակայն ոչ գը
տանի քեզ այլ դեղ իմն յետ մեղանչե_
լոյդ, եթէ ոչ ապաշխարելն. ապա թէ
ոչ՝ անսխալաբար հասցէ քեզ դատա_
պարտութիւն։ Աստէն ոչ գտանի այլ
միջոց, եթէ ոչ ջուր, և կամ հուր։ Հա
նդերձեաց քեզ զջուր, և զհուր։ Սիրաք.
15. 17։ Այսինքն՝ կամ լալ ընդ ապաշ
խարողս, կամ այրիլ ընդ դատապար_
տեալս. քանզի հարկ է քեզ ընտրել՝ կամ
զդժոխս, կամ զապաշխարութիւն։

Վերջապէս, այլ իմն եղանակ զարթու

ցանելոյ դիւրաբար զզղջումն մինչ խոստովանելոց իցես, է սովորութիւն առնելոյ բազմիցս այս ներգործութիւնս, զօրացուցանելով զսիրտ քո յամմուն աւուր, առ՚ի համաձայնիլ առաջին շարժմանն ազնիւ սիրոյն ։ Եւ ո՛ արդեօք դիտել կարիցէ, թէ յայսմանէ թերևս ոչ կախիցի յաւիտենական փրկութիւն քո յաւուր միում ։ Ասեն բազում վարդապետք. թէ ոք ՚ի մահուան իւրում պարաւանդեալ է ջանալ ունիլ զայսպիսի ներգործութիւն զղջման, առ՚ի հաւատալ լաւագոյն կերպիւ զամից. և մինչ սխալի ՚ի առնելն զայս, դատապարտի ։ Եւ է այս բան ճշմարտագոյն. քանզի ոչ գտանելով յայնժամ ՚ի պատրաստի խոստովանահայր. այս է լաւագոյն, և միայնակ կերպն ։ Բայց ո՞վ կարիցէ առնել նա զայնպիսի ներգործութիւն զղջման ՚ի ժամու մահուան, որ ոչ է ուսեալ առնել զայն ՚ի կենդանութեան ։ Ոչ կարես հաւատալ դու զքեզ ունայն յուսով. թէ պատահեսցի քեզ մասն բարի, ՚ի միում որոգայթաւոր խաղի՝ առանց փորձառելոյ բազմիցս նախապէս ։ Եւ յետոյ ո՛րպէս կարիցես յուսալ առանց փորձառելոյ ՚ի գլուխ տանիլ դիւրաբար զայնպիսի գործ մի, որ է դժուարին քան զամ դժուարինս ։ Որքանիցս կրթին բարբառոքն

վաղ

վազ տալով յասպարիզին, զի մինչ եկեսցէ օրն վազելոյ առ յաղթանակն, մի՛ սայթաքիցին 'ի ճանապարհին: Յո՛րքան ժամանակս ուսուցանին բազէք 'ի դառնալ 'ի դաստակս, զի մինչ գայցէ ժամ սլանալոյ յորս, մի՛ կորիցեն 'ի յօդն: Արդ ուրեմն յա̃մում աւուր, գոնեայ յերեկոյին՝ նախ քան զգնալ քո յանկողինն, 'ի ծունկս անկեալ փորձեսցես դու զքեզ փոքր ինչ, խօսակցելով ընդ նմա, որ 'ի վախճանի դատելոց է զքեզ. և քննեսցես համառօտաբար զխղճմըտանս քո, խնդրելով զթողութիւն 'ի Տնէ՝ այսու կերպիւ, զոր ես քեզ աստ յառաջադրեմ. և կամ այլ իմն կերպիւ, զոր գիտես դու: Ոպ̃ զի՝ մահն ոչ հասցէ քեզ յանկարծօրէն, և հանդոյն գողոյ. և 'ի միում բոպէի գողանայցէ զա̃մ ժամանակաւոր, և յաւիտենական բարիս, քանզի յայնժամ կարի դժուարաւ կարես պաշտպանել դու զքեզ:

## Աղօթք:

Տէր իմ Յ̃ս Ք̃ս Ա̃ծ հոգւոյ իմոյ. արարիչ իմ, և փրկիչ իմ: Ահա եղերեցաւ օրս այս, և ոչ գիտեմ թէ զորքան աւուրս կենաց ունիմ տակաւին: Յոյժ բարւոք գիտեմ, զի մշտ

մեր

մերձենամ 'ի դուռն մահու ։ բայց սա
կայն փոխանակ ուղղելոյ զիս վս ան-
ցելոց մեղաց , յարեմ առ այնս միշտ
զնորագոյն ապերախտութիս , և զնո-
րագոյն պարտս ։ Եւ՛ զինչ այլ ունիմ
առնել այժմ, եթէ ոչ զայս միայն ։ Ցաւ
մեծ է ինձ վշտացուցանելն իմ զանհուն
մեծութին փառացքոց՝ մեղօք այսմիկ ա-
ւուր, և մեղօք ամ անցեալ կենաց իմոց ։
Անարգեմ զայնս ընաւ 'ի վեր քան զամ
չարիս. և այս ոչ վս այլ ինչ պատճա-
ռի, եթէ ոչ միայն՝ զի դու ես մեծա-
պէս բարի, մեծապէս բարերար, և մե
ծապէս արժանի ամ սիրոյ ։ Եւ՛ երա-
նութի էր ինձ, եթէ ոչ իցէի երբէք
արարեալ զայսոսիկ , և վշտացուցեալ
զքեզ ։ Եւ՛ եթէ ես այժմ գործելոց ի-
ցէի զայնս , հաւաստի եմ քոյով օգնա
կանութեամբ , թէ վասն որպիսի և
իցէ աշխարհային իրաց գործէի. բայց
կամիմ նախադաս առնել զպատիւն , և
զհաճոյս քո առ ամ գործս իմ ։ Ուրեմն
ներեա՛ ինձ աղաչեմ զքեզ՝ թէև մինչև
ցայժմ արարի. և ողորմեա՛ բազմամեղ
անձին իմոյ , որյաղագս արդեանց պատ
ուականագոյն արեանքոյ խնդրէ 'ի քէն ։
Յոյս մեծ ունիմ , թէ հաճեսցիս դու
ո՛վ բարեգոյն Յս՝ դարձուցանել զիս 'ի
շնորհս քո ։ Եւ՛ ես առաջադրեմ առիս
հաստատապէս 'ի ձեռն շնորհաց քոց ,

միա

փախչել 'ի չար որոգայթից մեղաց, խոստովանել 'ի ժամանակի իւրում, և կամել յաւէտ մեռանել ք̃ թէ մեղանչել։

## Յաղագս հարկաւորութեան առաջարկութեան, զոր պարտի առնել ապաշխարողն ։

## ԳԼՈՒԽ. Ը։

Սովորութիւն է լոմայափոխից ոչ առնուլ զդրամս փակ աչօք, այլ հայլին յայնս լաւապէս, զի մի՛ լինիցին սուտք. և յետոյ կշռեն, զի մի՛ իցեն պակասք ։ Այսպէս առնէ և ա̃ծային արդարութիւն. զի ոչ ընդունի զցաւս մեր, (որ է այն դրամն, որով հատուցանել կարեմք նմա ըստ աղքատութե̃ մերոյ) ոչ ընդունի ասեմ զայն առանց քննելոյ, և հայի առ նա զգուշաբար, զի մի՛ իցէ սուտ, և կշռէ և՛ս՝ զի մի՛ իցէ պակաս ։ Ե՞ւ զերկու թէութիւնս պարտի ունիլ ապաշխարութիւն մեր ։ Առաջինն է այս, զի իցէ գերբնական, ըստ որակութե̃ շարժառթից, յորոց բղխէ. և ըստ օժանդակութե̃ շնորհաց, որ համընթանայ. ապա թէ ոչ՝ ո՛ ոչ դիտէ, թէ լինէր այն մարդկային ապաշխարութիւն,

և

և սակաւ գնոյ արժան ։ Յաղագս ո֊
րոյ, եթէ զղջանայցէ ոք զմիոյ գոր֊
ծելի մեղաց վն ամօթոյ՝ զի յայտնի ե֊
ղև, վասն անարգութե հայրենեաց,
վն երկիւղի դատաւորին, և կամ վասն
զրկեցման 'ի շնորհաց իշխանին, յայն֊
ժամ տայր զկրկնապատիկ սուտ դրամ,
որով արդարև ոչ բաւականանայ Տն,
որպէս ոչ բաւականացաւ ապաշխարու
թեն անտիոքոս արքային, զի էր ըստ
ասացեալ կերպի. բայց զայսմանէ խօ
սեցաք ըստ բաւականին 'ի վեր անդր։
Եւ վերամնայ մեզ այժմ խօսելի զեր֊
կրորդ թէութէ, որ պահանջի 'ի մի֊
ում բարի ապաշխարութե, և է այս.
զի ոչ միայն իցէ պարզ 'ի նիւթն, այլ
նաև մի՛ լիցի պակաս 'ի կշիռն ։ Կամիմ
ասել. թէ ոչ միայն իցէ գերբնական,
այլ նաև իցէ գործունեայ, որ կարո֊
ղասցի բաժանել զախտն 'ի մեղաց. և
ոչ միայն անարգիցէ զայն՝ զոր արարն
յառաջ, այլ և հաստատեսցէ քաջա֊
պէս ոչ դառնալ երբեք 'ի գործել զնոյնն
յապագայն։ Եւ առաջադրութիս այս
ըստ առաւել կարծեաց՝ պարտ է լինիլ
հաստատ. քանզի նախապետական վախ
ճանն ապաշխարութե՝ է ուղղել զվարս
մեղաւորին այսու բացորոշութբ կա֊
մաց ։ Նաև բաց 'ի յայսմանէ՝ առաջա֊
դրութիս այս պարտ է դոլ հասարակ

որ

որքան առ զղջումն բեկման, և որքան առ զղջումն ջախջախման. բայց սակայն 'ի սմին կայանայ մեծագոյն դժուարութին, և անձկագոյն ճանապարհ, զոր գտանէ հոգին, որ ցանկայ դիմել առ ած։ Եւ բազումք ստորկանան յայսմիկ շաւղի, և յետս դառնան, յորժամ կան արդէն անկանելոց, ոպ̃ անառակ որդի ոմն 'ի գիրկս հօր։ Բազումք ևս 'ի պակասութէ սոյն առաջադրութե, անընդունակ առնեն զխոստովանութիւն, և բազմիցս ևս սրբապիղծք լինին, և մնան առաւել աղտեղի քան զառաջինն։ Ծնունդ չար՝ արդար համարի զանձն իւր. և զելս անձին իւր ոչ լուանայ։ առակ. 30. 12։ Զայս ոչ ասեն միայն ոմանք, այլ գրեթէ ասեն ամ ծնունդք արանց, կանանց, ազնուաց, և դուեհկաց։ Ես մեղայ. խոստովանեցայ զչարիսն իմ, զոր արարի. և թողեալ ամք էն, յորս վարիմ այսու հեշտաղաւարութէ։

Այո. ճշմարիտ է, զի թէպէտ խոստովանին միշտ, և վարկեն զինքեանս մաքուր գոլ. բայց ոչ են այնպիսիք, քանզի մինչ 'ի խոստովանիլն ոչ ունին զուղիղ առաջադրութե, վա̃յ համարեցեալք լինին իբր թէ չիցեն խոստովանեալք։ և վատթարագոյնք ևս են, զի յանցեալ առաջին մեղացն յարեն զայս նորագոյն մեղս սրբապղծութե։ Այսպէս եթէ

կա

կարողանայաք, կարէաք տեսանել՚ի գը
րեանս ա̃ծային արդարութեն, որք բա
նին 'ի վերջում աւուրն, զբաղում խոս
տովանութիւս վատապէս արարեալ, և
զբաղում արձակումս ունայնապէս տը
ւեալ: Փոքր ինչ իր է անկանիլ առ
տոս խոստովանաՀօրն, և բաղխելով
զկուրծս ասել. Մեղայ: վ̃ զի արար
զայն սաւուղ, և զայն ստէպ ասէր
յուդա: Յայամիկ կայանայ բոլոր ներ
գործութինն, եթէ բացորոշեցեր Հաս
տատապէս փոխել զկենցաղավարութիս
քո: Ասեն ոմանք. ես ուղղեցից զիս,
եթէ կարացից. կամէի ուղղել զիս:
Բայց ոչ է պիտոյ ասել՝ կամէի. այլ
պիտոյ է ասել՝ կամիմ: Վ̃ զի ոչ պար
տի լինիլ այս կիսակամեցողութի, որ է
յատուկ Հեղգացեալ անձին, որ կամի,
և ոչ կամի. այլ պարտի լինիլ Հաստատ, զօ
րեղ, և գործունեայ կամք, նման այն կա
մացն, զոր ունիս դու ոչ առնուլ՚ի ձե
ռին քո զբաժակ մի թունաւորեալ, զի
մի՛ պատաՀիցի այնու բարձումն կենաց
քոց: կամ նման այն կամացն, զոր ու-
նի քաջադոյն զինուոր ումն առ՚ի չթո
ղուլ զտեղի իւր, թէև յայտ յանդիման
մեռանիլ տեսանիցի: Այսպէս պատ-
շաճ է և քեզ. զի բացորոշիցես յամե-
նայն ժամանակի, յա̃մ պարագայի, և
յա̃մ առթի, ոչ վ̃ ստանալոյ զբարի

ինչ, և ոչ վասն փախչելոյ յորպիսի և իցէ չարեաց՝ գործել այլ ևս զմահացու մեղք ինչ, և կորուսանել վերստին զշ շնորհս ա̃ն քոյ: Եւ՞ թէպէտ ոչ է հարկաւոր յորդորիլ առ՚ի ոչ ևս մեղանչել ընաւ երբէք, զի այս է ներգործութին իմն իմացականութե̃, որ կախի յապառնի պատահմանէ. այլ բաւական է միայն չկամիլ մեղանչել, որ է ներգործութին կամաց, որ կախի ՚ի ներկայ առաջադըրութէ: Իսկ այնոքիկ՝ որք ստիպլին ՚ի սովորութէ, և ունին զյարատև անպարկեշտութի, համարին (թէպէտ թիւրապէս) ՚ի հարկ է դառնալ ՚ի մեղս. ուստի այսպիսիքն այսու սուտ համոզմամբ, ո՞րպէս առնիցեն զուղիղ առաջադրութի, ըստ որում վայելէ: Ո՞պ լինի ճշմարիտ այս, թէ նոքա կամին զայն, զոր կարծեն ամենևին անկարելի: այլ սակայն այսպիսիք են առաջադրութիւնքն, զորս առնեն բազում ոմանք: Բայց գիտել պարտիս դու. զի թէպէտ այս է անկարելի առ բնութին, բայց դիւրագոյն է առ շնորհս ա̃ն քոյ. վ̃յ ՚ի վ̃ր յուսոյ ն̃ր պարտիս հիմնել դու զբարի դիտաւորութին քո, և ոչ ՚ի վ̃ր զօրութե քոյ, որ զոչինչ կարէ: Ուստի եթէ թուի քեզ ոչ կարել դիմել առ ա̃ծ խոնարհութ̃բ, զի քաջալերեսցէ զքեզ և օգնեսցէ քեզ, և այնու կերպի՞ ուղ

զեսցէ զսուտ վարկանումն քո, տալով քեզ 'ի միում բոպէի զնոյն կարողութիւն դառնալոյ առ Ինքն: Հաւատալ իսկ պարտիս. թէ նա՝ որ առնէ կարել զայն քան մեծամեծ իրս, կարէ առնել և զայս: Փիլիպ. 4. 13: Յամենայնի կարօղ եմ այնու՝ որ զօրացոյցն զիս:

Նա՛ պարտիս մտածել դու աստ լաւապէս. զի թէպէտ վերստին դառնալն 'ի խոստովանութիւն նոյնով մահացու մեղօք, ոչ է յայտնի նշան՝ թէ առաջադրութիւն ոչ իցէ ճշմարիտ: բայց է նշան մեծ, մանաւանդ մինչ նմ անդամ ոչ տեսանի նշան ինչ ուղղութեան, և մինչ ոչ առնանի դեղ, կամ միջոց ինչ՝ զի օգնիցէ առ այն: Այս է նշան իմն գործունեայ կամաց, գործածել զհարկաւոր միջոցս առ հետևումն. քանզի որ կամի զիր ինչ 'ի սրտէ, վաղվաղակի խորհի գտանել զկերպն առ 'ի հասանել այնմ: Վա՜ զի առ ըմբռնումն վայրենի կենդանեաց, նախ խորհելի է զշանց. և առ ըմբռնումն թռչնոց խորհելի է զվարմից: Բայց եթէ խոստովան լինիցիս իմն՝ անդրէն դարձեալ 'ի մեղս, բայց սակաւ քան զառաջին սովորութիւն. և հաստատեսցես զիս՝ թէ առ 'ի ազատել զքեզ 'ի թշուառութէ քումմէ, կամ առ 'ի բեկանել զայն խասադոյն շղթայն ծառայութեան՝ որ տադ-

նա

նայէ զքեզ. պահեալ ես զծոմապա-
հութիս, և յաճախեալ ես յեկեղեցի
ածածնի կուսին՝ կոչելով զօգնականու-
թին նորին, ընթերցեալ ես զհոգևոր
գրեանս, արարեալ ես զողորմութիս աղ-
քատաց, և զայլ բարեգործութիս. յայն
ժամ հաւատամ ես, թէ վերստին անկա-
նումն քո լեալ իցէ 'ի տկարութէ. և այսու
խմացուածով ոչ տարակուսիմ զբարեյա-
ռաջադրութէ քումմէ ։ Բայց եթէ դառ-
նաս առ իս միշտ նոյն գործեցեալ մե-
ղօք, նոյն դիտաւորութբ, նոյն զուար-
ճութբ, և նոյն զանցառութբ. ո՞րպէս
հաւատացից քեզ խոհեմաբար, թէ դար-
ձեալ իցես դու յամ սրտէ քումմէ բա-
կամաց ին. և մանաւանդ փոխանակ
պատառելոյ զսիրտ քո (որպ մարգարէն
ասէ) ոչ պատառեալ ես զհանդերձ քո՝
կեղծեալ, և երևութական ցաւով քով ։
Նիննն այն, որ յերեկեան օրն լայր զմե-
ղեալ այրն իւր, և այսօր առնու զայլ
նոր, տայ նշան՝ թէ ոչ ելաց զնա ճշ-
մարտապէս. քանզի ճշմարիտ լացն, և
ճշմարիտ սուգն ոչ վերջանայ այնքան
վաղվաղակի ։ Թշնամին այն, որ հաշտ
արարեալ զխաղաղութի, յառնէ ընդ-
դէմ վշտացուցանողին 'ի սպանանել զնա,
ցուցանէ թէ ոչ ունէր ճշմարտապէս շի-
ջուցեալ զհուրն ներքին սրտմտութեան
իւրոյ, այլ ունէր զնա թաղուցեալ 'ի

սրտի։ Վերաւորեալ ոք, որ շուտով արձակէ զկապ վիրացն, և վիրատին կոչէ զվիրահատն, ցուցանէ իրաւաբար, թէ ոչ է յաղթեալ դեղն բռնութե՟ն վնասակար խոնաւութեանն, այլ միայն թմրեցուցեալ։ Այնպէս այնոքիկ ողորմելիք, որք վիրատին անկանին, և ոչ ունին զնշան ինչ ողջութե՟ն, յոյժ երկբայական և կարծիքական պարտին համարիլ զխոստովանութիւն իւրեանց, որոյ վ՟ն երկնչիլ, և դողալ պարտին առաւել։ Ուստի եթէ խոստովանահայրն ոչ տեսանէ ՚ի նմ՟ զշարժումն ինչ քան զչափն աւելի, ոչ պարտի այնքան դիւրաբար հաւատալ առաջադրութե՟ն նոցին. և պարտի փորձել յապաղելով զարձակումն, եթէ պիտոյ իցէ։ քանզի այս է դեղ իմն, որ ՚ի բազում դիպուածս կարէ լինիլ եզական սպեղանի այսորիկ չարի։ Ոչ գոյ այնքան հմտագոյն բժիշկ որ վճռիցէ, թէ հանապազորդական տենդ իմն՝ որ իցէ իրաւաբար հեռացեալ, ոչ ընկալցի զժամանակ վերստին դառնալոյ երբեմն։

Պարտիս ուրեմն դիտել դու. զի որքան առ այս՝ սովորք են վարդապետք տալ զմեծագոյն թիւ այնց քրիստոնէից, որք կործնէին օր ըստ օրէ։ Բազումք են կոչեցեալք՝ սակաւք են ընտրեալք։ զի ընտրեալքն առ փրկութի՟ն սակաւք են

բազ

բաղդատմամբ այնոցիկ, որք կոչեցեալք են առ հաւատն : Ուստի ո՞չ պատմէ ինննօնչէնցիոս վեցերորդ ծայրագոյն քա-հանայապետն՝ զմիոյ ոմն ճգնաւորէ, որ տեսանէր տեղալ հոգւոցն 'ի դժոխս, ո՞չ թափի 'ի ձմերային եղանակի ձիւնն յերկիր : Բայց վս՞ է՞ր է այս : մի՞թէ մարդիկք ոչ խոստովանին. ո՛չ: որով-հետև սակաւ անգամ պատահի, թէ քրիստոնեայ ոք առանց խոստովանու-թե մեռանիցի : այլ վս այն, զի ոչ բա րեպէս խոստովանին, նաև ոչ ունին զու-ղիղ առաջադրութիւն ուղղելոյ զվարս ի-րեանց, և ոչ անարդեն կատարելապէս զմեղս իւրեանց : Խոստովանին 'ի սովո-րութէ միայն, զի պատիկ. և ծնունդ է. և ոչ բեկանեն զմեղս իւրեանց, այլ փչահա-փէն. ո՞չ ասէ սբն օգոստինոս : Առ-նեն ըստ նմանութե այնոցիկ, որք տա նին 'ի գիշերի զարդելեալ զէնս 'ի դա-տաւորաց. և մինչ պատահին պահա-պանաց, դաղեն զայնս յանկեան միում, և 'ի անցանելն պահապանաց վերստին առնուն. վս զի ոչ դնեն զայնս անդ 'ի թողուլ, այլ 'ի առնուլ վերստին : Պատ մէ քարլթուզիանոս. թէ կրօնաւոր մի ածաւ աքանչելեօք 'ի տեսանել զքաւա-րանն. և մինչ զարմացեալ կայր առ այս, զի սակաւագոյն քահանայք տան ջէին յայնմիկ հրում զանպարկեշտութե

խուրեանց՝ 'ի բաղդատութիւն այնոցիկ զորս գործեն յաշխարհի: պատասխանի ցաւ նմա այսպէս: Մի՛ զարմանար դու ո՛վ որդեակ. վասն զի հազի՞ւ գտանի 'ի նոցանէ ոք, որ ունիցի զկատարեալ զղջումն. և այսպէս՝ վասն պակասութեան ցաւոյ, և առաջադրութեան զըղջանալոյ, ոչ գան 'ի քաւարանն, այլ դընան 'ի դժոխս: Արդ վասն այնորիկ էին սակաւ ժամանայք. զի հազիւ թէ ունիցա 'ի նոցանէ ոք զճշմարիտ զզջումն, մինչ էին կենդանի. վասն գրեթէ ամենայն այսպիսիք յաւիտենականապէս դատապարտին: Եւ այս ոչ պարտի միայն իմանիլ զքահանայից, այլ նաև հասարակապէս վասն ամենայն անձանց, որոց ունակութիւն եղեալ է մեղքն անպարկեշտութեան, և վաւաշոտութեան: Վասն զի թէպէտ մեղքն ծանր և մեծ է առ ամենեսեան. սակայն ծանրագոյն, և մեծագոյն է 'ի քահանայս, վասն մեծագոյն պատուութեան, զոր տայ նմա քահանայական արժանապատուութիւնն, որ է յարգելագոյն քան զհրեշտակս:

Աղաչեմ զքեզ ուրեմն, վասն սիրոյ արքայութեան երկնից. մի՛ համարիլ զայսոսիկ ազդմունս իմ որպէս աւելորդական, և խղճահարական բան ինչ. այլ ընկալ որպէս զհարկաւոր և պիտանի խրատ կենսաւէտ վասն յաւիտենական փրկութեան քո: Եւ մինչ պատրաստես զքեզ գնալ

'ի խոս

'ի խոստովանութի՛ն , մի՛ շտապիր · այլ յանձնեա՛ զքեզ բոլորով սրտի՛ այնմ , որ կարէ տալ քեզ զօգնականութի՛ն առ՚ի բարեպէս նախապատրաստել զքեզ : Եւ՛ 'ի վեր քան զամ, զդո՛յշ, և հոգւունակ լեր զհաստատութե՛ն առաջադրութեա այսորիկ , յորմէ կարէ ասել ճշմարտութե՛ն՝ թէ կախի բոլոր բանն փրկութե՛ն : Վ՛ն զի յամ ուրեք , ուր ընձեռեցեալ լինի զփրկութե՛ն հոգւոյ , ոչ է շատ ամ ջանացողութի՛ն , ամ զգուշութիւն ,
և ամ արթնութի՛ն :

Թէ ո՛րպէս առաջադրութեան այս պարտի
տարածիլ՝ ոչ միայն մինչև ցփախչելն
'ի մեղաց, այլ նաև մինչև ցփախ
չելն յառիթից նոցին :

## ԳԼՈՒԽ Խ. Թ.



Ոչ միայն այս է բոլոր չարն վատապէս արարեալ խոստովանութե՛ : Այլ դոյ անդ նաև այլ իմն քարաժեռ ծածկեալ 'ի ներքոյ ջրոյ , որով լինի որոգայթաւոր նաւաբեկութի՛ բազում հոգւոց , որք վ՛ն գոլոյ անզգոյշք , հարկանին ընդ այն , և խորտակեալք

 կորն

կորնչին ։ Արդ ես ոչ կամիմ ո՞վ սիրելիդ իմ 'ի Ք՜ս, թէ սոյնս պատահիցի և քեզ ։ ուստի ծանի՛ր բարւոքապէս, զի մինչև ցայժմ ասացեալ առաջադրութիւն, պարտ է տարածիլ՝ ոչ միայն առ փախչիլն 'ի մեղաց, այլև տարածիլ մինչ առ փախչիլն 'ի յորոգայթից, և 'ի յառթից մեղաց, մինչ առիթն է մերձաւոր ։ Եւ՞ մի գուցէ աղագաւ լինելոյ քեզ այսոքիկ բառքս սակաւ ծանօթք, երկեցուցանիցեն զքեզ ․ վա՜յ պարտիս գիտել, թէ երկու ցեղ առիթք և որոգայթք գտանին ․ մին հեռաւոր, և միւսն մերձաւոր ։ Մերձաւոր առիթն է, տեղին, ժամանակն, և ընկերակցութիւն, 'ի յորս մինչ գտանի մարդ, բազմիցս գործէ զմեղս ։ և կոչի մերձաւոր ․ զի այնքան մերձ է մեղաց, որ միայն քայլի՞ ի՞նչ հեռի գտանի ։ Եւ՞ հեռաւոր առիթն է այն, յորում ցանցառակի անկանի մարդ, թէև բազմիցս գտանիցի անդանօր ։ Զոր օրինակ ․ կենցաղավարի ոք առանձնաբար ընդ ումեմն 'ի բոլոր տարին, և միանգամ պատահմամբ յաղթահարի յախտից, և մեղանչէ ընդ նմա ։ վա՜յ այս ասի հեռաւոր առիթ վերահայեցմամբ առ նա ․ քանզի զայն միջօցն բազում անգամ ունեցաւ, բայց ոչ երբէք անկաւ 'ի յանցանս ։ Իսկ եթէ բազում անգամ 'ի գտանիլն առանձին, բա

նի՞ ,

նի՛, կամ գործով պատահի վշտացու_
ցանել զա̃ծ, յայսմիկ դիպուածոջ առի
լինել այնպիսին 'ի մերձաւոր առիթի և
որոգայթի մեղաց։

Որդ թէպէտ փախչիլն 'ի հեռաւոր առ_
թից, է օգտաւէտ խրատ․ ոմ̃ խոստա
նայ Տ̃ն․ առակ․ 1․ 15։ Որ զգուշանայ
յորոգայթից, անգոհ եղիցի։ այլ ոչ է հրա
ման, զի բոլորովին ոչ կարէ փախչել
յայսպիսի որոգայթից։ Բայց փախչիլն
'ի մերձաւոր յառիթից է հրաման, մինչ
է կամաւոր, և մինչ է 'ի ձեռին իմում
հեռացուցանելն զնա յինէն, կամ զիս
'ի նմանէ։ Եւ՛ այսպէս, որ ոչ ունի զա
ռաջադրութիւն զայս, ոչ է տրամադրե
ցեալ յընդունիլ զշնորհս․ քանզի ոչ պա
հէ զա̃մ օրէնս Տ̃ն․ մանաւանդ մեղան_
չէ իրականաբար, մինչ սիրէ զմերձաւոր
որոգայթն մեղանչելոյ։ Զայս անստելն
վարդապետութիւն եդեալ առաջի աչաց
այնքան վարդապետաց․ ո՞րպէս կարեն
արդելուլ զարտասուս իւրեանց, մինչ
խորհին զկուրութիւն այնքան անձանց,
որք ընկղմեալք են 'ի հանապազորդական
առիթս մեղաց, և առանց հեռացուցա
նելոյ զսիրտս իւրեանց յայնցանէ՝ մեր_
ձենան 'ի խոստովանութիւն, և 'ի նոյնս
կենսաւէտ դեղոյ կազմեն զթոյն մա_
հացուցիչ։ Հաւատամս դու արդեօք ո
թէ նոքա՝ որ տանեն 'ի բազում ամաց

հետէ զայնպիսի կենցաղավարութիւնս , ունիցիս 'ի խոստովանութեան զճշմարիտ առաջադրութիւն ոչ վերադառնալ եւս առ այն տունն , ոչ խօսիլ ընդ այնպիսի անձինս՝ առ 'ի փախչիլ բոլորովին 'ի յառթից մեղաց ։ Մտածեմ թէ , դուցէ ասեն . թէպէտ գնամք առ այնպիսի կենցաղավարութիւս , եւ պատահեմք զբարեկամութիւս առ նոսա , բայց ոչ մեղանչեմք այլ եւս . զի միայն վարիմք նոքօք աղագաւ զբօսնլոյ , եւ ոչ վն այլոյ իրի . եւ ոչ մտածեն երբէք զհարկաւորութիւն փախչելոյ յառթից մեղաց ։ Մանաւանդ կեղծեն , եւ բերեն զհազարաւոր առքաարանս ասելով թէ . 'ի բաց թողուլն զայնպիսի անձն , լինի առիթ ծանրագունի գայթակղութեան , որով որի պատճառ բամբասելոյ ժողովրդեան . որ թէ բեւս այժմ բամբասէ , եւ յայնժամ աւարտի բամբասելն ։ Եւ՞ այսոքիկ են գայթակղութիւնքն , յորոց այնքան երկնչին . եւ յօժարին մասն լինել 'ի յըղձէ առ սիրեցեալ անձն , որ կուրացուցանէ . եւ մասն լինել 'ի կողմանէ դիւին , որ օգնէ . եւ ոչ մտածեն զզարհուրելի վճիռ Տն , որ ասէ . մատթ . 18 . 9 ։ Եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ . խլեա՛ զնա եւ ընկեա՛ 'ի քէն . լաւ իցէ քեզ միականի մտանել 'ի կեանս , քան երկուս աչս ունել՝ եւ անկանել 'ի գեհեն հրոյ ։ Որ է ասել . զի թէպէտ

անձն

անձն այն քեզ այնպէս լիցի սիրելի, ո՛րչ սիրելի է քեզ մի ակն քո. տակայն մինչ տեսանես դու, թէ նոյնն լինի քեզ առիթ մեղաց, թո՛ղ զնա գնալ, հեռացի՛ր 'ի նմանէ, և մերժեա՛ եւս 'ի բաց մեծագոյն ցաւօք քո : Խլեա՛ զնա : Զի լաւագոյն է թողուլ զառիթն, և փրկիլ, քան թէ ունիլ զառիթն, և այսպէս միշտ չարաչար խոստովանելով՝ կորուսանել յաւուր միում, ոչ միայն զսիրեցեալ առիթն, այլ նաև զհոգին, զարքայութիւն. զընկերակցութիւն հրեշտակաց, և երանելեաց, և զտեսութիւն այ :

Բայց զի՞նչ ասասցուք զբաղմանց քրիստոնէից, որք ոչ միայն ոչ առաջադրեն հեռի լինիլ 'ի չար կենցաղավարութեց, այլ նաև որքան կարեն, կամին առաւել մերձ ունիլ զայնս : Երբ այսպէս պահեն զնա՛ 'ի տան ենթ անուան աղախնոյ, ծառայի, և պաշտօնէի, որք են պատիժք հոգւոյ իւրեանց. և թերևս լինիցին զկնի պատիժ ինքեանց 'ի դժոխս : Երբ յետոյ ասեն այսպիսիքս պատճառելով. թէ ոչ կարեն արտաքսել զայն 'ի տանէ, զի է այնպիսի հաւատարիմ վասն տանն, հոգածու, և շահաբեր, որոյ նմանն ոչ գտանի : Եւ 'ի ներքոյ այսպիսի կեղծեալ պատճառանաց, կարծեն կարել անկասկած պահել զօձն 'ի ծոցս իւրեանց : Ո՞չ թէ արքայութիւն ոչինչ

արժիցէ, և պարգևի նմ թարց նեղու-
թե իմիք, զոր սէրն դնեցին այնքան
թանկագին: Արդ եթէ գողանայցէ ոք
զինչ ինչ 'ի տանէ իւրեանց, ո՞չ ապա-
քէն խկոյն արտաքս առաքէին զնա այ-
նոքիկ թշուառք. ո՞չ ապաքէն դատանէին
զայլ ոմն, ջանալով շահու իւրեանց: և
զիարդ ուրեմն թողուն զնա 'ի տան, որ
ոչ է գող իրաց տանն, այլ հոգւոյն:
Մեծագոյն պատիժն, զոր տայ Տր այն-
պիսեացն՝ այս է, զի գտցեն զայնպիսի
խոստովանահայրս, որք առանց քննու-
թե իմիք արձակիցեն զնս. կամ ամբա-
ռականք լիցեն գիտութբ, և կմ թէ նոքա
ևս ապականեալք լիցեն այնու կպրով:
Ե՞ւ զիարդ կարիցեն յայսմիկ դիպուա-
ծոյ ունիլ զցաւակցութի առ այլս, որք
ցանկան վասն անձանց իւրեանց զայն
ձիասն. ածելով զնս հանգոյն կոյր ա-
ռաջնորդաց առ այն դահավիժումն, ուր
ինքեանք իսկ կործանիլ պարտին: Ու-
րեմն զի՞նչ շահ է ասելն առ խոստովա-
նահայրն: Արձակեա՛ զնա 'ի կապանաց մե-
ղաց իւրոց. Քանզի եթէ դու ոչ լիցես
տրամադրեալ զքեզ և պատրաստեալ,
Տէրն ոչ արձակէ զքեզ, որ խոստացեալ
է դատել զարդարութիւնս. պ̃ր ճանաչել
իբր անիրաւ դատաստան զայսպիսի դատ-
մունս փաստապէս արարեալ. և զայս-
պիսի արձակմունս փաստապէս տուեալ.

որով

որով երբեմն նաև զհրապարակական մեղաւորս ընդունէին 'ի մէջ խորհրդն. Ընդդէմ որոց գրեալ է. մատթ. 7. 6: Մի՛ տայք զսրբութիւն շանց. և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց: Եւ թերևս՝ այժմ բազում խոստովանահարք այրին 'ի դժոխս, ոչ միայն վասն մեղաց իւրեանց, այլ նաև վասն մեղաց այլոց, վասն մասնակցեալ գոլոյ ընդ այնպիսեաց 'ի ձեռն անպատկան արձակման: Որպէս յայտ է վկայութենէ յօհաննիսի ավիլիոյ, ուր պատմի. թէ այսպիսի խոստովանահօր միոյ՝ երևեցաւ յետ մահուան խոստովանորդին իւր, որոյ վառապէս էր տուեալ զարձակումն, և ետ 'ի յերեսն նորա զառնուլ թողութիւն և տգիտութիւն ասելով. դու եղեր պատճառ տանջանաց իմոց, զորս կրեմ 'ի դժոխս: Վոկ դու ևս ե՛կ սակաւիկ մի ընդ իս 'ի դժոխս. և զայս ասացեալ, իսկոյն գըկեաց զնա. որև առժամայն բացաւ երկիրն, և մթացաւ օդն, և ոչ երևեցան ևս երբէք երկոքեանն:

Արդ ուրեմն քննեա՛ դու լաւապէս. թէ ո՛ւստի ծնանի մեղքն քո: Զի եթէ ծընանի յայսմանէ. զի այն կինն գայ 'ի տուն քո 'ի ներքոյ պատրուակի առնելոյ քեզ զգործառութիւնս: Եթէ 'ի գընալոյ քո 'ի տուն նորա 'ի ներքոյ անուան քաղաքակցութեան, ազգականութեան, կնքահայրութեան. և կամ աղագաւ ա-

մուս

մուծանանալոյ ընդ նմա ։ և կամ 'ի պա֊
հելոյ զնա 'ի բնակարանի ուրուք ոչ
զվարձկան ումն . և կամ 'ի յառաջացուա֊
ծոյ քո ոչ զգործարար ։ Որպիսի կեր֊
պիւ և իցէ' որ պատկանի քեզ, մի' թո֊
ղուր զքեզ թիւրել 'ի յղձէ . այլ դի'ր ի֊
կոյն զտապար առ արմին . հա'տ զնա,
և անկասկած լինիս ։ բաժանեցէ'ք, և
թաղաւորեցէ'ք ։ 'Ի բա'ց հան զաղախինդ
և զորդի դորա ։ Ծննդ. 21. 10։ Եւ՝ թե֊
րեւս այս բան խիստ թուի քեզ . յիշեա'
զայն, զոր ասաց ա'ծ աբրահամու յայս
պիսի ներհակ պատահման միում ։ Մի'
ինչ խիստ թուեսցի առաջի քո վա՞ մանկանն,
և վա՞ աղախնոյն . զա՞մ որ ինչ ասիցէ ցքեզ
սարրա՝ լո՛ւր ձայնի նր ։ Մինչ խոստովա֊
նահայրն հրամայէ քեզ զայս իրացհա֊
նումն և մերժումն, հետևեա' նմա . զի
հրամանն ոչ գայ 'ի նմանէ, այլ գա֊
յա'յ ։ Քանզի նա միայն բանայ, և յայտ֊
նէ քեզ զպարտաւորութիւն զայն, զոր
արդէն այլովք պատուիրեալ է քեզ, և
ոչ թէ ինքն դնէ զայն . վա՜յ մի' թուիցի
քեզ չար ։ Ս՞ն ռայմունտոս, պայծա֊
ռութիւն կարգի սր՞յն տօմինիկեան . զյա֊
կոբ թագաւորին արագոնացւոց' զխոս֊
տովանորդին իւր, որ յետ բազմաց իր֊
բաւուց ոչ կամէր արտաքսել 'ի պալա֊
տէ իւրմէ զտիկին մի, զոր պահէր ոչ֊
զհարճ, ոչ միայն եթող զնա 'ի յարձա֊
կե.

կելոյ, այլ և առաջադրեաց 'ի բաց թո
ղուլ զնա 'ի խոստովանեցուցանելոյ ։
Զոր իմացեալ թագաւորն, արգել 'ի
ներքոյ մեծագոյն պատժոյ զամ Նաւա
պետս, զի մի՛ տանիցէին զնա յայլ ուր ։
Բայց սր՞ն ապաւինելով առ Տր՞ իւր, տա
րածեաց զփիլոնն իւր 'ի վր՞ ջրոյն, և
նստեալ 'ի վր՞ նր՞, եանց 'ի վեց ժամս
ընդ այնքան լայնատարած ծա՞վ մայիօր
գայի, առ պարչելօնիայ ։ Ե՞ւ այսպիսի
աքանչելեօք կամեցաւ հաստատել ած՝
զարդարագոյն խոստութիւն բարի խոս-
տովանահօրն ։ Ապա եթէ ոչ է ամե-
նեւին կարելի քեզ հեռանալ 'ի պատճա
ռէն, կամ հեռացուցանել զնա 'ի քէն,
գոնեայ պարտաւորիս ոչ մնալ առան-
ձին ընդ նմա, ոչ ձգել զաչսդ առ նա,
և ոչ յամեցուցանել զխորհուրդդ 'ի նմա ։
Այլ ջանալ ճողոպրել զքեզ 'ի նմանէ,
վերակրկնել առաջի այ՞ զաղօթսդ՝ զի օգ
նիցէ քեզ, և կիրառնուլ զայլ այնպիսի
միջնորդս, որք օգնեն 'ի նախապահել
զքեզ ։ Ապա թէ ոչ, խաբես դու ինք
նին զքեզ, և զխաբէին քո լալոց ես ա-
ռանց օգտակարութե՛, մինչ տեսանի-
ցես թէ սակաւ օգնէր քեզ ունիլն զա
զատ թէևս 'ի դիմել առ խոստովանա-
հայրն, մինչ կապեցեալ էին 'ի դիւ՞էն
ոտք քոյք որոգայթիւ՞ առթից ։
Մերամեայ աստ առակցել զայս ․ թէ
որ

որքան գործադրական պարտ է լինիլ առաջադրութիւն 'ի կարգի առ 'ի Թողուլ զորոգայթաւոր առիթն, այնքան եւ պարտ է գոլ 'ի կարգի առ 'ի ներել զվշտակրութիւնս, որք տուան քեզ. կամ հատուցանել զվնասն, զոր արարեր դու ընկերին քոյ, թէ 'ի համբաւն, եւ թէ 'ի յստացուածն: Հետեւելով կատարել զայն (մինչ ոչ գիտես զայլ ինչ) զոր դնէ քեզ բարի խոստովանահայրն քո. բայց այսուքիկ գոլով կարի յայտնագոյն իրք, Թողից զի խօսիցին ինքեանք զինքեանց: Եւ միայն ցանկամ եզրակացուցանել ասա. զի նկատիցես, թէ ո՛րպէս վերջին խրատքս այսուքիկ յատկապէս պատկանին առ այնոսիկ, որք են ծանրացեալք մահացու մեղօք: Բայց երկիւղածագոյնքն պարտին յատկացուցանել ինքեանց բարուոքապէս. Թէ որպէս պարաւանդին ինքեանք խոստովանիլ զամ ներելի մեղս. այսպէս եւ ոչ պարաւանդին ունիլ զզղջումն, եւ զներքին առաջադրութիւն վն ամից առ 'ի խոստովանիլ: Այլ բաւական է, զի իցէ այն զոմանց. կամ գոնեայ, զի ունիցին զդիտաւորութիւն առ 'ի ոչ առնել այնուհետեւ զայնքան: Եւ մինչ այս եւ ոչ Թուիցի նց բարուոքագոյն բացորոշումն, եւ առաջադրութիւն. բաւական է՝ զի դարձցին 'ի խոստովանիլ գոնեայ զմեղս ան-

ցեալ

ցեալ կենաց , 'ի դարշեցմանէ որոց ա_
ռաւել տրամադրեալք գտանին զօրեղա
գոյն զղջմամբ , և առաջադրութե՛ : Եւ
զի թէպէտ այս է բաւական , բայց ոչ ոք
պարտի բաւականանալ այսու . որովհե
տև ներելի յանցանքն ևս ոչ ջնջին , ե_
թէ դարշեցեալք ոչ լինիցին , և անար
գիցին: Քանզի եթէ ոչ ջնջին այսու կեր
պիւ , մնան 'ի հոգւոջ , և տկարացուցա
նեն զնա . և իբր մանրագոյն ցեցք ծը
նեալք 'ի փայտէ , սակաւ առ սակաւ
տրամադրեն զնա 'ի կործանումն անկա_
նելի . սիրաք . 19 . 1: Որ արհամարհէ զսա
կաւն , փոքր փոքր կործանեսցի :

Յառաջադրէ Ջերմեռանդական աղօթս ինն ,
որ պարտի ասել նախ քան զխոստո
վանութիւնն :

## ԳԼՈՒԽ . Ժ:

Աստանօր յառաջ բերեմք այժմ
զկիրառումն մինչև ցայժմ տը
ւեալ պատուիրանաց մե
րոց , թէ յաղագս ցաւոյ
և թէ յաղագս առաջա_
դրութեան , տարածելով զայն 'ի հե_
տեւեալ աղօթս , որպ՟ կաթն 'ի բերան
նո_

նորապէս զարդացելոյն, որք տակաւին
ոչ են լիրթք հաստատուն կերակրոյ :

## Աղօթք :

Ո՜վ ձեռնակարող Աստուած իմ յաւիտենական, որ ես Տ̃ր անբաւ բարութեան, անհուն գեղեցկութեան, և անչափ մեծութեան. ահա՛ տարածեմ առաջի մեծութեան քո զմեծագոյն ապերախտութիւնն իմ։ Դու ստեղծեր զիս 'ի պատկեր քո. և 'ի ծառայութիւն իմ արարեր զա̃մ ինչ։ Արարեր ծնանիլ զիս 'ի քրիստոնեայ ծնողաց, և ճանաչել զճշմարիտ լոյսն սր̃բոյ հաւատոյ։ Պահեցեր մինչև ցայսօր ժամանակի. ազատեցեր 'ի բազում որոգայթից հոգւոյ և մարմնոյ, 'ի ժամանակաւորէ, և 'ի յաւիտենականէ։ Որդէգրեցեր զիս յորդիութեան քո յաւազանին մկրտութեան. և արժանի արարեր բազում անգամ հաղորդ լինիլ արդեանց սր̃բոյ արեան քոյ՝ 'ի խորհրդոջ խոստովանութեան, և հաղորդութեան, տալով զքեզ այսու կերպիւ ինձ մեղաւորիս։ Բազում անգամ կոչեցեր զիս 'ի յապաշխարութեան, և երկայնմտաբար սպասեցեր ինձ. և կարէիր իսկոյն դատապարտել, բայց ոչ արարեր։ Գնեցեր զփրկութիւն իմ անհուն գնով պատուական արեան քոյ. և վ̃ն սիրոյ թշուառացե

լոյս

լոյս՝ արժան համարեցար եղանիլ մարդ, և աղքատագոյն մարդ : Կրեցեր վ̄ն իմ զբազում նեղութիւնս , բամբասանս , և հալածանս . և մեռար 'ի վ̄ր խաչափայ_ տի միոյ 'ի մէջ երկուց աւազակաց : Կա_ մեցար և ս տրտմիլ 'ի պարտիզին վ̄ն իմ, և արեամբ քրտնիլ : և վ̄ն իմ ետուր զզօրութիւն քոյոց թշնամեաց , որք կա_ րօղք եղեն կապել , հարկանել , ոտնա կոխել, և ապտակել զքեզ , նաև թքանել յա̄ծային երեսդ , և ծածկել զաչսդ : Վ̄ն իմ ձաղկեցար մինչև յերևիլ ոսկերոց քոց . փշօք պսակեցար . յամբոխից անարգե_ ցար . և յետադրեցար քան զչարագործ ան̄ վատահամբաւ : Վասն իմ զգեցար զսպիտակ հանգոյն խելագարի . դատա_ պարտեցար 'ի մահ՝ և 'ի տանիլ զխա_ չափայտն , 'ի վ̄ր որոյ կախեցար մերկ յե_ րից բևեռաց : Հայհոյեցար , նշաւակե_ ցար առանց ցաւակցութե̄ և մխիթա_ րութե̄ , և հեղեր 'ի վիրաց քոց զբոլոր արիւն քո ա̄ծ . և զկնի երից ժամուց կսկծալի ցաւօք մեռար , ցանկալով և ս կրել առաւել վ̄ն հոգւոյ իմոյ :

Բայց սակայն ես թիւրագոյն և ապե_ րախտագոյն մեղաւորս , ոչ միայն ոչ շը նորհակալ եղէ վ̄ն այնքան բարերարու թեց , և այնքան սիրոյ՝ ո̄ղ պարտ էի . այլ նաև արհամարհեցի զբարերարու_ թիւն քո , անարգեցի զբարեկամութիւն

քո ,

քո, և ստնահարեցի զօրէնս քո ։ Նկատեցի երբեք զխոստումն քո, զաշխատանս քո, զարիւնն քո, զչարչարանս քո, և զմահն քո։ Ե՞ւ այս մի՞ է՞ր։ Թե րեւս առ'ի ստանալ զմեծ բարի ինչ. և առ'ի վայելել զերկար կեանս։ Ո՛չ. ո՛չ. վա՜յ է ինձ. ո՛չ։ Այլ ստնահարեցի զքեզ վ՟ն միոյ ոչնչի. և վ՟ն միոյ անիծեալ հեշտութե, զորմէ մտածել ամաչեմ։ Ո՞վ երբէք լեալ իցէ այնպէս ապերախտ առ Թագաւորն իւր, ոպ՟ եղէ ես առ քեզ ո՛վ Թագաւոր իմ. հայր իմ. արարիչ իմ. բարերար իմ. և մեծ բարի իմ։ Եթէ ընկալեալ իցէի ես յառնէ միջէ զփոքրագոյն մասն շնորհաց իմիք, զոր 'ի քէն ընկալայ, ոչ գիտէի զի՞նչ առնելոց էի վ՟ն շնորհակալութե. բայց զքէն ոչ խորհիմ վերաճանաչել, այլ նաև այնպէս վարիմ ընդ քեզ, ոպ՟ թէ իցես թշնամի իմ։ Ո՜հ. անիծեալ լիցին մեղքն, զորս գործեցի. անիծեալ լիցին հեշտութիքն, որովք լքի զքեզ աղբիւրդ յաւիտենական կենաց։ և այսպէս՝ երանութիւն լինէր ինձ մանաւանդ ընտրելն զմեծ վնաս, քան վշտացուցանելն զքեզ։ Այժմ վերաճանաչեմ զառաւելագոյն եղեռանս անպարկեշտ գործոց իմոց՝ որքան իցէ կարելի. զառաւել գարշութիւն չարահամբաւ ապերախտութեա, և սրբապիղծ մատնութեա, զորոց որքան կա-

րէ

րելի իցէ խորհիլ: Եւ՞ խոստովանիմ ինք նին առաջի հանդիսավեհութեան քոյ մեծայնոյ , արժանի գոլ զիս ամենայն պատժոյ :

Բայց արդէն մինչ ոչ գտանի վն իմ այլ ինչ դեղ և սպեղանի, եթէ ոչ զղջալն, և ապաշխարելն միայն : Ուրեմն յան- կամ վճարել հանդիսավեհութեան քոյ մեծայնոյ, որոյ վշտացուցանող գտայ ես ապերախտ մեղաւորս : և այս այնքան սաստիկ ատեցողութն , զոր կարացեալ է լինիլ երբէք 'ի սրտի ստեղծուածոյ ուրուք . և այնպէս պարզ զղջմամբ , զոր փոխառեալ է երբեմն սրբ ոք : Յան- կամ եմ ցաւոց այսոցիկ , և խնդրեմ զայն խոնարհաբար՝ թէև ոչ արդիւնա ւորիմ: Ոչ եմ արժանի համբառնալ առ քեզ զաչս իմ , և կարդալ զքեզ հայր , և արդարև ոչ եմ արժանի գտանել զթո ղութիւն : Բայց զի՞նչ կարեմ առնել ես առաւել, եթէ ոչ արկանել զիս առ ոտս քո , խոստովանիլ զանօրէնութիւնս իմ , և աղաչել զքեզ՝ որ միայն կարօղդ ես ջնջել զնս: Եւ՞ եթէ ես ոչ արդիւնա- ւորիմ զայս , արդիւնաւորի այն արիւնն քո՝ զոր հեղեր վն իմ . արդիւնաւորի ևս այն խոստմունքն քո՝ զոր արարեր ինձ յընկալնուլ զիս 'ի յարքայութիւն . նաև ոչ արհամարհել զիս , և ոչ հայիլ 'ի բազ մութիւն մեղաց , և ապերախտութեանց իմոց ,

իմոյ, այլ առ անհուն մեծութիւն ողոր-
մութե՛ քոյ:

Ս̄յ առաջադրեմ և յօժարիմ վ̄ն սիրոյ
քոյ, դարշիլ յա̄մ մեղաց իմոց՝ առաւել
քան յայլ ա̄մ չարէ. և ցաւիմ խորապէս
մինչև 'ի ներքս հոգւոյ իմոյ, վ̄ն վշտա-
ցուցանելոյ զքեզ զծայրագոյն բարիդ-
իմ. որ ես անսկիզբն, յանհուն մեծու-
թե, և յանհուն կատարութե: Նաև՝
եթէ ոչ իցէր դժոխք, և արքայութի.
տակաւին նոյնով կերպիւ դարշէի 'ի
մեղաց իմոց, և ատէի զն̄ս իսպառ. զի
դու այնքան ատես և արհամարհես զն̄ս:
Արդ ուրեմն 'ի ձեռն շնորհաց քոյ ա-
ռաջադրեմ փոխել զկարս իմ. և նախ
կորուսանել զա̄մ ինչ, քան երբէք վշտա-
ցուցանել զքեզ վերստին: Եւ՛ քանզի
գիտեմ տկարութի՛ և զայս. թէ ոչ կարեմ
ունիլ զօդնականութի քո, եթէ ոչ նախ
հեռացայց և փախեայց 'ի յառթից, և 'ի
պատճառաց մեղաց: ուստի առաջադրեմ
փախչիլ, և ոչ դառնալ երբէք առ այն
որոգայթաւոր տեղիսն՝ առ 'ի կորուսա-
նել զշնորհս քո, յորս այլանդամ յիմա
րաբար դնէի զիս: Վ̄յ ահա՛ 'ի հաստա-
տութե այսորիկ ա̄մից, կամիմ խոստո-
վանիլ, և լուանալ ամենայն արատոք
քով զհոգի իմ: Ուստի դու, որ գիտես
հատուցանել զբարի փոխանակ չարի,
պարգևեա՛ ինձ զշնորհս վ̄ն ամենայն

չար

չարչարանաց քոց, զի արժանապէս խոստովանեցայց: Օգնեա՛ ինձ, և զօրացո՛ զիս յամ փորձութիւնս իմ. լուսաւորեա՛ զմիտս իմ, և զօրացո՛ զկամս իմ. ոպ զի կարիցէ հաստատապէս պահել զառաջադրութիւն՝ զոր արար, կամիլ մանաւանդ մեռանիլ՝ քան թէ մեղանչել երբեք:

Յաղագս գլխաւոր յատկութեանց, որք պարտին ընկերակցել խոստովանութեան:

## ԳԼՈՒԽ. ԺԱ:

Արդ այժմ է ինձ ժամանակ՝ յետ ասելոյ զհարկաւոր տրամադրութիւնս քննութեան, ցաւոյ, և առաջադրութեան, իբր ձեռամբ ածել զձեզ առ ատեանն մէջ խոստովանութեան: Բայց նախ պարտ է խորհիլ զընտրութիւն քահանային, որ պարտի բազմիլ յայնպիսի ատեան: Վասն զի զերկու նշանաւոր պաշտօնս պահելոց է նա 'ի խորհրդոյ ապաշխարութեան: Նախ զպաշտօն դատաւորի. և երկրորդ զպաշտօն բժշկի: և վասն միոյն, և միւսոյն (որպէս յայտ է) պահանջի բարութիւն վարուց, և

և բաւական գիտութիւն ։ 'Ի յայլ խոր-
հուրդս, սակաւ ինչ վնասեն ընդունո-
ղաց՝ չարութիւն, և տգիտութիւն մատա-
կարարչի ուրեմնց ։ բայց ոչ է այսպէս
յայսմիկ խորհրդոյ խոստովանութեան,
յորում 'ի սակաւ նախանձայուզութենէ,
կամ 'ի սակաւ հմտութենէ խոստովանա-
հօրն, առաքերեալ լինի այն մեծագոյն
վնասն, զորմէ ասէ Տէրն ․ մատ․ 15․ 14։
Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ՝ և
երկոքեան 'ի խորխորատ անկանին ։ Վասն զի
դևն փոխանակ կորուսանելոյ զմի միայն
հոգի ապաշխարողին, կորուսանէ հա-
մանգամայն զերկու հոգի ․ զմի զապաշ-
խարողին, և զխոստովանահօրն ։ ( Ե-
րանի էր ․ եթէ այժմու ժամանակի խոստո-
վանահարքն ազգի մեր հայոց, ներքնագոյն ա-
ջանօք լուեալ զայս, ճանաչէին զինքեանս
առ 'ի բարեգոյնել ։ ) Ուրեմն պարտի ամ
ոք 'ի ընտրելն զխոստովանահայր՝ զայն
պիտի զգուշութիւն 'ի կիրառնուլ, զոր
կիրառնուն սիրողքն առողջութեան 'ի
գտանել զբարեգոյն բժիշկ ոմն ։

Լուտովիկոս մետասաներորդ թագաւորն
կալլիացւոց ․ 'ի բոլոր թագաւորութեան
իւրում եգիտ զհմտագոյն բժիշկ ոմն,
և տայր նմա յամէն ամսոջ 'ի թոշակ,
զտասն հազար սկիլեայս ․ զի հանա-
պազորդապէս ներկայ գտանիցիւր ին-
քեան, և կառավարիցէր զինքն ։ Բայց

սակայն ոմանք ոչ միայն ոչ ծախեն զսակաւ աշխատութե՛ 'ի խնդրել զլաւագոյն խոստովանահայր ոմն, այլ նաև մինաւանդ ջանան աշխատանօք 'ի խնդրել զանկատար ոք ։ Եւ՛ եւս զայնպիսի ոմն, որ փոխանակ յանդիմանելոյ՝ շողոքորթեսցէ զինքեանս, և անմեղադիրս արասցէ. և մանաւանդ (որ վատագոյն է) զի խոստովանահայրն ոչ ճանաչիցէ զորպիսութի՛ն չարութե՛ իւրեանց, որ ըստ օրէ փոփոխեն զնա ։ Բայց դու տրդէն մի՛ արասցես այնպէս ։ Զի եթէ ցանկաս բարեպէս խոստովանիլ, աղաչեա՛ զՏէր, զի արասցէ հանդիպիլ քեզ այնպիսի խոստովանահայր ոմն, որ իցէ յարմար պիտանաւորութե՛ քում ։ Եւ՛ 'ի մէջ բազմաց՝ զորս ճանաչես, զայն ընտրեա՛ քեզ լինիլ 'ի խոստովանահայր, որ ունիցի զերիս օժիտս զայսոսիկ. այ ։ զԳիտութի. զԽոհեմութի. և զԲարութի վարուց ։ Խոստովանեա՛ նմա լրապէս. զի կարասցէ դիտել որպէս լաւագոյն բժիշկ՝ ոչ միայն զպակասութիւնն քո, այլ նաև զընութիւնն, զյօժարութի՛ն, և զպատերազմն քո ։ Եւ՛ այսպէս՝ ոչ միայն կարիցէ պատշաճաւորապէս բժշկել զանցեալ վէրս քո, այլ նաև նախապահել պատկանաւոր միջոցիւք 'ի յապառնի հիւանդութեանց ։ Եւ՛ մինչ գնաս առ ոտս այսպիսի խոստովանա-

ծօր, մի՛ կարծեր թէ դնաս առաջի մարդոյ ուրուք, այլ առաջի աստուծոյ. և մատո՛ զքեզ առաջի երևելի սպասաւորի նորին, որ ունի զտեղի, և զիշխանութիւն նորին, այսու վախճանաւ՝ թէ ունի նա զկարողութիւն արձակելոյ զհոգի քո յայնց կապանաց, որք անլուծանելիք են յայլմէ իշխանութենէ, և կարողութենէ: Եւ՞ այսպէս. ո՜վ պարտաւոր որ կապեալ առաջի դատաւորի, սկսի՛ր առնել զխոստովանութիւն քո մեծաւ յարգութեամբ: Եւ՞ ջանացի՛ր առնել, զի և սա կարասցէ անյողդողդ կայանալ առաջի արտաշիսի, (որով նշանակի խոստովանահայրն) ո՜վ այլ իմն ցաւագին եսթեր պաշտպանեցեալ յերկուց սիրելի նաժշտաց. այսինքն 'ի Խոնարհութենէ, և յԱմբողջութենէ :

Արդ՝ առաջին յատկութիւն խոստովանութեան քոյ՝ է այս, զի լինիցի խոնարհ: Եւ՞ այս խոնարհութիւնն ոչ կայանայ միայն 'ի ներքին, և յարտաքին պատիւն, ով ասացաւ 'ի վերոյ. այլ նաև 'ի կերպն խոնարհաբար, և առանց պատճառանաց խոստովանելոյ: Ուստի յայսմիկ դատաստանի պարտիս ընկալնուլ զկողմն ամբաստանողի, և ոչ զկողմն փաստաբանի. և այսպէս՝ ոչ պարտիս նուաղեցուցանել զյանցանս քո, եթէ ոչ որքան պահանջէ ճշմարտութիւն դատաս

տառապանի, և տեղեկութեն՝ զոր տաս
դատաւորին. այլ խոստովանահօրն, զի
անխափանապէս վճռիցէ: Ոչ պարտիս նաև
մեղադրել զայլս՝ ասելով. թէ ես ոչ
արարի ինձէն զայն չարն, այլ բռնադա
տեցայ և յորդորեցայ յայլոց, որք ե_
տուն ինձ զառիթ մեղանչելոյ չար վա
րուք, և չար բանիւք իւրեանց. և կամ
պատճառիցես զայլ ինչ այսպիսի: Քան
զի այսպիսի բանք՝ ոչ միայն ոչ նուազե
ցուցանեն և ծածկեն զպակասութին
քո, այլ նաև յայտնեն զայլոցն. և այս
այնպէս՝ զի բազմիցս 'ի գործոջ խոստո
վանութեան բառնի, կամ նուազի պա_
տիւն և համբաւն ումեք առաջի խոս_
տովանահօր, որք առանց հարկաւորու
թեան մնան ուներեալք 'ի միտս նորին:
Վայ պարտիս ցուցանել դու զայս խո
նարհութիւն 'ի խոստովանութեան քում,
ասելով ուղիղ և ճշմարիտ սրտիւ: Ես
յինէն մեղայ. Ես անօրինեցայ. և ես գոր_
ծեցի չարն: Այսինքն. ես եմ որ մեղան
չեցի, և ոչ տամ զպատճառանս ընկե_
րաց, առիթից, և դիւաց. այլ բարե_
պէս գիտեմ արարեալ զայն չարութիւն
իմով, և վերաճանաչեմ զիս գոլ մեղա
ւոր, որոյ վասն ապաշխարեցից յօժարա
պէս: Դարձեալ. ոչ միայն պարտիս
խօսիլ խոնարհաբար, այլ նաև պար_
տիս երբեմն լռել խոնարհաբար, մինչ

յանդիմանէ և խրատէ զքեզ խոստովա
նահայրն, և ոչ միջահատել զբանս նր̃,
նաև ոչ սրտմտիլ: Վ̃ զի խելագար գո
ցուցանէ զինքն, որ խածանէ զձեռս մի
րահատին այնորիկ, որ բժշկէ զինքն:
Զարմանալի Թէոփրաստէ (ասէ սբ̃ն Բեռ_
նարդոս) ապաշխարողին ցասուցեալ լինել,
և Նեղահարողին ոչ:

Երկրորդ յատկութիւն, որ պահանջի 'ի խոս
տովանութեան՝ է այս, զի լինիցի ամբողջ:
Եւ՛ ամբողջութիւն իւր ոչ միայն կայա
նայ 'ի յայտնելն զմահացու մեղս, որք
դան 'ի յիշումն զկնի հոգունակ քննու
թեան. այլ նաև 'ի թիւն, և 'ի յայնս պա
րագայս նոցին, որովք փոխին տեսակք
մեղաց: Բայց որքան առ թիւն ծանի՛ր.
զի պարաւանդիմք մեք ասել զարդար
թիւն, եթէ կարեմք մտաբերել. այլ
եթէ զկնի բարեպէս քննելոյ մեր ոչ
կարիցեմ գտանել զյատուկ թիւն, պար
տիմք ասել զայն մերձաւոր թիւն հա_
ւաստի, որ ներկայացուցանի յիշողու_
թեան մերում, առանց յաւաբարդելոյ և
նուազեցուցանելոյ զնա: Որ եթէ վ̃
մեծի բազմութեան մեղաց քոց ոչ կարես
առնել զայս, գոնեայ ասա՛ թէ յո՛րքան
ժամանակս մնացեալ իցես յայնմիկ չա
րի, և կամ ո՛պ̃ գործեալ իցես զնա յա
ճախակի և բազմիցս. ասելով: Եւ մնա
ցի յայնպիսի վատ կացութեան զամ մի.

և անկանել յամէն օր. կամ թէ երկու,
և երեք անգամ 'ի շաբաթն: պահեցէք
զոխս, և զթշնամութիւնս 'ի սրտի իմում
զամ մի, և միշտ խորհէի զկերպն առն
լոյ զվրէժ: պահեցի զամ մի զայն խա-
նութն, և միշտ ջանացի 'ի գնողացն գո
ղանալ զսակաւ ինչ, 'ի չափն, 'ի կշիռն,
և 'ի թիւն: Եւ՞ եթէ յիրս ոմանս պա-
կաս ասիցես քան զճշմարիտն, և այն
ոչ իցէ 'ի չարութենէ կամաց, այնպէս
թողանիցին քեզ այսօրինակ մեղք՝ զորս խոս
տովանիս, որպէս այնք՝ զորս վասն մոռաց-
ման ոչ խոստովանիս:

Իսկ շուրջ զպարագայիւք մեղաց, աստ
պարտիմք գոնեայ յայտնել զայնս, որք
փոխեն զտեսակն նոցին: Բայց ո՞յք են
այնպիսի պարագայք, որք փոխեն զտե
սակն մեղաց: Ոչ է դիւրին ինչ սակաւ
բանիւք տալ զկատարեալ կանոն իմն
այնպիսի, որ յայտնիցէ զբնաւն, կամ
իմանիցի զամենից: Արդ կարէի ասել քեզ.
թէ յայնժամ մեղքն են զանազան տե-
սակօք, մինչ ունին զայնպիսի ներհա-
կութիւն իմն բանականութեան, որ իցէ
յայտնապէս զանազան: Բայց ասա-
ցեալ իմ զայս, գուցէ ոչ իմանայցես
բարւոքապէս՝ թէ ո՛րպէս պարտի գոր
ծածիլ. վասն որոյ տամ քեզ զկանոնս այս, ո-
րով դիւրապէս լուծանիցին բազում տա-
րակուսութիւնք: Այնք պարագայք փո

խեն զտեսակն մեղաց, որովք մեղան-
չեալ լինի ընդդէմ զանազան առաքինու-
թեանց: Եւ՞ առ 'ի բարւոք ճանաչել զբա
զայս, ասեմ: որ սպանանէ զթշնամին
իւր երկաթով, ոչ առնէ զայլ զանա-
զան մեղս քան զայն՝ որ սպանանէ թու-
նով. զի յերկաքանչիւր դիպուածս առ-
նէ ընդդէմ մի և նոյն առաքինութեան,
որ է արդարութիւն, և ոչ առնէ ընդ-
դէմ զանազան առաքինութեանց: Բայց
հակադարձաբար. որ սպանանէ զթշնա-
մին իւր 'ի մէջ եկեղեցւոյ, առնէ զզա-
նազան մեղս քան զայն՝ որ սպանանէ 'ի
փողոցի: քանզի այս ոչ միայն հակառա-
կի արդարութեան, այլ նաև կրօնի. և
բաց 'ի պատուո՛յ ընկերին առ որ պար-
տաւորի, եղծէ և ապականէ ևս զպա-
տիւ՛ն, որ պատկանի տանն այ: Եւ՞ ճշմա-
րիտ է. թէ սոյն կանոն ևս ոչ է այն-
պէս ընդհանուր, որ ոչ ունիցի զհար-
կաւորութիւն չափու, և առակցութեան
իմիք, նաև մինչ սակաւ պիտոյանայ.
զնոյ 'ի բաց թողում: Որև եթէ այս առ-
բերեալ օրինակն ևս ոչ բաւականանայ
առ 'ի տալ քեզ զճանաչումն այնց պա-
րագայից, որք փոխեն զտեսակն մեղաց.
յայնժամ ո՛ւնկնդիր լեր խրատու իմոյ:
Յայտնեա՛ քահանային զայն ամ, որ ը
ենթադասման բանակութեանդ թուի՛ քեզ
թէ առակցէ զնոր տգեղութիւն մեղաց
քոց.

քոց․ և այսու հանդարտ լեր։ Ե՞ւ ոչ պատկանի յայսմիկ կիտոջ աւելորդաբար խղճահարել քեզ, որ ոչ գիտես զճանաչմունս զայսոսիկ․ քանզի խոստովանահայրն լցուցանէ հարցաքննութեամբ իւրով զայս տգիտութիւն։ Ե՞ւ եթէ ոչ լցուսցէ խոստովանահայրն, լցուցանէ Տէրն, որ ոչ հարցանէ զպահպանութէ այնց պատուիրանաց, առ որս անմեղադրելաբար ոչ եղեալ ես զյատկական նկատումն քո։ Ուստի աստ միայն զայս ազդ առնեմ քեզ, զի յայտնիցես զհարկաւոր պարագայս զայսոսիկ, որ ոչ պատահի այնքան 'ի յայլ մեղս, քան 'ի մեղս զգայականութեան, յորում զանազան կացութիւնք անձանց՝ որք մեղանչեն, ունին և զզանազան չարութիւն։ Եւ այսպէս՝ պատկան է ասել․ եթէ անձն այն իցէ ազատ, կամ ամուսնացեալ։ եթէ իցէ ազգական խնամութեամբ, կամ բնական արենակցութեամբ։ եթէ իցէ հոգևոր ազգական մկրտութեամբ, կամ դրոշմի։ եթէ իցէ նուիրեցեալ այ ուխտիւ ողջախոհութեան։ և եթէ իցէ 'ի նոյնում տեղի, կամ 'ի տարբեր տեղի։ Քանզի յասամ թէ՝ առանց ասելոյ իմ առաւել ես, խիղճն մտաց քոց ամբաստանէ զքեզ, եթէ մեղանչելով փորձառեալ իցես զզանազան չարութիւնս զայսոսիկ։ և բաւական է, զի լոկ լինիցիս իրա-

տու խոստովանահօր քոյ:

Բայց եթէ խոստովանահայրն հարցանիցէ քեզ. թէ ո՛րքան ժամանակ է, յորմէ հետէ կաս 'ի մէջ այն մեղացն, և կամ 'ի մէջ այն կենցաղավարութեան. ասա՛ նմա զայն համարձակապէս: և մանաւանդ ասա՛ նմա և ս զայն՝ եթէ ոչ հարցանիցէ քեզ, թէև ոչ իցես պարտաւանդեալ: Քանզի այլ դեղ պահանջէ բազմաժամանակեայ հնացեալ հիւանդութիւն, որպիսի էր հիւանդութիւնն այն անդամալուծին՝ որ անկեալ դնիւր զամս երեսուն և ութն յախտակրութեան իւրում. յոհ. ե. ե: և այսպէս կարօտի այնպիսին առաւել յատուկ ազդեցման և խրատու իմիք, առ 'ի ոչ անկանիլ վերստին: Արդ եթէ դու ոչ ասես բժշկին միայն զայս. տէ՛ր՝ յայսմիկ դիշերի ունեցայ զտենդ իմն, այլ և ասես՝ արդէն եղև այսքան ամիս, որ այս տենդս ոչ թողու զիս 'ի բաց: Ե՞ւ ընդէ՞ր այսպէս ոչ ասես խոստովանահօր քոյ, եթէ կամիս կատարելապէս բժշկիլ: Վ̃ զի այն՝ որ է հաւատալի, յայտնեա՛ զնա ո՛չ հաւատալի. և այն՝ որ է կարծիքական, ասա՛ զնա գոլ կարծիքական: Ե՞ւ այնպէս իցեն մեղքն 'ի վերայ լեզուի քոյ, ո՛չ են 'ի սրտի քում. զի մի՛ Տ՟ն յանդիմանեսցէ զքեզ զկնի մահուան քոյ 'ի դատաստանի՝ անդառնալի

լի

լի վճռով դատապարտութեն , վն վա-
տապէս տուեալ արձակմանն , զոր տայ
քեզ քահանայն վն կապանաց մեղաց
քոց : Վն զի առանց այսորիկ ճշմար-
տութե , խոստովանութիւն ոչ միայն ոչ
է խորհուրդ , այլ նաև է սրբապղծու
թի : Եւ՞ թէպէտ ոչ մերձենալն առ նա
է չար . բայց խարդախութբ մերձենալն
է չարագոյն , քանզի ոչ է մեզ յայնժամ
հնար փրկիլ : Կամ յաղթել, կամ մեռանել
պարտ է զինուորին՝ ասէր հռչակաւոր զօ
րապետն այն , առ 'ի քաջալերել զինա
կիրս իւր յայնմիկ հարկաւորութեան :
Այսպէս՝ պարտ է քեզ . կամ յաղթել
զայն սակաւ ամօթն , որ կրեալ լինի 'ի
յայտնելն զմեղս քո մի միայն մարդոյ 'ի
յաշխարհի , և այնպիսւոյ՝ որ ոչ կարէ
խօսիլ զայն ումեք յորպիսի և իցէ պա
տահման , այնպիսւոյ՝ որ ցաւակցի ,
բժշկէ , և սովոր է լսել զմեծամեծս :
և կամ պարտ է մեռանիլ յաւիտենական
մահուամբ : Քանզի այլ ինչ անտանելի
ամօթ լինիցի յետոյ այն ամօթն , զոր
յաւիտենականապ կրէ ոք 'ի դժոխս , ուր
դատանին բազումք , որք անիծանեն զայն
պիսի անպատմելի յիմարութիւն իւրե-
անց , որոց վն կրեն զայն յաւիտենա-
կան դատապարտութիւն : Ո՞հ թէ . անի
դեօք որպիսի սլաք լինելոց է 'ի սիրտս
նց այս մտածումն : Թէ այսպիսի [illegible]

Դէարքն իբրօք չարէէ ես հասանել երջանութէ, ճայց ոչ արարի: Ո՞հ թէ. ո՛րպիսի դառնութի՛ն սրտի, ո՛րպիսի խռովութի՛ն, և ո՛րպիսի կատաղութի՛ւն լինիցի այս 'ի նոսա: Գուցէ թերևս ապաւինիս զերծանիլ դու բարեգործութեամբ ի՞ւիք՝ զոր առնես, յայնպիսի դատապարտութէ: Ոչ է այ բաւական, ո՛չ: Քանզի չամ յաղթել պարտ է ղոյս ամօթս, չամ մեռանիլ: Մի՛ ասեր թէ ծոմապահեմ. զի չամ յաղթել պարտ է, չամ մեռանել: Մի՛ ասեր թէ ես յոյժ կրթեմ զիս. զի չամ յաղթել պարտ է, չամ մեռանել: Մի՛ ասեր ինձ, թէ բազում անգամ առնեմ զողորմութիւ: Վազի թէպէտ բարիք են, բայց ոչ բաւականք: Քանզի մինչ գործեցեր զծանրագոյն մեղք իմն, յայնժամ դատար 'ի յանձկագոյն ձանապարհի իմիք. ուստի հարկ է, կամ յաղթահարել զայն ընդդիմութիւն, որ պատահի 'ի խոստովանիլն, կամ 'ի բաց թողուլ զհոգին:

Բազմնուհաղարմ կլին ումն բարեպաշտ, և այնպէս ողորմած, որ կոչիւր մայր աղքատաց. ոչ գիտեմ թէ որով թելադրութէ եղկելին այն սիրահարեցաւ յոյժ դէպ առ մինն ծառայից իւրոց. և յղացաւ 'ի նմանէ զզաւակ մի, և հեղձոյց զնա: Այսպէս մինչ ետես թէ ոչ պատժեցաւ յայն, այնու համարձակեցաւ, և աքար զնոյն անօրէնութիւն այլ մեւս անգամ:

դամ : Բայց արդարև արժանի է այս բան մեծի զարմացման : Զի նա՝ որ ունեցաւ զայնքան համարձակութի՛ 'ի գործել զայն մեծագոյն չարն , ոչ երբեք ունեցաւ զհամարձակութիւն 'ի բոլոր կեանս իւր խոստովանել զնա : Եւ այսպէս՝ միշտ հետևեցաւ բարեպէս 'ի տալ զառատագոյն ողորմութիւնս իւր . ան՛ թէ այսոքիկ ընդդէմ կալով ամ՛ց սրբապիղծ խոստովանութ՛ց իւրոց , կարողանային վերջապէս տանել զինքն յարքայութիւնն երկնից : Բայց խաբեցաւ մեծապէս : Քանզի զկնի մահուան իւր երևեցաւ սոյն թշուառական կինն՝ միոյն յորդւոց իւրոց , որ էր կրօնաւոր , գոլով 'ի մէջ երկուց ահագնատեսիլ վիշապաց , որք պատառէին զնա , և ասաց նմա . թէ մի' աղօթեր վ՛մ իմ այլ ևս : Եւ յայտնեաց նմա զդատապարտութի՛ն իւր , զկերպն , և զպատճառն , և առակցեաց առ այն ասելով . թէ մինչ ոք ոչ կամիցի խոստովանել զմի մահացու մեղք , բոլորովին կորնչի , և ոչ ինչ բարեգործութի օժանդակէ նմա՝ թէև տայցէ զա՛մ ինչս իւր ողորմութ՛ի : Ուրեմն բարեգործութիւնք չեն զօրաւորք , որք պատճառ է առաջինութիւն խոստովանութեան : Եւ զայս ասացեալ , իսկոյն յափշտակեցաւ յայնց երկուց վիշապաց զարհուրելագոյն աղաղակաւ միով , և ոչ երևեցաւ այլ ևս :

Արդ ուրեմն ո՛վ սիրելի ընթերցող. որովհետև ոչ յուսամ ես, թէ դու ոչ կամիս կորնչիլ. պարտիս յաղթանակել զքում ամօթս, արհամարհել զքում պատկառանս, և առնուլ զօգտակարագոյն խրատն զայն, զոր տայ քեզ սուրբն Բեռնարդոս 'ի գրգոջ պարզութեան խոստովանութեան, ասելով: Մինչ խոստովանիս դու, ասա՛ յառաջնում տեղւոջ զայն մեղքն քո, որ պատճառէ քեզ զառաւել ամօթ. Եւ՛ այսպէս՝ առաւել նշանաւորապէս յաղթես զդեւն. ոչ տեսանեցաւ միոյն 'ի սրբոց հարց, որ դեւն հոգունակապէս շրջիւր շուրջ զխոստովանատեղօքն, և տայր իւրաքանչիւր խոստովանողաց զայն ամօթն, զոր բարձեալ էր 'ի նոցանէ 'ի մեղանչելն:

Յաղագս թէ ո՛րպէս պարտ է կենցաղավարել ապաշխարողն զկնի խոստովանութեան:

## ԳԼՈՒԽ. ԺԲ:

Թէպէտ անձն առաւել յօժարութեամբ կերպառնու զողորմութիւն, առ որ ընականաբար հակեալ է նա 'ի բարութէ իւրմէ՝ քան զարդարութիւն, առ որ քարշի 'ի չարութէ մերմէ իբր բռնաւութեամբ: Սակայն մինչ ժառանգէ նա ան

հուն

հուն կատարելութ՟ զմին, և զմիւսն. վ՟նզ
յա՟մ կառավարութե՟ ծի համարակապես
ընկերակցէ զգործն ողորմութեան ընդ
գործոյ արդարութե՟։ Զի զոր օրինակ.
թէպէտ մարդ մեծաւ յօժարութ՟ կի-
րառնու զաջ ձեռն քան զձախն. բայց
մինչ գործն է 'ի մեծի համարման, յայն
ժամ կիրառնու զերկոսեանն։ Այսպէս
Տ՟ն մեր 'ի յատենի խոստովանութեան
ցուցանէ մեզ զանհուն ողորմութի իւր
'ի թողուլն մեզ զյանցանս մեր, և զյա-
ւիտենական պատիժն։ Բայց կամի ևս
ցուցանել նա զարդարութիւն իւր. վ՟զ
պահանջէ 'ի մէնջ զբաւարարութի, և
զապաշխարութի ինչ, առ 'ի թողուլ ըստ
բոլորին, կամ ըստ մասին՝ զայն ժամա-
նակաւոր պատիժն, որ մնայ մեզ հա-
տուցանելի յետ թողութե՟ յաւիտենա-
կանի պատժոյ։ Ե՛ւ բաւարարութիւս,
կամ աշխատութիւս այս՝ ըստ յորջոր-
ջեցման յատուկ անուանն, է երրորդ
մասն խոստովանութե՟, որ պատկանի
ապաշխարողին, և է ամբողջական մասն,
և ոչ էութենական, ոպ՟ ասացաւ 'ի վե-
րոյ։ Ուրեմն 'ի յաւարտել զխոստովա-
նութիւն քո, արա՛ յայնպէս՝ ոպ՟ և արար
սամարացին այն, որ սրբեալ 'ի բորոտու-
թէն, դարձաւ առ 'ի գոհանալ զՔ՟է,
և գովեցաւ ի նմանէ. ղուկ. 17. 16։ Այս-
պէս առանձնացի՛ր և դու 'ի մի կողմն ե-
ղե-

ղեղեցւոյն, և գոհացի՛ր զՏ՟նէ ուղիղ սրտիւ՛, որ այնքան դիւրագին ետ քեզ զայն շնորհն, զոր գնեաց Նա բոլոր արեամբ իւրով. և պատրաստեա՛ զքեզ ՚ի կրել զապաշխարանս, զոր տայ քեզ խոստովանահայրն: ՚Ի վ՟ր որոյ տամ ես քեզ զերկու խրատս: Առաջինն է, զի որքան կարես՝ փութով կատարեսցես զապաշխարանս քո. և այս վասն այն, զի կարասցես ապահովապէս կատարել զայն գոլով ՚ի կացութ՟ե շնորհաց, առանց մահացու մեղաց: Ապա թէ ոչ, գոլով ՚ի մահացու մեղս, ոչ միայն ոչ լինի քեզ արդիւնք կատարելն զայն, այլ նաև լինի նորադոյն իմն տեսակ մեղաց. և այսպէս նոր ՚ի նորոյ պարտաւորութի իմն: Երկրորդն է. զի աղաչեսցես զխոստովանահայրն քո առ ՚ի տալ քեզ զբազում ապաշխարանս. քանզի գործքն որք դնին ՚ի յապաշխարութ՟ե, և կատարին, են առաւել վճարողականք, և արդիւնաւորք՝ քան զայն գործս, որք առնանին յատուկ ընտրութ՟բ մերով. և վ՟նզ ունին զմեծագոյն գերազանցութի ՚ի վ՟ր այլ ա՟մ գործոց:

Խոստովանահարքն. կամ փոքր համարումն առնեն զմեղաց, և կամ երկնչին ՚ի տկարութէ խոստովանաորդւոց, զի մի՛ ատելի վարկանիցի նոցա այս խորհուրդս: Վ՟նզ երբեմն տան վ՟ս մեղաց

նց

ն͞մ զԹեԹեւագոյն ապաշխարանս, ընդդէմ որոց ՚ի կանոնաց ս͞րց հարց նախակարգեցան զարհուրելի ապաշխարանք: Յաղագս որոյ՝ մի՛ բաւական համարիր դու քեզ զայն սակաւն, զոր դնէ քեզ խոստովանահայրն, այլ առակցեա՛ ինքնին քեզ զայլս: Նկատելով զծէսն հնոյ օրինաց. Թէ այն՝ որ յաւելեալ լինէր յողջակէզ մնացեալ զոհէն Թարց կատարելապէս այրելոյ, պարտէր առնանիլ յետոյ ՚ի քահանայէն՝ բայց մերկացեալ յառաջին զգեստուց, եւ տանիլ ՚ի ս͞ր տեղւոջ, եւ անդ այրել բոլորն յայլ հրում մինչեւ ցվերջին աճիւնն, ո͞պ գրի. ղեւտ. 6: Եւ՞ զի՞նչ կամի նշանակել այս: Նշանակէ, Թէ զայն՝ զոր դու ոչ կատարես աստ ապաշխարութե͞ իբր անկատար ողջակէզ, պարտիս յետոյ վճարել ՚ի քաւարանի՝ մերկացեալ ՚ի մարմընոյ քումմէ ՚ի ս͞ր տեղւոջ: բայց այս եղերի յոյժ պատժալի կերպիւ: Ուստի այսու խորհրդով զօրացի՛ր դու առ ՚ի առնել զպտուղ արժանի ապաշխարութե͞, որք բովանդակին ՚ի յերիս գործս այսոսիկ. պ͞ս ՚ի Պահս. ՚ի Յողորմութիւնս. եւ ՚ի Յաղօթս: Պահօք իմանի ա͞մ պատժական գործք մարմնոյ, որով մատուցանի մարմինն մեր ա͞յ: Ողորմութե͞ իմանի ա͞մ գԹութենական գործք դէպ առ ընկերն, որով մատուցանի ա͞յ բարիք մեր:

մեր ։ Եւ՞ աղօթիւք իմանի ամ բարեգոր-ծութիւնք, որք շարակարգեն առ պաշտումն այ. և սովաւ մատուցանի նմա հոգի մեր ։ Զի եթէ տայցես զայս ամ, յայնժամ լինի ողջակէզն կատարեալ, և ոչ մնայ այլ ևս տալոյ իր ինչ ։

## Յաղագս նախապահողական դեղոյ, որով վարիլ պարտի ապաշխարօղն առ՚ի ոչ անկանիլ վերստին ։

## ԳԼՈՒԽ. ԺԳ ։

Վախճանն ճշմարիտ ապաշխարութեան ոչ է միայն պատժել զանցեալ մեղս, այլ նաև նախապահել յապագայէն ։ Ուստի որ ցանկայ առնել զճշմարիտ ապաշխարութիւն, պարտի ջանալ ոչ միայն պատժել զարարեալ մեղս, այլ և գտանել զդեղ ինչ՝ առ՚ի ոչ գործել զնոյնն յապառնիոջ ։ Երկչոտ լինի յոյժ թռչունն՝ որ հազիւ՞ երբեք անկեալ իցէ ՚ի ծուղակն, քան զայն՝ որ միանգամ անկանիլով անդ, խզեալ իցէ զնա մեծագոյն դժուարութեամբ ։ Արդարև եթէ այսպիսի լինէին անձինք մեր, սակաւ խրատք և պատուիրանք պիտոյա-

նային

նայքն մեզ առ 'ի ոչ անկանիլ վերստին : Բայց արարքն մեր ամենեւին ներհակ է ասացելոյս : Քանզի այն՝ որ յերեկ զերծաւ յորոգայթէն, նոյն այսօր խորհի վերադառնալ 'ի նոյնն, և հազիւ կարէ կեալ առանց մեղաց : Պարտ է ուրեմն լաւագոյն կերպիւ արիանալ ընդդէմ այսպիսի վերստին անկմանց, որ զմեղաւորն դնեն 'ի վատագունի կացութեան քան որ էրն յառաջ : Վ̃ն զի ամ̃նյն որ ելեալ էր յայնմանէ հոգւոյ միայն, (ը̃ստ որում ասէ Տ̃րն 'ի ղուկ. 11. 26:) ածէ ընդ իւրեան չեօթն այլ այսս չարեաս քան զինքն : և այսպէս դնայ միշտ 'ի վատագունէ 'ի վատթարագոյնն, հանդերձ որոգայթիւ վերջին դատապարտութեան : Զի որ հանապազ վերադառնայ առ դուռն դժոխոց, և բաղխէ զնա, պատահի զի դրքն բացցեն յաւուր միում բանալ նմա՝ առ 'ի յափշտակել զինքն : Բայց ո՞ք են այնք միջոցք հարկաւորք առ 'ի յարատևել 'ի բարի առաջադրութեան : Ստուգագոյն իմն է . թէ առ 'ի յարատևել 'ի բարւոջ՝ պիտոյ իսկ է մեզ յատկական օժանդակութի լինչ Տ̃ն մերոյ, զի զօրացուսցէ զմեզ առ 'ի ընդդիմանալ փորձութեանց, արհամարհելով զայն սակաւ հեշտութիւն, որ խառնի ընդ մեղաց : Ուրեմն միջոցքն այնոքիկ, որք պատկանաւորք են առ 'ի ընկալնուլ

զայս

զայս օժանդակութիւս շնորհացն ա՟յ. լինին եւ պատկանաւորք առ ՚ի ընկալնուլ զյարատեւութիւն: Ե՞ւ այսոքիկ են երկու. Ա՟ յաճախապէս հաղորդիլն. եւ յաճախապէս աղօթելն:

Քանզի ոչ ա՟ծ յերկրաւոր դրախտին, ՚ի մէջ այնքան փափկագոյն ծառոց՝ տնկեաց եւ զծառն այն, որ կոչիւր ծառ կենաց. զի պտուղքն նորին երբեմնապէս կերեալք, պահէին մշտնջենաւորապէս զզօրութիւն մարդոյն առ ՚ի ոչ երբէք մեռանիլ: Այսպէս եւ տնկեաց Տ՟ն զայլ խո՟ն ա՟ծային ծառ կենաց ՚ի մէջ դրախտին եկեղեցւոյ, որոյ պտուղքն պահեն ՚ի հոգիս մեր զկեանն շնորհաց, եւ այս է խորհուրդն ամենասուրբ հաղորդութե՟ն: Ուրեմն մեղադրելիք են այնոքիկ, որք ՚ի յանկանիլն հազի՞ւ երբէք հաղորդին: Վ՟ս զի՝ զի՞նչ կարեն ասել նոքա Տ՟ն ՚ի նախատելն իւրեանց՝ մինչ դատիցին ՚ի նմանէ. Քանզի եթէ ասիցեն. տկար էաք, եւ վ՟ն ոչ կարէաք զդէմ ունիլ այնքան կատաղի եւ զօրաւոր թշնամւոյ, որպիսի է դեւն: Բայց եթէ տկար էիր ասէ ա՟ծ, վ՟ս է՞ր ոչ դիմեցեր առ այն, որ կարէր տալ քեզ զզօրութի՟ն: Ընդ է՞ր ոչ մերձենայիր ՚ի սեղանն իմ, առ ՚ի ընկալնուլ զմարմին իմ. եւ վ՟ս է՞ր ՚ի բաց թողեր զսնուցումն քո ՚ի քոյդ վնասակարութի՟ն: Ե՞ւ այսպէս, ոչ

կա

կարես վերակրկնել զպատասխան ինչ : սաղմ. 106. 42: Ամենայն անօրէն խցցէ զբերան իւր : Եւ՛ մի այսպիսիք տեսանին դատապարտիլ՝ զի կամին ինքեանք, տրովհետև սակս սուտ հեղգութեն զանց առնեն զօրանալ այնպիսի քաղցր և դիւրին միջոցաւ միով, որ տուեալ է նոցա 'ի Քնէ 'ի փրկութին ինքեանց : Զի՛նչ խելագարութի է այս՝ ասէ սբն ամբրոսիոս : Քս հայցոյց զմեզ հացս զայս 'ի հաց հանապազորդական, և բազում անձինք զար ջուրացանեն զնա 'ի հաց փարէհան : Ա՜յլ լաւագոյն խրատ եղիցի այս . եթէ խոստովանահայրն սովորիցի դնել քեզ 'ի տեղի ապաշխարանաց զբազում անգամ հաղորդիլն, զի այսպէս առնելով ջերմացի ցրտութին քո : Բայց մինչ քահանայն զայս ոչ դնէ քեզ, դու լե՛ր ինքնին պատչաճաւոր բժիշկ անձին քո, և 'ի գո՛րծ ած զդեղս այս, հաղորդիլով դոնեայ միանգամ յամսոջն, և եթէ կարես՝ արա՛քան զայս յաճախաբար : Ասի թէ, այնքնապատատակք՝ որք գտանին 'ի բարձագոյն լերինս, սպիտակք են, քանզի հանապազ ունեն զձիւն : Այսպէս արա՛ 'ի միասին և դու, յաճախեա՛ մատչիլ առ այս կերակուրս մաքրութե, և մի՛ երկբայի՛ր . զի՞ զի 'ի մէջ սուղ ժամանակի սպիտականայ հոգի քո :

Մ՛իւս հարկաւոր միջոցն առ 'ի յարա_

տևել

տեւել ( որպէս ասացաւ 'ի վերոյ ) է աղօթքն, որեւ է այս հասարակագոյն գործիք նախախնամութեան այ. քանզի՝ զայն ամ բարիս, զոր նա շնորհէ մեզ, կամի զի խնդրիցեն: Է նաեւ այս 'ի մեծի գործունէութեան վն վերականգնեցման խոստմանցն, զորս արար Տրն մեր առ 'ի լսել մեզ, մինչ խնդրեմք 'ի նմանէ զայն, որ է հարկաւոր փրկութեան մերոյ. ըստ որում գրի 'ի զանազան տեղիս սբյ աւետարանին: Խնդրեցէ՛ք, եւ տացի ձեզ: Եթէ զորինչ խնդրեցէք յանուն իմ, արարից զայն: Եթէ զինչ ինչ՝ զոր խնդրեցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք: Եւ է եւս միոջ 'ի մեծի դիւրութեան. վն զի՝ զի՛նչ առաւել դիւրին է աղքատի միոյ, քան խնդրել ողորմութիւն, եւ զայն մանաւանդ յառատաբաշխէ ումեմնէ: Եւ այսպէս՝ այսու եւս ոչ գտանիմք անմեղադրելիք: Քանզի սովորապէս է 'ի ձեռին իմում պահել զշնորհն այ, եւ ոչ վերադառնալ այլեւս առ մեզ: Եւ այս հանապազորդաբար խնդրելով 'ի Տնէ զօգնականութիւն, յուսով, եւ խոնարհութբ. ցն ճանաչելով, թէ նա ոչ լսէ մեզ վն արդեանց մերոց, այլ միայն վն բարութե իւրոյ, եւեւս վն պահելոյ հաւատարիմաբար զխոստմունս իւր: Եւ՛ 'ի յոչ առնելոյ զայս աղօթս, ծնանին ամ անկմունք մեր: Արթո՛ւն կացէք. եւ աղօ՛թս արարէք,

զի մի՛ անկանիցէք ’ի փորձութի։ մատթ. 26.
41։ Յայսմանէ ծնանի բոլոր աղքատու
թի՛ն մեր. ո՛պ ասէ սբ՛ն յակոբոս. 4. 2։
Ոչ ունիք. վն զի ոչ խնդրէք։ Իբր թէ
ասիցէր. վա՛ն տկարացեալ կայք, զի ոչ
խնդրէք զկարողութի. և վա՛ն հիւա՛ն-
դացեալ մնայք, զի ոչ խնդրէք զառող-
ջութիւն։ Ոչ ունիք. վն զի ոչ խնդրէք։
Եւ՞ աղօթքս այս՝ այնքան հարկաւոր է
և ’ի փրկել, մինչ զի եթէ ոք ոչ յանձ-
նիցէ զինքն նովաւ առ ա՛ծ, ոչ փրկի։
Եւ՞ ’ի սբ՛յն օգոստինոսէ բարեպէս ճա-
նաչեցեալ եղև աղօթքն լինել միակ մի-
ջոց առ ’ի արդիւնաւորել կերպի՞ ինչ
զվախճանական յարատևութիւն, մինչ
ասաց։ 2. դրգոջ բարի յարատևութե։
Այլ տայ զայլ ինչ ոչ աղօթողաց, ո՛պ զսկիզբն
հաւատոյ. և զայլ ինչ աղօթողաց նախապատ-
րաստեաց, ո՛պ զյարատևութիւն մինչև ցվախ-
ճան։ Առաջին շնորհն տուեալ լինի
թարց աղօթից. բայց երկրորդն՝ որ է
յարատևութիւն, ոչ տրի առանց աղօ-
թից։ Ուստի ’ի մէջ սաստկագունի փոր-
ձութեց, որք դնեն զմեզ ’ի զօրաւոր ո-
րոգայթի անկանելոյ, այնպէս պարտա
կան եմք առնել զաղօթս, մինչ զի յայն
ժամ ոչ առնելն զայն՝ է յատուկ բացա-
րոշեալ մեղքն ինչ՝ բաց յայնմանէ, առ
որ հրապուրէ զմեզ փորձութիւն։ Եւ՞ս՝
ոչ միայն պարտիմք աղաչել զՏր, այլ նաև

զսէ՛ն,

զսէան, որք են երկրորդական միջնորդք փրկութեան մերոյ: և յատկապէս Զամենաբարուհին մարիամ, միջնորդութիւն որոյ շնորհէ մեզ Այ զբազմազան բարիս: Ուստի այնմ, որ ոչ գիտէ ընթեռնուլ զգրեանս աղօթից, կարէ ունիլ օգտաւէտ խրատ, զի յամենում աւուր ասասցէ զերիս Հայր մերս, և զերիս Ողջոյն քեզ Մարիամ, 'ի պատիւ անարատ մաքրութեան կուսին մարիամու: Շնորհակալ լինելով զԱմենասուրբ երրորդութենէ, որ զնա պարգևեալ է մեզ. աղաչելով զնա առ'ի ոչ անկանիլ 'ի մեղս, ոչ բանիւ, ոչ խորհրդով, և ոչ ևս գործով: Ըստ որում վկայէ յօհաննէս ավիլեան. Թէ բազումք ընկալան յայսմանէ զմեծագոյն օգտակարութիւն. նաև յոյժ առաւել ընկալեալ լինի, եթէ բազմիցս կրկնիցի յաւուրն: Բայց այնք, որք գիտեն զընթեռնուլ, կարեն 'ի գործ ածել զհետևեալ աղօթս՝ առ'ի յանձնել զինքեանս երանուհւոյ կուսին:

## Աղօթք առ Ածածին կոյսն մարիամ:

Ով ամենասրբուհի կոյս Մարիամ, Մայր Այ. որովհետև դու արժան համարեցար լինել զէղ տապանակն Քրիստոսի, եւ Թշնամաւորաց

Ք-

Մեղաւորս՝ որ մծապեա տատանիմ արդեն ներալ 'ի ծառայել քեզ հաստատութեամբ, աղաչեմ զքեզ ա͞մ բարձրեա՛լ, որպէս իմոյ՝ վ͞ն արեան սիրելի որդւոյ քոյ հեղեալ յաղագս իմ, զի օգնա-կան լինիցիս ինձ այսօր քոյով հզօրագոյն պաշտպանութեամբդ, և արասցես՝ զի առաւել խնդրեսցեմ վ͞ս իմ զ͞մ չարիս աշխարհի, քան երբէք անկանել 'ի մահացու մեղս: Եւ մ՛ թոյլատրեսցես զիս ո՛չ մայր ողորմութէ, զի վերստին գրգռեսցեմ զբարկութիւն ք͞ո արդար դատաւորին, և գնիցեմ բողոքական հեշտա-թէ մով զյաւիտենական տանջանս: Յոյժ ա-ռաւել հոգացեալ գթայ յանցելոց ժամա-նակի. և յառաջ ցաւ է ինձ, զի ոչ կարեմ այժմ լալ արեան արտասուօք՝ վ͞ն չարապէս մահապարտականելոյ իմ առ այնպիսի անհուն բարութիւն, որ արար ինձ զայն քան բազմա-զան շնորհս, և որ պարտի սիրել բոս ին-քեան ա͞մ կերպիւ: Ընկա՛լ վ͞ն իմ ողբումն զնէ բանսն 'ի ջեան մեծի արդեանց քոյ՝ ո՛չ գթա ծագոյն բարեխօս իմ: Եւ աղաչեմ զքեզ, արա՛ ինձ. զի զնի սաստա տարութ, որք մնացեալք են ինձ յայսմհետէ թշնամական կե-նի, մինչորդութեամբ քով կարիցեմ արդարդ մի-ռանիլ, և ծառայել յարքայութեան վերին ա-'ի վայելել զքեզ, և շնորհակալ լինել զքեն միշտ, և հանապազ. ամէն:

Բայց որովհետև ոչ միայն պահանջէ Տ͞ր յստեղծուածոց իւրոց զաղօթելն,

այլ

այլ նաև զկամիլն · այսինքն զգործակցելն ևս ։ Ոպ՟ ասէ սբն օգոստինոս 'ի գր գոջ բնութեն, և շնորհաց · գլուխ · 43 ։ Արա՛ զառաջինն զայն՝ զոր կարես , և խնդրեա՛ զշնորհս ձեռն այնորիկ , զոր ոչ կարես ։ Վ՟սկ այլ երկու միջոցք հարկաւորք են առ 'ի յարատևել , որք պատկանին առ գործակցութին մեր ։ Առաջին միջոցն է փախչիլ 'ի պատճառէ մեղաց ։ Քանզի տեսանեմք մեք , զի թէպէտ ապակին այնքան դիւրաբեկանելի է , բայց առաւել մնայ քան զերկաթն , եթէ պահեալ լինի 'ի պատճառաց և յորոգայթից բեկանելոյ ։ Այսպէս պատահի ևս այնմ , որ ոչ ապաւինի յինքն իւր , այլ փախչի 'ի կասկածելի կենցաղավարութենէ , 'ի վատթար ընկերակցութենէ , 'ի սանձարձակ հայեցմանէ , և յանհամեստ խօսակցութենէ ։ Մի՛ ասեր բնաւ , թէ այսպիսիքն ոչ լինին ինձ պատճառք , և որոգայթք ։ Քանզի յայսպիսի պատահմունս՝ բազմիցս անկեալ են սբքն , որք էին սիւնք հաստատութեն · և ո՛րպէս ոչ անկանի մեղաւոր ոք , որ ճկի և հակի համգոյն եղեգան ։ Ո՞հ · գուցէ ասիցես · թէ այսքան ժամանակ է , որ ոչ մեղայ ։ Եւ՞ զի՞նչ կամիս ասել այսու ։ ինձ վարկանի թէ՝ հաւատաս զքեզ եղեալ անմեղանչական ։ Զի թէև անօթինն հողեղէն մնացեալ իցէ 'ի բազում

ժամանակս, ոչ վնկ լինի առաւել ամ_
բարդոյն, և այսպէս միշտ մնայ բեկանե
լի. և ոչ պիտոյանայ այլ ինչ 'ի խորտա
կել, եթէ ոչ մի միայն հարկանումն ։
Այսպէս ուրեմն ոչ է պիտոյ այլ ինչ
մարդոյ ումեմն առ 'ի անկանել, եթէ ոչ
դնել յորոգայթի միում անկանելոյ ։ և մա
նաւանդ ոչ կարէ յայնժամ ոչ անկանել,
զի նա ոչ կարէ կառավարել յատուկ զօ
րութբ իւրով ։ և ոչ ես յայնժամ կամե
տալ նմա մծ զյատկական օգնութին ինչ,
զի կառավարիցի ։

Վերջապէս. երկդ միջոցն յարատեւու_
թեն՝ պատկանեալ առ գործակցութիւն
մեր, է զբաղել զմիտս մեր առ 'ի մտա_
ծել զայնս շարժառիթս, զորս յայտնէ
մեզ հաւատն շուրջ զկարճութբ կենաց,
զմերձակայութբ մահուան, և զպատ_
ժօք, որք յետոյ պատրաստին մեղաւո_
րաց. ոպ ասէ Հոգին սբ. սիրաք. 7. 40 ։
Յիշեա՛ զվախճանս քո, և յաւիտեան ոչ մե_
ղանչեսցես ։ Ո՛վ համարձակի երբեք 'ի
մեղանչել, մինչ կենդանապէս մտածէ
թէ պարտի մեռանել. կմ թէ պարտի բա
ժանել յայնոցիկ բնաւից, զորս սիրէ. կմ
'ի բարեկամաց, 'ի ծնողաց, 'ի հարստու
թեց, 'ի հեշտութեց, 'ի հանգստութէ,
և 'ի մարմնոյ իւրոյ ։ Եւ յետոյ զրկեալ
յամենից՝ դնել 'ի ներքոյ հողոյ առ 'ի
յուտել յորդանց, առանց ունելոյ այլ

և 'ի յաւիտեան զժամանակ առնելոյ զբարին՝ զոր արհամարհեալ է, և ոչ զեղանակ բուժելոյ զչարն ( կամ զեղանակ վճարելոյ զպարտն) զոր գործեալ է: Ե՛ւ այս ամ̃ պարտի լինիլ յոյժ վաղվաղակի: քանզի փութով հասցէ քեզ օր մի, որոյ յառաւօտն եղիցիս կենդանի, և յերեկոյն մեռեալ: կամ գիշեր մի, որոյ յերեկոյն լիցիս կենդանի, և յառաւօտն մեռեալ: Ե՛ւ սոյն հարկանումն ոչ միայն կարէ լինիլ քեզ մերձ, այլ և արդէն վերահասեալ. այնպէս թէ՝ մահն կայ այժմ զկնի թիկանց քոց, և դու ոչ տեսանես զնա: Առ ի՞նչ օգտեն յայնժամ այնքան հեշտութիւնք, և առ ի՞նչ պիտոյանան մեծապատուութիւնք, առևտուրքն, և գործառութիւնք: Զո՞րքան տայիր արդեօք, եթէ այժմ պատահէր քեզ մեռանիլ, առ 'ի ոչ երբէք գործեալ գտանիլ զայնոսիկ մեղս: Ո՞րքան գնով գնէիր արդեօք յայնժամ զայն սակաւ ժամն, և մանաւանդ զայն փոքրիկ րոպէն ժամանակի, զոր ունայնաբար կորուսանես այժմ 'ի ներկայումս: Ո՞րքան արդեօք մորմոքելոց ես 'ի հասանիլն 'ի վր̃ քո գիշերն այն մահու, վս̃ ոչ ունելոյ քոյ զբարեգործութի̃ առ 'ի արդիւնաւորիլ զարքայութի̃ն: Ե՛ւ սահայն է այսպէս. զի ասէ Տր̃ն: Գայ գիշեր, յորժամ ոչ ոք չարէ գործել: Յոհ. 9. 4:

Ո՛ր

Որպիսի՛ անձկութիւն արդեօք լինիցի այս , գնալ առաջի ա̃յ այնքան աղտեղութե՜ ապականեալ խղճմտանօք , առ՚ի տալ զհաշիւ՞ և զհամար վ̃ն այնքան չարեաց՝ զորս գործեալ է , վասն այնքան ներշնչմանց՝ զորս ոչ կամեցեալ է ընկալնուլ . և վ̃ն այնքան ապերախտութեանց , անհաւատարմութեանց , և արհամարհանացն , զորս արարեալ է ամենայն արեանն քո , որ է ՚ի սրբազնութեան : Արդարև առ՚ի ամօթալից առնել զմեզ , տալոց է ՚ի յերես մեր զայս . թէ ինքն որ արարեալ է զմեզ յոչընչէ , մեք արհամարհեալ եմք զնա վ̃ն ոչնչի , նախադաս առնելով բազմիցս զդեն քան զինքն :

Ո՞ք արդեօք իցէ այն , որ ոչ երկնչիցի յայնպիսի զարհուրելի դատաստանէ , յորմէ զահիհարեալ դողային այնքան մեծամեծ սուրբք եկեղեցւոյ : Ե՞ ո՛ ոք այլ , եթէ ոչ յիմարն է , որ համարձակիցի վշտացուցանել զայնպիսի դատաւորն , ՚ի բերանոյ որոյ սպասէ լսել զանդառնալի վճիռն՝ կամ յաւիտենականի կենաց , և կամ յաւիտենականի մահուա՞ն : Արդ եթէ նա անիծանիցէ ըզքեզ . ե՛րբ արդեօք ունիցիս զայլ ինչ բարի : և եթէ վճռիցէ զքեզ առ այն զարհուրելի բանսն դատապարտելոց , ո՛վ երբէք բանալոց է զդուռն նորին :

և կամ ո՛վ եղիցի այն, որ գայցէ 'ի վայր
առ'ի այց առնել քեզ, և բերել զմխի-
թարութիւն ինչ: Պատկերակերպեա՛ ու-
րեմն ինքնին 'ի քեզ. ա՛րդեօք որպիսի
մեծագոյն յուսահատութիւն լինի յայն-
պիսի կացութեան միում: Ոսկր ինչ՝ որ
խախտի, և ելանէ 'ի տեղւոջէ իւրմէ,
պատճառէ զմեծամեծ ցաւս և մորմոք
մունս. ապա զի՞նչ պատահիցի հոգւոյ
միում, կեալ միշտ հեռի 'ի կեդրոնէ և
'ի միջակիտէ իւրմէ, որ է ա͞ծ, և կրել
յայնպիսի կլանող գեհեննում զընաւ պա-
տիժս, զոր հնարեալ է ա͞ծային արդարու-
թեա͞ն 'ի պատժել զմեղս: Եւ՞ այս ամ մի՞չ:
այնպէս թէ. եթէ 'ի ձեռն յատուկ լա-
լոյն իւր առնիցէ զծով լի͞մն արտասուա՞ց,
ոչ եղերի և վճարի դոնեայ կէտ մի յայ-
նոցիկ տանջանաց, զորս կրելոց է նա:
Ո՞վ եղիցի արդեօք նա, որ ընդդէմ լու-
սոյ այսորիկ ճշմարտութեան կարիցէ մե-
ղանչել, և դնել երազական հեշտութե͞
միով զայսպիսի յաւիտենական տան-
ջանս: Յորժամ խղճալի յոփաթանն
այն ետես զինքն 'ի մահ դատապարտեալ,
վ͞ն խորհելոյ զծոմապահութիւն ընդդէմ
պատուիրանաց հօր իւրոյ, ուտելով
զսակաւ ինչ մեղր. ոչ կարէր հանդար-
տել զլացն իւր ասելով: Ճաշակեցի ճա-
շակ մի մեղր. և ահա մեռանիմ: 1. Թագ.
14. 43: Զի՞նչ լինիցի արդեօք, մինչ վ͞ն
միոյ

ւոյ սակաւ քաղցրութեն և հեշտութեն
որ ճաշակեցեալ լինի, հետևեցի յետոյ
մեծագոյն դառնութեն իմ, յաւիտենա
կան մահ իմ, և մահ իմ 'ի մէջ հրոյ՝
որ ոչ երբէք սպառէ, և ոչ երբէք դա
դարի : Կարե՞ս արդեօք մնալ դու զգի
շեր մի ողջոյն 'ի մէջ բոցոյ բորբոքեալ
հնոցի միոյ՝ վն̅ վայելելոյ զմ̅մ հեշտու
թիւնս աշխարհի : Ո՛չ հաւատամ բնաւ
թէ կամիս զայս : Ե՞ւ յետոյ ո՞չ երկն
չիս դնել զքեզ յայսպիսի մեծագոյն ո
րոգայթի : Ո՞վ գիտէ, թէ այսուհետև
առաջին մեղքն քո՝ զոր գործես, ոչ լի
նիցի վն̅ քո վերջին . և կամ արդէն ոչ
իցէ լարեցեալ աղեղն առ 'ի հարկանել
զքեզ : Ե՞ւ եթէ դարձցիս 'ի մեղանչել,
կարէ լինիլ թէ ոչ ունիցիս այլ ևս ժմկ 'ի
խոստովանիլ : կամ եթէ ունիցիս զժմկ,
բայց ոչ ունիցիս զհարկաւոր զղջումն, և
զհարկաւոր առաջադրութի : Ե՞ւ կամ
ապերախտութիւն քո ցամաքեցուցանի
ցէ զաղբիւրն ա̅ծայնոյ ողորմութեն . և
այսպէս անարժան գտանիցիս առ 'ի ար
դիւնաւորիլ զօգնականութիւն այն, ո
րով դիւրապէս ընդդիմանայիր դի՞ւին 'ի
կիտոջ մահուան : Կասկածիմ թէ ասի
ցես : Թէրևս ոչ եղիցի այնպէս : Բայց
ես ասեմ . եթէ այնպէս եղիցի, զի՞նչ
լինի արդեօք յայնժամ քեզ : Ո՛րքան ան
ձինք սասացին նման քեզ . ոչ լինի այն


պէս .

պէս. և այժմ այրին 'ի դժոխս, և մշտայրելոց են։ Թե՞րևս կարես դնել դու որքան առ այս՝ զդաշնադրութիւն իմ̃ հարիւր մառչելոց, թէ ստուգապէս ոչ մեռանելոց իցես 'ի մահացու մեղս։ Ո՞վ է արդէն 'ի դժոխս, որ ոչ ասէր երբեմն զայն, զոր ասես այժմ դու. Ծերեաս ոչ նշէցէ այնպէս։ Քանզի ոչոք քրիստոնեայ անկեալ է երբէք 'ի մէջ այնորիկ բոցոյ, որ ճշմարտապէս հաւատայր անկանիլոց։ Ա՛մ ոք ասէ. ես խոստովանիմ. ես փրկիմ։ Կա՛լ ուրեմն դու զհաւաստագոյն մասն յայսպիսի հարկաւոր գործառութեան։ Զի՞նչ կորուսանես արդեօք այսպիսի հաւատալովդ։ Եթէ կամիս մտանել 'ի կեանս. պահեա՛ զպատուիրանս։ Մատ։ 19. 17։ Վ̃ զի եթէ կամիս փախչիլ 'ի դժոխոց, պահեա՛ զօրէնս Տ̃ն քոյ։

Բայց քան զա̃մ զօրեղագոյն դեղ ընդդէմ մեղաց, է նոյն ինքն ճանաչումն մեղաց կենդանի հաւատով։ որպէս և հզօրագոյն դեղ ընդդէմ կարծի, է նոյն ինքն կարիճն պատրաստեալ 'ի դեղ։ Եւ առ այս գործ օգնեն քեզ մտածմունքն, որ լինի զմեղաց։

Յաղագս ծանրութեան մեղաց, որ ցուցանէ ապաշխարողին, զի մի՛ դարձցի վերստին 'ի գործել զնա։

## ԳԼՈՒԽ. ԺԳ։

Զանցուածս իւր ո՞վ ճարէ առնուլ'ի միտ ասէր սաղմոսերգուն. 18. 13։ Քանզի ո՞վ է այն, որ կարասցէ իմանալ թէ ո՛րքան մեծ իցէ մահացու մեղքն. և ո՞վ կարէ շօշափել երբէք զյատակն այսորիկ խորագունի ծովու չարութեն ։ Արդ թէպէտ ոչ իմացումն մարդկայինն, և ոչ ևս իմացումն հրեշտակայինն կարէ հասանիլ առ այս. սակայն պարտ է ջանալ կերպիւ ինչ 'ի ճանաչել զնա, առ 'ի արհամարհել զնա, և գարշիլ 'ի նմանէ ։ որովհետև ամ ոք որ ընկալնու զդաւաճանս այս 'ի սրտի իւրում, վն այն ընկալնու՝ զի ոչ հայի յերես նր, և ոչ ձևակերպէ զնա ըստ այնմ, որպիսի է նա, ըստ որում ասի. Այնպիսին մեղանչօղ է թգէս։ Աստուստ է, զի 'ի սբ գիրս առաւել քան զերեքհարիւր տեղիս մեղաւորքն կոչին յիմարք, և տգէտ ։ Եւ՛ ճշմարիտ է այս. զի բոլո

բովլին զուրկք են յիմացմանէ, և ոչ դի-
տեն զայն՝ զոր առնեն: Ժողով. 4. 18:
Ոչ են գիտակք զի՛նչ առնեն չարք: Ուս-
տի առ այս վախճան յարմարեմք զներ-
կայ խոկմունս, որք զօրավիգ լինիցին քեզ
գարշիլ 'ի գործեցեալ չարեաց քոց, և
պահպանեն ևս յայնցանէ, զորս կա-
րես դիւրապէս գործել, եթէ ոչ քա-
ջալերեսցէ զքեզ բարի առաջադրու-
թեան: Վասն որոյ նախապէս խոկասցուք
և մտածեսցուք զմեղքն ըստ ինքեան.
ապա զպարագայս, և ներգործութիւնս
նորին. և յետոյ զպատիժս:

Արդ՝ այն, որ մեծապէս զարհուրելի
առնէ զմահացու մեղքն, և տայ նմա
զանհուն չարութիւն իմն, ոչ է այլ ինչ,
եթէ ոչ այս, զի է անիրաւութիւն ընդ-
դէմ Աստուծոյ, և անարգութիւն անհուն մեծու-
թեան նորա: Եւ՛ յայսմանէ տեսանի. թէ
որքան սիրելի է Աստուծոյ գոլն, այնքան ատե-
լի է մեղքն, որ զնա վշտացուցանէ: Եւ՛
որպէս ոչ կարէ սիրել Աստուած այնքան, որ ոչ
սիրիցի առաւել քան զայն, այսպէս ոչ
կարէ երբէք այնքան ատեցեալ լինիլ
մեղքն, որ ոչ լինիցի միշտ արժանի ա-
ռաւել ատեցեալ գոլոյ: Եւ՛ անիրա-
ւութիւնս այս՝ ոչ է որով և իցէ կերպիւ,
այլ է միայն ճանապարհաւ բաղդատու-
թեան, որ մեծապէս ծանրացուցանէ զչա-
րութիւն իւր: Քանզի մինչ մարդ փորձի

'ի գոր

'ի գործել զմեղս․ պատկերակերպեամ,
թէ 'ի միոյ կողմանէ կայ անդ ա͞ծ հան-
դերձ իւր սրբազան օրինօքն, և ար-
դելու նմա զայն գործն՝ ասելով։ ղևտ․
19․ 15։ Անիրաւութի՛ մի՛ առնիցես։ Մի՛
գողանար․ մի՛ սուտ վկայեր․ մի՛ սպանաներ․
մի՛ շնար․ և այլն։ Եւ՛ խոստանայ նմա
զյաւիտենական վարձ իւր, եթէ ոչ հա
ւանիցի․ և սպառնայ ևս զմշտնջենա-
ւոր պատիժ, եթէ հաւանիցի, և գոր
ծիցէ։ և յայսպիսի պատահման ցուցա
նէ զնա դոլ գլխաւոր թշնամի իւր։
Բայց 'ի միւս կողմանէ կայ 'ի պատրաս
տի դևն, հանդերձ վատագոյն հեշտու
թեամբն 'ի ձեռին, և մատուցանէ նմա ա-
սելով․ ո՛ւմ փոյթ է վշտանալն ա͞յ։ Եթէ
համարեսցի զայս գործս չար, թո՛ղ հա
մարեսցի․ եթէ բարկասցի, թո՛ղ բար
կասցի։ ընկա՛լ․ և վայելեա՛ այժմ զայս
հեշտութիս, և յետոյ մտածեա՛ զհաշ
տութէ ընդ նմա։ Արդ եթէ մեղաւորն
հաւանիցի նմա․ զի՞նչ առնէ արդեօք,
եթէ ոչ դարձուցանելով զթիկունս իւր
առ ա͞ծ, և ասէ նմա 'ի ձեռն այսպիսի
գործոց։ Ես ոչ ունիմ բնաւ զփոյթ
ինչ զքէն․ յոչինչ համարիմ զարքայու-
թիւն քո․ ոչ երկնչիմ 'ի դժոխոց քոց․
ոչ զարհուրիմ յսպառնալեաց քոց․ և
կամիմ գնալ ըստ հաճութե իմում, և
հաճոյանալով սմին՝ կամիմ լցուցանել

զհեշտութիւնս իմ։ Ո՞վ է Տր, զի լուայց ձայնի նր։ Ելից. 5. 2։ Այսպէս ասէ արդարև ամ ոք, որ մեղանչէ. և թէրևս ոչ ասիցէ զայն բանիւ ոպ փարաւոն. սակայն ասէ զայն գործով։ և զայնպիսի անիրաւութիւն առնէ ընդդէմ այ, որոյ տանելոյն պիտոյանայ անհուն համբերութիւն։ Ահա տե՛ս ուրեմն զչափն չարութեան մահացու մեղաց. զի Ած մի անարգ արհամարհեցեալ լինի վս կարճէւ հեշտութեան իմիք՝ 'ի խոտելագոյն ստեղծուածոյ միոյ։ Տե՛ս թէ յորում կայանայ վշտացուցումն, որով մեղաւորն այնքան զանազան կերպիւ արհամարհէ զած. ըստ որում ճշմարտապս գրեալ է 'ի գիրս դանիէլի. 3. 29։ Անօրէնեցաք, և ապստամբեալ մեղաք յամենայնի։ Զի արհամարհէ զնա ոպ զօրէնսդիր, ոչ կամելով պահել զօրէնս նորա։ Արհամարհէ զնա ոպ զՏր, ոչ ընդունելով զենթարկիլն 'ի ներքոյ տէրութեան նր։ Արհամարհէ զնա ոպ ըզ վերջին վախճան, ոչինչ փոյթ ունելով զերանութենէն, որ 'ի նմանէ խոստացեալ եղև քաղցրութբ։ Արհամարհէ զնա ոպ զստեղծօղ, ընդդէմ դառնալով գոլոյն, զոր 'ի նմանէ ընկալեալ է. այս զզգացումն, զիմացումն, և զազատութիւն։ Արհամարհէ զնա ոպ զփրկիչ, յոչինչ համարելով զամենասուրբ արիւնն՝ որ հեղաւ 'ի նմանէ. նոյնգունակ և զմահն, որ սի

րով

բով կրեալ եղև 'ի նմանէ : Արհամար-
հէ զնա ոչ զդատաւոր , ցուցանելով
զինքն աներկիւղ լինիլ 'ի զարհուրելի
վճռոյ նորին , նաև 'ի խստութենէ , և 'ի
տանջանաց : Արհամարհէ զնա ոչ զբա
րեկամ , ոչինչ հոգալով երբեք զբարե
րարութենէ նորին , և խոտոն համարե-
լով զպատիւն շնորհաց նորա : Արհա
մարհէ զնա ոչ զհայր , 'ի բաց հրաժա
րելով 'ի ժառանգութենէ նր̃ , և ուրանա
լով զարժանապատուութիւն որդիութե
իւրոյ : Արհամարհէ զողորմութիւն նր̃ ,
զի վարի յուսով թողութե առ 'ի մեղան
չել առաւել սանձարձակօրէն : Արհա
մարհէ զբարութիւն նր̃ , զի ատիպէ զնա
հայիլ 'ի մեզս , զոր նա յոյժ առաւել
ատէ : Արհամարհէ զամենակարողու-
թիւն նր̃ , զի առնէ ծառայել զնա յայն-
պիսի գործս , զորս նա յոյժ արգելու :
Արհամարհէ զարդարութիւն նր̃ , զի մե
ղանչէ զկնի տեսանելոյ և գիտելոյ զայն
քան յայտնագոյն օրինակս , որք վս̃ մե-
ղաց պատժեցան 'ի նմանէ : Արհամար
հէ զնախախնամութիւն նր̃ , զի եղծէ և
թիւրէ զկարգն՝ որ է առ վախճանն , առ
որ ուղղէ նա զմեզ : Արհամարհէ զյա-
ւիտենականութիւն նորա . քանզի եթէ
գոլն ի̃յ , նաև մեծութիւն , փառքն , և
ա̃մ թագաւորութիւն իւր կարիցէր աւե
րել , խնկոյն աւերիւր 'ի մեղաց : Եւ՛ վեր

ջապէս արհամարհէ զայլ ամ ածային կատարելութիս : Անօրէնեցայ, և ասաւել մեղայ յամենայնի : զի զամ բարիս բնութն, և զամ պարգևս շնորհաց դարձուցանէ ընդդէմ Տն, զորս առեալ է նմա : Այնպէս, զի որքան են կատարելութիք որք փայլին 'ի յած, և որքան են մասնաւորք, ըհանուրք, ծածուկք, և յայտնի շնորհք, զորս 'ի գործ ածէ նա վն մդոյ, այնք են եղանակք, և կերպք չարութն, որք գտանին 'ի մեղս . ըստ անհունք :
Ո՛չ այսոքիկ ոչ են արդէն այնպիսի խոկմունք և նկատմունք, որք իցեն առանց հիման պարզադունի ճշմարտութեան : Այսու իմացմամբ խօսին ամ վարդապետք եկեղեցւոյ՝ մեկնելով զխոստութին անխրատութն, որ առնանի մյ մեղօք : Եւ՛ այն՝ որ առաւել առ այս իմացումն խօսի հոգին սբ յածաշունչ գիրս, կշռելով բանիւ՛ յաւիտենական ճշմարտութե զայս նշանաւոր արհամարհումն, անգոսնելով զնն յայտնագոյն կերպիւ՛, և մեծագոյն գործունէութբ . է գանկատումն այն, զոր տրտնջայ ած զանարգողաց իւրոց, բերանովն եսայեայ. 1.2: Որդիս ծնայ՝ և բարձրացուցի . և նոքա զիս անարգեցին : Եւ՛ յայլում տեղւոջ ցուցանէ, թէ ոչ կարէ տանիլ հպարտութն, ամբարտաւանութն, և յատկապէս անմտութն այնորիկ, որ կամի յանդգնա_

բարյառնել ընդդէմ ինքեան . Եսայ. 37.
28: Եւ ինչէն գիտեմ զհանգստութիւն քո ընդ-
դէմ իմ, եւ զբարկութիւն քո զոր զայրացար,
եւ հպարտութիւն քո ել առաջի իմ: Եւ 'ի
Թղթոջ Հռոմ. 2. 4. ասի . Թէ մեղա-
ւորն իսկապէս արհամարհէ զառաւել
սիրելի կատարելութիւնս, զորս ունի Ած:
Եթէ զմեծութիւն քաղցրութեան նր, եւ զներե-
լոյ եւ զերկայնմտութեան արհամարհեցես: Եւ
'ի գիրս սիրաքայ ասի . 49. 6: Արհամար-
հեցին զերկիւղն իմ: 'Ի մարգարէութեն Ե-
զեկիելի ասի . 5. 6: Զիրաւունս իմ մեր-
ժեցին . եւ յօրէնս իմ ոչ կամեցան գնալ: Եւ
երեմիայի՛ դանկատի Ած անարգեալ,
այպանեալ, եւ նշաւակեալ զոլ հանդոյն
սիրողի . 3. 20: Որպ անգոսնէ կին զհոմանի
իւր . այնպէս անգոսնեաց զիս տունն Իս-
րայէլի : Եւ՛ սբն պօղոս ասէ յաղագս
մեղաւորաց . Թէ ընդ ոտիւք արկանեն
զփրկիչն : Եբր. 10. 29: Զորդին Այ առ ոտն
եհար : Թէ ապականեն զամենասուրբ ար-
իւնն նր : Զարիւն նորոյ ուխտին խառնակ
համարեցան : Թէ արհամարհեն զշնորհս
նր : Զհոգին շնորհաց թշնամանեաց : Թէ
դառնան միւսանգամ 'ի չարչարել զնա :
Վերստին 'ի խաչ հանեն անձանց զորդին Այ.
եւ տարջեալ խայտառակել: Եբր. 6. 6:

Արդ ամ բանքս այսոքիկ ցուցանեն,
Թէ ո՛րքան վշտացուցանի Ած մահացու
մեղօք: Ուստի եթէ բարւոքապէս տրա-
մակշ-

մակշռեսցուք զբարձրագոյն ստացուա՛ծըն սրբուհւոյն կատարինէի ճենովա-ցւոյ, բաւականանայ ճշմարտել զայսոսիկ զամենեսեան. որ սովոր էր ասել: Եթէ իցէր 'ի միոյ կողմանէ ծով ինձ հրեղէն. և 'ի միւսոյ կողմանէ մահացու մեղք ինձ, ոչ ոք լինէր որ ճանաչելով զայս, ոչ արկցէր ինքնին զինքն 'ի լողալ յայնմիկ բոցում, առանց զանալոյ դառնալ յեզրն, առ 'ի ոչ մերձենալ երբէք առ այնպիսի զարհուրելի ցուցանքն: Այժմ իմասցես լաւապէս. թէ մ̃ն ո՞ր պատճառի մարդացաւ որդին ա̃յ, և կամեցաւ այնքան խոնարհեցուցանել ըզփառս իւր 'ի խորս նախատանաց, և չարչարանաց. փիլիպ. 2. 7: Զանձն ունայնացոյց. և այլն: Ա̃ծ զի անկարելի էր առանց արդեան իւրոյ, արժանապէս վճարումն լինել անիրաւութե̃, զոր առբերէ ա̃յ մի միայն մահացու մեղք: Ա՛ռ դու զմի մահացու մեղք, և դի՛ր զնա 'ի մի թաթն կշռոյն. բայց ոչ երկրաւոր կշռոյն, որ է սուտ, այլ երկնաւոր կշռոյն: Եւ 'ի միւս կողմանէ դի՛ր 'ի միւս թաթն զա̃մ բարեգործութիս, զորս արարին ս̃քն. զա̃մ աշխատանս, զարտասուս, զծոմապահութիս, զողորմութիս, զաղօթս. զա̃մ արիւնս մարտիրոսաց, և այնց մետասան բիւրոցն, և այլոց բազմաց, զորս թուէ եկեղեցի. և զա̃մ սէրս հրեշտակաց. զա̃մ արդիւնս թագուհւոյն իւրեանց

երա

երանուհւոյ կուսին ․ այս ամ՟ բարիքս ՚ի միասին, ոչ կշռէ այնքան, որքան կշռէ մի միայն մահացու մեղք գործեցեալ ՚ի մէնջ ։ Մանաւանդ, եթէ ա՟ծ ստեղծանիցէր ՚ի նորոյ զայնքան աշխարհս, որքան են աստեղք երկնից, և լցուցանէցէր զընաւն սրբովք ․ և նոքա ևս զայլ ինչ ոչ առնիցէին ՚ի մէջ հազարաւոր ամաց, եթէ ոչ լալ, և աղօթել միայն ․ այս ամ՟ ոչ բաւականանայր վճարումն լինիլ միոյ փոքրագունի մասին այնպիսի մեղաց ։ Ե՛ւ այսոքիկ ամ՟ բարեգործութիւք, և այլք անթի՛ւք առակցեալ ընդ այսոցիկ, ոչ կարէ ՚ի կշիռն ա՟ծային արդարութե՟ հաւասարապէս կշռիլ է՟ փոքրագոյն մահացու մեղաց միոյ, որ գործեցեալ լինի յաշխարհի ․ այլ միայ՟ միշտ յոյժ պակաս, որպէս թէ ՚ի մի թաթն կշռոյն դնիցի լեառն մի, և միւս թաթն դնիցի հատ մի աւազոյ ։ Զի առ ՚ի հաւասարապ՟ս կշռորդել զնա, հարկաւոր է խաչն քո, ձաղանքն, և բևեռքն նորա ։ Ե՛ւ առ ՚ի վճարել զայս մեծագոյն պարտըս, պիտոյ է արիւնն նորին ․ զի ամ՟ գանձք արարածոց պակասին առ այս վճարումն և բաւարարումն, և ոչ ևս կարեն ընկալնուլ վ՟ն մեր զայն կաթիլն ջրոյ, զոր յայնքան ժամանակաց հետէ խնդրէ մեծատունն ՚ի դժոխս, առանց ընկալնլոյ երբէք զայն ՚ի յաւիտեան ։

Զար

Զարհուրիս, և սասանիս թերևս լսե-
լով զայս։ բայց ես առաւել սասանիմ
և զարհուրիմ քան զքեզ. թէ ո՛րպէս
դատանիլ կարէ մարդ, որ համարձակիցի
մեղանչել առաջի լուսոյ հաստատագոյն
ճշմարտութեան այսորիկ։ Հաւատալով
ոչ քրիստոնեայ, և կենցաղավարելով
ոչ անհաւատ։ Պարտ է ուրեմն՝ կամ
զանունն, և կամ զվարս փոխել։

Այս է ստուեր իմն զարհուրելի չարու-
թեն, զոր ունի մեծս մեղքն ընդ ինքեան նկա-
րեալ. բայց յոյժ առաւել առակցին խա-
ւարի պարագայք նորին։ Ո՞վ է նա, որ ընդ
դէմ կայցէ արարչին իւրոյ (Եսայ. 45. 9։
Վա՜յ, որ ընդդէմ տայցէ արարչին իւր։) և
այնքան համարձակութբ յանդգնիցի ար-
համարհել, և անարգել զանհուն մեծու-
թիւն փառաց նո՛ր սակաւիկ ինչ անարգա-
գոյն կա՞ն, ընդ որում ասէ Եսայի անդ։
[illegible]։ Ոչ միայն
է այնպիսի մարդ, որ ունի զսկիզբն 'ի
տղմոյ, զանդեալ 'ի հողոյ, պարտի ևս
լուծանիլ 'ի հող, և է ոչ ոչինչ առաջի
նոյ. այլ մանաւանդ է մարդ մեծապէս
բարեբարեցեալ յնոյ, ստեղծեալ անհուն
կարողութբ, պահպանեալ անքաւ նա-
խախնամութբ, գնեալ 'ի նմանէ ծայրա-
գոյն սիրով, ծայրագոյն տառապակրու-
թբ, և ծայրագոյն ցաւով։ Եւ՞ա՝ որդէ
դրեալ յորդիութեն 'ի մկրտութեն, ներ-

մու

մուծեալ բազմիցս 'ի հաղորդակցութն
սրբազնութեց, սնուցեալ ամենասուրբ ա-
րեամբ իւրով, և դարմանեալ աղեօք իւ-
րովք: Գտանի՞ արդեօք այսպիսի մարդ
ոք, որ առնիցէ զմեղս իմն: Ո՜հ. և ե-
ղո՜ւկ. գտանի, գտանի, արդարև գտանի.
և թէ ո՛րպիսի մոլորութն իցէ այս, ոչ
կարէ իմանիլ: Եթէ առնիցէ զնա բար
բարոս, և հեթանոս ոմն, և այնպիսի
ոք, որ կեայ 'ի խաւարի անհաւատութե,
կարէ երբեմն ունիլ զերևոյթ առաս-
րանաց: սաղմ. 54. 13: Զի եթէ թշնամ-
ւոյն նախատեալ էր, համբերէի արդեօք:
Բայց եթէ առնիցէ զայն քրիստոնեայ
ոմն: Իսկ դու մարդ հաւասար իմ, առաջ-
նորդ իմ, և ծանօթ իմ. որ 'ի միասին ընդ իս
ուտէիր զքաղցր կերակուրս: Եթէ առնիցէ
զայն այնպիսի ոք, որ ունի զհաղորդակ
ցութն ընդ հոգւոյն այ իւրոյ. որ զին-
ուորի 'ի ներքոյ դրօշակի ՅՆ ՔՆ. որ է
ընտանի և բարեկամ իւր. և որ արդէն
բազմանգամ 'ի միում սեղանի ընթրեալ է
ընդ ՏՆ իւրում: Ո՜հ. այս ոչ կարէ տա
րեալ լինիլ: Ուստի մեծաւ իրաւամբ ա-
սէր սբն օգոստինոս. թէ մինչ մեղանչէ
անհաւատ ոք, արդիւնաւորի զդժոխս.
բայց մինչ մեղանչէ քրիստոնեայ ոմն, ոչ
արդիւնաւորի միայն զդժոխս, այլև ար
դիւնաւորի զի առնանիցի յատկապէս վն
նորա այլ իմն դժոխք: Եւ՛ա՝ եղիցի այն՝

ո՞վ

ոմն և էր հնոյն բաբելոնի եօթնապատիկ: Բորբոքեալ, եօթնապատիկ զարհուրելի, եօթնապատիկ դժնդակ դիւօք, ցաւօք, յուսահատութեամբ, և եօթնապատիկ առաւել այլովք սատանայական դաւճօք քան զդժոխքն ներկայիս:

Բայց այն քրիստոնեայն՝ որ առնէ ըզմեղս, թէ՛րևս առնէ զայն հասարակապէս վճ մեծի հարկաւորութեան ուրուք. իմ առ 'ի փրկել զկեանս, կամ վճ ստանալոյ զմեծագոյն համբաւ, և զթագաւորութին ինչ: Ոչ է այսպէս. այլ առնանի խմկապէս բազմիցս վճ ոչնչի. ոմ դանկատի ած բերանովն եզեկիելի. 13. 19: Անարգէին զիս առաջի ժողովրդեան իմոյ, վճ աթոյ միոյ գարւոյ, և կոտորոյ միոյ հացի: Քանզի այնպէս վշտացուցանի երբեմն ած վճ փոքր և սակաւ իրի միոյ, և վճ թշուառալի շահեցողութեան միոյ, որ ոչ վշտացուցանիւր վճ այնպիսւոյ մդ ոք: և այնպէս 'ի բաց ձգեալ լինի մերթ շնորհն իւր վճ դարշելի հեշտութեան միոյ, որ ոչ գնեցեալ լինէր սակաւ ինչ լումայիւք՝ եթէ պարտ իցէր գնել: Մինչև առ այս կէտ ժամանէ չարութիւն սրտի մերոյ, զի յանդգնի առոտն արկանել զպատիւ Տն, ապստամբիլ յած օրինաց նորա, անգոսնել զած բարերարութիւ նորա, և բառնալ որքան իցէ կարելի զպսակն 'ի գլխոյ նր: և զայս ոչ առնել

'ի հար

'ի հարկաւորութենէ, կամ վն բռնութեն, այլ վասն սոսկ ոչնչի միոյ . յօհ . 15 . 25 : Ատեցին զիս տարապարտուց : Արդարև արդիւնաւորին այսպիսի չափազանց անիրաւութիւնքս, զի դառնայցէ տեղալ 'ի վր մեղաւորաց հուրն սոդոմայ, և գոմորայ, կամ առժամայն բացցի երկիրն 'ի ներքոյ ոտից նց, առ 'ի կլանել զնս կենդանոյն :

Գոնեայ առնանիցի՞ւր այսպիսի արհամարհումս Տն յայնպիսի տեղւոջ, ուր նա ոչ տեսանիցէր : Բայց ո՛րպիսի տեղի կարէ գոլ այն՝ մինչ բովանդակէ նա զմ տեղիս, և միջարկութիւս : ուրեմն 'ի ներկայութեն, և առաջի աչաց նր մեղանչեմք մեք . և գրեթէ այսպիսի գործով ասեմք նմ : Թէպէտ դու իցես ներկայ, և տեսանես զընաւ խորհուրդս իմ . թէպէտ լսես զմ բանս իմ, և աչք քո այնքան մաքուրք են, որք ոչ կարեն թարց զզուելոյ հայիլ յանօրէնութիւս իմ . սակայն այսու ամիհ ես կամիմ գործել զայնս . զի եթէ տեսանես, և եթէ ան հաճոյանայ քեզ, ինձ ոչ է փոյթ ամենևին . բաւական է՝ զի ոչ տեսանիցեն և գիտիցեն մարդիկք, և յետոյ՝ եթէ տեսանես դու, այս ոչ առբերէ ինձ զցաւ իմն : Ահա այսքան համարձակի և յանդգնի առաջի նմ ամենակարողի, խոտելադոյն որդն իմն երկրի : Արդեօք որպի-

պիսի պարտաւոր է, որ ոչ զգուշանայ գործել զյանցանս առաջի դատաւորի իւրոյ: կամ ո՛րպիսի ապստամբ է, որ ոչ երկնչի յիրակելոյ զմատնութիւն 'ի ներկայութեան տն իւրոյ: Այն միայն է, որ գանգատի՝ թէ գտանի այնպիսի ժողովուրդ, որ գրգռէ զինքն 'ի բարկութիւն առաջի աչաց իւրոց. Եսայ. 65. 3: Ժողովուրդ որ գրգռէ զիս 'ի բարկութիւն առաջի երեսաց իմոց հանապազ:

Ո՛չ ոչ թարց բազմաց իրաւանց ասէ, հանապազ: Քանզի եթէ նկատիցեմք, թէ յորում ժամանակի գրգռի նա 'ի մեծագոյն բարկութիւն: Ասեմ. մինչ պատահմամբ զմեզ չարչարէ և տանջէ: բայց ոչ յայնժամ միայն, այլ հանապազ. զի մինչ կայ նաև բոլորովին 'ի դիտել ներգործապէս յայնս բնաւս, յորս առաւել լաւ համարիմք զծառայութիւն մեր. 'ի պարգևելն մեզ զայն ամ, զոր ունիմք. և 'ի պահելն զգոյն, որ է խնկապէս շնորհել մեզ զայն նոր 'ի նորոյ յամենայն կիտոջ: Յայնժամ ևս, մինչ պարգևէ մեզ զկերակուրս, և նախատեսանէ վասն մեր զհանդերձս. մինչ զերծուցանէ զմեզ 'ի բազմազան վնասակար որոգայթից, մանաւանդ 'ի յաւիտենականէ: Յայնժամ, յայնժամ, (ո՞վ է այն՝ որ ոչ հաւատայ ազատապէս) մինչ առնեմք նմա զմեծագոյն անիրաւութիւնս, յաղթելով այսու

բարբարոսական ապերախտութեան նաև
զգազանս, որք ոչ են սովորք խածատել
զգարմանօղս իւրեանց : Մանաւանդ
թէ, խստելի մարդ ոմն՝ ոչ երբէք ունի
զայնպիսի զօրութիւն յինքեան, զի կարի
ցէ այնքան զօրել, մինչ զի վշտացուցա
նիցէ զԱստուած : Զի՞նչ առնէ ուրեմն ապե
րախտն : Առնու զայն կարողութիւն յԱստուծոյ .
և այսպէս կարէ առնել զայն՝ ՚ի նմանէ
ընկալեալ կարողութեամբն . իւր ներքին, և
արտաքին զգայութիւնս, առողջութիւնս,
գեղեցկութիւնս, բարեկամութիւնս, և հարս
տութիւնս . և այսոքիւք իբր բազմազան
զինուք պատերազմի ընդ նմա զմշտնջե
նաւոր պատերազմն : Եւ՞ եթէ առնանի
ցիւր ստու՞երն այսոցիկ ամենայնից ընդդէմ
երկրաւոր թագաւորի միոյ . ա՛րդեօք որ
պիսի դարշելի եպերանօք խօսէին զայն
մանէ ապերախտութեան ամենայն պատմութիւնք :
Եւ՞ որ առնիցէր զայն, հմւրեցեալ լինիւր
նախատինք մարդկային ազգի, ցուցանք
անօրէնութեան, և այլանդակութիւն իմն
ապերախտութեան . ուստի ամաչէին ամենայն
մարդիկք ունիլ զհաւասարակ բնութիւն ընդ
նմա : Բայց աւա՛ղ, և եղո՞ւկ . զի հա
նապազ վատթարագոյն, և մախիզա
գոյն կերպիւ՞ վարեցեալ լինի ընդ Աստուծոյ, և
այսու ամենայնիւ՞ ոչ ոք է որ զգայցէ, և իմանայ
ցէ զայն : Բարեպէս ուրեմն ունէր մար
գարէն Դաւիթ զմեծագոյն իրաւունս,
ասե

ատելոյ. սաղմ. 118. 158: Հայէի յանա-
գօրոյնս, և մաշէի: Վասն որոյ որքան և
իցէ փոքր և սակաւ, մինչ իմանայք դուք
զայս ճշմարտութ͞իս, ոչ միայն ոչ կամի
ցիք մեղանչել այլ ևս, այլ նաև կամե-
ցարո՛ւք մոռմոքիլ ցաւով, մինչ տեսա-
նէք զոք մեղանչել:

Ի միոյ այսպիսւոյ խողովակէ ա͞մից չա
րեաց, ա՛րդեօք որպիսի ներգործութ͞իք
կարեն անցանել 'ի հոգւոջ, եթէ ոչ յո
ռեգոյնք: Ե՛ւ այսոքիկ առածին առ
եօթն, և են իբր եօթն գլուխք ժատա
բեր վիշապիս այսորիկ: Արդ առաջին
ներգործութ͞ին՝ որ պատճառէ մեղքն,
է կորուստն ա͞ծային շնորհաց. որ է այն
քան պատուական մարգարիտ, մինչ զի
ծախեաց Տ͞ր զա͞մ արիւնն իւր առ 'ի գը
նել զնա վ͞ս մեր: Զայս անբաղդատե
լի գանձս 'ի բաց ընկենու մեղաւորն՝
առաւել մեծագոյն յիմարութ͞բ քան
զայն, զոր գործէ երախայ ոմն փոխե-
լով զպատուական անդամանդն ընդ ըն
կուզի միոյ: Ե՛ւ թարց այսորիկ շնոր-
հաց այնքան տգեղագոյն ա͞յ հոգի
ոմն, որ ոչ է կարելի տեսանել զնա և
մնալ կենդանի: Սրբուհի կատարինէ
սենացին, ետես երբեմն զդև մի. ո͞մ
պատմէ ինքն 'ի խօսակցութ͞ե իւրում. բայց
այնքան դարշելի և տգեղ ետես զնա,
մինչ զի առ 'ի ոչ դառնալ և տեսանել

զնա

զնա միւսանգամ, ընտրէր քայլել բոկ
ոտիւք 'ի վր̃ բորբոքեալ կայծականց ,
և հրացեալ պղնձոց՝ մինչև ցօրն դա-
տաստանի ։ Սակայն ասաց նմա Տէր ,
թէ ոչ էր տեսեալ նա զտգեղութիւնն
դիմ̃ին ոգ̃ էր ա̃ ինքեան , այլ տեսեալ
էր զպատկեր իմ̃ նորին ։ Արդ այսպէ
սի տգեղութիւ , և այլանդակութիւ ծը
նաւ 'ի նմա 'ի մի միայնոյ մահացու մե-
ղաց ․ քանզի այս միայն դարձոյց զնա
'ի մի դժոխային կոճ , որ էր յոյժ լու-
սաւոր ասող իմ̃ 'ի հաստատութն̃ երկ
նից ։ Մտածեա՛ ուրեմն դու այժմ ․ թէ
յո՛րպիսի կացութե̃ գտանի հոգի մի , որ
ոչ մի միայն մեղօք , այլ ոչ գիտեմ որ-
քան բազմօք թշնամի է ա̃յ ։ Ուստի ո՛վ
կարէ երբէք ճանաչել , թէ ո՛րքան զզուե
լի և գարշելի իցէ նա առաջի աչաց այն
ծայրագոյն մաքրութեն̃ , նաև ո՛րքան
նեխեալք և հոտեալք իցեն վէրք նր̃ ։
Հաստատէ նոյն վերոյիշեալ սրբուհին ․
թէ կալով ինքն 'ի սենեայ , զգայր զզուե
լի գարշահոտութին̃ մեղսագործաց ո-
մանց՝ որք բնակէին 'ի Հռոմ, և ոչ կա-
րէր տանիլ զնա ։ Արդ՝ եթէ այսքան
զզուելի էր այն գարշահոտութին̃ ․ ու-
րեմն մտածեա՛ դու 'ի քեզ , թէ զի՛նչ
պարտին լինիլ առաջի ա̃յ այնքան բազ
մութիւն մեղաւորաց նեխեալք և հոտե
ալք 'ի ջարութիւ իւրեանց ։ Ճշմարիտ

է ,

է, թէ ոչինչ օձ, նաև ոչինչ վիշապ կարէ
երբէք այնքան ատելի և զարշելի գտա
նիլ առաջի ինքեանց, ոպ̃ են ինքեանք
առաջի Տն̃ իւրեանց: Բայց այսու ամ̃ի
տակաւին պանծան այնքան՝ միով շքեղու
թբ̃ զգեստուց, միով վայելչութբ̃ վար
ուց, և միով գեղեցկութբ̃ դիմաց: Ո՜հ.
եթէ տեսանիցէին զայն հոտեալ և նե
խեալ հոգին, զոր կրեն թաղեալ 'ի
մարմինս իւրեանց. արդեօք ոպ̃ զար_
հուրէին և զզուէին ինքեանք յինքեանց:
Յաղագս որոյ մեծաւ իրաւամբ նմանե
ցոյց զնս̃ Տր̃ այնց գերեզմանց, որք ար
տաքուստ սպիտակք, և գեղեցկատե
սիլք երևին, 'ի մէջ որոց ոչ գոյ այլ
ինչ, է թէ ոչ փտտութի. ըստ որում
գրի 'ի Մատթ. 23. 27:

Երկդ̃ ներգործութին՝ որ պատճառէ
մահացու մեղքն, է զրկելն զհոգին յոր
դէգրութենէն այ̃: Քանզի Հոգին սբ̃ այն
պէս բնակի յարդար հոգւոջ, ոպ̃ թէ
ոչ իցէր յիւրաքանչիւր տեղւոջ ոպ̃ ան
ջատ, և լինի 'ի նմա միով յատկական
ներկայութբ̃: Ուրեմն այսպէս միաւո
րեալ նա ընդ հոգւոյ շաղկապիւ շնոր_
հաց, բարձրացուցանէ զնա առ արժա
նապատուութին որդեգրութեան այ̃,
առնելով զնա կերպիւ ինչ հաղորդա_
կից իւրոյ ինքեան: Եւ այսու այնքան
բարձրացուցանէ 'ի վր̃ խարսխաց սահ
է մա

մանայն ընութեն զայն գործան՝ զորնա
քա առնեն , մինչ զի փոքրագոյն բա_
րեգործութիւն մարդոյ ումեմն, որ ոչ
իցէ 'ի մահացու մեղս , այնքան արժէ ,
որքան արժէ արքայութիւն բոլոր : Արդ-
այսպիսի դերազանցական զարդուս Ած_
ային հոգւոյն , կորուսանի մեղօք . և այն
անձն այն՝ որ էր որդի այ , առժամայն
լինի որդի սա՟նյի , ո՟պ ասէ փրկիչն . յոհ.
Ը. 44: Դուք 'ի հօրէ սատանյէ էք : Զի նմանե
ցուցանէ աստ զմեղաւորս սա՟նյի՝ վ՟ն յան
ցանաց , ո՟պ նմանի որդի ումն հօր իւրոյ
'ի ձեռն բնութեն :

Ու այն՝ որ ոչ է որդի , ոչ պատկանի
նմա ժառանգութիւն . և այսպէս՝ Եր՟րդ-
վատթարագոյն ներգործութիւն մեղաց
առնէ , զի մի՛ պատկանիցի մեզ այլ և ս
արքայութիւն , որ է ամենագեղեցիկ ժա
ռանգութի պատրաստեալ մեզ մեր յերկ
նաւոր հօրէ : Ո՛վ ճառել կարէ արդեօք ,
թէ ո՛րքան արժէ լինելն ժառանգ երկ
րաւոր թագաւորութեն միոյ մեծի , և
ո՛րքան իցէ նախանձելի : Անդրանիկ որ
դին թարց բաղդատութեն իմիք առա_
ւել վարկեցեալ լինի քան զամենեսեան ,
զի նա է ժառանգ թագաւորութեն : Եւ
ոչ ոք գտանի այնքան խելագար , որ ո՟պ
այլ ումն եսաւ վաճառիցէ եղբարց իւ_
րոց զայնպիսի անդրանկութիւն վ՟ն սա_
կաւ ոսպաթանի միոյ : Բաղդատեցէ՛ք

ուրեմն այժմ զերկիրն ընդ երկնից. և
այսու լաւապէս տեսանէք, թէ որպէս
անբաղդատելի իցէ մեծագոյն խելագա-
րութիւն, և յիմարութիւն ամ մեղաւո-
րաց, և չարագործաց:

Զո՞րդ ներգործութիւն՝ որ պատճառէ
մեղքն, է զրկելն զմարդն 'ի բնաւից ար-
դեանց, զոր ստացեալ է 'ի բնաւ ան-
ցեալ ժամանակս իւր: Քանզի եթէ այր
ոք շարունակաբար յարամնացեալ իցէ
'ի յապաշխարութեան զամս հարիւր՝ ոչ
աքն ռայիմուլոսս: եթէ կրեալ իցէ 'ի
պարանոցի իւրում զերկաթեղէն շղթայ
մի զամս քսան՝ որպէս Ասեպիոս: եթէ
բնակեալ իցէ 'ի մէջ գերեզմանի միում
զամս չորեքտասան՝ ոչ յակօբ ապաշխա
րող: եթէ կացեալ իցէ 'ի վերա սեան
միոյ զամս քառասուն՝ ոչ սիմէօն սիւ-
նակեաց: եթէ դարձուցեալ իցէ 'ի հա
ւատս զբազմաթիւ ժողովուրդս առա-
ւել քան զառաքեալս: եթէ ընկալեալ
իցէ զշնորհս յայտնութեան առաւել քան
զմարգարէս: եթէ հեղեալ իցէ զառա
ւել արիւն քան զամ մարտիրոսս: Ե՞
ւկնի ամից այսոցիկ, եթէ գործիցէ զմի
միայն մեղս մահացու, այն գործեցեալ
մեղն՝ այնպէս եղծէ և աւերէ զայսո-
սին զամենեսեան, մինչ զի մեռանելով
'ի նմա, ոչ օգնեն նմա այնք բարեգործու-
թիւքն, ոչ թէ ոչ իցեն գործեցեալք:

Ե-

եզեկ. 18. 24: Ամենայն արդարութիւնք նորա՝
որոց արար՝ մի՛ յիշեսցին : Այն գիւղա_
կանն , որ 'ի ձեռն աշխատականաց քրտանց
իւրոց արարեալ է լնանիլ զայգի իւր զա
նազան պտղովք . և յետոյ՝ եթէ 'ի մերձ
աշնան տեսանիցէ զնա առ ժամայն ա_
պականիլ 'ի կարկտէ միոյ : Եւ՞ այն վա_
ճառականն՝ որ աշխատեալ է ածել զնաւն
իւր լի ոսկւով առ դիտեալ սահմանն ,
բայց յետոյ 'ի մտանելն առ նաւահան
գիստն՝ եթէ տեսանիցէ իսկոյն ընկղմիլ
զնա յալէկոծութենէ միոյ : այսոքիկ ասա
ցեալ անձինքս , սակաւ բաղդատումն
առնեն արտասուօք իւրեանց ընդ այն
կորստեան , զոր առնէ հոգին մահացու
մեղօք միով : Եւ՞ այս յոյժ ճշմարիտ է .
զի բարեկամքն յոբայ զարհուրեալք վս͞
յոյժ փոքրագունի փոփոխման բախտի
միոյ նստան շուրջ զնովաւ յարակայա
բար զեօթն տիւ , և զեօթն գիշեր ,
թարց կարելոյ հնարեալ զբան ինչ առ'ի
խօսել ընդ նմա :

Հինգերորդ ներգործութիւն է՝ զրկել զմարդն 'ի յատկական նախախնամութենէն
նոյ : Վս͞ զի ոչ երբէք կարէ գտանիլ
մայր ոք , որ այնքան սիրալրականաբար
խնամարկիցէ զփոքրագոյն որդի իւր .
որքան խնամարկէ ա͞ծ զհոգի ոմն՝ որ է
առանց մեղաց . ը͞ս որում արդէն ասա_
ցեալ է նոյն ինքն բերանովն եսայեայ.

66. 13: Որպ՝ մայր՝ որ զմանուկ իւր գգուե_
ցէ, այնպէս մխիթարեցից զձեզ: Օգնէ նը_
մա, պաշտպանէ և կառավարէ զնա, և
կրէ զնա 'ի բազկի իւրում: 'Ի վերայ ուսե_
նաց բարձեալ բերիցեն: որպէս ասէ անդ_
եսայի: Յարաժամ առաջէ զնորադոյն
ներշնչմունս 'ի միտս նորա, լուսաւորէ
զմիտն, բորբոքէ զկամս, և հաղորդէ
նմա զզերազանց կարողութիւնս, զի դիւ_
րապէս գործիցէ զփրկութիւն իւր: Եւ
հակադարձապէս, յայնժամ՝ որ մեղան_
չէ, կորուսանի այս ամ, եթէ ոչ բո_
լորովին (որովհետև Տէր միշտ թողու
զայնս օգնութիւնս, որք են բաւականք
առ փրկութիւն) գոնեայ ըստ մեծի մա_
սին: Եւ զի թէպէտ այնքան առատա_
պէս ծագէ նա զայս 'ի վր բարեաց, և
չարեաց՝ հանդոյն արեդական, մինչ զի
ամ ոք կարէ ընթանալ բաւականապէս
(եթէ կամիցի) նոյն լուսովն, և զօրա_
նալ ջերմութը նորին: Սակայն ոչ հա_
ւասարապէս հեղու և տարածէ 'ի վր
ամից զառաւել բարերարական հեղ_
մունս շնորհաց: և այսպէս՝ առաւել
դժուարին լինի մարդոյն ժամանել առ
փրկութիւն: Քանզի զօրանայ սորին
մասն, և տկարանայ վերնադոյն մասն,
և դիւրապէս անկելով ողորմելին յամուլ
աւուր 'ի փորձութիւնս, այնպէս դնայ յե_
տոյ անկանելով 'ի մեղաց 'ի մեղս, մինչ
չև

չև երկարագոյն շարունակութեամբ մեղաց՝ որպէս դետ իմն զանազան շրջանակութեամբ, վերջապէս հասանի առ անդունդն կոր
ըստեան:

Վեցերորդ ներգործութիւն է՝ պարտաւորել յաւիտենական դատապարտութեան դժոխոց, որ է յատկագոյն վարձ մեղաց: Քանզի մինչ գործեցեալ լինի մեղքն, խնկոյն ջնջի անունն մեղաւորին 'ի գրոյն կենաց, և հատանիլով ընդդէմ նորա վճիռն, պատրաստի նմա անդընդային բնակարան 'ի գեհենում: Արդ ձեւակերպեալ, թէ մեղաւորն է որպէս դատապարտեալ ոք, որ 'ի բաց ձգեալ լինի մինչև դայ ժամն հատանելոյ զվճիռ սպանման նորա: Արդարև թէպէտ 'ի բաց ձգեալ լինի նա, զի վարիցի ող ազատութեան կամաց իւրոց. բայց այս ազատութիւն շուտով և փութապէս եղերի: Վասն զի 'ի միոյ ազատագոյն բանտէ անցանէ առ այլ իմն անձկագոյն բանտ, որ է բանտ հրոյ, խաւարութեան, և կատաղման. ուր թէպէտ ոչ մեռանի մահուամբ, սակայն միշտ ցանկայ մեռանիլ 'ի մէջ յաւիտենական տանջանաց:

Եօթներորդ ներգործութիւն մեղաց է այս. զի ոչ միայն առնէ զմեզ պարտաւոր դժոխոց, այլ նաև ներգործապէս քարշէ զմեզ առ այն անդնդային տարտարոսն, եթէ ոչ եղծանիցի մեղքն 'ի

ձեռն ապաշխարութեան նախ քան զմեռանիլն մեր: Զեւակերպեալ ուրեմն դու. թէ մեղքն է անչափ ծանրութիւն իմն բեռնաւորեալ 'ի վ(եր)ա ողորմելի հոգւոյ այնորիկ, որ գործէ զնա, և յայտնանէ բեռնաւորութեանէ այնքան ծանրանայ նա, մինչ զի եթէ Տէրն 'ի գութ շարժեալ ոչ բառնայցէ զնա 'ի թիկանց նո(րա), խակոյն 'ի մեռանելն գահավիժի նա 'ի տեղի տանջանաց, ուր 'ի յաւիտեան մխրճեալ ծանրութեան իւրոյ: Արդ ահա այսորիկ են յատկագոյն ներգործութիւնք ծամ մահացու մեղաց. բայց մեղաւորքն՝ որք գործեն զայնս, են նմանք այց խաղացողաց, որք խաղան զնարդ, և զթուղթ՝ մուրհակաւ փոխառութեան. և մինչ ոչ տեսանեն ներկայապէս զայն՝ զոր կորուսանեն, վ(ասն) այնորիկ ուրախութ(եամ)բ խաղան: Բայց տեսցեն զայն յետոյ միանգամայն, և ասասցեն հանդոյն թշուառական թագաւորին այն: Կորուսաք զամ(ենայ)ն ինչ:

Մերանմայ այժմ ինձ վերջապէս, զի յորդորեցից զձեզ տալ զանկնարկութի իմն առ պատիժս մեղաց, զի 'ի նոցունց կարիցէք ճանաչել զզարհուրելի, և զայլանդակ չարութիւն նորին: Եւ են երկու սեռք չարութեան. մինն կոչի չար մեղաց, և միւսն չար պատժոյ. բայց 'ի մէջ մեղաց, և պատժոյ՝ է այն տարբերութիւն, որ գտանի 'ի մէջ ստուերի, և հա

տասս մարմնոյ խմբք : քանզի մեղքն է ճըշ-
մարտ չար, և պատիժն է միայն որպէս
ստուեր այսօրինակ չարի : Արդ՝ զի ոչ
յերկարութեամբ ստուերի կարէ ճանաչել
բարձրութիւն աշտարակի խմբք, որ պատ-
ճառէ զայն ստուերն : ( և այն յատկա-
պէս 'ի միջօրէի, մինչ ուղղապէս նկա-
տեցեալ լինի յարեգակնէ, որոյ վս և
զփոքրագոյն ստուերս տարածէ քան զոր
է : ) Այսպէս՝ և 'ի պատժոյ՝ որք տրե-
ալք եղեն վս մեղաց, կարէ չափել մե-
ծութիւն չարութեան, և անիրաւութեան ի-
րոյ . Թէև Ցին հանապազ յոյժ պակա-
սագոյն պատժէ զնա՝ քան զոր արժա-
նաւորի ինքն : Ուստի առ 'ի առաւել
յատկացուցանել, և անձկացուցանել
զայս լայնագոյն նիւթս, մտածեսցուք
զայնս պատիժս, որք տրեալք եղեն
յածայնոյ արդարութենէ նախ հրեշտա-
կին, և յետոյ մարդոյն . և հետևապէս
նկատեսցուք զայն, զոր համառօտապէս
կրեաց Յս Քս, առ 'ի վճարել և հատու-
ցանել սոյն արդարութեան :

Բոդ՝ ո՞վ կարէ իմանալ երբէք, թէ ո՞ր
քան անչափ իցէ ատելութիւն այն, զոր
ունի Ած առ մեղս, որովհետև վս մի
միայնոյ մեղաց դահավիժեաց 'ի դժոխս
զանթուելի իշխանս երկնից, որք էին
պարզ ոգիք ըստ բնութեան, անմահք ըստ
գոլոյ, ծայրագոյնք ըստ ուշիմութեան,

սրանկատք ըստ դիտութե̃ն, և կարողա
գոյնք 'ի վեր քան զա̃մ ստորայսն ստեղ
ծուածս. այնքան՝ մինչ զի երկրաւոր
թագաւորք ոչ են արժանիք լինիլ ծա-
ռայք, կամ դերիք միոյն 'ի նոցանէ:
Եւ այսու ամի՞ դառնամ 'ի յասել. թէ
վա̃ մի միայնոյ բացորոշեալ մեղաց խոր
հրդոյ, ո̃չ թշնամիք դատապարտեցե-
ալք եղեն 'ի հուրն յաւիտենական: Վ̃
զի ոչ նկատեցեալ եղև 'ի նմ̃ աղնուու-
թին, և օրհնաբանութին նոցին, զոր
տալոց էին ա̃յ՝ թէ մնացեալք էցէին հը
րեշտակք. ոչ չարիքն, զորս առնելոց
էին եկեղեցւոյ՝ ո̃չ ապստամբք. ոչ մըշ-
տնջենաւոր հայհոյութիքն և պատերազ
մունքն, զորս տալոց էին ընդդէմ ա̃ծայ
նոյ փառացն. և ոչ ևս մոլորեցուցա-
նելն և թիւրելն մարդկայնոյ ազգի:
Արդ խօսին մեզ պատմաբանք զայնմա-
նէ ճակատամարտ պատերազմէ մեծէ,
յորում պատերազմելով՝ մեռան հինգ
թագազարդ թագաւորք յափրիկէ. և
'ի մէջ այսոցիկ սեբաստինոս թագա-
ւորն փոռթօկալու: Եւ 'ի մերում ժա
մանակի հազի՞ հաւատացեալք լինին
այնք, որք երբեմն տեսանեցան: քան
զի տեսանեցաւ յերկրին ընկլուզաց հա
տանիլ գլուխն գերագանց թագաւորի
միոյ՝ 'ի վ̃ր տանջանարանի խմիք, ձեռ-
ամբ հրապարակական դահճաց. ուստի
հա

համարեալք լինիցին, թէ արդէն ժամանեալ իցէ եզրն մարդկայնոյ փոփոխման ։ Բայց ոչ է մեզ պարտ յոյժ զարմանալ վասն մահուան սակաւ անձանց թէեւ իցեն արքայազունք ․ եւ ոչ զարմանալ վն անկման այնքան անթուելի հրեշտակաց, որոց իւրաքանչիւրն առաւել կարողագոյն եւ իմաստնագոյն է քն բնութն իւրում, քան զամ մարդիկս 'ի միասին ։ Մի՞ թէ ոչ իցէ չարութիւնն միոյ մահացու մեղաց, որ ներգործապէս արար զայսպիսի խստագոյն անխրաւութիւն ։ Ով ամենամեծ թագաւոր ամ ազգաց եւ ազանց ․ ո՞վ արդեօք ապահով լինիցին մեղաւորք, 'ի մի միայն կիտող գտանիլ թշնամի քո ։

Երկդ պատիժն մարդոյն է ․ ոչ միայն առաջին մարդոյն, որ է ադամ (որ զարդարեալ էր սկզբնական արդարութբ, անմեռանելութբ, որ կորոյս զբնաւ բարիս զայսոսիկ միով անհնազանդութբ թէ վն մեր ամեց, եւ էած առ աշխարհ զմահ, զաղքատութիւն, զհիւանդութիւն, զպատերազմ, զժանտամահ, եւ զցաւ, որոց բնաւքն են պատիժք մեղաց իւրոց) Այլ եւ վն այնք բազմաց, որք յառաջացեալք 'ի նմանէ՝ հետեւեցան մեղաց նր, բայց ոչ ապաշխարութեն ․ որք եւ այրին յայժմ, եւ տակաւին այրիլոց են մշտնջենաւորապէս 'ի գեհեանն հրոյ, որ

թափանցի ՚ի հոգիս, ՚ի մարմինս, յան-
դամս, յաղիս, ՚ի սիրտս, յոսկերս, և ՚ի
ծուծս նց: Քանզի այնպէս մնալոց են
անդ մշտապէս. ոչ միայն հրացեալ եր-
կաթ իմն ՚ի հնոցի միում, Թարց կարե-
լոյ զանազանել զդատապարտեալն ՚ի
հրոյ, և զհուրն ՚ի դատապարտելոյ: Ոչ
երբէք գայցէ նց օրն այն, յորում ցամա-
քեցուսցեն զարտասուս իւրեանց, ոչ
երբէք ունելոց են զեզերումն տանջանաց
նոցա, և ոչ բնաւ ունելոց են զվաստա-
կումն տանջանօղքն: և ոծ ոչ ունելոց է
զունկնդրութի առ ՚ի լսել զաղաղակն
դանկատանց նց, և ոչ երբէք ևս զգթու-
թի առ ՚ի ցաւակցել նց: Արդարև նոքա
լինելին այն ժողովուրդքն, զորոց խօսի մար-
գարէն մաղաքիա. 1. 4: Ժողովուրդ, ընդ
որում փայէ պատերազմ Տէր մինչև յյաւի-
տեան: Կան ՚ի դառնադոյն պատիժս, և
միշտ կալոց են անդ ՚ի տառապակրու-
թի ինքեանց: Եւ՛ այս ոչ վն պակասու-
թե ողորմութեն այ, այլ վն վերստու-
ստութե չարութեն, որ է ՚ի մահացու-
մեղս: Արդ զի՛նչ թուի քեզ այս ո՛վ
ընթերցասէր: Մի միայն կաթիլն ջրոյ
որ անկանի բազմիցս ՚ի վր վիմի միոյ,
փորէ և ծակէ զնոյն վէմն: Զի՛նչ ե-
ղիցի ուրեմն, մինչ անծայրին արդարու-
թին անձրև է ՚ի վր դատապարտեալ հոգ-
ւոյ միոյ զհեղեղ իմն ծծմբոյ, բոցոյ,

նետից ; և նմից չարեաց՝ անզրաւ յաւե
տենիւ : Այլ սակայն , այն՝ որ յաղաթա
հարէ զնմ զարմացումն է այս , զի այսու
նմ խստութբ տակաւին մեղքն ոչ պատ
ժեցեալ լինի համարժանութբ , այլ գը
թութբ . և կայն մշտապէս յոյնմն հը
րում առ՛ի տանջիլ թարց մեռանելոյ եր
բէք , է թեթև պատիժ քան զայն , զոր
արդիւնաւորի մեղք իմն , և կամ մեղա
ւոր ոք : Եւ՞ այս այնպէս , մինչ զի նմ
դատապարտեալ կարէ ասել ճշմարտա
պէս զայն բանն , որ ընթեռնանի յօբայ.
33 . 27 : Ոչ արժանի՝ ըստ որոց մեղայն՝ պատ
ժեաց զիս Տէր : Ուստի ես կամէի , թէ
այս սաստկութիս տանջանաց միշտ ի
ցէր առաջի աչաց նմից յիմարաց այնո
ցիկ , որք յոչինչ համարին զմեղս և զա
նօրէնութիս , որոյ վնո ոպ զջուր ըմպեն
զթոյնն խուրեանց :

Բայց ոչինչ այլ իր այնքան յայտնի ցու
ցանէ զարհուրելի գոլն մեղաց , որքան
ցուցանէ պատիժն , զոր յանձն էառ
փրկիչն մր Յս Քս առ՛ի եղծել զնա .
Յայսմանէ դեղոյ ( առէ ս՛րն բեռնար
դոս ) հասաքեմ ես , թէ որքան մեծ
էցէ չարն հարուածոց , և վիրաց իմոց :
Եւ՞ ի մեծադոյն ապացուցմանէ նծայլն
արդարութն ընդդէմ մեղաց , կարէ ևս
յայտնի լինիլ լաւապէս : Քանզի վն մի
միայն թեթև վիրաց մարմնոյ փրկչին ,

վ՟ն մի միայն հարկանման ձայնանացն
ոչ էր կարելի, թէ ոչ կործանիցէր ա՟ծ
զընդհանուր աշխարհն, և դահավիժի
ցէր զմարդիկ, զհրեշտակս, և զհրեշ-
տակապետս 'ի յաւիտենական հուրն,
թէև իցէին յոյժ ազնուականագոյնք:
Այս զի՛նչ պատիժ առնելպարտէր ա՟մ
ստեղծուածոց վ՟ն փոքրագոյն պատժոյ
ստեղծողին, անմեղագունին, սրբագու-
նին, և միածնի որդւոյն: Բայց սակայն
հայրն յաւիտենական, ոչ միայն ոչ բա-
ւականացաւ, զի այս որդիս կրիցէր ըղ-
թեթև անձկութի՟ ինչ, այլ նաև բռ-
նաւորեաց զնա նախատանօք, և նշաւա-
կութ՟ի. և կամեցաւ, զի 'ի մէջ ա՟մից
մ՟դկան լինիցէր՝ Այր մ՟ ցաւոց: Դի՛ր ա-
ռաջի աչաց քոց ուրեմն զՅ՟ն վ՟ն քո չարչա-
րեալ, և խաչեալ՝ առ'ի հայիլ 'ի նա: Ե՞ս
տե՛ս, զի աչքն հարկանեցան 'ի բռանց.
դէմքն ուռուցան յապտակաց. քիմքն պա-
պակեցան 'ի ծարաւոյ. շրթունքն դառ-
նացան 'ի լեղւոյ: Գագաթն ծակոտե-
ցաւ 'ի պրագոյն փշոց. ձեռքն, և ոտքն
պատառեցան 'ի սրասայր բևեռաց.
խստագոյն կապանօք կապեցան երա-
կունքն, և բազուկքն: Պարանոցն քեր
թեցաւ յայնց շղթայից, որովք քար-
շիւր զերեսօք երկրի ա՟պ խոտելի անա-
սուն. ուսքն ակարացան 'ի ներքոյ ծան-
րագունի խաչին. ջիլքն քարշեցան 'ի

սևեռ

բեւեռմանէ բեւեռաց: Վիրալիցք եղեն թիկունքն, թիկնամէջքն, կուրծքն, սրունքն, և որովայնն. և ամ մարմինն անդրակերպեալ եղև բոլորովին 'ի մի հարուած: Եսայ. 53. 2: *Տեսաք զնա՝ և ոչ գոյր նմ տեսիլ:* Եւ՛ այսպիսի պատժալի ապանումն, զարհուրելի և անտանելի լինէր յիւրաքանչիւր մարդոյ թէև որքան իցէր վայրենի, և բիրտ: Մտածեա՛ ուրեմն. ա՛րդեօք զի՛նչ պարտէր լինիլ նոյնն 'ի յանձն այնպիսւոյ ումեմն, որ իցէր փափկագոյն կազմողութե, և քնքշագոյն խառնուա՛ծով: ուստի հաւաստի է, թէ առանց յայտնագունի սքանչելեաց, ոչ կարէր նա այնքան մնալ կենդանի: Քանզի ուր առ այլ ամ մարտիրոսս թէպէտ արար սոյն Տէրս զսքանչելիս, թեթևացուցանելով զցաւս նոցա. բայց առ ինքն արար մնալ զնոյնն երկարապէս: Կամեցաւ կախիլ 'ի խաչին յերից կարծրագունից բևեռաց; մնալով կենդանի առաւել ժամս 'ի տանջանարանի, որ 'ի հնագունից ասացաւ ծայրագոյն: Եւ՛ առա վերջապէս աւանդելով զհոգին, ոչ միայն ոչ ցաւակցեցեալ եղև, այլ և այպանեցաւ, հայհոյեցաւ, և զկնի մահուա՛ն նախատեցաւ ևս յանկենդան մարմինն իւր: Եւ՛ զայսոսիկ բնաւ տեսանիցես արտաքսապէս միայն 'ի Տէրն, մինչ խորհիցես

ևս

և մտածիցես զնմանէ: Արդ զի՞նչ լի_
նիցի յետոյ. եթէ թափանցիցես յայն_
քան պատառուածոց մարմնոյ նորա 'ի
ներքս, և տեսանիցես զայն, զոր կրեաց
նա 'ի սիրոն առանց բաղդատութեան
իմիք. սաստկապէս տրտմելով և տագ_
նապելով վս՟ մեղաց, և վս՟ պատժոց
մերոց. և վս՟ այնքան անիրաւութե՟ց
արարեալ ընդդէմ ա՟ծայնոյ հանդիսա_
վեհութե՟. և վս՟ կործանման այնքա_
նեաց բազմաց, որք վս՟ մեղաց իւրեանց
պարտէին յետոյ կորնչիլ, որովհետև
այնքան տարաւ և համբերեաց զի փր_
կութե՟ հասանիցէին: Այս եղև յոյժ
չափազանց չարչարանք իմն, ոչ արդէն
յայտնեցեալ է սրբուհւոյն պիրկիտի_
թայ. թէ ոչ երբէք գիտացեալ լինի 'ի
մարդկանէ, ա՛րդեօք որքան համբերեալ
և տարեալ իցէ Ք՟ս վս՟ ն՟ց, եթէ ոչ յա
ւուրն դատաստանի, յորում 'ի պատկա
ռուսն դատապարտելոց՝ առնէ կատա_
րելապէս տեսանել ն՟ց: Արդ զի՞նչ ա_
սես դու այժմ վս՟ չարութե՟ մեղաց.
ա՞րդեօք թուի քեզ թէ ոչ իցէ այնքան
մեծագոյն չար, որովհետև առ 'ի եղ_
ծել և աւերել զնա՝ ա՟ծ ետ զկեանս
իւր, ընկղմելով 'ի մէջ ծովու միոյ նա_
խատանաց, կատականաց, և հոգէվա_
րութեան: Կամի՞ս թերևս զայլ զմե_
ծագոյն ապացուցումն առ 'ի իմանալ

զայն՝

զայն՝ զոր առնես, մինչ գործես զմա-
հացու մեղս իմ :

Դու՝ որ ընթեռնուս զայս ամ, եթէ բծաւորեալ ես զխղճմտանս քո ծանրագոյն մեղօք իմովք. պատկերակերպեա՛ 'ի քեզ ոչ այլ ևս անսալ ինձ բնաւին, այլ հոգւոյ քոյ, որ այնքան սիրէ զյաւիտենական փրկութիւն իւր : Վա՛յ աղաչեմ զքեզ, զի մի՛ բարձցես 'ի ձեռաց քոց զայս գրգուկս առանց ծնրադրելոյ յերկիր, առանց խնդրելոյ զներումն 'ի Տնէ, և առանց առաջադրելոյ խոստովանել նախ քան զգնալն քո յանկողինն՝ յայսմ երեկոյի : Աղաչեմ զքեզ մըտածել զճշմարտութիւն զայս լաւագոյն ուշիմութ̄բ, առ 'ի տպաւորել և կենդանացուցանել զնա 'ի սիրտի քում, և առ 'ի առնել զայն համարումն և վարկումն զմեղաց, որպիսի է ըստ ինքեան. զայն՝ որ ծանրացեալ է 'ի պարագայից իւրոց, զայն՝ որ ընկերակցեալ է ներգործութեանց իւրոց, և վերջապէս զայն՝ որ բազմազան կերպիւ պատժեցեալ է պատժօք իւրովք : Աղաչեմ զքեզ, զի երկնչիցիս 'ի նմանէ նախ քան զգործելդ զնա, և զկնի գործելոյդ, և մանաւանդ նաև զկնի խոստովանելոյդ զնա. վն̄ զի ոչ կարեմք մեք հաւաստի և ապահով լինել զթողութ̄է, և զներմանէ նորին :

Եւ վերջապէս աղաչեմ զքեզ, զի մշտա-

ունիցիս բևեռեալ 'ի սրտի քում. թէ ոչ գոյ այլ ինչ խոհեմութիւն 'ի մէջ աշխարհի, քան հաւաստի առնելն զյաւիտենական փրկութիւն իւր: և ոչ գոյ այլ ինչ յիմարութիւն, քան դնելն զնա 'ի յորոգայթի կորստեան վասն փոքու ինչ: Արթո՛ւն կացէք այսուհետև. յամ ժամ աղօ՛թս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայսմ յամէ, որ լինելոց է. և կալ առաջի որդւոյ մարդոյ: Այսպէս ասէ Տէրն մեր ('ի ղուկաս. 21. 36:) աներկբայական բառիւք, առ 'ի ահացուցանել ոչ միայն զամենայն մեղաւորս, այլ նաև զամենայն հեղգացեալս: Մեք ոչ կարեմք երբէք մեօք արժանի գտանիլ փախչիլ յայնքան մեծագոյն չարէ. վասն պարտիմք արթուն լինիլ, որ է ասել՝ յո՛յժ զգոյշ, և յո՛յժ շրջահայեաց լինիլ. աղաչելով զՏէր անդադարապէս, զի կամիցի վարել ընդ մեզ ողորմութեամբ իւրով, թէև ոչ իցեմք արժանիք:

Յ

Յաղագս օգտակարութեանց, որք յառաջագայ_ են 'ի յաճախագէս խոստովանելոյ :

## ԳԼՈՒԽ Խ. ԺԵ:

Զբաւականացաւ մարգարէն եղիսէէ առաքել միայն զնէեման առ յորդանան, այլ և հրամայեաց լուանալ անդ եօթն անգամ. ( 4. Թագ. 5. 10: ) Այսպէս ոչ պարտիմ բաւակա_ նանալ ես ածելով զձեզ առ խոստովա նութիւն . այլ նաև պարտիմ ( եթէ հրա մայելով ոչ ) գոնեայ աղաչելով յորդո_ րել զձեզ վս̃ բարւոյն ձեր , 'ի փրկաւէտ ջուրն այսորիկ յորդանանու , ոչ միայն միանգամ , այլ նաև եօթն անգամ . յո̃ բազմիցս . զի որքան կարիցէք յաճախա պէս մերձենայցէք առ այս սրբարար խորհուրդս : Եւ ոչ պակասին երբէք որքան առ այս՝ նշանաւոր շարժառիթք ստուգագոյնք , որք շարժիցեն զձեզ առ այս : Վյ̃ յառաջանամ աստ հետևա պէս , առնշանագրելով ձեզ զայնս :

Մինչ ոչ գտանիցի այլ ինչ, յաճախ խոս տովանութե̃ ընկալնոյք՝ զի միշտ առա_ ւելապէս թողանիցին այնք պատիժք , որք

որք պատկանին մեղաց ձերոց 'ի քաւարանի . ուր սաստկութիւն հրոյ վճարեցեալ լինի, զոր ոչ հատոյց աստ ապաշխարութեան : Արդ ասացէ՛ք ինձ զճշմարիտն . զի՞նչ, և զո՞րքան առնէիք, եթէ դատապարտեցեալ լինէիք յայրել կենդանապէս 'ի միում հրապարակի՝ առ 'ի փախչել յայնմանէ վճռոյ : Արդեօք ո՞չ ծախէիք զամ ինչս . ո՞չ աղաչէիք զամ բարեկամս . և ո՞չ պաղատէիք առ օտարականս . նաև ո՞չ խոստանայիք մեծաւ շնորհակալութեամբ առնել զձեզ մշտնջենական գերի երախտաքարշութեան նոցա : Բայց սակայն առ 'ի փախչել յայնքան զարհուրելագոյն հրոյ, 'ի մէջ որոյ հասանապէս ոչ էք մնալոց 'ի սակաւ ժամանակս, այլ յամս բազումս, և թերևս 'ի դարս: Ե՞ւ այսու ամի՞ թուի ձեզ, թէ առաւել ինչ պահանջեցեալ լինի 'ի ձէնջ, մինչ ասեմք : Խոստովանեցէ՛ք յաճախապէս, և բաւեցէս : Ե՞ւ յոյժ առաւել յիմարութիւն լինի ձեզ, եթէ 'ի բաց թողուցուք զայնս մի՛ հեղգութեան, և զանցառութեան :

Բաց 'ի յայսցանէ, զոր ասացաք . սոյն յաճախութիւն խոստովանութեան առնէ, զի մեր չարունակութիւնքն, և սովորութիւնքն, հանդոյն այնց ծառոց (որք բազմիցս տեղափոխեալ տնկին ) ոչ տարածիցեն զարմատս իւրեանց 'ի խորութե-

ար

արտի մերոյ. Նաև եթէ տարածեալք են. չորանայցեն, և սակաւ առ սակաւ արմատախլիցին : Ասացի՝ սակաւ առ սակաւ. քանզի հասարակապէս գործ իմն ոչ բռնայ զունակութիւն : ուստի այն ցան, զոր հասարակապէս փորձառեմք 'ի խոստովանութեան, գոլով յոյժ անկատար, ոչ ունի զզօրութիւն, որ կարիցէ իսկոյն եղծել զայն, որ արմատացեալ գտանի 'ի մեզ : Այլ այսորիկ լաւագոյն և օգտակարագոյն դեղն այնպիսւոյ ումեանն, որ արդէն ընդերկար ժամանակաց հետէ սովորեալ իցէ հանապազորդել 'ի մեծագոյն չար իմն գործոյ, և կենցաղավարութեան. է շարունակել զխոստովանութիւն յամ ութն օր, և եթէ կարելի իցէ՝ այլ առաւել յաճախապէս. ոպ ուսուցանէ մեզ փորձառութիւն :

Նաև՝ յաճախ խոստովանութիւն, բառնայ զհամարձակութիւն դիւին, խորտակէ զզէնս նր, և նուաղեցուցանէ զփորձութիս : Քանզի ոպ սարդքն փախչին յայնմանէ տեղւոջէ, ուր բազմիցս աւերիլ տեսանին ոստայնք և հիւսուածք իւրեանց. և ոպ ցինն ոչ վերադառնայ այլ ևս առ այն քարաժայռն, ուր բազմիցս աւերեալ գտանէ զբոյնն իւր : Այսպէս՝ դևն ոչ կարէ յամել և մնալ յայնմիկ հոգւոջ, ուր յաճախ խոստովանութիւն տեսանէ սակաւ առ սակաւ խորտա

կէ:

կիլ զօրութիւն իւր: Եւ՛ այս այնքան,
մինչ զի մինն 'ի դիւաց, 'ի բռնադատիլ'
հզօրագոյն երդմնեցողութեամբ առ 'ի յայտ
նել զճշմարիտն, ասաց: Ոչինչ իր այն-
քան անհաճոյ է մեզ յեկեղեցւոջ. և ոչ
ինչ իր այնքան յաղթէ զհնարագիտու-
թիւն մեր, որքան յաճախ խոստովանու-
թիւն: Վն զի մինչ է մարդ 'ի մեղս, իբր
թէ կապեալ ունի զամ անդամս իւր,
զի մի' գործիցէ զբարեգործութիւն. բայց
յորժամ խոստովանի, իսկոյն արձա-
կեցեալ լինի: Այսպէս ասաց նա. և
այսպէս պատկան է ևս լինիլ: Զի յա-
տուկ է դաւաճանողին, և մատնչին եր
կնիլ 'ի յայտնեցեալ գոլոյ. վն որոյ՝ զայլ
ոչինչ այնքան երդմամբ յանձնէ ընկե-
րակցին իւր, որքան զաղտնի և ծածուկ
մնալն իրակութեան:

Պուրճլ. որ յաճախ և բազմիցս խոստո-
վանի, զմեծ դիւրութիւն ունի քննելոյ
զխղճմտանս իւր. և է առաւել հաւաս-
տի առնելոյ զայն զգուշութիւնն, զոր
պարտի իրակէլ յայնմիկ գործոջ: Ուս-
տի 'ի ժամու մահուան իւրոյ, առաւել
դժուարին իմն լինի՝ թէ կարիցէ դեն-
տալ 'ի յերես նր զմեղք ինչ ոչխոստովա-
նեցեալ, որովհետև նա միշտ ուղղապէս
տուեալ է զհաշիւն իւր, և իրաւախոհ
լեալ է ըստ սովորի իւրում: Բայց հակա-
դարձապէս, որ խոստովանի միանգամ
'ի

'ի տարւոջ , և կամ սակաւ ինչ աւելի . յայժ դիւրագոյն իմն է՝ զի 'ի բաց թո-ղուցու , և մոռանայցէ 'ի ձեռն հեղգու-թեն զբաղում ծանրագոյն մեղս : Յաղա-ղեցեալ հաշիւն , դժուարամս առնէ մոռանիլ. աւէ ամէն բեռնարտոս : Ուստի ո՞րպիսի ամաչումն , և պատկառումն լինիցի յե-տոյ այն թշուառականին , որ 'ի վերջ-նում կիտոջ լուիցէ 'ի բերանոյ դիւցին ժիշել զայնպիսի իրս , որք նեղիցեն , և չարչարիցեն զինքն , և արասցեն յատ-կապէս քրտնիլ քրտամբ մահու՛ան : Յայն ժամ յիրաւի սկսանի անարգել և արհա-մարհել նա ( բայց անադան ) զիմաստու-թիւն և զանմտութիւն իւր , ասելով յին-քեան : Վա՜յ , և եղո՛ւկ ինձ . ո՛րպիսի փրկաւէտ ձայն էր այն , որ խրատէր զիս յաճախել 'ի խորհուրդն խոստովա-նութեն՝ սակաւագոյն ծախիւք և աշխա-տութե՛ , որ պահանջիւր յինէն . և ես 'ի բաց թողի զնա : արդ եթէ արարեալ իցէ յայնժամ զայն , ոչ գտանէի զիս այժ-միկ յայսպիսի նեղութե՛ : Այսպէս ա-սելոց է ապերջանն այն : և եթէ ունի-ցի եւս յայնմիկ կիտոջ ներկայ զբաղում խոստովանահայրս , և կամիցի խոստո-վանիլ . ոչ գիտէ թէ ո՛ւստի , և յո՛րմէ սկսանիցի : Քանզի զինո՛որ ոք , որ յեր-կար ժամանակս պահեալ է զսուսերն իւր 'ի պատենոջ , ոչ կարէ վմ ժանկոտ

տու

տուլթն փութապէս հանել զնա յար-
տաքս 'ի յեղակարծ հարկաւորութեան
խմիք:

Րուակցեմ. թէ այն՝ որ բաղձիցս խոստո-
վանել, թէեւ գործիցէ զծանրագոյն մեղս
ինչ, կայ առաւել ժամանակաւ 'ի շնորհն
այ. եւ այսպէս՝ առնէ զառաւել արդիւ-
նաւոր գործս յաւիտենականի կենաց:
Քան զայն, որ գործեալ զայս մեղս,
ոչ խոստովանի, եւ մնայ ոպ կոճ ինչ չորա-
ցեալ, որ ոչ կարէ պտղաբերել, եթէ
ոչ կանաչասցի նախապէս: Եւ թէպէտ
ոչ պարտի մարդ 'ի բաց թողուլ վա այ-
սորիկ յայնժամ զջերմեռանդութիւս,
զծոմապահութիւս, եւ զայլ բարեգոր-
ծութիւնս իւր, որովք պատահի բաղձիցս
արգելուլ Տէր զպատիժս. եւ եթէ չի-
ցէին, տայր փութապէս: Սակայն այ-
սու ամի՞, ամ բարեգործութիւնք այնո-
քիկ, որք առնանին յայնպիսի կացու-
թեան մահացու մեղաց, ոչինչ արժեն
առ'ի ստանալ զերկնային արքայութիւն,
զի են մեռեալ գործք: Քանզի ցորքան
մնեալ երկաթն նետին մնալ 'ի մէջ վի-
րացն, ոչինչ օգնէ նմա փաթաթանքն՝
ամեն բժիշք. զի նախ պարտէ հանել
զնա, եւ ապա փաթաթել: Այսպէս ոչ
ինչ է՝ որ կարիցէ օգնել վա յաւիտենական
կենաց, մինչ մեղքն կայ 'ի հոգւոջ՝ ոպ
թանաւորեալ նետ 'ի մէջ վիրաց: Որ
եթէ

եթէ զանցառնիցեն զայսմանէ, զոր ասացաւ 'ի վերոյ շուրջ զանբաղդատելի զանձիւք շնորհաց, ոչ կարէ ոչ ցաւակցիլ կուրութենէ նորա, որք յայնքան ժամանակս կամին մնալ զուրկք յայնմանէ : Ե՞ւ այսպէս՝ կորուսանեն զարդիւնս այնքան ողորմութեանց, և այնքան աղօթից, որք ( ոմն ասացաւ ) թէպէտ օգնեն միայն ժամանակաւոր իրաց, և հեռի տրամադրութեանց ապաշխարութեան . բայց ոչ օգնեն առ 'ի արդիւնաւորել արդեն ըզ

շնորհս, և զփառս :

Մերձապէս . որ խոստովանի յոյժ յաճախապէս, է առաւել հաւաստի և անկասկած՝ 'ի ժամանելն մահուան գտանել ներգործութեամբ նորին 'ի շնորհն այ . և այսպէս փրկել : Բայց հակադարձապէս՝ որ խոստովանի յոյժ ցանցառապէս և անօսրակի, է հաւաստադոյն աղագաւ մեծի դիւրութեան, թէ գտանիցի 'ի ժամու մահուան 'ի մէջ վերստին անկման, կամ ըմբռնիցի յայնմիկ վատթարագունի տրամադրութեան, յորում սովոր էր կեալ 'ի յառաջուն . և այսպէս կորնչել 'ի յաւիտեան : Արդ եթէ դու միշտ բնակիս 'ի ցամաք երկրի, և ոչ երբէք գնաս նաւարկել սակաւ մի 'ի ծովու . եթէ ոչ միայն վասն զբօսանաց . կարես դիւրապէս յուսալ մեռանել 'ի մահճի քում : Բայց արդէն ոչ են այսպէս նաւավարքն, որք

միշտ

միշտ նաւարկեն ընդդէմ ալէկոծութեան. և եթէ լիցանեն երբեմն առ եզրն ծովու, թուի թէ ոչ գտանեն անդ զհանգստութիւն, որոյ վ͞ա խորհին դառնալ փութապէս առ ծովն: Այսպէս պատահի ևս այնպիսի մեղաւորաց, որք միշտ կան 'ի մահացու մեղս, և միանգամ միայն խոստովանին 'ի տարւոջ. և զայն ևս ա͞ծ գիտէ՝ թէ ո՛րով կերպիւ: Կեան միշտ 'ի մէջ ծովու, և մեռանին 'ի ծովու: Կեան միշտ 'ի մէջ ալէկոծութեան, և մրրկանաց. և բազումք ևս 'ի նոցանէ յանդնդասոյզ կործանին. ո͞պ ընթեռնանի յոբայ. 36. 14: Մեռանիցի յալէկոծութե անձն ն͞ց: Եւ այսպիսի որոգայթքս՝ արդեօք թեթևագոյն իրք վարկանեցեալք լինին 'ի ձէնջ: Որպիսի մեծագոյն յիմարութիւն գտանի քան զայս. կարել յանկասկածութեան դնել զգործառութիւն իմ͞ն, որ այնքան հարկաւոր է. կարել առնել զնա այնքան դիւրապէս, բայց ոչ առնել: Կարել կապել հաստագոյն կառանաւ զխարիսխն յուսոյ քոյ, բայց բաւականանալ կապել զնա քղով միով, և յեցուցանել զնա 'ի վերայ միոյ թերևսի, ասելով. Թերևս ոչ լինի այնպէս: Եւ 'ի մէջ այնքանեաց կասկածելի որոգայթից՝ գոլով ևս թշնամի ա͞յ, ծիծաղել, այպանել, կատակել, և ննջել ամենևին 'ի քուն մեր. անհեցուցանե-

լոյ յամմում աւուր զմեղս 'ի վր մեղաց : Որպէս կարելի է այս : Կարէ՞ս արդեօք 'ի ներքոյ այսպիսեաց պատահմանց ննջել չժոան հանգստապէս : Գթա՛ այժմ, գթա՛ 'ի վր հոգւոյ քոյ · ոպ խրատէ սիրաք · 30 · 24 : Ողորմեա՛ց անձին քոյ հաճոյացեալ այ : Զարմանայր սբն Թովմաս ագուինացին · Թէ քրիստոնեայ ոք, ո՛րպէս կարիցէ գոր_ծել զմահացու մեղք ինչ · բայց ո՛րքան առաւել զարմացումն պարտի առբերել մեզ, մինչ տեսանեմք՝ Թէ զկնի գործելոյ՝ ոչ եւս հոգացեալ լինի 'ի բաց բառ_նալ զնա 'ի հոգւոյ, այսպիսի դիւրա_գոյն դեղով միով, որպիսի է սրբազան խորհուրդն խոստովանութե, և ննջէ ոպ անասուն 'ի յաղբի իւրում, ոպ ասէ 'ի Յովէլեայ · 1 · 17 :

Յաղագս ընդհանրական խոստովանութեն :

## ԳԼՈՒԽ Խ · ԺԶ :

Երկու կերպ դատաստան առ_նէ Տէրն : Մինն մասնա_ւոր՝ 'ի վերջն կենաց մերոց, և յայսմիկ դատաստանի տայ զառաջին վճիռն : Երկ՛ միւսն ընդհանրական՝ 'ի վախճանի աշխարհի ·

և յայսմիկ դատաստանի հաստատէ ըզ
վճիռն իւր արդէն տրեցեալ: Այսպէս
և մեք երկու կերպիւ պարտիմք դատել
զհոգիս մեր: Մինն միջնորդութ՟բ մաս
նաւոր խոստովանութե՟ն , յորում տրի
առաջին վճիռն վասն մեղաց , որ ոչ եր
բէք խոստովանեցեալ է 'ի մէնջ: Միւսն
միջնորդութ՟բ ընդհանրական խոստո_
վանութե՟ն , յորում հաստատի նոյն տրե
ցեալ վճիռն: Եւ՛ այս խոստովանութիւ
ն ըստ ոմանց է պատուիրան . և ըստ ոմանց
խորհուրդ : Ի պատուիրան յայնժամ ,
մինչ բազմիցս անցեալ խոստովանու_
թիւքն ոչ են լեալ հաստատք : Որ պատա
հիլ կարէ երկու կերպիւ . այ՟ կամ 'ի կող
մանէ քահանային , բայց այս հազիւ՛ պա
տահի . կամ 'ի կողմանէ ապաշխարողին ,
և այս բազմիցս : Նախ . մինչ նոյն անձն
յատկապէս , և նշանաւորապէս հեղգա
ցեալ է 'ի քննել զխղճմտանս իւր : Երկ
րորդ . մինչ 'ի բաց թողանի երբեմն ծան
րագոյն մեղք ինչ վն՟ ամօթոյ , և կամ
երկբայեցեալ լինի գոլ ծանրագոյն : Որպ՟
ոմանք վն՟ ունայն ամօթոյ ոչ խոստովա
նին զմեղս արարեալ 'ի մանկութե՟ն , որոյ
վասն ա մաչէին մինչ գործէինն զնա , և
վն՟կ ջանային ծածկել առ 'ի ոչ տեսա_
նել յայլոց , և այս յայնժամ ոչ էր թե
թև նշան չարութե՟ն : Եւ՛ յետոյ թէպէտ
միշտ կան այսօրիկ անհանգիստ խղճմտա
նօք .

նօք վ՜ այնց գործեցելոց • բայց ոչ հա մարձակին յայտնել խոստովանահօրն , կամ խնդրել զխորհուրդ և զխրատ ։ Երրորդ • մինչ ոչ ունեցաւ զճշմարիտ զըղջումն , և զցաւ վ՜ յանցանաց իւրոց , թէև խոստովանեցաւ • ոպ՜ հասարակապէս պատահի այնմ , որ խոստովանի նոյնոյ քահանայի , զի որոյ գործեաց զմեղս ։ և կամ այնմ , որ գնայ դիտմամբ խնդրել զխուլ քահանայ , կամ զայնքան տգէտ ոմն , որ ոչ կարէ ընկալնուլ վ՜ հարկաւորութեան իմիք զպատկանաւոր խրատ 'ի նմանէ ։ Չորրդ • մինչ ոչ ունեցաւ զճշմարիտ առաջադրութիւն առ 'ի ոչ դառնալ երբէք վերստին 'ի մեղս , 'ի բաց թողուլ զառիթն , փախչողակի յետ դարձուցանել զաւերեալ բարի համբաւն , և զինչս • նաև մինչ ոչ ունեցաւ միտք ներել վնասակարաց իւրոց • կմ՜ թէ խոստացաւ լեզուաւ միայն զայսոսիկ քահանային , բայց ոչ սրտիւ ։ Ուստի յայսմ պատահմունս յայսոսիկ , այնքան հարկաւոր է առնել զընդհանրական խոստովանութիւն , միջնորդութե՜ որոյ նորոգին անհաստատապէս արարեալ մասնաւոր խոստովանութիւքն , որքան է հարկաւոր՝ եթէ զոչինչ խոստովանութիւն արարեալ իցէր երբէք ։

Բայց նաև արտաքոյ յայտնագունի հարկաւորութե՜ , է օգտաւէտ խրատ և խոր

հուրդ՝ առնել զընդհանրական խոստո-
վանութիւն բովանդակ կենաց իւրոց, գո
նեայ միանգամ 'ի տարւոջ։ Եւ՞ յետոյ
այնքան առնել 'ի յայլս ամս. զի յամե-
նայն ամի, և կամ բազմիցս. սկսանե-
լով յայնմանէ վերջնոյ, առ 'ի վերա-
տեսանել նորապէս զա̃մ անկիւնս, և ըզ
մասունս խղճմտանաց իւրոց, ըստ յան
ցանաց գործեցելոց յայնմիկ ժամանակի։
Եւ՞ պատճառ այսորիկ օգտակարութեան
ոչ է այս միայն, զի վերաճանաչելով
անկնարկութե̃ միով զընաւ յանցանս
մեր, պատճառէ զմեծագոյն պատկա-
ռումն, զմեծագոյն ցաւ, և զմեծագոյն
խոնարհութիւն. այլ նաև առնէ՝ զի
յղանայցեմք 'ի մեզ զմեծագոյն երկիւղն
ա̃ծայնոյ արդարութեան, մինչ մտածեմք
զներկայ մեղս մեր յարաբարդեցեալ 'ի
վերայ անցելոց մեղաց, որ̃ լերինք 'ի վե
րայ բարձրագոյն լերանց՝ տարածելով
'ի յանչափութիւն։ Ուստի կարեմք ճշմար
տութեամբ ասել ըստ Եզրասայ։ Մեղք մեր
մեծացան. և բարձրանայ մինչև յերկինս։ 1.
Եզրաս. 7. 12։ Բաց յայսմանէ՝ այլ մեծա
գոյն երջանկութիւն իմն ընձեռեալ լինի
մեզ, զի թարց այսպիսի խոստովանու
թեան՝ դժուարաւ ստացեալ լինի խաղա-
ղութիւն խղճմտանաց, որ է յոյժ մեծա
գոյն բարի. և միշտ երկբայեցեալ լինի
մեծագոյն պատճառաւ, թէ արդեօք

այն

այնքան յաճախ վերանկատումն մեր
ծնանի յոչ ունելոյն մեր զպատկանաւոր
տրամադրութիւն 'ի խոստովանիլն. և
կամ արդեօք խոստովանեցաք բարե-
պէս: Հայր ոմն՝ երկարապէս տանջե-
լով 'ի մէջ հրոյ քաւարանին, երևեցաւ
որդւոյ իւրում գանկատելով և տրտն-
ջալով յոյժ, թէ ոչ երբէք ընկալեալ էր
'ի նմանէ զօժանդակութիւն: Առ որ պա-
տասխանեաց որդին. ո՞րպէս ասես զայդ-
բան՝ ո՜վ հայր իմ: Զի արդէն լրացան
եռեսուն ամք, յորմէ հետէ մեռեալ ես,
և ես 'ի մէջ այնքան ժամանակի ոչ երբէք
'ի բաց թողի զմի միայն օր առանց աղա
չելոյ վ̅ քո: Ճշմարիտ է՝ ասաց հայրն.
բայց աղօթք, և աղաչանք քո ոչինչ կա-
րացին օգնել ինձ, զի դու միշտ եղեր
'ի մեղս՝ վ̅ չարապէս արարեալ խոստո
վանութեանց քոց: Պարտիս գիտել ու-
րեմն, զի դու թէպէտ 'ի մէջ երեսուն
ամաց խոստովանեցար առաւել քան
զերեսուն անգամ. սակայն ոչ երբէք
բարեպէս խոստովանեցար, վ̅ պակա-
սութեան բաւականի տրամադրութեան, և
մանաւանդ ոչ ունեցար զճշմարիտ կամք
ուղղելոյ զքեզ: Յորմէ այնքան զար-
հուրեցաւ որդին, որ ոչ կարէ պատկե-
րակերպել. և այսպէս՝ փութով ուղ-
ղեաց զայնպիսի չարութիւն: Արդ ձեզ
ոչ պարտ է ապաւել միոյ ումեմն, որ գա

լով 'ի միւսոյ աշխարհէ ծանուցէ ձեզ
զկացութիւնն ձեր . այլ իմաստնաբար
երկնչելով՝ պարտիք գոնեայ գալ միան
գամ 'ի մի խոստովանութի̃, որ ունիցի
զկատարելագոյն պատրաստութիւն, և
զայն նմ̃ զղջումն, զոր ժլատապէս ու
նեցաք յայլում խոստովանութեան, և
կազմել զայն ոպ̃ զմի ծով: Ե՞ւ այսպէս՝
լինիք առաւել հաւաստի, և ապահով,
թէ ամենայն մեղք ձեր խորասուզին 'ի
յատակս, և 'ի խորս ծովու :

Առանց այսպիսի խոստովանութեան,
ո՞րպէս կարէ ունիլ ոք զսկիզբն միոյ նո
րագոյն կենաց, զլաւագոյն պատրաս_
տութի̃ վս̃ մերձակայութե̃ մահուան,
և զհոդունակութի̃ առ 'ի գտանել ըզ
դաղտնի մեղս . որ է առնել ոպ̃ զմի ը̃
հանրական որսորդութի̃, և գտանել
'ի մորուոջ, և 'ի յորջ իւր զնմ̃ անասունս :
Բայց պտուղքս այսորքիկ ոչ ճանաչին
երբէք լաւապէս, եթէ ոչ փորձառու
թբ̃ . յորմէ ծնանի հաստատութիւն այ
նոցիկ, որք արարեալք են զայս խոստո
վանութիւնս զգուշութբ̃ : Ե՞ւ յետ այսո
րիկ պատկանէ հանդարտիլ, և ոչ դառ
նալ վս̃ նմ̃ սակաւ իրաց 'ի վերակրկնել
զնա, որ վնասէ խղճահար անձանց . և
մանաւանդ այնմ, որ գործեալ է զբա
զում անպարկեշտ մեղս, նաև ը̃ այսո
ցիկ պահեալ ևս է զիղձ իմն առ հեշ_

ստու

տութիւն : Քննութիւն ընդհանրականի
խոստովանութեան այսորիկ՝ եղիցի չա-
փաւոր և համեմատ առ այն, զորմէ ա-
սացաք 'ի վերոյ զմասնաւորէն : Ուստի
մոռացեալ լինի յիշողութեամբ ամ̃ հա-
սակքն, ամ̃ գործքն, ամ̃ կացութիւնքն
անցեալ կենաց · նկատելով զայս՝ թէ
որքան յառաջացեալ լինի առ մեծագոյն
ընթացս ամաց, այնքան պակաս գտա-
նիլ կարէ յատուկ թիւն գործեցելոց մե-
ղաց : Վ̃յ պարտ է առնել զժամանակն,
և զյաճախութիւն, և տալ զհաշիւն, և
զհամարն սակաւ ինչ առաւել բարձր·
ոմ̃ արդէն առնշանադրեցաւ 'ի վերոյ :
Քո̂ւ այսքան բաւական է վասն ամբողջ
համդարտութեան խղճմտանաց, թէև
խոստովանութիւն ոչ առնանիցի վասն
ջերմեռանդութե̃ն, այլ առնանիցի վասն
հակաւորութե̃ն :

## Յաղագս հարցաքննութեան, առ 'ի դիւրացուցանել զկիրառութիւն խոստովանութեան:

Այն՝ որ առնէ զդեղն փրկաւէտ խոստովանութեան, երբ առաւել դառն, և առաւել անախորժելի բազմաց, է նեղութիւն քննելոյ զխղճմտանս իւր: Ուստի բազումք ոչ առնեն, կամ ոչ կամին ուսանիլ ընթեռնուլ զայնպիսի գրգոյկ իմն, որ առաջնորդիցէ առ այս: Եւ այսպէս՝ առ'ի փախչիլ յայսմանէ աշխատանաց, ոչ միայն ոչ մատչին երբէք առ ընդհանուր խոստովանութիւն. այլ նաև վատ կամօք կատարեն միանգամ 'ի տարւոջ զպատուիրանն մասնաւոր խոստովանութեան: Նմանելով առաւել փափկասէր հիւանդաց, որք ոչ միայն ոչ կամին առողջանալ 'ի ձեռն երկար մաքրութեան յօշարակի միոյ, այլ նաև ոչ կամին կիր առնուլ երբէք զպարզ դեղ իմն: Ուրեմն առ 'ի դիւրացուցանել զկիրառումն ընդհանրական, և մասնաւորական խոստովանութեան, կամիմ աստ 'ի վերջին տեղւոջ կազմել զմի հարցաքննական կերպ, յորում պարունակին հաւաքումն այնց մեղաց, որք ա-

ռա

ժաւել հասարակապէս գործեցեալքն ըն-
նէն 'ի մարդկանէ՝ տրամախօսելով զտա-
նաքանեայ պատուիրանացն այ , առա-
ծելով եւ 'ի նմա համառօտիւք՝ զպատ-
ուիրանս եկեղեցւոյ , նաեւ զայնս մո-
լութիւս, որք կոչին գլխաւոր մեղք ։
Ե՛ւ ընթեռնուլ եթէ, պարտի խոստովանողն
զհարցական նախնեայ՝ մի՞թէ ։

# ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ.

## Մի՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն ։

### Խորհրդով ։

Եթէ ունեցար զվատ խորհուրդ ընդ-
դէմ սրբոյ հաւատոյ ։ Եթէ յամե-
ցար կամաւորապէս 'ի նմ. կամ թէ հեղ-
գացար մերժել զնա ։ Եթէ յոյժ առա-
ւել հետաքրքրութբ քննեցեր զաստուածայ-
ին խորհուրդս ։ Եթէ յուսահատեցար
յողորմութենէն այ . կամ թէ գործելով
զմեղս՝ յանդգնեցար դէպ 'ի նա լրբու-
թբ ։ Եթէ համառեցեր 'ի մտի քում
մեղանչել մինչ կարող ես, եւ յետոյ դառ-
նալ 'ի կէտ մահուան քոյ ։ Եթէ յոյժ
ապաւինեցար 'ի յուշիմութիւն, եւ 'ի հան-
ճարեղութիւն քո ։ Եթէ հաւատա-
ցեր երազոց , կախարդաց եւ պախրճն-
նէրաց ։

## Բանիւ։

Եթէ տրտնջեցեր, և գանգատեցեր զայս 'ի մէջ նեղութեան քո։ Եթէ ուսուցեր զաւելորդապաշտութիւն ինչ։ Եթէ ունայնաբար գովեցեր դու զքեզ։ Եթէ պարծեցար գործելով զմեղս ինչ։ Եթէ ծաղր արարեր զոք, զի էր բարի, զի ոչ վրէժխնդրէր, և զի կամէր պահել զօրէնս Աստուծոյ։ Եթէ թիւր խորհրդատուութեամբ արգելեցեր զոք, զի մի՛ գործիցէ զբարի։

## Գործով։

Եթէ կիրառեր զաւելորդապաշտութիւն ինչ. որպէս լինել տանելով զհմայիլ, և զհնարս ինչ ընդդէմ ախտից։ Եթէ խնդրեցեր զմիջոցս առ 'ի գիտել զիրս գաղտնիս։ Եթէ կիրառեր զայնպիսի դեղս, որք ոչ ունին զբնական զօրութիւն։ Եթէ ընթերցար զարգելեալ գրեանս. կամ պահեցեր զնոսա 'ի քեզ առանց հրամանի մեծաւորաց։ Եթէ զզուեցար 'ի բարեգործութենէ։ Կամ ձանձրութեամբ լուար զաստուածային բանս, և զքարոզս։ Կամ հեղգացար և ծուլացար 'ի յասելն զաղօթս. և կամ 'ի յայլ գործս, որք պատկանին առ պաշտօնն Աստուծոյ։ Եթէ ընկալեալ ես, զդրամ վասն ուրուք եկեղեցականի արժանապատուութեան։

Զանցառութիւն ։

Եթէ հեղգացար յուսանելոյ զխոր-
հուրդս սբ̃յ հաւատոյ, և զքրիստոնէա-
կան վարդապետութիւնն ։ Եթէ ոչ ես
դիմեալ ՚ի յա̃ծ ՚ի մէջ ծանր փորձութե̃ն
և որոգայթի հոգւոյ քոյ ։ Եթէ ապա-
շնորհ, և երախտամոռաց եղեալ ես վն̃
ընկալեալ բարերարութե̃նց ։ Եթէ ոչ ու-
նեցար զբարի դիտաւորութի̃ն ՚ի բարե-
գործութիւնս քո ։ Եթէ ՚ի բաց թողեալ
ես առնել զբարեգործութիւնս վն̃ մարդ-
կային ամօթոյ ։ Եթէ ոչ աղդ արարեալ
ես քննչին, և վերակացուին զնոցա-
նէ, որք արդիւնաւորէին ըստ արար-
մանց իւրեանց ։

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ ։

Մի՛ առնուցուս զանուն Տ̃ն ա̃յ քոյ
՚ի վերայ սնոտեաց ։

Խորհրդով ։

Եթէ ունեցար զդիտաւորութի̃ն սուտ
երդնլոյ ՚ի գործառութե̃ն իմիք ։

Բանիւ ։

Եթէ հայհոյեալ ես Աստուծոյ ․ կամ
սրբուհւոյ կուսին մարիամու ․ և կամ

որքոյ: Եթէ անուանեալ ես զանունն Աստուծոյ սակաւ պատուով: Եթէ վարեալ ես բանիւք սբ. գրոց 'ի ծաղր, և 'ի կատականս: Եթէ երդուեալ ես առանց հարկաւորութեան. կամ սուտ. և կամ վասն այնպիսի իրի, և իրակութեան, զոր ոչ գիտէիր զոլ ճշմարիտ: Եթէ երդուեալ ես 'ի խնդրել զվրէժ, և կամ առնել զայլ չար: Եթէ խոստացեալ ես երդմամբ զիր ինչ՝ առանց ունելոյ զմիտ կատարելոյ զայն:

### Գործով:

Եթէ ածեալ ես զոք յերդնուլ սուտ: Եւ կամ տուեալ ես զառիթ և զպատճառ այլոց՝ զի հայհոյիցեն:

### Զանցառութէ:

Եթէ ոչ պահեալ ես զխոստմունս, և զուխտս. կամ թէ՝ հեղգացեալ ես առնել զայնս: Եթէ յոյժ յապաղեալ ես զկատարումն նոցին:

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ:

### Յիշեա՛ զօրն շաբաթուն սրբել զնա:

### Խորհրդով:

Եթէ ունեցար զաշխատական առաջադրեալ միտս՝ ոչ լսելոյ զպատարագ. կամ

կամ գործելոյ զծառայական գործ ինչ՞ յաւուրս տօնից ։

Բանիւ ։

Եթէ արարեալ իցես զխօսակցութիւն ը̄ այլոց 'ի ժամանակի հաչակեցման սր̄յ Պատարագին ։ Եւ կամ յասելն Աստուածային ժամերգութեան ։

Գործով ։

Եթէ գործեալ ես դու զծառայական գործ յաւուրս տօնից, առանց հարկաւորութեան ։ Եւ կամ աշխատեցուցեալ ես զայլս առ այնս. և որքան ժամանակ ։ Եթէ արարեալ ես զասկաւ յարդուածս, և պատիւ եկեղեցական անձանց. կամ եկեղեցւոյ, նմանեալ այնոցիկ, որք այնպէս խօսին և ծիծաղին անդ, որպ̄ թէ իցեն 'ի հրապարակի ։ Եթէ աւերեալ և խորեալ իցես զհրամայեցեալ պահս և ծոմս՝ առանց հարկաւորութեան. զ̄ի առանց տկարութեան, և մեծի աշխատութեան ։ Եթէ 'ի յաւուրս տօնից անուցեալ իցես զժամանակդ 'ի խաղս, և 'ի յունայն զբօսանս ։ Եթէ արբեցեալ, և շուայտեցեալ իցես՝ առաւելապէս ուտելով, և ըմպելով քան զպիտոյն քո, նաև առաւել ախորժանօք, և ագահութ̄բ ։ Եթէ անկեալ իցես 'ի նզովս ։ Եթէ գործեալ իցես զգործ ինչ ո̄ր կա-

ցու

ցութեան քոյ, գոլով արգելեցեալ: Եթէ հենցաղավարեալ իցես ընդ անտանելի նզովեցելոց, և բանադրեցելոց՝ արտաքոյ քան զթոյլատրեցեալ պատահմունս:

Զանցառութիւն:

Եթէ ոչ իցես արգելեալ՝ զի ստորադրեալքն քո ոչ գործիցէին յաւուրս տօնից՝ առանց մեծի հարկաւորութեան: Եթէ ոչ լուեալ ես զպատարագ վասն հեղգութեան: Եթէ ընկալեալ իցես Զատկական հաղորդութիւն առանց հարկաւոր տրամադրութեան. կամ գոնեայ առանց ջերմեռանդական պատրաստութեան: Եթէ ասացեր զաղօթս քո առանց դիտաւորութեան՝ մանաւանդ մինչ էիր 'ի մեծի պարտաւորութեան ասել զայնս. որպիսի են աղօթքն, որք դնին 'ի տեղի ապաշխարութեան: Եթէ վասն հեղգութեան 'ի բաց թողեր զառնելն բարեգործութեանց. որպիսիք են՝ լսել զքարոզս, ընթեռնուլ զհոգևոր գրեանս, և գնալ առ ժամս կարգութեանս:

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ:

Պատուեա՛ զհայր քո և զմայր քո:

Խորհրդով:

Եթէ ատեցեր զհայր քո, և զմայր քո, նաև զմեծաւորն քո. կամ ցանկացար.

ցար մահուան նոցին ։ Եթէ յանդգնապէս դատեցեր զնոսա , և կամ արհամարհեցեր զնմ 'ի սրտի քում ։

Բանիւ ․

Եթէ բամբասեցեր զծնօղս քո 'ի բացակայութեն նց ։ Կամ եթէ անիծեցեր , և անարգեցեր զնմ 'ի ներկայութեան ․ կամ սպառնացար , և նախատեցեր զնմ ։ Եթէ արարեր զնոյնն այլոց քոյայնոց , և ընտանեաց 'ի տան ։

Գործով ։

Եթէ անարգեցեր զնմ բարձրացուցանելով զձեռն քո 'ի հարկանել զնմ ․ կամ այլով կերպիւ ծանրապէս տրտմեցուցանելով ։ Եթէ անհնազանդ գտանեցար նց 'ի յայնս , որք պատկանէին բարի սովորութեն ։ Եթէ խաղացեր զխաղ ինչ անվայելուչ , կամ դրամով՝ ընդդէմ կամաց նց ։ Եթէ առեր զինչս տան ընդդէմ հրամանի նց ։ Եթէ արհամարհեցեր զքահանայս , զկրօնաւորս , զմեծաւորս , զծերս , և զուսուցիչս ։ Եթէ կապեցեր , և լծակցեցեր 'ի յամուսնութե զորդիս քո ընդդէմ կամաց նց ։ Եթէ արարեր զնմ կրօնաւորս՝ բռնութեբ ․ և կամ այլով կերպիւ զրկեցեր զնմ յայնմանէ ազատութենէ , յոր ունէին ընտրել զերկաքանչիւր կացութիս ։

Զան.

## Զանցառութիւն:

Եթէ ոչ օգնեցեր ծնողացդ 'ի ծանր հարկաւորութեան նոցին: Եթէ ոչ ծառայեցեր նոցա 'ի ժամանակի հիւանդութեան: Եթէ առանց հրամանի նոցա խոստացար ուրուք աղջկան, կամ կնոջ ամուսնանալ ընդ նմա: Եթէ զանցառեր 'ի մատակարարել, և 'ի դարմանել կնոջդ, և ընդանեացդ՝ զհարկաւոր ապրուստ: Եթէ ոչ ունեցեր յերկիւղն Աստուծոյ զորդիս, կամ զստորադրեալս քո: Եթէ ոչ առաքեցեր զնոսա յեկեղեցին, կամ առ քրիստոնէական վարդապետութիւն: Եթէ ոչ ուսուցեր նոցա զպիտանաւոր աղօթս: Եթէ ոչ հետաղօտեցեր, և քննեցեր զբարս, և զսովորութիւնս նոցա: Եթէ ոչ յանդիմանեցեր, և խրատեցեր զնոսա: Եթէ ոչ զբաղեցեր զնոսա առ լաւագոյն կրթութեան, և գործառութեան ինչ:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ:

### Մի՛ սպանաներ:

#### Խորհրդով:

Եթէ ցանկացար խնդրել զվրէժ: Եթէ ցանկացար մահուան, կամ այլ իմն ծանրագոյն չարի՝ ընկերի քոյ:

Եթէ

Եթէ ուրախացար վն պատահեցեալ չարեաց նորին: Եթէ նախանձեցար նմա: Եթէ տրտմեցար 'ի վր գովութեն, և բարեաց նորին: Կամ հեշտացար և հաւանեցար նախատանաց, և վնասուց նորին:

## Բանիւ:

Եթէ եղեր 'ի նեղութեն քում անհամբեր: Եթէ խնդրեցեր զմահ քո. կամ ասացեր այնյն առնէ զիս: Եթէ ասացեր այլոց՝ սատանայն տարցէ զքեզ. կամ զայլ ինչ նման բանս: Եթէ տուեր այլոց զխորհուրդ, զի խնդրիցեր զվրէժ. կամ տուեր զհաւանութիւն այնմ, որ առնել կամէր զայն: Եթէ արարեր ուրուք զանիրաւութիւն ինչ բանիւ, 'ի ներկայութեն, կամ 'ի բացակայութեն նր: Եթէ անիծեցեր զաղքատս, նաև մերժեցեր զնս վատ խօսիւք: Եթէ 'ի յանդիմանելն զայլս՝ գտանեցար չափազանց. կամ եթէ արարեր զայն 'ի բարկութէ, և ոչ 'ի սիրոյ:

## Գործով:

Եթէ եդեր զքեզ 'ի յորոգայթի ինչ մահուան առանց հարկաւորութեն. կամ յառաջացար առնել զմեղք ինչ: Եթէ արարեր քեզ զվնաս՝ առաւել ուտելով և ըմպելով: Եթէ վրէժխնդիր եղեր վն

ըն-

ընկալեալ անիրաւութեց ։ Եթէ հարեր, և վիրաւորեցեր զոք ։ Եթէ գրգռեցեր զկռիւ ինչ. կամ պահեցեր զթշնամութի. կամ երկարեցեր զանիրաւ դատս ։ Եթէ տուեր ումեք զչար օրինակ. կամ արգելեցեր զոք՝ որ առներ զբարի. կամ օգնեցեր այնմ՝ որ առնէր զչար ։ Եթէ խնամարկեցեր զթիւր մարդիկս. ո՛րպէս՝ զ'սքսորեալս, զմարդասպանս, և զայլս նմանս ։ Եթէ կիրառեր զպաշտօն ինչ բժշկի, ուսուցչի, և փաստաբանի՝ 'ի վնաս ընկերին, ոչ ունելով զընդունակութիւն բարեպէս առնելոյ զայնս ։ Եթէ յառաջարկեր զայսպիսի անընդունակ անձինս 'ի գործառութեան ստորադրելոյ ։ Եթէ յանձնեցար զեկեղեցական արժանապատուութին, և մասնաւոր հոգաբարձութիւնն՝ անյարմար, և անարժան անձանց ։

## Զանցառութք ։

Եթէ ոչ յանդիմանեցեր զընկերն քո. և ոչ տուեր զբարի խորհուրդ, մինչ կարէիրն ։ Եթէ ոչ ետուր զհաշտութի, և զխաղաղութի թշնամւոյ քոյ, որ խոնարհէր քեզ ։ Եթէ ոչ կամեցար խնդրել զներումն վասն ամբարտաւանութեդ ։ Եթէ ոչ մատուցեր զպատկանաւոր վըճարումն, և բաւարարումն այնմ, զոր վշտացուցեր ։ Եթէ ոչ ողջունեցեր

զթշ

զթշնամին քո . և կամ ոչ ընկալար զողջոյնն նորա ։ Եթէ ոչ նախ խօսեցեալ ես ընդ նմա, զոր վշտացուցեալ ես ։

# ՎԵՑԵՐՈՐԴ, ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ ։

## Մի՛ շնար ։ Մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ ։

Յայսմիկ նիւթոջ ոչ մեկնեմ զբազումս . զի է այնպիսի ձիւթ իմն, որ թէ ո՛րով և իցէ կերպիւ շօշափիցի՝ թէև հեռապէս , ապականէ, և աղտեղէ ։ Ուստի որ մեղանչեալ է ընդդէմ այսոցիկ պատուիրանաց , բարեպէս ճանաչէ զմեղս իւր . և որ ոչ է մեղանչեալ, ոչ է բարւոք զի ուսանիցի ։ Վ͞սյ զայս ասեմ միայն . թէ այս է ժանտամահ իմն, որ յոյժ ապականէ ։ Ե՞րբ այսպէս՝ եթէ շօշափեալ ես , քննեա՛ զա͞մ զօրութիւնս քո . ա͞յ զյիշողականութիւն , զիմացականութիւն , և զկամս ։ Քննեա՛ զա͞մ զգայութիւնս քո , և յատկապէս զերկու առաջինս . ա͞յ ըզտեսողութիւն ; և զլսողութիւն . և ևս առաւել զվերջինն , որ է շօշափականն ։ Քննեա՛ զխորհուրդս , զբանս , և զգործս ։ Քննեա՛ նաև զերազս , եթէ զկնի արթնանալոյդ տուեալ իցես ն͞ց զհաւա-

նու

նութ՟ին ինչ։ Տե՛ս թէ քարշեալ ես զոք 'ի մեղանչել. կամ եթէ եղեալ ես առ այս միջնորդ՝ գրով, պատգամաւորութ՟ք, ընծայիւք, առասպել գրեամբ, ախտաշարժ երգով, և ցոփական գործով, չէնկլիական խէնէշութ՟ք, անհամեստ խաղարկութ՟ք, և կամ այլ ինչ կերպ չար օրինակաւ։ Տե՛ս թէ զարդարեալ ես զքեզ վատ դիտաւորութ՟ք, կամ անցեալ ես 'ի ճանապարհէ իմեքէ, կամ գնացեալ ես յեկեղեցի՝ վատ մտօք և դիտաւորութ՟ք։ կամ եթէ 'ի բաց թողեալ ես զաղօթելն 'ի փորձութե։ Վերայիշեմ քեզ զայն, զոր ասացաւ 'ի վերոյ. թէ 'ի մեղս այս պարտի յայտնել երկու պարագայ. այ՟ն կացութիւնն անձին, ը՟դ որում մեղանչեալ է ոք. և սրբազան տեղին, եթէ կատարելապէս գործեալ է զմեղս 'ի նմա։ Վերջապէս՝ յայսմիկ նիւթոջ ոչ է համարելի թեթև ինչ պակասութի՝ ամենայն իրք, և իրակութի։ Քանզի սոյնս է այնպիսի աղբանոց իմն, որոյ ամենայն ունակութիւնն է ժանտամահական։ Կամիմ ասել. թէ ամենայն հեշտութիւնն եթէ իցէ լիապէս՝ է մահացու մեղք։

ԽՕԹ

# ԵՕԹՆԵՐՈՐԴ, ԵՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ։

## Մի՛ գողանար։ Մի՛ ցանկար տան ընկերի քոյ։

### Խորհրդով։

Եթէ ունեցար զկամք առնուլ զայն, որ է այլոց։ Կմ̃ խաբել զընկերդ՝ ոչ հատուցանելով նմա։ Եթէ ցանկացար առաւել հարստանալ վն̃ ագահութեն։

### Բանիւ։

Եթէ շահեցար ստաբանութբ̃, կամ սուտ երդմամբ։ Եթէ խորհեցար, կամ հաւանեցար ուրուք վնասու ընկերի քոյ։

### Գործով։

Եթէ գրգռեցեր զանիրաւ կռիւ, և ըզդատ։ Եթէ գնեցեր զիր ինչ գողունի, կամ յայնմանէ, որ ոչ կարէր վաճառել. կամ պակաս քան զարդար գինն։ Եթէ խաղացեր զխաղ ինչ դրամով ընդ որդւոց տանուտերաց. կամ պարտեցեր զոմանս 'ի խաղալն։ Եթէ խաբեցեր զոք 'ի վաճառելն պակաս չափով, կամ անարդար կշռով։ Եթէ վաճառեցեր ըզվատ իրն 'ի տեղի լաւագունի. կմ̃ այլայլեցեր խառնմամբ անպատեհ իրաց։ Եթէ տուեր 'ի վաշխ, և 'ի տոկոս զինչս քո։

քո: Եթէ տուեր, և ծախեցեր զսուտ դրամն 'ի տեղի ճշմարիտ, և լաւ դրամոյ. և զթեթևն 'ի տեղի ծանու: Եթէ արարեր զաւելորդ ծախս 'ի վերքան զկացութիւն քո. որպէս 'ի հանդերձս, 'ի խաղս, և 'ի խրախճանս: Եթէ վաճառելով զիր ինչ՝ առեր առաւելագոյն գինս: Եթէ ոչ յայտնեցեր զպակասութիւն վաճառելի իրին՝ գնողացն, որք հարցանէին քեզ: Եթէ գնալով 'ի յորս, կամ 'ի յզբօսանս՝ փճացեր արտօրէից սերմանողաց, կամ այլ պտղաբեր տեղեաց: Եթէ արարեր զայլ վնաս ինչ ընչից ընկերի քոյ: Եթէ տուաւ և հատուցաւ քեզ, մինչ փոխն ոչ էր յայտնի: Եթէ 'ի վաճառական ընկերակցութեան ընդ այլս, ոչ արդարապէս բաժանեցեր զայն, որ էր շահեցեալ: Եթէ 'ի գործածեր զպահեստ, կամ ըզ գրաւեցեալ ինչ՝ առանց լուականի, կամ յայտնի հրամանի տեառն նորին: Եթէ ոչ հատուցեր 'ի ժամանակի խուրում ըզ փոխն: Եթէ ոչ հատուցեր զվնասն այնորիկ, որ վասն քո երաշխաւոր եղև: Եթէ արարեր զպայման, կամ զայլ ինչ դաշնադրութիւն ընդդէմ օրինաց, և ընդդէմ պատկանաւորութեան, և առանց հարցանելոյ ցայնս, որք կարէին տալ քեզ զխրատ, և զխորհուրդ: Եթէ հատեր զպտղաբեր ծառս. կամ այլով կերպիւ փճացեր այնց բարեաց, յորոց

միայն

միայն վայելելոց, և ունելոց էիր զպտուղս․ որպիսիք են վարձեցեալ իրքն․ պարտէզքն, և այլք նմանք ։

### Զանցառութիւն ։

Եթէ ոչ պահեցեր զգաշինս, և զխոստմունս, զորս արարեր ։ Եթէ ոչ աշխատեցար, որքան էր պարտաւորութիւն քո ։ Եթէ հատեր զթոշակսն ծառայից, և կամ զվարձս մշակացն ։ Եթէ ոչ վճարեցեր և հատուցեր զպարտս քո․ կամ զհարկս, և կամ զկտակս ։ Եթէ պահեցեր զգտեալ իրն՝ առանց խնդրելոյ, թէ ո՛ կորուսեալ էր զայն ։ Եթէ դեղգացեալ ես 'ի մատակարարել զինչս որբոց, վանաց, նաև եկեղեցւոյ ։ Եթէ ոչ արարեր զողորմութիւն 'ի վերջին, և 'ի ծանրագոյն հարկաւորութեան աղքատաց ։ Եթէ յայսպիսի պատահման՝ ոչ տուեր զփոխ առանց շահու քոյ ։ Եթէ ոչ արգելեցեր զվնասն ընկերին, գոլով պարաւանդեալ առ այս 'ի պաշտօնէ, կամ 'ի սիրոյ, մինչ արգելուլ կարէիր զնա դիւրապէս, և անդորրապէս ։

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ ։

### Մի՛ սուտ վկայեր ։

### Խորհրդով ։

Եթէ ունեալ իցես զվատ կարծիս զըն-

կե

կերէ քումմէ ։ Կամ չարապէս դատեալ ես զնա , առանց ունելոյ զբաւական պատճառ իմն ։

## Բանիւ ։

Եթէ յայտնեցեր այլոց զվատ կարծիս , և դատողութիս քո ։ Եթէ յայտնեալ ես զիր ինչ , որ ասացաւ քեզ ծածկապէս , և խոստովանաբար ։ Եթէ ասացեր զսուտ՝ վնասակարութբ , կամ առանց վնասու . կմ՛ պատրեցեր զընկերդ. կրկնատեսակ բանիւք ։ Եթէ յայտնեցեր զգաղտնի պակասութիւն ինչ այնորիկ , որ ոչ գիտէր ։ Եթէ բամբասեցեր , կամ յօժարութբ լուա՛ր զբամբասանս . կամ հաւանեցար այնմ , որ բամբասէր ։ Եթէ բերեալ ես զնորալուր համբաւ ինչ վնասակար սիրոյ ։ Եթէ շողոքորթեալ ես զոք ։ Եթէ արարեալ ես զանիրաւութի ինչ այլոց , և յատկապէս մեծապատիւ անձանց ։ Եթէ ածեալ ես զոք առ 'ի առնել զսուտ վկայութի ։

## Գործով ։

Եթէ յարուցեալ ես զանհամաձայնութի 'ի մէջ զանազան անձանց ։ Կամ արարեալ ես զսուտ ամբաստանութիւն ։ Կամ ուրացեալ ես զճշմարտութի 'ի դատաստանի՝ 'ի շնորհ ումեք , կամ ընդդէմ ուրուք ։ Եթէ բարուրանօք արդելեալ

ես զայլս, զի մի՛ ընկալնուցուն զպաշ-տօն, կամ զարժանապատուութին ինչ :

## Զանցառութիւն :

Եթէ ոչ ես արգելեալ զբամբասանս՝ մինչ կարէիր. կամ զայլ անիրաւութիւնս արարեալ ումեք լեզուաւ : Եթէ ոչ ես տուեալ իւրաքանչիւր ումեք զայն պատիւն, որ պարտիւր :

Բայց երկու պատուիրանքն՝ պարունակեալք են 'ի վեցերորդ, և 'ի յեօթներորդ պատուիրանս :

Մերձապէս մնայ ինձ առ տ ծանուցանել քեզ զերկու իրս : Նախ. զի մի՛ վարիցիս այսու հարցաքննականաւ, առնելով զնա երրորդաբար առ ոտս քահանային, այնպէս՝ ոպ և գտանես աստ : այլ ընտրեսց յայսմանէ կարգաւ ի՛ւիք զայնս պակասութիւնս, առ որս անկեալ ես դու : Երկրդ. ոչ այն ծմ, որ առնշանադրեալ է աստ, է ճշմարտապէս մահացու մեղք. այլ այն միայն, որ վշտացուցանէ զսէրն ԱՅ, և ընկերին, կամ զմեզ իսկ՝ 'ի ծանր նիւթս, նկատմամբ ենթադատման, և ընտրուե կամաց : Որ եթէ ոչ կարես ճանաչել, և զանազանել դու զնա 'ի ներելի մեղաց, այս ոչէ փոյթ : Այլ բաւական է, զի յայտնիցես զնա խոստովանահօր քոյ՝ այնու կերպիւ, զոր գործեալ ես, առ 'ի ամբողջապէս հանդարտել զխղճմտանս քո :

## Կերպ, և եղանակ՝ առ 'ի դիւրացուցանել զգործն զղջման:

Զղջումն է այն երկնային դեղն, որոյ հարկանումն առ բերէ միշտ զվէրս մահացու մեղաց, եղծանելով զնոսա 'ի միում կլիտոջ: Վա̃յ պատշաճաւոր վարկայ սակաւ ինչ առատութ̃բ նախատեսանել զմիոյ այնպիսւոյ զօրաւորագոյն զինու. կազմելով և հաստատելով զայս վերջին ասացուածս՝ իբր փոքր ինչ զինատեղի, յորմէ արտահանիցի նա: Ուրեմն յառաջադրեմ ձեզ յառաջին տեղւոջ զհամառօտ եղանակս, և ձևս ոմանս, զի կարիցէք վարել նոքօք 'ի յեղակարծ հարկաւորութե̃ իմիք; և ունել զնմ̃ պատրաստ 'ի ձեռին, ոպ̃ սովոր է գտանել կարճ զինուց: Եւ առընթեր այսոցիկ առակցեցից նաև զայլ ձևս առաւել երկարս, ըստ զանազան տրամադրութեց՝ առ որս գտանիցիք, զի կարիցէք զանազանապէս ընտրել զո՛րն և կամիցիք, առ 'ի տալ զզօրեղ հարկանումն մեղաց: Ուստի աղաչեմ զձեզ. ոչ թողուլ երբեք անցանել և ոչ մի միայն օր, յորում ոչ կիրառնուցուք զնմ̃. զի է

դիւ

դիւրագոյն իր իմն ուսանիլ բարեպէս կիրառնուլ զայնս զէնս, որ յաւուր միում փրկէ զձեզ:

## Եղանակ, և կերպ Առաջին:

Ով ԱԾ իմ. առաւել ցաւիմ, և մորմոքիմ ես՝ քան զայլ իւրաքանչիւր չարեաց, վն վշտացուցանելոյս զքեզ՝ անչափ, և անհուն բարիդ: Եւ կամիմ առաւել սիրել զքեզ՝ քան զայլ իւրաքանչիւր բարի:

## Երկրորդ:

Ով անփոփոխելի բարի. ը̃ ո՞րոց փոխարկեցի զքեզ: Ամաչեմ ինքնին ես ՚ի մտածել զայն Յիրաւի ոչ կարէր այլ ոք առնել քեզ զայսպիսի ծանրագոյն անիրաւութիւն, եթէ ոչ ինձ նման ապամասայոյզ, և խելացնոր ոք: Եւ երանութի էր վն իմ, եթէ կարիցէի ջնջել զնա բոլոր արեամբ իմով. և եթէ ոչ կարեմ առնել զայլ ինչ, գոնէ լացից մինչ կենդանի եմ: Եւ առ ՚ի հատուցանել զայն պատիժն, զոր բարձի ՚ի քէն ես մեղանչելովս, խոստովանեցայց զամ մեղս իմ մեծաւ յօժարութը̃:

## Երրորդ:

Ով ամենասիրելի Տէր իմ. ո՛րպիսի իր լինիցի երբէք այն, որ կարիցէ մխի-

թարել զիս 'ի մեղս իմ: Մի միայն է, մի
միայն է, և է այս. թէ այն ամ վնասն,
և պարտաւորութիւն՝ է իմ: Յիրաւի է.
զի ես մեղանչելով՝ իբր թէ համարձա-
կեցայ ձգել զնետս ընդդէմ քո: Բայց
ամ նետք այնորիկ, վերջապէս դար-
ձան 'ի վր գլխոյ իմոյ. մինչ ես ոչ արա
րի զվնաս, եթէ ոչ ինձ միայն: Ուրեմն
ապ այժմ մեծապէս զղջամ, և ցաւիմ վն
մեղաց իմոց. նոյնպէս և ես մեծապէս ու
րախանամ, զի չարութիւն իմ ոչ կարաց
նուաղեցուցանել երբէք կէտ մի՝ յայն-
մանէ ծայրագոյն երջանկութենէ քումմէ,
զոր վայելես: Վայելեա՛ ո՛վ Տէր իմ,
զի բարի քո է. և տո՛ւր ինձ զշնորհս վն
գթութեան քոյ, զի ոչ ունիցիմ ես զփոյթ
կելոյ, եթէ ոչ միայն առ 'ի հաճոյա-
նալ քեզ:

## Չորրորդ:

Ո՛վ միայնակ Տէր իմ. ահա՛ ես կամ
աստ առ ոտս քո՝ բոլորովին պատ-
կառեալ, և ամօթահարեալ. մտածե-
լով, և նկատելով զամ ծանրագոյն անի
րաւութիւնս իմ, զորս արարի ընդդէմ
քեզ: Խնդրեմ 'ի քէն զներումն, և որ
քան կարելի է ինձ՝ գարշիմ 'ի նոցանէ,
վն գոլոյ քոյ ամենաստ, ամենիմաստ,
և ամենաբարի, նաև արժանի ընկալնլոյ
յամ արարածոց զանչափ ծառայութի:

Եւ

Եւ կամիմ թէ՝ մանաւանդ կրեալ իցէի զիմ չարիս, քան վշտացուցեալ զքեզ։ Նաեւ կամիմ այժմ կրել զիմ չարիս, քան միւսանգամ դառնալ՚ի վշտացուցանել զքեզ երբեք։ Շնորհեա ինձ ուրեմն՝ վասն այն քաղցրագոյն սիրոյ քոյ, որով ստեղծեր, պահեցեր, եւ փրկեցեր. զի այնպէս եղի ցի, ոչ եւ խոստացայ։ Եւ՚ի մէջ այսքանեաց բարերարութեանց պարգեւեա ինձ նաեւ զշնորհս քո սրբոյ, զի բարեպէս կարիցեմ խոստովանել զմեղս իմ, մինչ առաջադրեմ ասել զբովանդակն՝ ըստ պարզութեան, եւ ըստ ստուգութեան, ոչ թէ խօսիցէի ընդ քեզ, որ գիտես զիմ։

## Հինգերորդ։

Ո՜վ Տէր, որ ես անհուն մեծութեան։ Դու գոլով յիւրաքանչիւր տեղւոջ. ոչ անչափ, ներկայ ես յամենեսեան, նաեւ լսես, եւ տեսանես զամենեսեան։ Եւ ես թէպէտ գիտէի զայս բարեպէս. սակայն յանդգնեցայ մեղանչել՝ ոչ թէ, ոչ մեղանչէի առաջի քո։ Գարշիմ, եւ զզուիմ մեծապէս յայսպիսի զարհուրելի լրբութենէ. եւ այնու ընդդիմութեամբ ատեմ զնա, որով ոչ երկեայ առնել առաջի քո զանիրաւութիւն զայն։ Եւ ճանաչեմ իսկ՝ թէ արժանաւորեալ եմ, զի զրկեսցես զիս յերեսաց քոց։ Բայց զի՞նչ կարեմ ասել քեզ ո՜վ Ած իմ։ Զի

Թէև կամիցիս ինձ այսպիսի մեծագոյն չարիս, տակաւին ևս անհաճոյ է ինձ նոյնով կերպիւ ամ վշտացուցմունքն՝ զոր արարի քեզ, վս գոլոյ արժանի անհնապէս սիրել նաև յայնցանէ, զոր ատես:

ՎԵՑԵՐՈՐԴ:

ՈՎ Տէր, որ ես անհուն կարողութի՛ւն: Զի այնքան մեծագոյն յարգումն, և պատիւ պատկանի քեզ, մինչ զի առաջի քո դողան ամ գերազանց հոգիքն արքայութեն, իշխանութիւնք, և պետութիւնք: Բայց ես խոտելագոյն որդն երկրի, ոչ զանգիտեցի հանապազ առնել քեզ զանիրաւութի: Եղո՜ւկ թշուառականիս՝ Տէր իմ. ո՞րքան անհաճոյ է քեզ այսպիսի լրբութիւն, և համարձակութիւն մի: Եւ այժմ խնդրեմ 'ի քէն զներումն. և այս ոչ վս այլոյ, եթէ ոչ առ 'ի տալ քեզ զայն փառքն, զոր ընկալնուս յայլոց ներկայական ապստամբից: Եւ զի թէպէտ խոստովանիմ զիս եղեալ մեծագոյն ամբարտաւան, և մեծագոյն աներես քան զամենեսեան: Սակայն այժմ այնքան խոնարհիլ կամիմ քեզ, որքան մերժիցես, և արհամարհիցես: Յօժարիմ ես ածիլ յամենակարողութէ քումմէ 'ի յոչինչ, քան վերստին սկսանիլ անպատիւ առնել զքեզ զպաշտելիդ ամց:

Եօթ

## Եօթներորդ ։

ՈՎ Տէր. որ ես անհուն արդարութեամբ ։ Ահա՛ անկեալ կայ առ ոտս քո այն թշուառականս պարտաւորն, որ բազմիցս մեծապէս դրդուեալ է զբարկութիւն քո ։ Եթէ կամիս պատժել զիս վերջապէս՝ ոչ արդիւնաւոր իմ իսկ. Տէր ես, արա՛ ոչ և կամիս. հա՛ր, և վիրաւորեա՛ զիս ։ Ջի ո՛րպիսի չարութի կարէ պատահիլ ինձ, որ իցէ առաւել խստագոյն քան զայն, յորում անկեալ կամ՝ շտացուցանելով զքեզ ։ Այս է այն, որ ես յոյժ առաւել համարիմ քան զամ. այս զիս առաւել տանջէ. և այս զիս առաւել չարչարէ, որ ունեցայ զքէն սակաւ ինչ համարումն ։ Ուրեմն ո՛վ ամենասիրելի Տէր իմ, մի՛ ևս այնպէս լիցի այսուհետև ։ Ե՛ւ ՚ի նշան հաստատագունի առաջադրութեան այսորիկ, դնեմ առ քեզ, և յօժարութեամբ մատուցանեմ զիս իւրաքանչիւր պատժոյ, որ պատահի ինձ վասն մեղանչելոյ, միայն թէ ոչ մեղիցեմ ։

## Ութներորդ ։

ՈՎ Տէր. որ ես անհուն ողորմութե ։ Եթէ երբեմն տաս ծանուցանել ճշմարտապէս, թէ գերազանցէ՛ գթութի քո զամ սահմանօք, այս է անհուն ողոր-

մութն քոյ, որովհետև կամեցեալ ես այնքան համբերել ինձ: Ո՞վ անպատմելի համբերութիւն: Ո՞վ անճառելի գթութիւն: Ո՛րպիսի երկնաւոր թագաւոր համբերէր արդեօք՝ մի միայն անարգանացն, զոր ես արարի քեզ՝ առանց բառնալոյ զիս յաշխարհէ: Խոստովանիմ զճշմարտութիս այս. զի տեսանելն իմ 'ի քեզ զայս սիրելի կերպս, առնէ զիս յոյժ ուելի զղջալ, և ցաւիլ վ̅ն ներկայակին մեղաց իմոց: Քանզի ո՞չ կարացի ունիլ երբէք զայնքան համարձակութիւն, և զամբարտաւանութիւն, առ 'ի վշտացուցանել և արհամարհել զքոյդ պիսի Ա̅ծ մի ամենաբարի: Ուստի կամիմ զի մանաւանդ բացցի երկիրն 'ի ներքոյ ոտից իմոց՝ առ 'ի կլանել զիս կենդանւոյն, քան երբէք միւսանգամ դառնալ 'ի վշտացուցանել զքեզ: Տէ՛ր իմ, յառաջադրեմ. մինչ ես հաւաստի իցէր, թէ զոչինչ պատիժ պարտէի կրել երբէք վ̅ն մեղաց իմոց, տակաւին կամիմ միշտ գարշիլ, և հրաժարիլ 'ի նոցանէ, առ 'ի ոչ վարիլ նոքօք ընդդէմ բարութն քոյ:

## Իններորդ:

Արդարև ոչ ճանաչեալ եմ զքեզ՝ ո՛վ թագաւոր փառաց, ոչ ճանաչեալ եմ զքեզ: Զի եթէ սակաւ ինչ հասեալ էի երբէք 'ի ճանաչել զքեզ, ո՞րպէս կարէի

րէի փոխարկել զքեզ զաղբիւրդ յաւիտե
նականի կենաց՝ ընդ հոտեալ ջրշղջի հեշ
տութեան իմոյ : Արդ Տէ՛ր իմ . դու միշտ
լեալ ես, միշտ ես, և միշտ ելոց ես, բայց
բաւարարութիւքն ախտից իմոց, զորս
արարի ես, ունայնացան ամ ստուերք,
և ոչ երևին այլ ևս : Այլ սակայն յե-
տադրեցի զքեզ՝ քան զայս խոտելագոյն
ստուերս, այնպիսի անօրէն լրբութբ,
և վատթարագոյն ամբարտաւանութբ
միով, մինչ զի եթէ կարելի իցէր, բառ-
նայի զքեզ յաշխարհէ մեղօք իմօք : Այժմ
ուրեմն ոչ դառնամ ասել յանչափ մոր-
մոքումն սրտի իմոյ, թէ ոչ ճանաչեալ եմ
զքեզ : Ուստի առ՚ի չլինիլ ստուգիւ այս
պէս՚ի յապագայն, խոստանամ առա-
ջի մեծագոյն խմբից երկնային քաղաքա
ցւոց, որք շուրջ կան զքև . զի այսու
հետև եղէց քեզ ճշմարիտ ծառայ՚ի յա
ւիտեան : Վսն որոյ ընտրեմ մանաւանդ
ոչ գոլ, քան թէ վերստին դառնալ, և
լինիլ անհաւատարիմ :

## Տասներորդ :

Մեղայ . զի՞նչ հարիցեմ առնել քեզ, ո՞վ
պահապանդ մարդկան : Յոբայ . 7 . 20 :

Արդարև Տէր իմ, թէպէտ է ճշմարիտ,
զի մեղայ, և յոյժ ծանրապէս մեղայ :
Սակայն զի՞նչ կարեմ առնել : Թերևս

կարեմ խորհիլ այժմ զկերպ ինչ փախչել 'ի բարկութէ քումէ։ Բայց ո՞վ եմ ես, որ այլեւս նկատել պարտիցիմ առ իս, որ արժանի եմ ամենայն պատժոց՝ եթէ տայցես ինձ։ Պարտիմ ուրեմն նկատել առ քեզ միայն ։ Զի՞նչ կարիցեն առնել ձեզ։ Արդ կամիմ այնպէս առնել, զի վերադարձցի 'ի քեզ պատիւն այն, զոր ես ինքնին բարձցի 'ի քէն՝ յառնելով ընդդէմ քո ։ Ուստի ահա առաջի ամ ստեղծուածոց վկայեմ զինէն 'ի ձեռն այսպիսի գործոց՝ եղեալ զիս մատնիչ, ապերախտ, և անհաւատարիմ։ Ե՞ւ յետ դարձուցանեմ զամ անիրաւութիւնս զայնոսիկ, զորս արարի քեզ. և այս ոչ վասն այլոյ, եթէ ոչ վն զտագունի սիրոյ քոյ։ Յաղագս որոյ Աստուա՛ծ իմ, ցաւիմ, և զղջամ յոյժ բոլորով սրտի՛ իմով. Նաև գարշիմ, և զզուիմ յայնցանէ, զի սիրիցեմ զքեզ միայն ։ Ե՞ւ վն այսորիկ յառաջադրեմ ես՝ կամիլ մանաւանդ հազար անգամ մեռանիլ, քան երբէք վերադառնալ 'ի գործել զնոսա ։ Դու ուրեմն, որ ես բարի պահապան մարդկան, պահեա՛ նաև զիս որպէս յատուկ իր իմն քո ։ Բայց մանաւանդ պահեա՛ զիս յայնմանէ չարէ, զոր ես մեծագոյն համարիմ քան զայլ ամ չարիս . որ է տալն քեզ երբէք զվշտացումն, և զտհաճութիւն ինչ ։

Աւք

Արդ այսոքիկ բնաւք, որք գրեցան աստ, թէպէտ են ներգործութիւնք, և գործք կատարելագունին ողջման : Սակայն պակա_ ւիմ պարտ է ինձ այդ առանձնակել. զի առ 'ի կամիլ թէ ոսկա ներգործեսցեն զօրութիւնս ի- րեանց, ոչ է բաւական ընթեռնուլ զնոսա միայն, այլ պիտոյ է նաև ասել զնոսա ար_ տի՛: Ուր եթէ այսպէս առնանիցեն, ունին ճշմարտապէս զայնպիսի զարմանալի զօրու_ թիւս, մինչ զի 'ի միում հետոյ մերձեն զմեզ 'ի հոգւոյ, և ներբերեն անդ շնորհս. թէև Խողոյցուն միշտ զպարտաւորութիւն խոստո_ վանելոյ 'ի ժամանակին իւրում:




Ապտակածոյ մարմնով վասն իմ խաչեալ ոյ,
ձաղեալդ, կենդանարարդ՝ երկրպագելի ոյ։
Աղաչեմ ՚ի խորոց սրտէ ցաւագին ոյ,
ազատել զհոգի իմ ՚ի հրոյն գեհենի ոյ։

# ՋԵՐՄԵՌԱՆԴԱԿԱՆ

## Աղաչանք, և աղօթք, առ'ի ասիլ յա̃մ աւուրս շաբաթու։

### Վն̃ կիւրակէի աւուր։

ՈՎ ԱՅ իմ, և ստեղծող իմ, ահա՛ ներկայացուցանեմ զիս այսօր առաջի քո, որ եմ խղճալի, և մեղաւոր հոգի։ Աղաչեմ զքեզ խոնարհաբար, զի վն̃ անհուն բարութեն̃ քոյ, հաճեսցիս տալ ինձ զշնորհ 'ի սրբացուցանել զայս աւր̃ կիւրակէս՝ ըստ հրամանի քոյ, և մօր մերոյ սբ̃յ եկեղեցւոյ։ Եւ՛ շնորհեսցես ինձ զճշմարիտ զղջումն վն̃ ա̃մից մեղաց, զորս գործեալ եմ ես՝ ընդդէմ ա̃ծային վսեմափառութեն̃ քոյ, ընդդէմ հոգւոյ իմոյ, և ընդդէմ ընկերաց իմոց։ Աղաչեմ զքեզ ո՛վ ԱՅ յաւիտենական. զի մի՛ հայեսցիս 'ի բազմութիւն մեղաց իմոց, այլ հայեսցիս 'ի մեծ, և 'ի յանհուն ողորմութիւնն քո։ Նաև խոնարհաբար շնորհակալ եմ այսօր՝ ո՛վ

ամե

ամենագերազանց Տէր իմ, վասն ամ՟ից շնորհաց, և բարերարութեանց, զոր արարեր, և զոր համապատրաստես ինձ: Եւ գոհաւորապէս վ՟ն պատուական ստեղծելութեան, և փրկութեան իմոյ. և վ՟ն քաղցրութեան, և համբերութեան քո, որ ոչ պատժեցեր զիս ըստ որպիսութեան մեղաց իմոց, այլ ներող գտար ինձ ըստ մեծի ողորմութեան քում: Աստի աղաչեմ, և խնդրեմ 'ի քէն. զի տայցես ինձ զշնորհ՝ անցուցանելոյ զառաջի կայ շաբաթս թարց վշտացուցանելոյ զքեզ մահացու մեղօք, 'ի պատիւ քոյոյ ուրախալի ծննդեանն, ցաւալի թլփատութեան, յաղթանակօղ յարութեան, և փրկաւէտ առաքման հոգւոյդ ս՟բյ: Եւ և՛ս ո՛վ արարիչ իմ. ներկայացուցանեմ քեզ 'ի միասին՝ 'ի համառօտագոյն աղօթս իմ զայնոսիկ ընաւս, որք ունին զհոգևոր, և զմարմնաւոր փորձութիւս, և զնեղութիւս. աղաչելով զքեզ, զի համեսցիս մխիթարել, և զօրացուցանել զն՟ա ըստ անհուն իմաստութեան քոյ: Այսպէս և աղաչեմ զքեզ. 'ի պատիւ չարչարանաց, և զմահուան քոյ, զի կամիցիս շնորհել ամ՟ մեղաւորաց զզղջմանաչութիւն, առ 'ի առնել զապաշխարութիւն 'ի կենի այսմիկ. և հասարակապէս այնց ամ՟ից, որոց վ՟ն կամիս այսօր աղաչել, և աղօթել մայր մեր ս՟բ եկեղեցի: Եւ աղաչելով ես և

ընդ-

ընդ նմա, կարացից հաղորդակից գտա-
նիլ ցանկալի չարչարանաց, և փառաւո-
րագոյն յարութեան քոյ: Ամէն: Ողորմեա՛
ինձ Ա̃ծ, ըստ մեծի ողորմ՛՛. և այլն:

Պարտ է զայս տաղմոս ասել ամբողջա-
պէս զկնի իւրաքանչիւր աղօթից :

Վն̃ Երկուշաբթի աւուր :

Ո՛վ Ա̃ծ իմ յաւիտենական․ խորագոյն խոնարհութեամբ սրտի ծանուցանեմ ես զիս վշտացուցեալ զԱ̃ծային հանդիսաւորութիւն, և բարութիւն քոյ: Սակայն այսօր՝ որ է առաջին օր շաբաթու, խնդրեմ 'ի քէն զներումն, և զթողութիւն: Եւ՛ խոնարհաբար աղաչեմ զանհուն գթութիւն քո, զի պարգևեսցես ինձ զշնորհ՝ առ'ի սկսանիլ յա̃մուծ աւուր աշխատիլ վասն փրկութեան հոգւոյ իմոյ, որոյ վս̃ աշխատեցար դու մինչև ցմահ: Սոյնպէս աղաչեմ զքեզ ո՛վ փրկիչ իմ․ զի տայցես ինձ զշնորհ սկսանելոյ զա̃մ գործս իմ նաև 'ի պատիւ, և 'ի փառս քո, և յարատևել մինչև ցվախճան 'ի փրկութեան հոգւոյ իմոյ: Ա̃ծ իմ, և ստեղծօղ իմ․ ներկայացուցանեմ քեզ այսօր՝ զհոգի, ըզմարմին, և զա̃մ ժամանակաւոր բարիսն իմ․ աղաչելով՝ զի հաճեսցի առնել ընդէս ըստ սուրբ կամաց քոց, քանզի յօ-
ժար

ժար եմ ես կատարել զկամս քո, և ոչ զիմս ։ Խնդրեմ նաև խոնարհաբար ՚ի քէն զողորմութիւն՝ վասն ամենայն հոգւոց, որք են ՚ի մէջ հրոյն քաւարանի ։ Եւ՛ գլխաւորապէս վասն այնոցիկ, առ որս պարտաւորիմ, և պարաւանդիմ վասն ազգականութեան, և խնամութեան. և կամ վս̃ հոգևոր, և ժամանակաւոր բարերարութեանց, ոմ̃ յիշեցուցանէ մեզ մայր մեր սբ̃ եկեղեցի ։ Եւ՛ ՚ի վեր քան զամ̃ աղաչեմ զքեզ. տուր ինձ զշնորհ առ ՚ի կրել զքաւարանն յայսմիկ աշխարհի. զի ՚ի ժամու մահուա՛ն իմում, ՚ի ձեռն արդեանց ցաւալի չարչարանաց քոց՝ կարացից մտանել ՚ի փառս արքայութեան, առ ՚ի վայելել զնա յաւիտենականապէս, և առ ՚ի փառաւորել զքեզ ։

Ամէն ։ Ողորմեա ինձ Ած. և այլն ։

## Վ̄ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ ։

Տէ՛ր իմ, և ԱԾ իմ. ահա՛ ներկայացուցանեմ ես զիս այսօր առաջի մեծայելին հանդիսավեհութեան քո. և խոստովանիմ զբեկանաւորութիւնս, և զանկայունութիւնս, նաև զաղքատութիւնս իմ ։ Եւ՛ աղաչեմ զքեզ՝ ո՛վ աղբիւրդ քաղցրութեան, տուր ինձ զջուրն շնորհաց, որով կարիցեմ փրկել զհոգի իմ, և ողբալ զաղտեղի, և զպագրալի մեղս իմ, և

հաս

հաստատապէս առաջադրել առ'ի ոչ
գործել եւս զնս :

### Աղօթք առ Պահապան հրեշտակն :

ՈՎ պահապան հրեշտակ իմ բարի,
որ ես կարգեալ 'ի պահպանել զիս :
Ահա այսօր ամբաստանեմ ես զինէն
առաջի քո. զի բազմիցս արհամարհեալ
եմ զբարի ներշնչմունս քո, զոր տուէր
ինձ, եւ ոչ յարգեալ եմ զքեզ ո՛չ պատ
կաննէր : Վա՜յ վերստին խոստովանիմ
առաջի քո՝ խոնարհաբար աղաչելով բզ
քեզ, զի լինիցիս միշտ փրկարար դէտ
հոգւոյ, եւ մարմնոյ իմոյ՝ ընդդէմ բնա
ւից փորձութեց, եւ յարուցմանց թշ
նամւոյն մարդկայնոյ բնութե : Նաեւ
ո՞վ երջանիկ միքայէլ հրեշտակապետ
Ած բարձրելոյն. ներկայացուցանեմ
քեզ այսօր զհոգի իմ, աղաչելով զքեզ
կաթոգնապէս, զի 'ի ժամանելն մահ
ուան իմոյ, դու լինիցիս ինձ խնամար
կու, տալով ինձ զօժանդակութիւն ընդ
դէմ վատթարագոյն փորձութեց. եւ
ներկայացուսցես զհոգի իմ առաջի ա
թոռոյ ածայնոյ ողորմութե : Որոյ վս
այսօր ընկալնում զքեզ վս իմ մշտապէս
նախախնամիչ, եւ պահապան : Ամէն :

Ողորմեա՛ ինձ Ած. եւ այլն :

Վ.

## Վ՟ն չորեքշաբաթի աւուր :

Ո՜վ բարձրեալ Տէր իմ. արդարև ճանաչեմ, և խոստովանիմ առաջի քո, թէ յայսմիկ աւուր վաճառեցաւ ամենապատուական մարմինն քո, առ 'ի գնել զխղճալի հոգին իմ: Վ՟ն այսորիկ աղաչեմ զքեզ. զի արասցես զիս մասնակից մեծի գնոյ ճառման այսորիկ. զի 'ի պատի՟ւ նո՟ր կարիցեմ ունիլ զթողութիւն յանցանաց իմոց. և 'ի միասին զշնորհս՝ առ 'ի ընդդիմանալ ա՟մ մարմնական, և զգայակ ն ընդդիմութե՟ց բանականութեան: Նաև՝ զի հաճեսցիս ընդունել զպատիժս, զնեղութիւնս, և զմարմնական տկարութիւնս իմ, զորս կրեմ առ 'ի բաւ՟ առնել, և վճարել վասն մեղաց իմոց, զոր գործեցի ընդդէմ ա՟ծային հանդիսավեհութե՟, և բարութե՟ քոյ: Եւ ես՝ ո՜վ քաղցրագոյն Յիսուս իմ. 'ի պատի՟ւ պատուական մարմնոյ քոյ՝ ներկայացուցանեմ այսօր քեզ զմարմինն իմ, առ 'ի կրել և տանիլ զպատիժս, և զապաշխարանս, զորս արդիւնաւորիմ վ՟ն մեղաց իմոց: Ուստի ո՜վ ստեղծօղ իմ, արա՛ նմա զայն, որ հաճոյ է քեզ, զի կարասցիս հաղորդ գտանիլ քոյոց ընտրելոց 'ի յարքայութեան: Եւ տո՛ւր ինձ զշնորհս համբերաբար կրել զնեղութիւնս,

որք կարեն պատահել ինձ յապագայն։ Քանզի ճանաչեմ, թէ թարց նպաստութեն քոյ ոչ կարեմ տանել, և համբերել նմա։ Ամէն։ Ողորմեա՛ ինձ ԱԾ. և՛։

## Վասն հինգշաբաթի աւուր։

Աստուա՛ծ իմ, և Տէր իմ. ահա՛ ճանաչեմ, և խոստովանիմ առաջի անձային իմաստութեն քոյ. թէ յայսմիկ աւուր լուա՛ցեր դու զոտս առաքելոց քոց, խորագոյն խոնարհութեամբ, և մեծագոյն սիրով։ Նաև՝ թէ կացուցեր զսրբազան խորհուրդն Հաղորդութեան, թողլով 'ի կտակ և 'ի յիշատակ զպատուա՛կան մարմինդ, և զամենասուրբ արիւնդ 'ի ներքոյ տեսակի հացի, և գինւոյ, վասն հոգևոր յագեցման հոգւոց մերոց։ Ե՛ւ յայսպիսի աւուր համբարձար յերկինս փառաւորապէս, և յաղթանականաբար, առ 'ի թագաւորել յաւիտենականութեամբ ընդ Աստուծոյ հօր քոյ։ Վասն այսորիկ ո՛վ Տէր իմ, աղաչեմ տալ ինձ զշնորհ՝ առ 'ի լուա՛նալ, և մաքրել զխղճմտանս իմ հեղմամբ արտասուա՛ց. և ենթիրկել զվատթարագոյն իղձս իմ 'ի ծառայել քեզ, և 'ի պատուե՛լ զքեզ։ Ե՛ւ ես՝ կարիցեմ արժանապէս, և առանց վշտացուցանելոյ զքեզ՝ ընկալնուլ զՍրբազան հաղորդութիւն ընդ նոյն՝ մեծագոյն խոնարհութեամբ սրտի, մե-

ծա

ծագոյն ջերմեռանդութ̄, և պատուո՛վ։ Յաղագս որոյ այսօր երկրպագանեմ քեզ ստեղծօղ իմ, գովեմ զքեզ, և շնորհակալութիւնս մատուցանեմ, աղաչելով քեզ յամենայն սրտէ, նաև յամենայն զօրութենէ իմմէ, զի հաղորդակից լինիցիմ պատուա՛կան մարմնոյ, և ամենասո̄ւրբ արեան քոյ։ Եւ՛ վերջապէս կարիցեմ արժանաւորիլ 'ի յարքայութեան՝ ամենափառաւոր տեսութեան Ածութեանդ քոյ, նաև փառաւորեցեալ մարդկութեանդ։ Ամէն։ Ողորմեա՛ ինձ Ած. և՛։

## Վ̄ ՈՒՐԲԱԹԻ ԱՒՈՒՐ։

Ո՛վ քաղցրագոյն փրկիչ իմ Յիսուս ո ահաւասիկ կալով ես յանցաւորս, և թշուա՛ռական մեղաւորս՝ առաջի քոյ յայս մի՛կ աւուր, յորում կրեցեր զմահ վասն մեղաց իմոց։ Աղաչեմ զքեզ 'ի պատի՛մահուա՛ն, չարչարանաց, և ա̄մից խոցուա՛ծոց սրբազանի մարմնոյ քոյ. զի հաճեսցիս առնել զիս հաղորդակից ցաւոցն, և պատժոցն, զորս կրեցեր վասն փրկութեան հոգւոյ իմոյ. և տանիլ ուրախութ̄ զխաչն ապաշխարութեան, և արհամարհել զա̄մ հեշտութիւնս աշխարհի, նաև զերկրաւոր, և զզգայական իղձս։ Եւ՛ արա՛ ևս ինձ՝ ո՛վ Տէր իմ զշնորհս այս, զի զգայցեմ 'ի սրտի իմում ղցաւս

լի մահն, և զչարչարանս քո՝ կալով առ ոտս խաչի քոյ ընդ մագդաղենացւոյն ։ Զի և ես կարացից այնպէս ճանաչել զքեզ, ոչ այլ իմ ստեղծուածք ճանաչեցին զայս չարչարանս, և մահն քո, և գլխաւորապէս բարի աւազակն ։ Վ՟ զի ոչ ներկայացուցանեմ այսօր ստեղծողին իմոյ զայս խստագոյն չարչարանս, և նախատալի մահս՝ առ 'ի ընկալնուլ զթողութիւն մեղաց իմոց․ Նոյնգունակ վերջապէս առ 'ի ընկալնուլ արդեամբ նր զընկերակցութիւնն երանելեաց 'ի յարքայութե ։ Ամէն ։ Ողորմեա՛ ինձ Ած․ և՛ ։

### Վ՟ շաբաթի աւուրն ։

Ա'ստուած իմ, և յաւիտենական դատաւոր իմ ։ Խոստովանիմ զքեզ գոլ այն․ և ճանաչեմ, զի մեծապէս, և ծանրապէս, և առանց չափոյ վշտացուցեալ, և բարկացուցեալ եմ զքեզ ։ Վ՟ աղաչեմ զքեզ յայսմիկ աւուր, յորում մարմինն քո էր 'ի գերեզմանի․ և յայնժամ, յորում մխիթարեցեր զոգիս հարց, որք էին 'ի լիմպոսում․ զի հաճեսցիս տալ ինձ զհանդարտութիւն խղճմտանաց․ Նաև զայնքան հոգևոր, և մարմնաւոր մխիթարութիւնս, որքան ճանաչես հարկաւոր լինել փրկութեան հոգւոյ իմոյ ։ Ուստի ո՜վ Տէր իմ․ ներկայացուցանեմ քեզ

այսօր զամ բարեգործութիւնս , զոր ա-
րարեալ եմ վն սիրոյ քոյ · և աղաչեմ
զհանդիսավեհութիւն քո, զի հաճեսցիս
ընդունել զնս 'ի պատիւ քո , և 'ի փրկու-
թիւն հոգւոյ իմոյ · նաև 'ի պատիւ ամե-
նափառաւոր կուսին մարիամու , և ար-
ժանաւորագոյն մօր քոյ ։ Քանզի ճանա-
չեմ, և հաւատամ ո՛վ Սրբուհի կոյս · զի
յայնմիկ աւուր շաբաթու՝ հաւատքն քո
մնաց 'ի քեզ ամբողջ ։ ուստի աղաչեմ զքեզ,
զի բարեխօսուք, և արդեամբ քով՝ կարա-
ցից մնալ հաստատ 'ի հաւատս ճշմարտի
Այն իմոյ ։ Յաղագս որոյ , խոստանամ քեզ
այսօր առաջի սիրելի որդւոյ քոյ · թէ կա-
միմ ես կեալ , և մեռանել 'ի մէջ ճշմարիտ
ուղղափառ հաւատոյ , թէև պատահեսցի
ինձ որպիսի ևիցէ փորձութիւն 'ի կենի ,
և 'ի մահուան ։ Ուստի ո՛վ ամենաքաղցր
փրկիչ , և ազատիչ իմ Յիսուս · նաև դու
ո՛վ արժանաւորագոյն Մայր նր , և փաս-
տաբան մեղաւորաց · ներկայացուցա-
նեմ այսօր առաջի երկոցունց՝ զմար-
մին , և զհոգի իմ · և աղաչեմ զձեզ , զի
հաճեսջիք այնու կերպիւ ուղղել զիս , զի
կարիցեմ վերջապէս ժամանել 'ի փառս ,
և 'ի յաւիտենական երանութիւն ։ Ամէն ։

Ողորմեա ինձ Այ ։ և այլն ։

# ՎԵՐՋ ։

Յան

## Ցանկ գլխոց, որք պարունակին յայսմիկ գրքոջ:

Առաջաբանութիւն հեղինակին, առ իմացումն այնց, զորոց ձեռնամխի ընձեռել: Երես 1:
Հրաւիրումն առ ապաշխարօղն, զի մերձեսցի առ խոստովանութիւն: Գլ. Ա: 8:
Յաղագս քննութեան, 'ի ձեռն որոյ ապաշխարօղն պարտի պատրաստիլ, և որպէս մատչիլ առ խոստովանութիւն: Գլ. Բ: 15:
Յաղագս ոմանց ընդհանրական մեղաց, որք սովորք են գաղտնի մնալ 'ի քննութեան: Գլուխ. Գ: 23:
Յաղագս այլոց գաղտնի մեղաց, որք են առաւել մասնաւորք՝ իւրաքանչիւրոյ կացութեան: Գլուխ. Դ: 42:
Յաղագս քննութեան խորհրդոյ: Գլ. Ե: 57:
Յաղագս ցաւոյ, որ խնդրի 'ի յապաշխարօղն. Գլուխ. Զ: 67:
Յաղագս կերպի, որով զարթուցանի այս ցաւս: Գլուխ. Է: 81:
Յաղագս հարկաւորութեան առաջադրութեան, զոր պարտի ունիլ ապաշխարօղն: Գլուխ. Ը: 93:
Թէ ո՛պ առաջադրութիւնս այս պարտի տարածիլ՝ ոչ միայն մինչև ցփախչիլն

'ի

'ի մեղաց, այլ նաև մինչև ցփախչիլն
յառթից նոցին: Գլուխ. Թ: 103:
Յառաջադրի ջերմեռանդական աղօթք
ինն, որ պարտի ասել նախ քան զխոս
տովանութիւն: Գլուխ. Ժ: 113:
Յաղագս գլխաւոր յատկութեանց, որք
պարտին ընկերակցիլ խոստովանու-
թեան: Գլուխ. ԺԱ: 119:
Յաղագս թէ ո՛րպ պարտ է կենցաղավա
րիլ ապաշխարողն զկնի խոստովանու
թեան: Գլուխ. ԺԲ: 132:
Յաղագս նախապահողական դեղոյ, ո-
րով վարիլ պարտի ապաշխարողն առ'ի
ոչ անկանիլ վերստին: Գլ. ԺԳ: 136:
Աղօթք առ Ածային կոյսն մարիամ: 142:
Յաղագս ծանրութեան մեղաց, որ ցուցանի
ապաշխարողին, զի մի՛ դարձցի վերս
տին 'ի գործել զնա: Գլ. ԺԴ: 151:
Յաղագս օգտակարութեանց, որք յառա
ջագային 'ի յաճախապէս խոստովանե
լոյ: Գլուխ. ԺԵ: 185:
Յաղագս ընդհանրական խոստովանու
թեան: Գլուխ. ԺԶ: 193:
Յաղագս հարցաքննութեան, առ'ի դիւ-
րացուցանել զկիրառումն խոստովա-
նութեան: 200:
Կերպ, և եղանակ՝ առ'ի դիւրացուցա
նել զգործն զղջման: 218:
Ջերմեռանդական աղաչանք, և աղօթք,
առ'ի ասել յամաւուրս շաբաթու: 229:
Ճ

Վերջ [illegible] է
— 28/VI 1942 թ.